

[illegible]

ՄՈՒՊԱՇԱՐԻ
ՆԻՍԱԲԵՐԻ
ԹՅՈՒՆ

11



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

Л. Ш. ОГАНЕСЯН

**ИССЛЕДОВАНИЕ СМЫСЛОВЫХ
ГРУПП ЛЕКСИКИ
ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА**

(Часть II)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО “ГИТУТЮН” НАН РА
2012

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ, ԱԿԱԳԵՍԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ, ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Լ.Շ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԳՐԱԲԱՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

(II ՄԱՍ)

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՄ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012**

ՀՏԴ 809.198.1

ԳՄԴ 81.2Հ

Հ 854

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների
թեկնածու Ն.Գ. Հովհաննիսյան

Հովհաննիսյան Լ.Շ.

Հ 854 Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն. (II
մաս) Գիտություն. 2012 – 184 էջ

ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8080-0727-7

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2012թ.

© Լ.Շ. Հովհաննիսյան, 2012 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍԶ

Սույն ուսումնասիրության առաջին մասը լույս է տեսել 2008թ.: Այն բաղկացած է չորս գլուխներից:

Առաջին գլուխը վերնագրված է *Մարդ, կյանք, մահ*, որի ենթաբաժիններն են. ա/ *Մարդ* հասկացության լեզվական արտահայտությունները գրաբարում, բ/ *Ծնունդ և կյանք*, գ/ *Մարդու տարիքային անվանումները*, դ/ *Մահ/մեռնել* հասկացության լեզվական արտահայտությունները գրաբարում, ե/ *Թաղում* հասկացության ընկալումն ու լեզվական արտահայտությունները:

Երկրորդ գլխում քննված է *հիվանդություն, բժշկություն* իմաստային խմբի բառապաշարը:

Երրորդ գլուխը նվիրված է *ժամանականիշ* բառերի քննությանը՝

ա/ օր և օրվա ժամանակահատվածներ.

բ/ շաբաթ և շաբաթվա օրեր.

գ/ ամիս, ամսանուններ.

դ/ տարի:

Չորրորդ գլուխը վերնագրված է *Գունանուններ*.

քննված են հայերենի գունանունների գործառական առանձնահատկությունները, որոշ գունանունների իմաստային զարգացումները:

Տարբեր խմբերի բառապաշարի քննության ժամանակ բացի լեզվական փաստերից, ըստ կարելիության, օգտագործվում են նաև արտալեզվական տվյալներ:

Որոշակի դժվարությունների հետ է առնչվում /նաև գրքի երկրորդ մասում/ դասակարգումների ու քննության միասնական սկզբունքների պահպանումը: Բառապաշարի տարբեր խմբեր պահանջում են քննության տարբեր եղանակներ ու մեթոդներ՝ կախված նյութի ծավալից, բազմաշերտությունից, այդ բնագավառին վերաբերող առկա ուսումնասիրությունների արդյունքներից:

Բառապաշարի իմաստային խմբերի քննությունը կարևորվում է նաև տվյալ խմբի /ենթախմբի/ բառապաշարը հնարա-

վորինս ամբողջական ներկայացնելու առումով: Սակայն դա պայմանավորված է որոշակի դժվարություններով՝ բառարաններում չվկայված լինելը, որոշ դեպքերում էլ վկայված բառերի՝ բնագրային օրինակների բացակայությունը, նույն բառի տարբեր ձևերի առկայությունը, հետգրաբարյան փուլում վկայված բառերի՝ գրաբարում ավանդված լինելու կամ չլինելու հանգամանքը, բառերի բազմիմաստությունը /սա ենթադրում է նույն բառի ներառում տարբեր դասակարգումներում/ և այլն:

Ըստ կարելիւոյն փորձել ենք առանձնացնել Նոր հայկազյան բառարանում չվկայված բառերը:

ՈՒՏԵԼԻՔ ԵՎ ԸՄՊԵԼԻՔ

Գրաբարյան աղբյուրները որոշ տեղեկություններ են հաղորդում կերակրատեսակների և ըմպելիքների վերաբերյալ: Այս ոլորտին առնչվող անվանումների ամոքադարձ կա հայոց լեզվի պատմությանը վերաբերող մի շարք աշխատություններում: Նման կարգի բառերի ըստ հնարավորին ամբողջական ցանկը ներկայացված է Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի կողմից¹, որոնք ուշադրություն են դարձրել հատկապես բառերի ծագումնաբանական շերտերին:

Գյուրբար մատենագրության և գրաբարյան բառարանների ընձեռած նյութի հիման վրա փորձել ենք ավելի ընդգրկուն ներկայացնել իմաստային այդ խումբը՝ ուշադրություն դարձնելով բառիմաստներին, գործառական յուրահատկություններին, հաճախականությանը և այլ երևույթների:

Գրաբարում *ուտելիք* իմաստային խմբի ընդհանրական ու միջուկային բառերն են՝ *ուտելի*, *կերակուր*, *ճաշ*, *պարէն*, *սնունդ*: Վերոհիշյալ շարքը գործառական տարբեր հաճախականությամբ ու իմաստային նրբերանգներով լրացնում են *բուտ*, *ուտեստ*, *խորտիկ*, *կեր*, *սպաս*, *կուր*, *խահ/խոհ*, *եփոյ/եփոց*, ջամբ «կերակուր» բառերը. «...ինքեանք անգործք և զգործոցն զկուրս և զվաստակս ուտեն» /Կոչ. 116/: «Եկն և արկ ի սան եփոյին... և արկ առաջի արանցն ուտել» /Դ. Թազ., 40-41/: «Տուեալ էր զնոսա յուտեստ... հարձի թագաւորին» /ՆՀԲ/: «Ննջեաց առանց ընթրեաց և խորտիկ ոչ մուծին առաջի նորա» /ՆՀԲ/: *Եփոյ/եփոց*-ը ունի «եփած ճաշ» նրբիմաստը:

Ուտելու գործողություն արտահայտող բառերն են՝ *ուտել*, *ճաշել*, *ճաշակել*, *բուել*, *բուծանել*, *սնանել*, *որովայն լնուլ*, *որովայն պալաւարել*, *լափել* /վերջին երեքը՝ անարգական իմաստով/. այդպես է և *մցոնել*-ը, որը եզակի կիրառություն ունի: Ըստ էության *բուել*-ը նույնպես անարգական իմաստով է:

Ճաշկերույթ հասկացությունը գրաբարում արտահայտվում է *երախան, հացկերույթ, սեղան, խնջոյք, կոչունք, գինարբուք, հիւրոյք* բառերով. «Մովորութիւն էր յորժամ մեռանէր ոք հացկերոյք առնել» /ԸՀԲ/: «Եկեսցես դու ի կոչունսն իմ զոր առնելոց են այսօր... և մինչդեռ ըմպէին գինի, ասէ արքայն ցԵսթեր» /Եսթեր, Ե., 4-6/: «Պատրաստ արարէր առաջի իմ սեղան» /ԸՀԲ/: *Ագապ*-ը ըստ Արմ.-ի աղքատներին տրված սիրո ճաշ է:

Սեղան կազմել, սեղան յօրինել նշանակում է «ճաշ պատրաստել», «սեղան գցել»:

Օրվա որոշակի պահերի՝ ուտելուն առնչվող հասկացություններից գրաբարը չունի *նախաճաշ* բառը, բայց կան *ճաշ* «կեսօրվա ճաշ» և *ընթրիք* «երեկոյան ճաշ»: Գրաբարում եզակի վկայությամբ հանդիպում է և *մակընթրակք* «աղանդեր», որն անշուշտ պատճենված է հունարենից. «Հուսկ յետոյ մրգոցն ի ներքս մութեալ՝ որ ասինն մակընթրակք» /Փիլ., Դառ., 21/: 5-րդ դարից վկայված է և *աղանդեր* «ճաշից հետո մատուցվող քաղցրեղեն, միրգ». հմմտ. «Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ եղին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիճ զի կերիցէ» /Բուզ., 174/:

Մնունդ բառը գրաբարում հաճախական չէ: Բառի արմատն է *սուն*, որը հանդես է գալիս որպես բառաբաղադրիչ /կաթնասուն, ընդասուն/, առկա են և ձայնդարձային տարբերակները՝ *սան*, որի նախնական «սնունդ» իմաստը մթազնվել է և զործածվում է «զավակ, ծեռնասուն», և *սին*, որից *միասին*՝ բառացի «մեկտեղ սնված, միասին մեծացած»:

Մնունդ, սննդակից, սնուցանել և նման մի շարք բառերի առաջին բաղադրիչը կարող է ծագած լինել թե՛ *սին*, թե՛ *սուն* ձևերից²:

Մեզ հետաքրքրող իմաստային խմբի միավորները ներկայացնենք որոշ դասակարգումներով:

1. ՀԱՅ, ՀԱՅԱՏԵՍԱԿՆԵՐ

Գրաբարում հաց և հացի զանազան տեսակ են մատնանշում *հաց, դոն, նկան, նկանակ, գրտակ, սիդիզն, շօթ, պան* բառերը: Հոմանիշային այս շարքի հիմնական անդամը *հաց*-ն է: *Դոն* «հացի տեսակ» վկայված է մեկ անգամ՝ ուշ շրջանից /տե՛ս Արմ./, բայց բառի հնդեվրոպական ծագումը թույլ է տալիս ենթադրելու դրա գործածությունը նախագրային շրջանից: *Սիդիզն* և *գրտակ* նույնպես հաճախական չեն: Ըստ Արմ.-ի *գրտակ*-ը կլոր հացն է: *Պան* «կլոր հաց» հանդիպում է հիմնականում Աստվածաշնչում՝ 15 անգամ: *Շօթ*-ը թեև հաճախական չէ, բայց վկայված է 5-րդ դարից. «Եւ պանս բաղարջս և շօթս բաղարջս զանգեալ իտով» /Ելք., ԻԹ., 2/: Թերևս հացատեսակ են *հաց կսկում*-ը և *աշտուճ հացը*. «Հաց կսկում, որ նկանն կոչի և լինէր այսպէս. սալ ջեռուցանէին, յորոյ վերայ զճարպն թացեալ՝ անաստառ անդ դնէին և ապա մաղ մաղ ի վերայ արկանէին» /Եմես., Մեկն., 182/: Սա միակ վկայությունն է: «Միթէ ո՞չ երբէք կերակրեաց. այլ թեպէտ և կերակրեաց, այլ աստուճ հացիւ: և ձկամբ» /Ոսկ., Ես., 157/: Բառարանները վերը նշվածները մեկնում են «չոր հաց, ցամաք հաց»: Վկայված են՝ *գարեհաց, նկանակ, գարեղեն*: Հաճախական է *հացիկ* բառը. «Կոչեա դու զտնանկն և տուր նմա զհացիկ» /ՆՀԲ/:

Արմատական բառարանը *նկան/նկանակ* ձևերի միջև իմաստային զանազանություն չի տեսնում՝ որպես բառահոդված նշելով *նկան*-ը՝ «մի տեսակ հաց» բացատրությամբ: Նկատենք, որ *նկանակ*-ը ավելի հաճախական է: Աստվածաշնչում *նկան* օգտագործված է 3 անգամ, իսկ *նկանակ*-ը՝ 29: Մատենագրության վկայած օրինակները թույլ են տալիս այդ երկու բառերի միջև տեսնել իմաստային սահմանազատում: *Նկան*-ը հացն է ընդհանրապես, հացի զանգվածը, իսկ *նկանակ*-ը՝ այդ զանգվածի ձևը, մեկ հատ հացը: Պատահական չէ, որ *նկանակ*-ը հաճախակի գործածվում է քանակական թվականների հետ կամ հանդիսանում է *հաց* բառի որոշիչ. «Գինք կնոջ պոռնկի որչափ նկանակի միոջ հացի» /Առակ., 2, 26/: «Առ երկերիւր նկանակ» /Ա. Թագ., ԻԵ, 18/: «Տուր ինձ վոխ երկու նկանակ» /Դուկ., ԺԱ, 5/:

Բուզանդի մի վկայությունից երևում է, որ հնում *հացի /նկանակի/* չափերը մեծ չեն եղել. «Եւ իբրև եմուտ ի վանսն իւր, վերացուցեալ զպարեգօտս իւր ի վերայ սրտին ցուցանէր կապուտակեալ քան զչափ նկանակի միոյ» /183/: Ուշագրավ է նաև *նկան*-ի ստուգաբանական իմաստը: Բառը իրանական փոխառություն է, *ni* մասնիկով *kan* «քանդել, փորել» արմատով: Ենթադրվում է, որ *նկան*-ը «մոխրի տակ թաղելով եփած հացն է» /Արմ.³:

Հացատեսակներից են նաև զանազան կարգի խմորեղենները /խմորեղեն բառը գրաբարում չկա/՝ *բաղարջ, բլիթ, բոկեղ, ծաղ, կարկանդակ, կտապ, հաստեայ, պղակունդ, պաքսիմատ, տողխու, քաքար*: Նաստիկ-ը հունարենից կատարված փոխառություն է, որը վկայված է «Վարք հարանցում» *նատիկ, նստիկ* սխալ ձևերով: Սրանք սովորական *հացից /նկանակից/* տարբերվում են թերևս թխելու ձևով, պարունակությամբ, գուցե և ալյուրի տեսակով:

Ծաղ «մի տեսակ խմորեղեն», *տողխու* «խմորեղենի տեսակ», *հաստեայ* «խմորեղեն» գրաբարի բառարանների հավաստմամբ վկայված են մեկական անգամ: *Մանգառ* – ՆՀԲ-ը չունի: Ըստ Արմ.-ի «մի տեսակ խմորեղեն» դարձյալ վկայված է մեկ անգամ: Ուշ շրջանից է վկայված *բոկեղ*-ը /տե՛ս Արմ./:

Հաց թխել կապակցությունը գրաբարում չկա: Այդ իմաստն արտահայտվում է *առնել, պատրաստել, եփել* բառերի հարադրությամբ. «...արարեալ ալիւր հաց պատրաստեցից» /Ոսկ., Պօղ., 733/: «Եւ կանայք նոցա հայս հարկանեն, առնել կարկանդակ» /Երեմ. Է, 18/: «Բաղարջ եփեաց նոցա» /ՆՀԲ/:

Հացի, խմորեղենի զանազան տեսակների պատրաստման հիմնական նյութը ալյուրն է, որը գրաբարում այլ հոմանիշ չունի, բայց կան բառեր, որոնք մատնանշում են ալյուրի տարբեր տեսակներ. *գերմակ* «ճերմակ, նուրբ ալյուր», *նաշիի* «ընտիր ալյուր» /Արմ./, *սիմինդր*-ը նույնպես բարձրորակ ալյուր է: *Գերմակ*-ը հետազայում ձեռք է բերել նաև «հաց. ընտիր ալյուրից պատրաստված հաց» իմաստը. «Եղին զգերմակ հացն»: «Գերմակ հաց փշրեալ խառնէ և ուտէ» /ՆՀԲ/: Անստույգ համարվող *արման* բառը, որ կա Մագիստրոսի թղթերում, թերևս «խոշոր աղացած ալյուր, կորկոտ» իմաստն ունի /տե՛ս ՆՀԲ, Արմ./:

Գրաբարը ավանդել է ալյուրից պատրաստված մի շարք այլ ուտելիքների անվանումներ. *աթերայ* «ցորենից կամ խմորից պատրաստված կերակուր», *խիս*, *խալիժ*, *խորխախ*, *խորակ* «ալյուրով կերակուր», *հայս* «խմորեղենի միջուկը», *փոխինը*:

Խորակ-ը ըստ Արմ.-ի վկայված է մեկ անգամ:

2. ՄՍԵՂԵՆ

Միսը հնուց ի վեր եղել է մարդու հիմնական սննդատեսակներից մեկը: Քաղաքակրթության որոշակի մակարդակում, նաև կրոնական նկատառումներով ի հայտ է եկել *մսակերություն* - *ոչ մսակերություն* հասկացությունը: *Մսից հրաժարվել* հասկացության համար Եզնիկը օգտագործում է *մսահատ* բառը. «Իսկ ձեր ուխտաւորքն ասեն ընդէր են մսահաւորք» /231/: Հում միս խմաստն ունի *շաղիղը*, որից *շաղղակերութիւն* «հում միս ուտելը». «Յորժամ տեսանիցես զայր մի զօրաւոր, որ ի բազում յափշտակութեանց լի առնէր զսեղան իւր և յարբեցութիւն և ի շաղղակերութիւն հարեալ, հասանէր իբրև զառիժ մի և զայլոց զոսկերս խորտակէր և զիւր սեղանն լնոյր արեամբ և շաղղով» /Ոսկ., Ես., 137/:

Ուտելիքներից գրաբարը ավանդել է *միս*, *ամիժ*, *ապուխտ*, *ճարպ*, *պախ*, *խորտիկ*, *ուղեղ* բառերը:

Ամիժ բառով երկու օրինակ կա արձանագրված /Բուզանդ, Եղիշե/: Եղիշեի վկայությունից ակնհայտ է դառնում և բառիմաստը՝ «երեի մսից ճաշ»: Այդ օրինակում առկա է մեկ այլ ուտելիքի անվանում՝ *զվարակի ուղեղը*, որ հայ փափկասունք տիկնանց սիրելի ճաշատեսակներից էր. «Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք էրեոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ» /Եղիշ., 201/:

Ապուխտ-ը աղած ու չորացրած միսն է, ստուգաբանական իմաստը՝ *անեփ* /a ժխտական մասնիկ + *puxt* «հփելի» արմատը/: Գրաբարյան վկայություններից երևում է, որ ապխտում էին նաև ձուկը, թռչունների միսը. «Ժողովեցին զլորամարզին... և սպանին և

ապխտեցին իւրեանց ապուխտս» /Թիւք. ԺԱ, 32/: «... ապուխտ արարեալ, զծուկն զնա կարծելով» /ՆՀԲ/:

Խորտիկ-ը թէն ունի «ուտելիք» ընդհանրական իմաստը, որը նաև ստուգաբանական իմաստն է, բայց վկայված որոշ օրինակներից երևում է, որ այն նաև մսից պատրաստված ուտելիք է. «Որսա ինձ որս և արա ինձ խորտիկս» /ՆՀԲ/:

Պախ-ը ջրում եփած միսն է. «Եւ կերիցեն զմիսն ի գիշերիս յայսմիկ. խորովեալ հրով... և ոչ ուտիցէք ի նոցանէ հում և ոչ պախ եփեալ ջրով» /Ելք., ԺԲ, 8-9/:

Թէև *կենդանանում* + *ենի* կաղապարը սովորաբար արտահայտում է «մորթի, հագուստ» իմաստը, բայց որոշ օրինակներում նաև նշանակում է «տվյալ կենդանու միս». «Հրաժարէին ի խոզեմոյն և ոչ միայն յայնմանէ, այլ յամենայն իսկ ի մտոյ» /Ոսկ., Պող., 351/:

3. ԿԱԹՆԵՂԵՆ

Այս ենթախումբը ներկայացնող բառերն են *կաթն, դալ, իւղ, խեր, կարագ, կոզի, մածուն, պանիր, սեր, մաճառակ, շճուկ /թան, մածնաջուր/*:

Գրաբարում հաճախական են *կաթն, իւղ, կոզի, պանիր* բառերը: *Մածուն*-ը վկայված է ուշ շրջանից /թերևս 10-րդ դարից/, սակայն 5-րդ դարից *մածնուլ* բայի առկայությունը ինչ-որ տեղ ենթադրել է տալիս նաև համապատասխան գոյականի առկայությունը:

Դալ բառով վկայված օրինակները ունեն միայն «մոր առաջին կաթը» իմաստը: *Կարագ* հին մատենագրության մեջ ավանդված չէ, բայց եթե իրոք այն միջին պարսկերեն *karak-ն է, ապա ուրեմն բառը զործածական է եղել նաև հնում: *Մաճառակ*-ը ՆՀԲ-ը մեկնում է «կաթն մածեալ, մակարդեալ, բլիթ կաթնեղէն, նոր պանիր», Արմ.-ը՝ «նոր և թարմ պանիր»: Վկայված մեկ օրինակ կա միայն. «Եւ զտասն մաճառակս զկաթին տարցես հազարապետին և տեսցես զողջոյն եղբարց քոց» /Ա. Թագ., ԺԷ, 18/:

4. ԶԱՂՅՐԱՎԵՆԻՔ

Այս խմբի մեջ են մտնում *մեղր, խորխախ* «մեղրահաց, մոմով մեղր», *շաքար, հրուշակ*, նաև չորացրած մրգերի զանազան տեսակների անվանումները՝ *չամիչ, չիր, պաղատիտ* «չոր թուզ»:

Չիր-ը վաղ շրջանի գրաբարը չի վկայել, բայց բառի հ.-ե. ծագումը ենթադրում է գործածության հին ակունքներ: *Հրուշակ*-ը գրաբարում ավանդված չէ. ըստ Արմ.-ի առաջին վկայությունը Նադաշ Հովնաթանի տաղերից մեկում է: Բառը իրանական փոխառություն է, և դրա միջին իրանական բնույթը կարող է հավաստել գրաբարում բառի գործածությունը:

Ըստ բառարանային տվյալների՝ *շաքար*-ի առաջին վկայությունը 7-րդ դարից է: Որպես առաջին բաղադրիչ՝ բառը առկայանում է միայն *շաքարաբուխ* բարդ բառի կազմում: 5-րդ դարից են վկայված *չամիչ, պաղատիտ* բառերը. «Երկերիւր նկանակ և հինգ արդու փոխնդոյ և կայթ մի չամիչ և պաղատիտս երկերիւր» /Ա. Թագ., ԻԵ, 18/:

5. ՀԱՏԻԿԵՂԵՆ

Բրինձ, գարի, կորեակ, հաճար, ոլոռն, ոսպն, որիզ, ցորեան:

Բրինձ-ը վկայված է 7-րդ դարից, իսկ հոմանիշ *որիզ*-ը՝ 5-րդ դարից՝ եզակի վկայությամբ: Հատիկեղենից պատրաստված այլ ուտելիքներից են՝ *աղանձ, կասկ* «եփած գարի», *կորկոտ, մուրկ* «աղանձ», *եղի* «կաթնահամ ցորեն, նաև այդ ցորենի աղանձը»: Վերջինիս հինգերորդդարյան վկայություն չկա, հետագա դարերից են նաև *գարեկորկոտ, գարեփոխինդ*: *Խայծաղ* հ.-ե. ծագում ունեցող բառը ըստ Արմ.-ի գործառում է միայն բարբառներում:

6. ԶՐԻԿ ՃԱՇ

Այս տեսականիով մեր նախնյաց սեղանը, ամենայն հավանականությամբ, հարուստ չի եղել: Վկայված են *արզանակ*, *թան*: *Արզանակ*-ը ըստ ՆՀԲ-ի «պարարտ հիւք մսոյ եփոյ»: Ահա երկու վկայություն. «... և հուր բորբոքեցից զի միսն հալեսցի և արզանակն մուաղեսցի և ոսկերքն փխրեսցին» /Եզեկ., ԻԴ, 10/: «Եւ միս եղ ի վերայ խանի և զարզանակն արկ ի պոյտն» /Դատ., Զ, 19/:

Խաշոյ-ը վկայված է ուշ շրջանից:

Թան-ը հաճախական է հատկապես Աստվածաշնչում. «Ետ Եսաւայ հաց և թան ոսպնեայ» /Ծննդ., ԻԵ, 29/: *Թան ոսպնեայ* կապակցությունը վկայված է 5-րդ դարից, իսկ *ոսպնաթան*-ը՝ ուշ շրջանից: Կա և *շիկաթան*. «...տո՛ւր ինձ ճաշակել ի շիկաթանե՛դ յայդմանե՛» /Ծննդ., ԻԵ, 30/:

Ներքոգրյալ օրինակներից երևում է, որ *արզանակ*-ի և *թան*-ի զանազան տեսակներ են եղել. «Ամաչեմ զամենայն պատմել, բայց սակայն ասացից զհաւսն և զփասեանսն և զգունակ թանսն և զարզանակ, զազգի ազգի համեմունսն ընդ միմեանս խառնեալս, զղալար և զչոր խորտկացն համադամս» /Ոսկ., Մտթ. Գ., 69/: «Մի գուարթուն հաց կարկառոյր և ... ազգի ազգի թանս» /Եփր., Կգ., ԽԳ/: *Սամթաջուր*-ը վկայում է Մանդակունին:

Ըստ ՆՀԲ-ի *եփոյ/եփոց*-ը «թարգմանի ստեպ ի մեզ թան»: *Եփոյ/եփոց*-ը տարբերվում է *խորովոյք*-ից. «մեծամեծացն ճաշք և ընթրիքն դժուարաւ յօրինին, եփոցք և խորովոյք և ծախք ի վաճառաց» /ՆՀԲ/:

7. ԸՄՊԵԼԻԶ

Անվանումները մեծաթիվ չեն. *զինի*, *խազմուզ* «քաղցու», *ցքի*, *քաղցու*, *օղի*, *օշարակ*, նաև սրանց տեսակները:

Օշարակ-ը կարող է լինել ոգելից կամ ոչ ոգելից, իսկ մյուս ըմպելիքները ոգելից են: *Ցքի*-ն ըստ ՆՀԲ-ի ունի «ոգելից խմիչք, օղի», ըստ Արմ.-ի՝ «արմավից պատրաստված արբեցուցիչ ըմպե-

լիք, օղի» իմաստը. «Արբեցարուք ոչ ի գինոյ և ոչ ի ցքոյ» /ՆՀԲ/: «Իսկ ցքի.... որ ի պէտս գինոյ փոխէին՝ զայն կոչէ, քանզի թմբրեցուցիչ իմն և արբեցուցիչ է» /Ոսկ., Ես., 53/: *Զաղցու՝ «նորաքան գինի»*. «Եւ որովայն իմ իբրև զտիկ քաղցուոյ կապեալ եռայ» /Յոր., ԼԲ, 19/: *Զացախ ՆՀԲ-ը մեկնում է «կծու և բարկ ըմպելիք»*. «Զքացախ ցքոյ մի արբցէ» /ՆՀԲ/: *Օղի* բառը հաճախական է *օղի և գինի* կապակցութեամբ. «Արդ զգոյշ լեր, զուցէ ըմպիցես գինի և օղի» /Դատ., ԺԳ, 4/: «Յամենայնէ որ ելանէ յորթոյ՝ մի՛ կերիցէ և գինի և օղի մի՛ արբցէ և ամենայն անսուրբ մի՛ կերիցէ» /Դատ., ԺԳ, 14/: Որպէս բառակազմական բաղադրիչ առկա է *ամբրաւօղի, հացօղի, մեղրօղի* բառերում:

Ոչ միայն հաճախականութեամբ, այլև բառակազմական հնարավորություններով առանձնանում է *գինի* բառը /գինարբու, գինեբուխ, գինարբութիւն, գինաւետ, գինեակ, գինեբեր, գինեգոյն, գինեհամ, գինեհան, գինեկէզ, գինեճանութիւն, գինեմ «գինովանալ», գինեմոլ, գինեպաշտ լինել «մատովակել», գինըմպու, գինութիւն «գինարբութ»..../:

Արիւն խաղողոյ /որթոյ/ նշանակում է «քաղցու, գինի». «Արիւն խաղողոյ և ձէթ», «կանխագոյն է ծաղիկն...քան սկիզբն լինել արեան որթոյ» /ՆՀԲ/:

Հներն էլ բժախնդիր էին գինու որակի հանդեպ: Բարձր խափերն ունեին իրենց պատշաճող տեսականին. գրաբարը վկայում է *արքունի գինի*, այսինքն՝ ազնվագոյն, արքունիքին վայել գինի. «Որ զարքունի գինի ըմպեն» /ՆՀԲ/: Կա և *թասուն գինի* /ըստ ՆՀԲ-ի «ազնի գինի Թասոս կամ Թաշոս կոչուոյ». «Դու զԹասուն գինին ըմպես, նմա և ոչ բաժակ մի ցուրտ ջրոյ տաս ի ծարաւ» /Ոսկ., Մտթ., Բ, 693/:

* * *
* *

Ուտելիք ճոյց տվող բառերը պատկանում են ծագումնաբանական տարբեր շերտերի.

ա/ *Բնիկ հայերեն բառեր*. աղանձ, ալիւր, բոկեղ, բլիթ, բուտ, դալ, դոն, զանգուած, թան, խայծաղ, կաթն, կոգի, կորկոտ, կեր, կուր, կերակուր, մաստ «ածիկ», միս, մածուն, մեղր, մուրկ «աղանձ», չիր:

Բարբառային գործածություն ունեցող մի շարք բառեր էլ հ.-ե. ծագում ունեն. *ածիկ, լափ, բմբուշ* «լավ թխած հաց», *բուլ* «խմորի գունդ»:

բ/ *Իրանական փոխառություններ*. ամիճ, ապուխտ, գրտակ, թոշակ «կերակուր», գերմակ, խոհ, խորակ, խորբալ «ցորեն», խորտիկ, կասկ, կարկանդակ, կարագ, կտապ, հյուշակ, ճաշ, ճարպ, նկան, նպար, նշխար, շիրիկ, շաքար, պանիր, պիհ, պարեն, պաշար, պատրուճակ «ուտելու միս», պախ, պախաճճամ «կարկանդակ», քաշկեն «գարեհաց»:

գ/ *Հունական փոխառություններ*. մորե /ձկնեղենով համեմունք/, պաղատիտ, պաստեղ /գրաբարյան փուլում վկայված չէ/, պան, պղակունդ:

դ/ *Մեմական փոխառություններ*. խալիժ, խմոր, ձէթ, մանանայ, մաշիհ, քաքար:

ե/ *Անստույգ ծագմամբ բառեր*. արգանակ, բաղարջ, եղի, խիւս, կաղտի, հայս, հաստեայ, ձու, ունդ, շօթ, չամիչ, ջամբ, փոխինդ:

Խմիչք մատնանշող բառերից հայերեն է *գինին* /նաև ջուր/, իրանական փոխառություն է *օշարակ*-ը, իսկ *ցքի* և *օղի* բառերի ծագումը հստակ չէ:

Ինչպես նկատելի է, իմաստային այս խմբում զգալի թիվ են կազմում բնիկ հայերեն և իրանական ծագում ունեցող բառերը:

Հայ մատենագրության բազմաթիվ վկայություններ ուշադրության արժանի են ինչպես լեզվական քննության, այնպես էլ ուտելիքի և ըմպելիքի վերաբերյալ մի շարք մեկնաբանությունների տեսակետից: Բազմաթիվ վկայություններ կան արդեն 5-րդ դարից: Օրինակ՝ Մանդակունու «Յաղագս քառասնորդական պահոց եւ բաղդատութիւն նորա ընդ զատկական քառասնին» ճառում հաղորդվող տեղեկությունը կարևոր է ոչ միայն նրանով, թե ինչ չպետք է ուտել պահքի ժամանակ, այլև ուտելիքների անվանումներով:

Ահա այդ հատվածը.«Այդ արեւն է զայս պահոց քառասնորդս հարթիկ պահել ի բարեկենդանէն մինչեւ ցգատիկն... Այլ գինի եւ իւղ, ձու, ձուկն, պանիր, կոզի, կաղտի, բածին, շճուկ, կաթն, խեր, և ձկանմորէ, զայս բնաւ ամենեւին չէ արեւն և ոչ վայել է ճաշակել ամենայն ումբ» /ՄՀ, Ա, 1273/:

Գրաբարի բառարանները փորձում են մեկնաբանել վերո-
բերյալ հատվածում նշված մի շարք բառեր. այդուհանդերձ դրանք
կարող են նոր ստուգաբանությունների, ճիշտ բառաձևի, հնչյու-
նական փոփոխությունների մասին այլ դիտարկումների նյութ
դառնալ. օրինակ՝ *բածին*-ը, որ Արմ.-ում դիտվում է որպէս «մի
տեսակ աղած ձուկ», կարող է և *մածուն* բառի տարբերակը լինել,
մանավանդ, որ հայերեմում, թեև ոչ հաճախական, առկայանում են
բ/մ լծորդները:

Բազմաթիվ վկայություններ կան, որոնցում բննադատվում է
չաստակերությունը, ստամոքսը հաճախ անարգական ձևով անվան-
վում է *աղբաբոյն*, *աղբաման*. «Ձաղբաբոյն որովայնն փտեալ
ապականիցէ» /Մանդ./: «Ձի յորժամ սիրտն հանճարական հպար-
տանայցէ, սաստեցէ ի նա փորն աղբաման» /Եմես., ԺԲ/: «Որո-
վայնք աղբով կերակրոցն փափկացեալք խորհուրդս անտեղիս
բերեն», «գի որովայնք թանձրացեալք խորհուրդս սուրբս ոչ
ծնանին ... եւ որք որովայնին ծառայեն, անհնարին է լինել հա-
ւատարիմ ծառայ Աստուծոյ» /Մանդ., ՄՀ,Ա,1168/: Անարգական
երանգ ունի և *փոր*-ի *ծոր* հոմանիշը. «Որ պճնէ գծորս իւր և լնու
զպորտ իւր» /Եւագր., 120/:

Գրաբար մատենագրության մեջ շատ հաճախական է *գինի*
բառը. կան նաև *գինի* խմելու, *հարբելու* հասկացություններին
առնչվող բազմաթիվ բառակապակցություններ ու դարձվածային
միավորներ:

Կան վկայություններ, երբ գինու չափավոր օգտագործումը
դրական է համարվում: Ս.Գրքում գինին խմելու /որը թույլատրելի է/
շատ վկայություններ կան: Հիշենք հարսանիքի տեսարանը, որին
հրավիրված էին Հիսուսը և նրա աշակերտները: Երբ գինին վեր-
ջանում է, Հիսուսը կարգադրում է՝ քակույկով ջուր բերեն, և ջուրը



դարձնում է զինի, և տաճարապետը ասում է՝ «ամենայն մարդ զանոյշ զինին յառաջագոյն պաշտէ» /Յովհ., Բ, 1-10⁴։

Բայց գերակշռող են այն վկայությունները, երբ զինի խմելը, հարբելը պախարակվում է։ Տարբեր գործերից բերենք այդ կարգի օրինակներ՝ հատկապես լեզվական /լեզվամտածողական/ երկությունները ներկայացնելու միտումով. «Կարի արբեցող զայն ասեմ, որ յոռի զինովն զգլխիցէ» /Ոսկ., ՆՀԲ/։

Ս. Գրքում բազմաթիվ են այդօրինակ վկայությունները։ Առաջին հարբած մարդն էլ ըստ Գրքի եղել է Նոյը. «Եւ սկսաւ Նոյ, այր հողագործ, զերկիր գործել եւ տնկեաց այգի, եւ երբ ի զինւոյն արբեցաւ, եւ մերկացաւ ի տան իւրում» /Ծննդ., Թ, 20-21/։ «Արդ զգոյշ լեր, գուցէ ըմպիցես զինի և օղի» /Դատ., ԺԳ, 4/։ «Եւ մի արբենայք զինով յորում զեխութիւն է» /Եփես., Ե, 18/։ Կորյունը *զինի*-ն վկայել է մեկ անգամ. «Անդ էր այնուիւստեւ զարբեալ զինով» /32/։ Եզնիկը՝ 6. «Գինի զբազմութիւն ախտից զարթուցանէ» /303/։ Բուզանդը՝ 17։ Նշենք մեզ հետաքրքրող օրինակները. «Գինին եկն զակամք նորա» /174/, «...առնոյր զինի ի մատունս ըմպել» /159/, «Թագաւորն Պապ զուրախութեան զինին ունէր ի մատունս իւր» /196/, «Իբրև ընդ զինիս մտին...» /196/, «Եւ եղև իբրև անցին զառանձին ի զինոյն՝ ըստ չափ անցանելով, և ... թագաւորն Վարազդատ պահէր զանձն ի զինոյն» /200/։ Ազաթանգեղոսը՝ 13. «Կիզան ի համոյ հրաբաժակ զինւոյն» /253/, «Արք Սողոմ զզինին անօրենութեան» /269/։ Եղիշեն՝ 1։ Փարպեցին՝ 8. «Բայց ի թմրական զինւոյն հրաժարեցուցէր զտխեղծսն» /181/։ Խորենացին՝ 4. «Ուրախացեալ Արշակ ի զինիս պարծեր» /283/, «Ի զինուջ զեխեալ...» /331/։

Արբենալ և *ըմպել* գրաբարում հոմանիշության եզրեր ունեն՝ «խմել, ըմպել» ընդհանրական իմաստով։ Բայց *արբենալ* «զինի խմել, հարբել» իմաստով գործածությունը շատ հաճախական է։ Նկատենք, որ անցյալ կատարյալի դեպքում էլ ըմպել-ի հիմքը *արբ-* է, և այդ դեպքում փաստորեն *խմել* կամ *հարբել* իմաստը տարբերակվում է ըստ համատեքստի։ Օրինակ՝ *այր կերող և արբեցող* բառակապակցությունը կարող է մշանակել «ուտող և խմող» /բայց ոչ հարբող/, նաև «ուտող և հարբեցող»։ «Այր ի զինւոյն և արբեցաւ»

ՆՀԲ/ օրինակում *արք* նշանակում է «խմեց», իսկ *արքեցալ*՝ «հարքեց»:

Արք արմատով որոշ կազմություններ «հարքել, գինովանալ» իմաստով են գործածված՝ *արքեցութիւն, արքեցումն, արքեցօղ...* և այլն: Իսկ *արքուցանել*-ը հիմնականում նշանակում է «խմեցնել, ծարավը հագեցնել»։ «Արքո՝ ինձ սակաւ մի ջուր ի սափորոյ այտի» ՆՀԲ/, «Նորա և զծարաւիս արքուցանեն» /Ազաթ., 4/:

Բազմաթիվ օրինակներ կան, որոնցում հարքեցողությունը համարվում է անհիմնադրժեղի՝ հատկապես քրիստոնեական գաղափարախոսության տեսանկյունից: Մանդակունին իր ճառերից մեկում գրում է. «Եւ արդ եթէ չար է պոռնկութիւն, չար է և արքեցութիւն. իսկ ընդէ՞ր չերկնչիս և խորշիս յարքեցութենէն» /ՄՀ, Ա, 1225/: Նման օրինակներ կան հատկապես ճառերում, քարոզներում, կանոններում: Հայ իրականության մեջ թերևս առաջին վկայությունը Գրիգոր Լուսավորչին է. «Եթէ ոք արքեցաւ ի քահանայից կամ ի սարկաւազաց... մի իշխեսցէ ի պատարագ կամ ի պաշտան մերձենալ... զի արքեցողք ընդ սպանողսն են» /ՄՀ, Ա, 144/:

Այդօրինակ վկայություններ կան նաև հետհինգերորդ դարյան գրականության մեջ: Բերենք Միմեոն Աղձնեցու մի դիտարկումը. «Գինարբութիւն՝ մատն կախարդաց... Արքեցութիւն շուն կատաղեալ... արքեցութիւն պատառ Յուդայի, կեր անշիջանելի հրոյն: Գինարբուն խաւար պատրոյզ և շիջեալ լոյս... պսակ փշատոյ և գինոյ ոսկի ի քիթս խոզի.... Արքեցութիւն ատելի աստուծոյ, ցանկալի շանց...»⁵:

~

ՆՀԲ-ՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

Քննվող բառիմաստային խմբի և դրան առնչվող մի շարք բառեր վկայված չեն ՆՀԲ-ում: Դրանցից են՝

աղանմաղ «աղունը , հացահատիկը մաղող»։ «Արդ աղաչեմ յիշել... զԹորոս հացկտուր և զԱնտոն աղանմաղ» /Հիշատ., ԺԴ, 109/:

ասպակ «ուտելիքի մնացորդ»։ «Շունք սեղանոյն ասպակի սպասիցեն» /Ոսկ., Պօղ.,Ա, 459/:

գինեզեղութիւն «հարթածություն»։ «Գտին նմա քմբրեալ գինեզեղութեամբ» /Դևոնդ, 115/:

ըմպումն «խմելը»։ «Յերկար ըմպման գինոյն» /Ն. Բիւզ./:

ընթրակերոց «ճաշասենյակ»։ «Յոտն կան առ հասարակ ամենեքին և ի միջոցի ընթրակերոցին, նախ զառաջինն երկուք լինին, մին արանց և մին կանացի» /Փիլ., Ծառ., 30/:

խոհակերումն «ճաշ պատրաստելը»։ «Միով կատարեալ պատարագան խնայեաց զոչխարս ի սպանմանէ և զորթս ի խոհակերմանէ» /Եփր. Կց., ԾԱ, 106/:

խոհապետ «գլխավոր խոհարար»։ « Եւ կոչեցեալ խոհապետին զվաճառականսն և խնդրեաց զիս ի մոցանէ գնոյ» /Անկ. գիրք Խ. կտ., Ա, 141/:

խորակ «ալյուրով պատրաստված ուտելիք»։ «Ձցորեանն ետ քեզ Աստուած միայն և դու ազգս ինչ հնարիս հնարել անտի զնաշիին և զխորակն և զգերմակն» /Արմ./:

հացանաղաց «չմանրած հացահատիկ»։ «Յայտ է հասուցեալ և պատրաստեալ կերակուրս... և հացանաղաց ըստ թուոց...» /Եղիշ., Մեկն. արարծ., ՄՀ, 873/:

հացկտուր «հացագործ» /տե՛ս *աղանմաղ*-ի օրինակը/:

հացաղի «գինի և ցքի ոչ ըմպելին. զի գինի և հացաղի և մեղրաղի... մի են» /ՄՀ, Ա, 1284/:

մանգառ «խմորեղենի տեսակ»։ «Եւ ի վերայ հացին... և ի վերայ նաշիին պատարագացն և ի վերայ անխումն մանգառան...» /ՆԳ.Ա. Մնաց., ԻԳ., 29/:

մատուակոց «գինու մառան կամ սեղանատուն»։ «Մատուակոցս ընդ հարաւ կողմն» /Անկ. Գիրք առաք., 376/։

սննդականութիւն «սնունդ, սնվելը»։ «Դիել կաթն յօժարեցուցէք զազէտսն ի սննդականութիւն» /Փարպ., 181/։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մ.Ս.Ն. Հ. *Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, մաս 1-2, 1940-1951: Գ. *Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն /նախագրային ժամանակաշրջան/, Ե., 1987:
2. Մանրամասն տե՛ս *Արմ.*-ի *Սան*, *Սուն* բառահոդվածները:
3. Տե՛ս նաև В.И. Абаев, Этимологические заметки, "Труды ИЯЗ", 1956, 4, стр. 449:
4. Գիրգոր Տաթևացին Հովհաննու Ավետարանի *անոյշ գինի* արտահայտության հետ է կապում գինի խմողին *անուշ* ասելը, որը «յայսմանէ սովորեալ քրիստոնէից ի յըմպել, գինւոյն «անոյշ» ասենք միմեանց, որպէս տաճարապետն *անոյշ գինի* ասաց» /Տե՛ս Սուրբ Գիրգոր Տաթևացի, Մեկնութիւն Յովհաննու Աւետարանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 120/:
5. Սիմէոնի Աղճնեաց եպիսկոպոսի ասացեալ վասն գինո խմողաց, որ արքեման... /Տե՛ս *Աճեմյան մատենաշար*, Ա, Ե., 2002, էջ 194/:

ՀԱԳՈՒՍՏ, ՉԱՐԴԱՐԱՆՔ

Հագուստը քաղաքակրթության առաջին նշանակալից քայլերից մեկն է: Դրա ծագումն ու ձևաբովանդակային զարգացումը պայմանավորված է բնակլիմայական, սոցիալական, հասարակական շերտավորման, արվեստի ընկալման ու կիրառման, անհատական ճաշակի և այլ բազմաթիվ գործոններով:

Մերկ մարդուց մինչև թզենու տերև, այնուհետև մարմնի պարզունակ ծածկույթ ժամանակահատվածը կարճատև չի եղել, և այդ ընթացքում մի շարք այլ գործոնների հետ ձևավորվել, զարգացել է բնության և մարդու մի նոր ներդաշնակությամբ:

Ժամանակի ընթացքում տարազը ներկայացնում է ոչ միայն որպես ծածկույթ, այլև սոցիալական զանազան դիրքերի, տարբեր սեռերի մարդկանց յուրատեսակ տարբերակիչ: Հագուստների տարաբնույթ ու տարածև բազմազանությունը կախված է նաև ազգային, պատմամշակութային յուրահատկություններից. պատահական չէ, որ գոյություն ունի *ազգային տարազ* հասկացությունը:

Հագուստների փոփոխությունը, այլ հանգամանքներից զատ, մեծապես պայմանավորված է նաև ազդեցության գործոնով: Հայտնի է, որ մեր նախնիների տարազը նման էր իրանականին: Դա պատահական չէ, այլ արդյունք է այն սերտ առնչության, որ գոյություն ունեն հայ և իրանական ժողովուրդների միջև: Ուսումնասիրողները, ինչպես շատ հարցերում, այնպես էլ տարազի հարցում հակված են տեսնելու զուտ իրանական ազդեցություն¹: Մենք սա վիճելի ենք համարում. այստեղ պետք է տեսնել փոխազդեցություն և ոչ թե միայն ազդեցություն /մանավանդ եթե ուրարտական շրջանն էլ դիտենք մեր ժողովրդի պատմության մի հատվածը, ապա անհերքելի է ուրարտական ազդեցությունը իրանական իրականության մի շարք կողմերի վրա/: Իհարկե, անվերապահորեն չպետք է մերժել և ազդեցության որոշ դրսևորումներ, որոնք ինքնըստինքյան հասկանալի են:

Տարազների մասին առաջին տեղեկությունները քաղում ենք հնագույն որմնանկարներից, մետաղադրամներից, արձաններից, իսկ ավելի ուշ՝ հայ մատենագրությունից ու պատմագրությունից: Հայկական տարազին վերաբերող լուրջ ու սպառնալից աշխատանք է Վ. Հացունու ուսումնասիրությունը, որտեղ Մխիթարյան հայրերին բնորոշ գիտականությամբ ու բժախնդրությամբ քննված է հայկական տարազը իր պատմական զարգացման գործընթացի մեջ՝ պատմական տարբեր ժամանակահատվածներում: Նա համեմատում – համադրում է տարբեր ժամանակաշրջանների հագուստները, դրանց փոփոխությունները, տարազին վերաբերող նոր հասկացությունները, վերջիններիս հին համարժեքները /եթե կան/: Հեղինակը քննում է նաև հասարակության տարբեր խավերի /թագավոր, թագուհի, նախարարներ, դշխուհիներ, զորականներ, զինվորներ, քաղաքացիներ, կրոնավորներ/ հագուստները:

Բնականաբար, մեզ հետաքրքրում է տարազների անվանումների լեզվական քննությունը, որը Վ. Հացունու ուսումնասիրության խնդիրներից դուրս էր:

Նյութը քաղել ենք ինքնուրույն ու թարգմանական գրականությունից, հայկական համաբարբառներից ու գրաբարի բառարաններից:

Նկատենք, որ զգեստների անվանումներում այնպիսի հիմնական տարաբաժանում, ինչպես *տղամարդու զգեստ – կնոջ զգեստ*, հստակորեն չի արտահայտվում: Բազմաթիվ անվանումներ վերաբերում են թե՛ տղամարդու, թե՛ կնոջ հագուստին /թագ, գօտի, կօշիկ, արկանելի, վերարկու... և այլն/: Դրանց պատկանելությունը որոշվում է համատեքստից, որևէ նկարագրությամբ, որից և տեղեկություններ ենք ստանում տարբեր սեռերի մարդկանց հագուստների մանրամասների մասին:

Բերենք մեկ օրինակ. Բուզանդի մի վկայությամբ Հայր Մարդպետը, շրջելով Ներսես եպիսկոպոսի ենթակա զավառներում, բացականչում է. «Չիարդ զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է» /Բուզ., 97/: Այդ օրինակը հուշում է կանանց և հոգևորականների հագուստների նմանության մասին՝ հաշվի առնելով զգեստի երկարությունը: Բուզանդի Պատմության մեկ այլ

հատվածից ակնհայտ է դառնում կրոնավորների որոշ բարքերի դրսևորումը՝ պայմանավորված հատկապես նրանց հագուստներով. մի ոմն Ջավեն «...ամենայն քահանայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց... զի ոչ ըստ կրօնիցն ազանէին քահանայքն զպնդնաւորսն, որպէս օրէն էր ի բնէ, այլ սկսան զխոտորկտութիւն ի վերայ ծնգացն ունել և զարդարէին զհանդերձս իւրեաց պէս պէս նարօտօք... և զմորք մեռելոտիս զազանացն քահանայքն անխտիր ազանէին, որ ոչ վայել էր: Եւ ինքն Ջավեն աթինեալս... և զկնզմենիս և զգայլենիս ազանէր» /223/:

Անդրադառնանք *արտահագուստ* – *ներքնահագուստ* հասկացութիւններին:

Բանական մարդը, երբ սկսել է հանդերձավորվել, սկզբնական շրջանում և թերևս երկար ժամանակ չէր տարբերում *ներքնահագուստ-արտահագուստ* հասկացութիւնը: Նրան պետք էր ծածկոց՝ բնության մեջ, կենցաղում, ռազմի դաշտում իր գործունեությունը իրականացնելու հարմարություն:

Հացունու վկայությամբ «Ներքին կտաւեղէնք, որ պաշտօն ունին պահել արտաքին ազնիւ զգեստները մարմնոյ աղտէն անծանօթ էին հնոց: Հռովմեացիք ի սկզբան իւրենց թիկնոցին ներքև ազդերաց սփածանելի մը ունէին, յետոյ առին յունական պարեգօտը և զայն կրկնեցին, մին ներքին իբրև շապիկ և միւսն արտաքին, զորս առին քիւզանդացի ազնուականք ալ: Մարմնոյ կտաւեղէնք ԺՁ դարուն ծանօթացան քաղաքակիրթ ժողովուրդոց, սկսելով, ինչպէս կերևի Գաղիայէն» /էջ 5/:

Մատենագրական որոշ տվյալներ կան, որոնք ակնարկում են *ներքին զգեստ-արտաքին զգեստ* տարբերակումը:

Օրինակ՝ *անդրավարտիք-վարտիք* բառերի առկայությունից ենթադրվում է առաջինի ներքնահագուստ լինելը՝ ստուգաբանական մեկնությամբ իրան. andar «ներս» - vart «ծածկ»: Այդ են հաստատում և որոշ օրինակներ. «Եւ արասցես նոցա անդրավարտիս կտաւիս, ծածկել զառականս մարմնոյ իւրեաց» /Ելք., ԻԸ, 42/: Ստուգաբանական իմաստից ելնելով՝ *շապիկ*-ը նույնպէս կարելի է դիտել որպէս ներքնազգեստ /միջ.պրս. šapik, պրս. šabi «գիշերազգեստ»/. «Որ հանէ ի քէն զբաճկոն քո, մի՛ արգելուր ի նմանէ և

զշապիկ քո» /Լուկ., Զ, 29/: Մատենագրության տվյալներով *շապիկ*-ը մաս արտահագուստ է /տե՛ս Արմ., ՆՀԲ/: *Ներքնահագուստ* հասկացությունն են արտահայտում մաս *ներքնակ, վտաակ, ստորնակ, սփածանելի* բառերը. «Ձգեցուսցես... Ահարոնի... զպարեգօտս պճղնաւորս ի վերայ ներքնակացն» /Ելք., ԻԹ, 5/: «Բազում անգամ և զներքնակ պատմութեանս ի վեր քաշելով, եթէ որովայնն ուռո՞յց է՝ հարցափորձեն» /Փիլ., Բանք, 60/: «Ձվտաակն ի ներքոյ զգեստու իւրոյ» /ՆՀԲ/: «Էառ զսփածանելին և ածաւ զմիջով իւրով ի վերայ առականաց իւրոց ի ներքոյ զգեստու իւրոյ» /Վկ. արև., 163/: «Եւ գիտացին զի մերկ էին և կարեցին տերես թգենոյ և արարին իւրեանց սփածանելիս» /Ծննդ., Գ, 7/:

Շապիկ, սփածանելի, վտաակ որոշ համատեքստերում «ներքնահագուստ» իմաստը չունեն:

Արտահագուստ հասկացությունն արտահայտող բառերը հաճախ ունենում են *կրկին* բաղադրիչը. «Կրկնոց փոքրիկ առներ մմա» /ՆՀԲ/: «Ստանալ վափուկ ինչ հանդերձ բարակս և ողորկս և այծենիս կրկնաւորս» /ՆՀԲ/:

Հագուստ ընդհանրական հասկացությունը արտահայտում են հետևյալ բառերը՝ *տարագ, զգեստ, հանդերձ, ձորձք, ազանելիք, արկանելի*. «Պատուականքս առ մեզ զգեստուց և սակաւուց ազանելիք՝ հասարակաց մոցա է զգեստ» /Խոր., 223/: «Գձուձ հանդերձինք հասանիցէ առ իւր գերիսն» /Եմես., Ճառ., Է, 3/: «Ընկեցեալ զձորձ իւր՝ յարեաւ եկն առ Յիսուս» /ՆՀԲ/:

Այս խմբի բառերին բնորոշ իմաստով երբեմն հանդես է գալիս *ծածկոյթ*-ը. «Ձգլխոյն և զոտիցն զօրութիւն ոչ ապականել օտարոտի ծածկութիցն զգեցմամբ» /ՆՀԲ/:

Հ.-ե. ծագում ունեն *ազանելի, զգեստ, հանդերձ* բառերը, *տարագ, արկանելի* բառերի համար ենթադրվում է իրանական ծագում, թեև բացառելի չէ *արկանելի*-ի բնիկ հայերեն լինելու հանգամանքը:

Հագուստների ընդհանրական անվանումներից ամենահաճախականը *հանդերձ*-ն է: Ահա որոշ տվյալներ 5-րդ դարի ինքնուրույն գրականությունից /տվյալները քաղված են համաքարբառներից/:

Եզնիկը կիրառել է 4 անգամ, Բուզանդը՝ 13, Նոյիշեն՝ 14, Խորենացին՝ 3, Փարպեցին՝ 8:

Ընդհանրական իմաստ ունի և *վերարկու* բառը՝ «զգեստ, վերնագգեստ, գլխի ծածկույթ» նրբիմաստներով. «Կին յորժամ բաց գլխով հանդիպի, վաղվադակի վերարկու արկան է գիտոցն» /ՆՀԲ/: «Ձբաճկոն ընկերի քոյ... զի այն է վերարկու նորա» /ՆՀԲ/: Այս և այլ բազմաթիվ օրինակներից ակնհայտ է դառնում, որ *վերարկու* բառը պահել է իր ստուգաբանական իմաստը՝ «ի վերայ արկանել», այսինքն՝ ծածկույթ, շոր:

Հագուստների անվանումներ են նշում հետևյալ կազմությունները.

1. *Կենդանու անուն + ենի* /տվյալ կենդանու մորթուց պատրաստված հագուստ/՝ աղուեսենի, այծենի, առլիծենի, գայլենի, գառնենի, դուարենի, ոչխարենի, ուլենի, սամուրենի, օղի «ոչխար, գառ»-ից՝ օղենի... «Ձսամուրենիս և զկնգմենիս և գայլենիս ազաներ» /ՆՀԲ/: «Ծածկեալ յաչս իշխանին դուարենի զգեստիւք ի հանդերձս ոչխարաց» /ՆՀԲ/: «Եւ զուլենիսն ագոյց ի բազուկս նորա և ի վերայ մերկոյ պարանոցի նորա» /ՆՀԲ/:

2. *Նյութ ցույց տվող գոյական + եղեն, եայ, ի*. ասուի, այծեայ, ասուեայ, խորդեղեն, մագեղեն, մաշկեղեն, բրդեայ, բրդեղեն, ստեւեղեն... «Ձգոյշ լինիջիք հանդերձ քում. մագեղենս և մաշկեղենս եթէ կամիցիս ի ներքո ազանիջիր, թէ սգաւոր իցես» /Նուգր., 140/: «Խոշոր բրդեայ զգեստին » /ՆՀԲ/: «Ձգեցաւ մագեղեն» /ՆՀԲ/: «Հանդերձ ստեւեղեն զգեցեալ էր Յովհաննէս» /ՆՀԲ/:

3. *Նյութի /կտորի/ անվանումը որպես հագուստի անվանում*. կտաւ, մորթ, ստեւ, սնդու, բույդ, բեհեզ, կան, զգաթ... «Ձգեցեալ էին ի տաճարին կտաւս մաքուրս» /ՆՀԲ/: «Ազանէր բեհեզս և ծիրանիս» /ՆՀԲ/: «Վասն էր Յովհաննէս ստեւ ուղտոյ զգեստոյր» /Ոսկ., Ես., 180/:

4. *Կտավի, շորի գույնը որպես զգեստի անվանում*. «Կապուտակ և ծիրանի զգեցուցանեն նոցա» /ՆՀԲ/: «Ձգեցեալ հիրս և կարմիրս» /Եզեկ., ԻԳ., 6/: Հիր-ը ըստ Աճառյանի վկայված է երեք անգամ: Համեմատելով հունարեն բնագրերի հետ՝ մա գտնում է, որ բառը ունի «հակնթագույն» իմաստը: Գ. Ջահուկյանը հավանական

է համարում բառի ուրարտական ծագումը /Գ.Ջահուկյան, 1987, էջ 436/:

Անդրադառնա՞նք հագուստների զանազան տեսակների անվանումներին և դրանց բառակազմական, իմաստային և ծագումնաբանական քննությանը:

1. Գլխարկ

Արդի հայերենում հաճախական *գլխարկ* բառը գրաբարում հազվադեպ է հանդիպում /վաղ շրջանից ՆՀԲ-ը վկայություն չի բերում/: Այդ հասկացությունը գրաբարում արտահայտվում է այլ բառերով՝ *գլուխ + այլ արմատ /կամ ածանց/* կաղապարով. *գլխանոց, գլխադիր, գլխապատ, գլխապան, գլխապահ*: Ահա մի քանի օրինակ. «Ծածկոյն այն գլխադիր ինչ է» /ՆՀԲ/: «Գլխանոց ագուցեալ երկաթի» /Խոր., 35/: «Զգլխապատսն քակելով և զվարսն հարթելով» /ՆՀԲ/: *Գլխարկ* հասկացությունն են արտահայտում նաև *գլխոյ հանդերձ, գլխալինդ վարշամակ* կապակցությունները: Բացի վերոհիշյալներից կան նաև մի շարք բառեր, որոնք գլխարկի զանազան տեսակներ են /կամ գլխարկի մաս/: Ներկայացնենք դրանք համապատասխան օրինակներով:

Աշխարասնդ «թագավորական թագի կապը». Բուզանդը վկայում է մեկ անգամ, որը բերում է և Արմ.-ը համապատասխան մեկնությամբ: Ակնհայտորեն իրանական փոխառություն է, որի երկրորդ բաղադրիչն է իրան. vand «կապ», իսկ առաջին բաղադրիչի իսկությունը պարզ չէ:

Ապարօշ. Արմ.-ը մեկնում է որպես «գլխին կապելու մի զարդ», ՆՀԲ-ը՝ «վարշամակ ազնիւ պատեալ զգլխոյն արանց կամ կանանց. կամար գլխոյ, խոյր, արտախուրակ»: Վկայված օրինակներից երևում է, որ բառը ավելի շատ «հագնելիք», քան «զարդ» իմաստն ունի. «Ապարօշ բեհեգեայս», «կապեաց ապարօշն ի ճակատ իւր» /ՆՀԲ/: Բառը հավանորեն իրանական ծագում ունի:

Արտախոյր. հանդիպում ենք Ագաթանգեղոսի երկում, որը և բերում է Արմ.-ը. «Զթագաւորս շքեղացուցանէ ի նմանութիւն արտախոյրն պսակի ի վերջաւորն փողփողելոյ»: Արմ.-ը մեկնում է «թագավորական թագ», որը և ճիշտ բացատրություն է: Աճառյանը, ենթադրելով բառի իրանական ծագումը, անբացատրելի է համա-

րում առաջին բաղադրիչը: Նորագույն փաստերով հաստատվում է բառի իրանական բնույթը /Բեյլի, Բենվենիստ/. ավելի համոզիչ է վերջինիս փաստարկը՝ իրան. *ra-xa-da* «ուղիղ գլխարկ»²: Այս ստուգաբանությունը հավաստվում է նաև մի լրացուցիչ փաստարկով. «Անաբասիսի» հայերեն թարգմանության մեջ կա մի այսպիսի տող. «Միայն արքան ունի իրավունք գլխին ուղիղ տիարա խոյր դնելու»³:

Գագաթնադաշն. մատենագրության մեջ միակ վկայությունը բերում է ՆՀԲ-ը. «Ուրպես զօրականացն սաղաւարտն, զոր ի հին արտաքնոցն կորբանն կոչեն, այսինքն՝ գագաթնադաշն»: Բառի վկայության ժամանակաշրջանը ստույգ չէ:

Գդակ/գտակ. բառարանները նշում են «գլխարկ» իմաստը:

Գլխադիր «գլխաշոր, գլխի ծածկոց»:

Թագ. հաճախական կիրառություն ունի «թագավորական թագ» նշանակությամբ. իրանական փոխառություն է:

Խոյր /թագավորի, քահանայապետի, իշխանների գլխարկ/. «Զգեստաւորէ զնա թագաւորական զգեստու և դնէ խոյր ոսկի ընդէլուզեալ մարգարտով» /ՆՀԲ/:

Թադհար /կանացի գլխարկ/. «Մի՛ ծամակալս ի ծամս, մի՛ տեռակալս և թադհարս ի զլուխս» /ՆՀԲ/: Բառի առաջին բաղադրիչը՝ *թադ*, նշանակում է «ծածկոց», նաև «գլխի ծածկոց» /երևի հիմնականում կանացի/: Ահա մեկ այլ վկայություն *թադ* արմատով. «Եթէ թադաթափ տեսանիցես զնաժիշտն, քեզ թշնամանս համարիս զիրսն...» /Ոսկ., Պօղ., Ա, 835/: *Թադաթափ* նշանակում է առանց գլխի ծածկույթի /տե՛ս ՀԱ, 1914,320/:

Ծամակալ. կրում են միայն կանայք:

Կեդար/կիդար «խույր». նվազ հաճախական է: ՆՀԲ-ը բերում է մեկ օրինակ: Հունարենից կատարված փոխառություն է:

Կորբան /տե՛ս Գագաթնադաշն/:

Միթր «պսակ, խույր» /ունի և *միտր* գրությունը, որն ավելի ճիշտ է/. «Իբրև փեսայի եղի ինձ միտր... միտրն պսակ ինչ բոլորեալ... զոր դնեն փեսայք ի հարսանիս» /Ոսկ., Ես., 458/:

Շարագոյր «ծածկոց, բոլ» . «Կանայքն իրեանց ունէին գլականի՛

ծածկեալ շարագործով դիպակի» /ՆՀԲ/: Թեև վկայությունը ուշ շրջանից է, սակայն որպես իրանական փոխառություն բառաձևը ավելի հին ժամանակագրություն է ենթադրում /տե՛ս Հովհաննիսյան, 1990, էջ 255/:

Ջաբրոն «վեղար, կրոնավորների գլխարկ»։ միջինհայերենյան շրջանում հին ֆրանսերենից կատարված փոխառություն է:

Մաղաւարտ «երկաթե կամ պղնձե գլխարկ, նաև խույր»։ իրանական փոխառություն է:

Սուղար «կանացի գլխարկ, գլխաշոր»։ հունարենից կամ լատիներենից կատարված փոխառություն է:

Վարսակալ. հիմնականում տղամարդու գլխանոց է՝ ի տարբերություն ծամակալի. «Եկն դիպեցաւ սմա օտար պատանի մի... վարսակալ եղեալ ի գլուխ» /Բուզ., 226/: Բառի առաջին բաղադրիչը՝ *վարս*, իրանական է, բառը ամբողջությամբ՝ հայակագնություն:

Ուշագրավ է, որ *վարս*, *գէս*, *մագ*, *հեր* հոմանիշներից *հերակալ*, *մագակալ* կազմությունները բառարանները չեն ավանդում, իսկ *գիսակալ*-ով ՆՀԲ-ում մեկ օրինակ կա՝ հետգրաբարյան շրջանից: *Վարս*-ը գրաբարում առկայանում է հիմնականում հոգնակի ձևով, այսինքն՝ նշանակում է մագեր, մագափունջ, ինչպես և *ծամ*-ը:

Քուսիթայ /ըստ բառարանների կրոնավորների գլխարկ/. «Մագեղեն քուսիթայ եղ ի գլուխ» /ՆՀԲ/: Փոխառություն է ասորերենից:

Տեռ, *փաղան*, *քող* բառերը հիմնականում «շղարշ, երեսի քող» իմաստն ունեն, որոնք կարելի է և որոշ վերապահությամբ գլխանոց համարել:

Գլխարկ պատրաստող հասկացությունը գրաբարում արտահայտվում է հիմնականում *գոյ. + գործ, գոյ. + արար* կադապարով /թագագործ, խոյրագործ, խոյրարար/: Այս կադապարը չի գործում գլխարկի բոլոր անվանումների դեպքում /համեմայնդեպս բառարանները չեն վկայում/, սակայն անկախ վկայությունից կադապարը պե՛նոք է համարել ընդհանրական:

Գլխարկ դնել իմաստը արտահայտելու համար բայահիմք /բայարմատ/ + ել /ալ/ կաղապարը ըստ էության չի գործում: Թերևս միայն նշելի է *սաղաւարտել* «սաղավարտ դնել»: Բառարանները նշում են երեք օրինակ, բոլորն էլ դերբայական ձևով:

Թագեմ «թագադրել. պսակել»։ վկայված է ուշ շրջանից:

Ավելի գործածական են *գոյ. + բայ* հարադրավոր կազմութիւնները. ածել /վարսակալ/, դնել /վարսակալ, թագ, խոյր, սաղաւարտ, միտր/, արկանել /գլխարկ, քող/, ագանել /գլխանոց/, կապել /թագ/: Ինչպես նկատելի է, ավելի տարածված է *գոյ. + դնել* կաղապարը:

2. *Կոշիկ*

Այս հասկացությունն արտահայտում են *կօշիկ, մոյկ, մուճակ, օղ, հողաթափ* բառերը: Առաջին երկուսը իրանական փոխառություններ են՝ վկայված 5-րդ դարից: Երկու տարբեր անվանումների առկայությունը ենթադրել է տալիս, որ դրանք նույն առարկայի տարբեր տեսակներ են, որը, սակայն, վկայված օրինակներից չի զգացվում, կամ էլ գործ ունենք փոխառության տարբեր սկզբնաղբյուրների կամ տարբեր ժամանակահատվածների հետ:

Կօշիկ գործածական է և արդի գրական արևելահայերենում, իսկ *մոյկ*-ը՝ արևմտահայերենում:

Հողաթափ. ՆՀԲ-ը մեկնում է «ագանելի ոտից ի կաշույ՝ որ և է ձևով. մոյկ, սանդալ, տրեխ, կօշիկ»: *Հողաթափ*-ը ըստ երևույթին կոշիկների տեսականու մեջ ամենահասարակն էր. «Հողաթափը իրեանց հնացեալք և կարկատեալք» /ՆՀԲ/: Գրիգոր Տաթևացու մի վկայությամբ ևս հաստատվում է *կոշիկ*-ի և *հողաթափ*-ի տարբերությունը. «Նախ [Բրիստոս] առաքելոցն ասաց ունել հողաթափս և ոչ կօշիկս, ապա և ինքն ոչ զգեցաւ»⁴:

Մուճակ «կոշիկ» /ըստ երևույթին կանացի կոշիկ/ վկայված է միջին-հայերենյան փուլից, բայց պետք է համարել հին փոխառություն /մոյկ բառի հնչյունափոխված տարբերակն է, իսկ k-ժ հնչյունափոխությունը գործել է հին և միջին պարսկերենում/:

Օդ «կոշիկ» բնիկ հայերեն բառ է՝ դարձյալ վկայված 5-րդ դարից. «Օդիս պնդեցեր զոտս դոցա» /ՆՀԲ/: Հետգրաբարյան շրջանից են՝ *սանդալ, ոտնաման, տրեխ, սօլ*: Սանդալ-ը թերևս գործածական է եղել գրաբարում, մանավանդ որ Բուզանդը ունի *սանդալատոր* բառը: *Չմուշկ*-ը վկայված է մեկ անգամ՝ 13-րդ դարից:

Խորենացին մեկ անգամ վկայել է *զգեստ ոտին* կապակցությունը. «Տայ և առնն քաջի և պատուականի Արգամայ զխոստացեալ գահն ... և կարմիր զգեստ միոյ ոտինն» /174/: ՆՀԲ-ը և ԱԲ-ը *զգեստ ոտին*-ը մեկնում են «կոշիկ»: ՀԱճառյանը, հիմք ընդունելով Հացունու դիտարկումը, *զգեստ ոտին*-ը մեկնում է «կոշիկ տնապանով» /տե՛ս Արմ., *Չգեմուլ* բառահոդվածը/:

Որպես կոշիկ մասի անվանումներ գրաբարը վկայում է *անկարուդ, զարշապար, խրաց, կապիճ, կրուկ, ներբան, փոկ* բառերը. «Անկարուդը կօշկաց նոցա և հողաթափի իւրեանց հնացեալք» /Յեսու, Բ, 5/: «Ոչ հատցին խրաց կօշկաց նոցա» /ՆՀԲ/: «Ընդ ներբան կոշկի նորա»: «Յորժամ զկօշիկսն ի թոյրս սեւութեան քաջաթոյրս ներկանիցէ, սրակտուցս, նեղազարշապարս և ի կրկունս սեւացեալս...» /Ոսկ., Պօղ., Ա, 68/:

Կոշիկ հագնել հասկացությունը արտահայտվում է *գոյ.+ազանել* հարադրությամբ /ազանել կօշիկ, հողաթափ, մոյկ/, *գոյ.+պնդել* /օդիս պնդեցեր զոտ/:

Կոշիկ հանել հասկացությունը արտահայտվում է *գոյ.+լուծանել, գոյ.+հանել, գոյ.+գերծանել* կադապարներով. «...և անց յայնկոյս, այնպես զի և զկօշիկն անգամ ոչ եհան յոտիցն» /Վկ. արև., 185/: «Լոյծ զկօշիկս յոտից բոց, քանզի տեղիս... սուրբ է» /Ես., պատմ./:

Հանդիպում է նաև *քոկանալ զկօշիկ* կապակցությունը. «Բոկանայր այր զկօշիկ իւր և տայր ցընկեր իւր» /Հոութ., Դ, 7/: *Կոշկակար* բառի հոմանշային շարքի անդամներն են՝ *կարուսկ, օղագործ*: *Դերձակ*-ը նույնպես գործածվում է այդ իմաստով:

..

3. Ձեռնոց

Այս ենթաբաժանմանը վերաբերող բառերը սակավաթիվ են և

հիմնականում կազմված են *ծեռք, բազուկ, դաստ, թաթ* բաղադրիչներով: Վաղ գրաբարյան վկայություններն ավելի սակավ են:

Հոմանիշներ են *բազկույտար, բազպան, ձեռնուրար* բառերը: *Բազպան*-ը ըստ ՆՀԲ-ի՝ «պահպանակ բազկանց՝ ամփոփիչ թեզանաց, սպաս եկեղեցական ազուցեալ ի բազուկս, որ երբեմն եպիսկոպոսաց էր սեպհական»:

Այս կարգի բառերը հիմնականում ուշգրաբարյան վկայություններ են: Բերենք օրինակներ. «Ձայս ձեռնուրարս և բազպանս քահանայական՝ համարել ի սպասաւորութիւն սպասաւորաց քոց» /ՆՀԲ/: Վկայված է և *բազպան*-ի հոմարեն համապատասխանակը՝ *եպիմանիկոս /եպիմիստիկոս/*. «Իսկ եպիմիստիկոսն /կամ եպիմանիկոսն/ զոր կոչենք բազպանս... զի զսպեսցէ զծեռսն, և պատրաստ սպասաւորութեան արասցէ» /ՆՀԲ/: «Տացէ մնա զբազկուրարն՝ դնելով ի ծախ բազուկն» /ՆՀԲ/: «Ձայս ձեռնուրարս, և բազպանս քահանայական» /ՆՀԲ/:

Թաթպանը վկայված է ԺԴ դարից. «Ի ձեռս իւր ազիցէ թաթպանս և քահանայապետական մատանին» /ՆՀԲ/:

Թեզանիք. ըստ ՆՀԲ-ի «երկար թև զգեստու, իբրև բազպան»: Վկայություն կա 5-րդ դարից:

ՆՀԲ-ը և ԱԲ-ը ունեն *ծեռք* «ծեռնոց»: ՆՀԲ-ի եզակի վկայությունը Խորենացու պատմությունից է. «Եւ զգեցուցանողս իւր զծեռէս ի զաւակէ Զանանացոց. և անուն կոչէ ազգին Գնթունիս» /Խոր., 110/:

Ստ. Մալխասյանցը մերժում է *ծեռք/ծեռէս*-ի «ծեռնոց» իմաստը. *ծեռէս* համարում է հատուկ անուն և համապատասխան հատվածը թարգմանում «Իրեն զգեստներ հագցնող նշանակում է Չեռեսին քանանացվոց սերնդից»⁵:

4. Այլ կարգի հազուստներ

Այս դասակարգման մեջ ընդգրկվող բառերը բազմաթիվ են, բազմաբնույթ՝ թե՛ բառակազմության, թե՛ հաճախականության, թե՛ ծագումնաբանական տեսանկյունից: Հազուստների շատ անվանումներ առկայանում են *մարմնի մաս* ցույց տվող բառ + *պան, անոց* կադապարներով /*անթանոց, թիկնանոց, լանջանոց, թիկնապահ,*

լանջապահ, կրծանոց, ուսանոց.../։ Բանի որ *մարմնի մաս* ցույց տվող բառերը հիմնականում հնդեվրոպական են, ապա կարելի է ենթադրել, որ վերոհիշյալ կազմությունները բնորոշ են եղել նախքան որոշ հագուստների անվանումներ փոխառելը։

Ներկայացնենք մի քանի հագուստների անվանումներ՝ ըստ հարկի որոշ դիտողություններով ու նկատառումներով։

Աղաբողոն. հունարեն փոխառություն է. «վերարկու, կրոնավորի կարճ զգեստ»։ Վկայված է թարգմանական և ինքնուրույն գրականության մեջ։ Բառը ունի նաև *անաղափ, անաբող, բողոն...* ձևերը։

Ամդան «պատմունճան, վերարկու». առաջին վկայությունը Աստվածաշնչից է. «Տեսի յաւարին ամդան մի նկարէն» /Յեսու., Է, 21/։

Անակիւղ «կարճ պարեգոտ». մեկ անգամ վկայել է Բուզանդը. «Ագաւ նա պարեգօտ մի զոր անակիւղս կոչեն» /152/։ Համատեքստից հասկացվում է, որ բառը դիտվում է որպես օտար։

Անամեստիոն «քղամխլ». Դարձյալ եզակի վկայություն ունի, դարձյալ դիտվում է որպես օտար բառ /տե՛ս Արմ./։

Արիզած «ղենջակ, գոգնոց». «Ոչ զառիզածն ածել, ոչ քուրձ զգենուլ» /ՆՀԲ/։ Բնիկ հայերեն բառ է⁶։

Ասղնաթոռուի. ՆՀԲ-ը մեկնում է «անշուք հանդերձ»։ Վաղ գրաբարում ավանդված չէ։ Հաճախական գործածություն չունի։

Բաճկոն «պատմունճան, վերարկու», կա և *բաճկոնակ*. «Որ հանէ զբաճկոն յաւուր ցրտոյ» /ՆՀԲ/։ «Այր ողորմած պահեսցէ զգանձ իւր, իսկ որ անզգամն է զբաճկոնակս իւր դիցէ ի վերայ նորա» /Եւագր., 126/։ Բառի ծագումն անհայտ է։

Գիշտ «աբեղայի հատուկ զգեստ». վկայված է ուշ շրջանից. ծագումը պարզ չէ։

Գրատ «զգեստ, վերարկու». հանդիպում են *գրատ, գրաստ, դրատ, դրաստ, դրատ* ձևերը։ Ենթադրելի է իրանական ծագում։

Գրզլի «ցնցոտի, հին զգեստ». բառի գոհացուցիչ ստուգաբանություն չկա։

Գօտի. հաճախական գործածություն ունի. «զօտիք ձեր ընդ մէջս և կօշիկք ձեր յոտս» /Ելք., ԺԲ, 11/։ Բնիկ հայերեն բառ է⁷։

Դիպակ «գործվածք, հագուստ»։ «...գլխավալս և զճեղանալս. զեզրածիրանին և զմիջնածիրանին. զառունին արկանելի և զերևելի լակոնացին» /Եսայ., Գ, 22-23/։ Իրանական փոխառություն է։

Դուռա. վկայված է 11-13-րդ դդ. /Մագիստրոս, Լամբրոնացի/։ Այդ վկայությունների մեջ էլ շեշտվում է օտար հագուստ լինելու հանգամանքը։ Արաբերենից կատարված փոխառություն է։

Եզրածիրունի. Խոեն *Դիպակ*-ի օրինակը/։

Եփուղ/եփուտ «կարճ վերարկու, որ հագնում են դետական քահանաները»։ մի շարք վկայություններ կան Աստվածաշնչում։ Օտար հասկացություն արտահայտող օտար բառ է։

Ջանկապան «ծնկները ծածկող հագուստ»։ «Արքն այնորիկ կապեցան պատմունճանօք և զանկապանօք» /ՆՀԲ/։ Իրանական փոխառություն է։

Ջունար «գոտի»։ սեմական փոխառություն է, վկայված է մեկ անգամ. «Դնէին զդաստառակն կամ զգունարն /կամ զգօտին ի վերայ անձանց» /Արմ./։

Թամբատեակ/թամբատոց «ծորձ, ցնցոտի»։ ՆՀԲ-ը ենթադրում է «մինչև ազդրերը հասնող հագուստ»՝ նկատի ունենալով *թամբ* բառի նաև «ազդր» իմաստը։ *Թամբ*-ը Արմատականում ստուգաբանված չէ։ Ըստ Գ. Ջահուկյանի՝ այն հ.-ե. ծագում ունի⁸։

Թիկնանոց, թիկնոց «անթև վերարկու»։ «Թիկնանոց ամառայնի կտաւի» /ՆՀԲ/։

Խլայ-խիլայ «թանկարժեք զգեստ, գլխարկ, բոդ»։ «Ի բաց զերծեալ լինի հարսինն խլայն» /ՆՀԲ/։ Ասորական փոխառություն է։ Այս արմատն է *խլատեռ* «կանանց բարակ բոդ», *խիլայել* «զգեստ նվիրելով պատվել» բառերում։

Ծիրանի «թանկարժեք զգեստ. հագնում են հիմնականում քաղափորները»։ քանի որ բառը առնչվում է *ծիրան*-ին, ենթադրելի է կարմրավուն, դեղնավուն հագուստ, բայց գրաբարի բառարանները *ծիրանի* /ծիրանագույն/ մեկնում են նաև մանուշակագույն, կապույտ և այլն։

Կամար «գոտի»։ «Փոխանակ կամարին չուան զօտի» /Ոսկ., Պօղ., Ա, 69/։ Իրանական փոխառություն է։

Կողոփ «անթև, կարճ զգեստ»։ «...սիրել ծածկել զմերկութիւն, առնեն և նոքա հանդերձս անպաճոյնս... կողոփս ամարանի և թեզանաւորս ձմերանի...» /Եղիշ., Մատ., 159, ՄՀ, Ա, 931/:

Հալա «զգեստ, շապիկ»։ 5-րդ դ. վկայություն չկա։ Գործածական է մի շարք բարբառներում։

Մեկնոց «վերարկու, թիկնոց»։

Մենքան /ուղղելի՝ նեմքան «կարճ հագուստ»/. վկայված է մեկ անգամ. «Անդ հանդերձ պաճուճեալք և ժամանակ մենքանաց» /Արմ./: Իրանական փոխառություն է։

Նուարտան «ծածկույթ»։ «Ծածկեցին զնա մագեղէն նուարտանաւ կապուտակաւ» /ՆՀԲ/: Արմատական բառարանում ստուգաբանված չէ. ակնհայտորեն իրանական փոխառություն է՝ *ni-vart* «ծածկոց»։ Այդ արմատով առկա են այլ կազմություններ⁹։

Շապիկ. ըստ ՆՀԲ-ի «Ազանելի կտաւի ի վերայ մերկոյ մարմնոյն ի ներքուստ. և լայնաբար արկեալն նաև ի վերայ այլոց հանդերձից...»։ Դատելով բառի ստուգաբանական իմաստից՝ իրան. *Š ab* «զիշեր», պետք է ենթադրել, որ մախապես այն ունեցել է «զիշերանոց, ներքնազգեստ» իմաստը, և իմաստի լայնացումը կառարվել է հետագայում։

Ուսանոց «թիկնոց»։ վկայված է ուշ շրջանից։

Ուրար «եկեղեցականի ուսանոց, նաև աշխարհականի գոտի»։ հունական փոխառություն է. վկայությունները հիմնականում ուշ շրջանից են։

Պատմուճան «երկար զգեստ՝ տղամարդու և կնոջ»։ հաճախական կիրառություն ունի։ Իրանական փոխառություն է։

Պարեզօտ. հաճախական կիրառություն ունի։ Թեև Աճառյանը ենթադրում է իրանական ծագում /տե՛ս Արմ./, բայց այն կարող է լինել նաև հայակազմություն, մասնավաճնդ եթե հավաստի է *զօտի* բառի հ.-ե. /բնիկ հայերեն/ ծագումը։

Սփածանելի. հավանորեն ներքնազգեստ է, այդ են վկայում և օրինակները. «Կարեցին տերևս թզենոյ և արարին իւրեանց սփածանելիս» /ՆՀԲ/: «Եւ գիտացին զի մերկ էին և կարեցին իւրեանց սփածանելիս» /Ծննդ., Գ, 7/:

Վակաս «ուսանոց, թիկնոց, խույր, պսակ, թագ»։ Բառիմաս-
տի մանրամասն բացատրությունը տես Արմ.ում, ՆՀԲ-ում։ Ծա-
գումը պարզ չէ։

Վարտիք. ծագումնաբանորեն ենթադրում է «ծածկոց»։ ըստ
Արմ.-ի «կես մեջքից ցածր եղած զգեստ»։

Վերարկու. «արտահագուստ» ընդհանուր իմաստից զատ
ունի նաև «անկողնու ծածկոց, կարպետ, գորգ, օթոց» իմաստները
/ՆՀԲ/։

Վտաակ «ներքնազգեստի տեսակ»։ «Եւ արասցես վտա-
ակս պճղնաւորս համակ կապուտակ» /Ելք., ԻԸ, 31/։ Արմ.-ում
ստուգաբանված չէ։ Գ.Ջահուկյանը հնարավոր է համարում իրա-
նական ծագումը /Ջահուկյան, 1987, էջ 558/։

Տաբատ. վկայված է մեկ անգամ. «Արարին զանդրաւար-
տիսն տաբատ ի նիւթոյ բեհեզոյ» /Ելք., ԼԹ, 27/։

Տառատոկ «զինվորական հագուստ»։ վկայված է Աստվա-
ծաշնչում. «Արար երկսայրի և եղ յաջոյ ազդեր իւրում ընդ տա-
ռատոկան» /Դատ., Գ., 16/։

Տեռ «կանացի ամառային վերնազգեստ»։ բնիկ հայերեն
բառ է։

Յիսի «այծի մորթուց հյուսված կոշտ կտոր»։ «Ոչ հանդերձ
ասուեայ. զգենոյր, այլ ցփսեայ» /Եւս., Պատմ., Բ, 25/։ Ծագումը
պարզ չէ։

Փիլոն «վերարկու, թիկնոց»։ հունարենից փոխառյալ բառ է։

Քղամիդ /ըստ Արմ.-ի «փշխանական վերարկու»/. «Դարձեալ
առաջի Պիղատոսի... ագուցանէին նմա ծիրանի և արկանէին
քղամիդ կարմիր» /Կոչ. ընծ., 250/։ Փոխառություն է հունարենից։

Քոթանակ /ըստ ՆՀԲ-ի «կտաւի պատմութեան, շապիկ, բաճ-
կոն, սփածանելի»/. Արմ.-ում ստուգաբանված չէ։ Գ.Ջահուկյանը
համարում է սեմական փոխառություն /Ջահուկյան, 1987, էջ 464/։

Քուրծ «կոպիտ զգեստ»։ բառի ծագումը ստույգ չէ։

Հագուստների անվանումների մեջ փոխառյալ շերտը ավելի
ծավալուն է, քան բնիկ հայկականը։ Բայց քանակական կողմը այս
դեպքում չի արտացոլում բառախմբերի գործառական, որակական
առանձնահատկությունները։ Օրինակ՝ հունարենից անցած բառե-

րը, որ քանակով ամենաշատն են, գործառական մի քանի տեսանկյունից տարբերվում են, ասենք, հայերեն բառերից կամ իրանական փոխառություններից: Առաջին՝ հունարենից անցած բառերի զգալի մասը մուտք է գործել թարգմանությունների միջոցով, և թարգմանիչը, չգտնելով համապատասխան հասկացության հայերեն անվանումը, այն թողնում է նույնությամբ, երկրորդ՝ հաճախ համատեքստում դրանք դիտվում են որպես օտար միավորներ, և տրվում են հայերեն համապատասխանակները, այսինքն՝ գործ ունենք ոչ թե օտար բառի գոյծածության, այլ օտար բառարանային միավորի հետ, երրորդ՝ դրանց մի մասը վկայված է մեկ-երկու թարգմանական գործերում միայն, չորրորդ՝ հաճախական չեն, հինգերորդ՝ մի քանի բառեր վկայված են հետգրաբարյան շրջանից, հայերենի ոչ մի լեզվավիճակում այդ բառերը հաճախական կիրառություն չեն ունեցել:

Փաստորեն մի քանի տասնյակի հասնող հունարեն բառերից իսկական փոխառություններ կարելի է համարել միայն *աղաբողոք*, *միթր*, *սքեմ*, *փիլոն*, *քղամիդ* բառերը, սեմական փոխառություններից՝ *գուրպա*, *խանձադուր*, *տարազ*:

Ինչ վերաբերում է իրանական փոխառություններին, ապա բառերի գերակշիռ մասը արդեն գրաբարյան փուլից իսկ /հավանորեն դրանից էլ վաղ/ հայերենի բառապաշարի կայուն ու յուրացված շերտն էր:

Բառակազմական առումով առանձնանում են բնիկ հայերեն բառերը /մասամբ նաև իրանական փոխառությունները/, որոնցով ստեղծվում են նոր միավորներ:

* * *

* *

Բազմաթիվ վկայություններ կան հագուստների ձևերի, գույների և այլ առանձնահատկությունների մասին: Այդպիսիք նկատելի են վերը բերված օրինակներում:

Բերենք այլ կարգի օրինակներ /փակագծերում նշվածները մատենագրության մեջ վկայված են/:

*Աղաբողոքն /մեկնաւոր/, այծեայ /սեալ/, այծենի /կրկնա-
վերտ/, արկանելի /թխակերպ, սպիտակ, ճամուկ, քղանցաւոր/,
գօտի /կտաւի, մաշկեղէն, չուան/, զգեստ /մագեայ, բրդեայ, ոտից,
հրաշանկար/, հանդերձ /գծուծ, կապուտակ, ճաճանչաւորիտ, մա-
գեղէն, ոսկեհոռ, պաճուճեալ/, շապիկ /նկարէն, դպրաց, սարկա-
ւագաց/, պատմունճան /ներքնակ, պարսկական, ծաղկազգեստ,
պայծառագոյն, մաշկեայ/:*

*Հագուստ հագնել իմաստը արտահայտվում է ագուցանել,
զգեցուցանել, զգեստաւորել, զգեստաւորեցուցանել բառերով, նաև՝
ա/ հագուստ մատնանշող բառ + բայական վերջավորութիւն կա-
ղապարով: Մեր նկատածներից են. առիգածել /առիգածեալ/, զգե-
նուկ, խանձարուրել, հանդերձել, շապկել, պատմունճանել, պատ-
րուակել, սփածանել...: Գօտի բառից կազմված *գօտել բայական
ծև չկա, կա գօտելորել, նաև պարեգօտել:*

*բ/ Հագուստ մատնանշող բառ + բայ բառակապակցութեամբ.
Ածել /զառիգածն, զգօտի, զկամար, բեհեզ, վարսակալ, սփածա-
նելի/, ազանել /կողոբ, կոշիկ, ուլենի, պատմունճան.../, առնուկ /թագ,
ծորձ/, զգենուկ /քուրձ, պատմունճան, զգեստ, ծորձ, վարապանակ,
ծիրանի/, արկանել /ծիրանի, կապիճ, ծորձ, հանդերձ, պատ-
մունճան, կրկնոց, քուրձ/, կապել /վարտիք, պատմունճան, զան-
կապան/...:*

*Ավելի բազմաբնույթ ու հաճախական են բառակապակցու-
թեամբ արտահայտված կառույցները:*

*Հագուստ հանել իմաստը արտահայտում է մերկանալ, լու-
ծանել, հանել, թօթափել բայերով. մերկանալ /զգեստ/, լուծանել,
/գօտի, կօշիկ/, հանել /բաճկոն, շապիկ/, թօթափել /արկանելի/:*

* * *

* * *

Բազմաթիվ բառեր հագուստի մասերի անվանումներ են:

*Ազոյց «կապ», ազբն «գործելի կտավի սկզբի ծոպերը»,
աստառ «հագուստի հետևի կողմը դրած շոր» /վկայված է ուշ
չորջանից/, գրասպան «հագուստի վիզը, հագուստի եզրերը», դրօշակ*

«զգեստի ծայրը», *դարձք* «երիզ», *թեզանի* «կտավի լայնքի թելերը», *թեզանիք* «զգեստի երկար թևեր» /այս բառի հոմանիշներն են *եշտոտի* և *ազլիք* բառերը, որոնք վկայված են միայն Երեմիա Մեղրեցու բառարանում /տե՛ս Արմ./, *թլիփ* «օձիքի և գրպանի եզրին ամրություն կամ զարդի համար կարված երիզ», *ժապաւէն* «զգեստի եզրի կարը», *ծոյ* «զգեստի ծայրի վերջի թելի փնջերը», *խորշ* «զգեստի ծալք», որից *խորշաքաղ առնել* «շորերը ամփոփել», *եզր* «ծայր», *ստորոտ* «հանդերձի ներքևի կողմը», *տուտն* «հագուստի ծայրը», *քղանց* «հագուստի ծայրերը»:

Բերենք որոշ օրինակներ. «Եհատ զղրօշակս հանդերձի նոցա» /Եմեա., Մեկն., 188/: «Եւ արասցես առ ստորոտով վտաւակացն» /Ելք., ԻԸ, 33/: «Ի վերայ չորեցունց տտնոց հանդերձից քոց» /ՆՀԲ/: «Իբրև զժապավէն պատմունճանի իմոյ շուրջ կալա զիս» /Յոք., Լ, 18/: «Ունէր սա կողոքս առանց թեզանեաց» /ՆՀԲ/, «... զի թլիփն անկուած խիտ և հոծ» /ՆՀԲ/: «Խորշ ի գօտոյ իջեալ՝ զթուրն և զտուրն ծածկէր» /ՆՀԲ/:

Ոստայնանկություն, ջուլհակագործություն

Նպատակահարմար է այստեղ ներկայացնել ոստայնագործությանն առնչվող մի քանի անվանումներ:

Հին Հայաստանում այս բնագավառը զարգացման բարձր մակարդակ է ունեցել. այդ են վկայում պատմական տվյալները, և ինչպես նշում է Գ. Ջահուկյանը «Հեն-ք, հենում, ոստայն, ստէծ, ստորի, շիւ, առէջ բառերը խոսում են ոստայնանկության զարգացած լինելու մասին» /1987, 263/: Այս բնագավառին վերաբերող որոշ բառերի անդրադարձել ենք այլ տեղերում /հագուստներ, կտրող գործիքներ... և այլն/: Կրկնությունն այս դեպքում թերևս ներելի է, մանավանդ որ, ինչպես նշել ենք, շատ հաճախ միևնույն անվանումը կարելի է և պետք է ընդգրկել տարբեր դասակարգումներում՝ հաշվի առնելով հասկացությունների գործառական յուրահատկությունները:

Ոստայնագործությանը վերաբերող բառերից են. *ազբն* «գործելիք կտավի ծուպերը», *ազբոց* «ջուլհակի սանր» *աղեղն* « բուրդ

կամ բամբակ գգելու գործիք», *աղեկատ/ աղեկատ* «մանելու գործիք», *անկուած* «կիսուսվածք», *առէջ* «կտավի երկայնության ձգված թելերը», *ասեղն/* աստղանի/, *դերձան, թեզան* «կտավի լայնքի թելերը», *թել, իլ, կայմ* «ոստայնի եղեգը», *կկոց* «մաքոք», *հոծիչ* «կտավի թելերը ամրացնելու գործիք», *ճախարակ, շաղամաթ* «թել», *շիւ* «ջուլհակի ձեռքի փայտը» /վկայված է ուշ շրջանից/, *ոստայն, ստէծ* «ոստայնի կարճ ձող, որով գործվածքը շրջում կամ պրկում են», *ստորի* «զլան, որի վրա փաթաթվում է գործված կտավը», *վերստորի, տորգ*¹⁰, *քող*:

Ոստայնագործությանը վերաբերող հետևյալ բառերը Արմ.-ում համարվում են բնիկ հայերեն. *ասեղն, հերիւն, հէն/ք/, հիմեյ, ստորի* /կարելի է ավելացնել և *վերստորի-ն*/: Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը նշում են այս բնագավառին վերաբերող մի շարք բառեր, որոնք կարող են անցած լինել ուրարտերենից: Դրանք հիմնականում այն բառերն են, որոնց հ.-ե. ծագումը կամ այլ լեզուներից փոխառյալ լինելը ապացուցված չէ. *ազբն, առէջ, բարաթ* /վկայված է ուշ շրջանից/, *գորգ, թել, իլ, ծոպ, կապերտ, կարժ* «թելի փաթեթ» /բառը ՆՀԲ-ում չկա/, *կծիկ, կկեյ, կար/ել/, հյուսել, մանել, շաղամար, ոստայն, ստէծ* /Ջահուկյան, 1987, 436/:

Աննպատակահարմար չենք համարում հայ թարգմանական գրականությունից բերել ոստայնանկությանը վերաբերող մի հատված. «Իսկ կանայք յորժամ ոստայն անկանիցեն և զկայմսն ազբոցօքն բախիցեն և ինքեանք ևս կկոցօքն ընդիարկանիցեն և զայն չար խտիր համարին և դարձեալ յորժամ զթելն հոծչան հոծիցեն և ստեպ կկիցեն և ազբոցն և ստէծն յի ստեպ հեծելոյն ընդ միմեանս բախիցին և մանաւանդ ընդ կայմսն ևս և զայս առաւել խտիրս համարին» /Ռսկ., Պօղ., Ա, 806/:

Ջարդեր

Հագուստ իմաստային խմբի մեջ սովորաբար ներառվում են նաև զարդերը: Դա բնական է, քանի որ զարդերն էլ վերջին հաշվով հագուստի յուրօրինակ դրսևորումներ են: Ջարդերի անվանումները մենք տալիս ենք առանձին ենթադասակարգմամբ՝ նախ բուն

հագուստներից որոշակիորեն տարբերելու, ապա զարդ ցույց տվող բառերի փոքրիշատե ամբողջական բառացանկը ներկայացնելու միտումով:

Առաջին զարդերը, թերևս, երևան են եկել հագուստների հետ՝ լինելով ոչ թե պճմանքի ու գեղագիտության, այլ սնոտիական արտահայտություն: Հետագայում արդեն հստականում է գեղեցիկի դրսևորումը՝ դառնալով նաև դասակարգային /խավային/ տարբերակման արտահայտչամիջոց:

Գրաբար մատենագրության մեջ բազմաթիվ տեղեկություններ կան զարդերի անվանումների, դրանց օգտագործման, գույների, նպատակահարմարության մասին: Եթե բարձր խավի համար զարդերի բնույթն ու օգտագործման ձևը հասարակական դիրքորոշումը ամրագրելու յուրահատուկ ձև է, ապա քրիստոնեական ուսմունքի տեսանկյունից զարդարանքն ավելորդություն է: Ահա ալոպիսի ուշագրավ մի հատված է ներկայացնում Ոսկեբերանը: Նա չափազանց պճմվելը բարոյական չի համարում. «Վասն այնորիկ յաճախագոյն իմն լինի մեղադիր Պաղոս պաճուճանացն և կարի յարգէ զցածութիւն. զի ոչ մեծութեան ինչ նշանակ է այնչափ զարդ յանձին կապել, այլ ընդդդնելոց և պչրանաց: Եւ ոչ միայն զարդն, այլ և սնգոյրն և ծարիրն և ոտիցն ճեմելիք և կնշխոնք բարբառոյն, աչացն մեղմեղանք, արտևանացն ստեպ ստեպ քթելիք, ամենայն ինչ հանգոյնք պոռնկաց: Նափորտունքն արձակեալք, պարեգօտքն լայնեալք, գօտիքն սեթևեթեալք, կօշիկքն պճնեալք» /Ոսկ., Պօղ., Ա, 67/: Ըստ հեղինակի այսպիսին լինելը վայել չէ «կնոջ ցածնոյ»: Եսայու մեկնության մեջ մեկնաբանելով Եսայ. Գ. 19-20 հատվածը՝ նշում է նաև զարդերի գործառությունը. «Մահիկք՝ լուսնաձև իմն զարդ պարանոցացն են» /37/: «Զօղէք որ արմկանց վերոյ ... ապարանջան որ ի դաստակ ձեռացն» /ն.տ./:

Ոսկեբերանի մեկ այլ գործում այն միտքն է, թե ոսկի կրելը ավելի լավ է, քան երեսը շպարելը. սա նույնպես ժամանակի բարոյագիտության արտահայտություն է: Զարդերը նաև խորհրդանիշներ են. նկարագրելով հոգևորականի զարդերը՝ Փիլոն Եբրայեցին գրում է. «Ապա անկած լանջատեսիլ և ի վերայ սորայ, նշանակ երկնի. քանզի երկու քարինքն ի վերայ գլխոյ ուսոցն զմխտին

պատուականագիտ են ...յերկոցունց կողմանց բոլորակը՝ ցոյցը են կիսագնդացն այնց՝ որոց է որ ընդ երկրաւ է, և որ ի վերայ երկրի» /Փիլ., Ճառ., 180/, կամ՝ «առ ստորին կողմամբ պնդնաւորին կախէին ոսկի նռունք, զանգակը և ծաղկեալը, որք են նշանակ երկրի և ջրոյ. երկրի՝ ծաղկեալն...ի ջրոյ՝ ամենայն նռնածեքն ասացեալը...» /181-182/:

Որպէս զարդեր օգտագործվել են թանկարժեք մետաղներ՝ *արծաթ, ոսկի*:

Ոսկի բառով զրաբարում առկա են բազմաթիվ կազմութիւններ, որոնք զարդի, զարդարանքի, թանկարժեք իրի իմաստով են գործածվում: Բերենք մի քանիսը. *ոսկեակն* «կարմիր հակինթ, ոսկեգույն», *ոսկեքենեռ* «ոսկեզօծ», *ոսկեգործ* «ոսկուց պատրաստած», *ոսկեզօտի*, *ոսկեզարդ*, *ոսկեզօծ*, *ոսկեթել* /հանդերձ/, *ոսկեկապարճ*, *ոսկեկմբեայ* /վահան/, *ոսկեկոտ* /զէն, խաչ/, *ոսկեհանդերձ*, *ոսկեհոտ*, *ոսկեղէն*, *ոսկեճամուկ* «զգեստ, նաև զարդ», *ոսկեման* /հիւս/, *ոսկենկար* /պաճուճանք, կտաւ/, *ոսկեպստեան*, *ոսկետուփ*, *ոսկի* /մանեակ, գինդ/:

Ոսկի բառի հաճախականությունը, բառակազմական կաղապարների ու ձևերի բազմազանությունը վկայում է, որ այն հավանորեն բնիկ հայերեն բառ է կամ էլ հայերենում գործածվել է շատ վաղուց: «Մետաղների անուններից բնիկ հնդեվրոպական է միայն *արծաթը*: *Ոսկի, պղինձ, արոյր, երկաթ, կապար, արծիճ, անագ* բառերը հայերենը ձեռք է բերել այլևայլ աղբյուրներից: Դրանք թերևս մասամբ */ոսկի, երկաթ/* եղել են նաև վաղնջահայերենում» /Ջահուկյան, 1987, 265/:

Հնում տարածված են եղել նաև զանազան թանկարժեք քարերով զարդերը՝ «քար պատուականը». «Քանգի առեալ ի մենջ գառ ի փշոցն պսակ, եղ ի վերայ զլխոյ հաւատացելոց պսակ ի քարէ պատուականէ» /Աթանաս, 270/: «Մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց բազմացոյց» /Խոր., 72/:

Թանկարժեք քարերի տարբեր տեսակների անվանումների բազմաթիվ վկայություններ կան 5-րդ դարի ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ: Ահա մի քանի օրինակ. «...և ոչ զմրուխտն և տպագիտնն որ գայ ի հնդկաց» /Վկ. արև., 59/: «Ոչ

սարդիովն զգեցեալ էիր և զմրուխտ և զտպագիտովն ... և զշափիղայն և զասպիսն և ոսկէքարն և զեղունզն և զքիւրեղեն... /Դսիւք., Բ, 94/: Թանկարժեք քարերին վերաբերող մի տեղեկություն էլ Փիլոնից. «Կարգ քարանց եղիցի սարդիտն, տպագիտն, զմրուխտ... կարգն երկրորդ սուտակ և շափիղայ: Եւ շափիղայդ դահանակ ակն է և զծագրեալ է ի սուտակին Յուդա... » /Փիլ., Ճառ., 133/:

Ըստ ծագումնաբանության՝ զարդերի անվանումները ներկայացնում են հետևյալ պատկերը.

ա/ Բնիկ հայերեն բառեր. ակն «զոհար, թանկարժեք քար», զինդ, զարդ, լանջագեղ, մատանի, եղունգն /եղնզնաքար/, ուլն /ուլունք/, քար, օդ:

բ/ Իրանական փոխառություններ. աշխարաւանդ, ապարանջան, ապարօշ, ապիզակ, ապրիշում, քահուանդ, գորշապահանգ, դահանակ, կարկեհան, ճամբար «մանյակ», ճամուկ «զգեստի զարդ», ճիտակ «մարգարտյա զարդ», մեհեւանդ «կանացի զարդ», պախճաւանդ, սնգոյր «երեսի ներկ»:

Աշխարաւանդ «թագավորական թագի կապը», ապիզակ, «կրծքի վրա կապելու իշխանական զարդ», քահուանդ կանացի զարդ», պախճաւանդ «գոտու զարդ» բառերը վկայված են մեկական անգամ. ապարօշ «զլխի զարդ» նույնպես հաճախական չէ, և ըստ Արմ.-ի չորս անգամ գործածվում է միայն Աստվածաշնչում:

Ընդհանրապես, հաշվի առնելով իրանական այս փոխառությունների գործառական և համատեքստային յուրահատկությունները, կարող ենք նշել, որ իրանական ծագում ունեցող զարդանունները հաճախական չեն եղել ժողովրդախոսակցական լեզվում կամ չեն կիրառվել, կամ ունեցել են տարածքային /բարբառային/ սահմանափակություն: Այս բառերի մեծագույն մասը գրքային է՝ ավանդված հիմնականում Մուրբ Գրքում կամ թարգմանական այլ գործերում, երբ հունարենի համապատասխան բառը հայ թարգմանիչը ներկայացրել է իրեն ծայր իրանական համապատասխանակով:

Կարելի է կարծել նաև, որ այդ կարգի բառերը /հասկացությունները/ ծանոթ են եղել միայն բարձր խավի ներկայացուցիչներին:

զ/ Հունական փոխառություններ. աղամանդ, ակաթ, ամենօրվա /սուտակ/, բիրեդ, էլեկտրիոն «դեղին սաթ», ենատիտես, կորադիոն, հորմա, մանեակ, մարգարիտ, յակինթ, ուփիտես, որմիսկ, սարդիոն, տպագիրոն:

Ենատիտես, կորադիոն, հորմա, ուփիտես, որմիսկ գործաված են մեկական անգամ:

Ըստ էության բացի *մարգարիտ, աղամանդ* բառերից, մյուս բոլորը հայերեն են մուտք գործել թարգմանական գրականության միջոցով՝ որպես օտար հասկացություններ:

Մարգարիտ հայերենում վկայված է նախագրային շրջանից. հիշենք Խորենացուն. «Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն» /2, Ծ/:

Ասորական փոխառություններ քիչ կան՝ *թարշիս, ծարիր, շափիւղայ:*

Մի շարք զարդանունների ծագումը պարզ չէ. *զարգմանակ* «խուրի կամ սաղավարտի զարդ» բառը մեկ անգամ գործածել է Բուզանդը: *Գոճազմ* «ազնիվ քար», *զմրուխտ, ճեղանակ* «զգեստի զարդ», *սուտակ, փողոշուկ* «կանացի զխազարդ», *քալո* «մանյակ»:

ՆՀԲ-ՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

Հագուստ, զարդարանք մատնանշող բառերը հիմնականում բառարանագրված են և մասամբ ստուգաբանված: Սակայն մի շարք բառեր տեղ չեն գտել ՆՀԲ-ում: Ստորև ներկայացնենք այդ կարգի բառերը: Այն բառերը, որոնք Արմ.-ում կան, բնագրային օրինակներով չենք ներկայացնի. *ադէմ* «ներկած կաշի», *ամսրանոց* «զխազարդ», *անամենստիոն* «արքայական ծիրանի», *աշխարաւանդ* «թագավորական թագի կապը», *երակօթ* «զարդեղենի տեսակ», *զունար* «գոտի», *կարանոն* «մակեդոնական զգեստի տեսակ», *ճամբար* «վարսակալ», *մովկ* «վարտիք», *պարեհնակ*

«շապիկ», պողիխտիկոն «ծիրանի», սնդր «թիկնոց», ստիխարին «կրոնական զգեստ», սվենդոն «մատանու մաս», տոիրուն «հոե-տորի հանդերձ», փարուազ «ժապավեն»:

Այծազգեստ, այծեղեն «այծի մորթուց կամ մազերից պատ-րաստված զգեստ». «Եւ այնպէս իւր այծազգեստ հանդերձին, եղին ի քագաւորական գահոյս» /Ն.Բիւզ./, «Մրապիոնի եպիսկո-պոսի տուք զմիւս ևս մաշկեակն և դուք կալջիք առ ձեզ զայծեղեն զգեստն» /Ն.Բիւզ./:

Գայռ «վզնոց». «Իսկ վասն արծաթսիրութեան՝ որպէս կա-մակ և ախորժ է գայռ փափկասուն արանց» /Հիշատ., Ե-ԺԲ, 246/:

Գլզլէն «հնամաշ հագուստ». «Եւ զզեցեալ մազեղեն խոշոր և գլզլէն պատառոտուն՝ գնայր» /Օրբ., Պատմ., 242/:

Զստափոկ «կաշվից պատրաստված հագուստ՝ ծածկոց». «Արտախոյր դարձեալ զարդարեալ զստափոկով» /Թովմ., Դան., 318/:

Խաղաման, խլմանոց «հագուստի մաս, որտեղ դնում են թաշկինակ, կամ հագուստին ամրացված կտոր, որը թաշկինակի դեր է կատարում». «Հանդերձս մեծապայծառս յարիմէք և ընդ մմին խաղամանս և խլմանոցս արարեալ կազմել» / Փարպ., ԲՄ, 1973, 15/:

Կորաղիոն «թանկարժեք քար՝ բուստ». «Եւ զծովուն Մեծի զպատճառս ջուրցն աղիութեան եւ զպատուական եւ զծանրագին ականն, որ անուանեալ կոչի կորաղիոն» /Բրսղ, 242-243/:

Կրկնոցակ «կարճ արտահագուստ, վերարկու». «Մեկնահան-դերձ էր և կրկնոցակ մի զիւրեաւ ունէր» /Կոչ. ընծ., 258/:

Հալա «ներքնազգեստ». «Զքո զաւրացն զգիշահոտ հալան եւ զարիւնաթաթախ հանդերձսն լուանալ տուաք և ազաք» /ՄՀ, Ե, 1091/:

Մեկնակ «թիկնոց». «Թէ կամին՝ մեկնակս զգենուլ մարթ է» /Լամբ., Մատ., 84/:

Նափոքտակ «փոքր վերարկու». «Բէհեզ նափոքտակ և ոսկի գնդակ» /Միւ.Այր., 115/:

Ուսանոցակ «ուսերը ծածկող կանացի հագուստ». «Եւ հանէր յինքենէ զուսանոցակն զոր ունէր» /Ն.Բիւզ./:

Քրծակ «փոքրիկ քուրձ՝ ալծի մորթուց պատրաստված հագուստ»։ «Եթէ մաշկեակ է և եթէ քրծակ, առ ի, մնանէ» /Վարք հրնց, Բ, 512/:

Օղատէջ «բարակ մանվածք, թել»։ «Եւ ունեմն գործ՝ օղատէջ մանելով նիւթ նուրբ՝ զտուրեաւո շնչոյ կենցաղոյս» /Պիսիդ, 270/:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Հ. Վարդան վ. Հացունի, Պատմութիւն հին հայ տարագին, Վեներտիկ, 1923:
2. Տե՛ս Transactions of the Philological Society. London, 1945, էջ 69:
3. Զսենոփոն, Անաբասիս, Ե., 1970, էջ 53:
4. Սուրբ Գիրգոր Տաթևացի, Մեկնութիւն Յովհաննոս աւետարանին, աշխատասիրությամբ՝ Ղուկաս աբեղա Ջաքարյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005թ., էջ 92:
5. Տե՛ս Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Ե., 1981թ., էջ 123, նաև ծան. 118/:
6. Տե՛ս Է. Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974թ., էջ 48-49:
7. Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 48, 49:
8. Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., 1987թ., էջ 153:
9. Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990թ., էջ 255:
10. Միակ վկայությունը ըստ Արմ.-ի Բարսեղ Կեսարացուց է և նշաշնակում է «սարդի ոստայնի հյուսքը»։ Աճառյանը իրավացիորեն գտնում է, որ նախնական իմաստը պետք է համարել «ոստայնանկի փայտեայ կազմած, ոստայն, որ յետոյ փոխաբերաբար անցել է սարդի ոստայնին» /Տե՛ս Արմ., Տորթ բառահոգվածք/:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԻՐԵՐ, ՍՊԱՍՔ, ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գլաբար մատենագրության մեջ ավանդված բազմաթիվ իրերի, առարկաների, գործիքների անվանումները կարելի է ներկայացնել տարբեր խմբավորումներով ու դասակարգումներով:

Բնականաբար, այս կամ այն խմբում ներառվող բառերը, բառակապակցությունները, վերջիններիս արտահայտած հասկացությունները ժամանակի ընթացքում փոխվում են, և ժամանակային տարբեր կտրվածքներում առկայանում են ձևափոխություններ, բովանդակային յուրահատկություններով: Հասկանալի է, որ գրաբար մատենագրության մեջ ավանդված բառերն էլ /գոնե զգալի մասով/ իմաստային-բովանդակային տեսանկյունից որոշ տարբերություններ են դրսևորում արդի հայերենի համապատասխան շերտի միավորներից:

Նպատակահարմար ենք գտնում նյութը ներկայացնել հետևյալ դասակարգումներով:

1. ԱՄԱՆԵՂԵՆ

Այս խմբի համար ընդհանրական անվանումներ են *աման*, *անոթ*, *սպաս* բառերը:

Ի տարբերություն արդի հայերենի՝ *գոյ. + աման* կադապարը /ջրաման, թեյաման.../ գրաբարում հաճախական չէ: Կան միայն հատուկեմո կազմություններ՝ *խնկաման*, *զինեման*...: Այս բառերով եզակի օրինակներ է բերում ՆՀԲ-ը: Հազվադեպ են և *աման* հասկացությունն արտահայտող *գոյ. + արան* կազմությունները. բառարանները վկայում են *խնկարան* բառը. «Բերին... խնկարանս ոսկեղենս» /Բ. Մնաց., ԻԴ, 14/:

Ավելի մասնակի նշանակությամբ *աման*, *անոթ* հասկացություններ են արտահայտում հետևյալ բառերը:

Ազանովթ. ՆՀԲ-ը մեկնում է «աման հեղանիւթից» և բերում մեկ վկայություն Աստվածաշնչից՝ նկատելով, որ այլ տեղերում օգտագործվում է *թակոյկ, խառնելիք*: Բառը եբրայական բնագրում հոգնակիի ձևն է, որը հունարեն տառադարձությամբ գործածել է հայ թարգմանիչը:

Այսակի. ըստ ՆՀԲ-ի «նիւթ թափանցիկ և փայլուն... և ամենայն անօթ կամ հայելի կազմեալ»: Բառարանը նշում է և «բաժակ» իմաստը՝ բերելով մի շարք օրինակներ: Բառն իրանական փոխառություն է և գրաբարում հաճախական գործածություն ունի. այդ արմատով կազմված են մի շարք բառեր՝ *ապակագործութիւն, ապակատարագ, ապակեղէն* և այլն: Հավանորեն *ապակի* «աման» իմաստը հայերենին է անցել փոխատու լեզվից: Բացառելի չպետք է համարել, որ իմաստային որոշ նրբերանգներ ձեռք են բերվել միայն հայերենում:

Ափսե. ՆՀԲ-ը մեկնում է «տաշտ, սկաւառակ, պնակ, դաշխուրան», Արմ.-ը՝ «մետաղեայ սկաւառակ»: Թեև բնագրային օրինակներում մեծ մասամբ շեշտվում է որևէ մետաղից պատրաստված լինելը, սակայն, անվերապահորեն *ափսե*-ի միայն մետաղից պատրաստված լինելը, թվում է, ճիշտ չէ, մանավանդ որ բնագրային որոշ օրինակներում նյութի անվանումը չկա. հմմտ. «Եւ ի վերայ զառաջաւորի սեղանոյն արկցեն հանդերձ համակ ծիրանի եւ զափսեսն եւ զտուփս...» /Թիք. Դ, 7/:

Խան «ափսե, սինի». «Պան մի բաղարջ ի խանէն», «զմիսն եղ ի վերայ խանի» /ՆՀԲ/:

Մաղզմայ «սկավառակ, ափսե». բառը մասնավորապես օգտագործվում է «եկեղեցու կամ տաճարի ափսե» նշանակությամբ: Բառարանները վկայում են բազմաթիվ օրինակներ: Բառը հավանորեն ասորական փոխառություն է. այդ բառով այլ կազմություններ չկան:

Պնակ «կերակրի ափսե», նաև «զավաթ, բաժակ». Որպես բառակազմական բաղադրիչ առկայում է *պնակածե* բառում:

Պոյտն «աման, կաթսա». «զարգանակն արկ ի պոյտն» /ՆՀԲ/: Այս արմատից են *պուտուկ, պիտուկ, պտեկ* նաև *պուտնարդ* «տաշտ, կաթսա»: Բնիկ հայերեն արմատ է¹:

Սկաւառակ «կերակրի աման»։ « Սկաւառակքն խորտկացն նշանակք էին և ճաշակքն խրախճանութեան» /ԸՀԲ/։ Իրանական փոխառություն է և ունի հաճախական կիրառություն։

Սկոտեղ «ափսե, պնակ»։ հաճախական կիրառություն ունի։ Համարվում է լատիներենից կատարված փոխառություն։

Տապակ «կաթսա»։ իրանական լեզուներից փոխառյալ բառ է։

Աման, անոթ հասկացություններն արտահայտող բառերի շարքում մեծ թիվ են կազմում *ջրի, հեղուկի աման* ցույց տվող բառերը. այդ կարգի բառերից են և վերը նշված *ազանովք, պոյտն, պնակ...*

Ստորև այբբենական կարգով ներկայացնենք այն բառերը, որոնք ունեն հիմնականում «ջրի, հեղուկի աման»-ի նշանակությունը, թեև հնում, ինչպես և այժմ, *հեղուկ* և *ոչ հեղուկ* մարմինների ամանների սահմանազատումը ինչ-որ տեղ պայմանական է։

Ազուզայք «ջրի փողրակ», *ապաղարե* «մետաղյա աման», *ապուղայ* «տիկ», *ամարասակովք* «ջրաման», *ապփովք* «կոնք», *բաժակ, բաժակակալ, գաւաթ, գինեման, դաշխուրան, տաշտ, դոշ, դորակ* «հեղուկի չափ», *ըմպակ, ըմպանակ, թակոյկ* «ջրի, գինու մեծ աման», *թաս, լական* «կոնք», *լուսցարան, ժամանոց* «բաժակ», *խառնարան* «բաժակ», *խառնելի* « թակույկ», *խաւեակ* «փոքր սափոր», *կահոյր* «սափոր», *կաղամար* «թանաքաման», *կամփսակ* «յուղի աման», կարաս, կթղայ «բաժակ, գավաթ», *կոնք* «գոգավոր մեծ աման», *կուժ, հազաղակ* «գինու աման», *ժագար, ճաշակ* «բաժակ, աման», *մետուր* «ջրաման», *նուսգ* «բաժակ», *նգոյր* «կոնք», *նուիրակ* «բաժակ», *նուիրանոց* «հեղուկի աման», *ոտնալուացք* «կոնք», *պատժանակ* «բաժակ», *սափոր, սիտղ* «դույլ», *սկահ /սկի, սկիհ/* «մեծ բաժակ», «բաժակ», *սրուակ* «յուղի շիշ», *ստոման* «սափոր», *տակառ, տաշտ* «բաժակ, գավաթ», *տիկ, քաս* «փարչ»։

«Ջրաման, հեղուկների աման» նշանակող բառերը կարելի է տարբերակել հաճախականության, վկայության ժամանակագրության, գործառության շրջանակների ու հայերենում բառիմաստները յուրացված լինելու տեսանկյունից։

Թաս, կթղա, կաղամար. սիտղ վաղ գրաբարում ավանդված չեն: Լական-ը նույնպես հազվադեպ հանդիպող բառ է. ՆՀԲ-ը այն համարում է ռամկական:

Նգոյր բառի իմաստի հավաստիությունը կասկածելի է /ըստ Արմ.-ի՝ «կոնք» կամ «մաղ»/: Ապուղայ, խաւեակ, կահոյր, հադաղակ վկայված են մեկական անգամ: Մեսուր թեև երեք կիրառություն ունի, բայց նույն բնագրի նույն հատվածում է: Խաւեակ վկայել է միայն Ոսկեբերանը: «Ուր գործիցեն տասն լուծք եզանց, եղիցի անդ խաւեակ մի» /Ոսկ., Ես., 52/: Աստվածաշնչի Մարգարեություն Եսայեայ գրքի համապատասխան հատվածում կարդում ենք. «Ձի ուր գործիցեն տասն լուծք եզան, եղիցի անդ սափոր մի» /Եսայ., Ե, 10/: Ապաղարէ, մեսուր բառերը, ըստ էության, վկայել է միայն Շիրակացին:

«Հեղուկների աման» ենթախմբի բառերի ծագումնաբանական քննությունը ցույց է տալիս, որ փոխառյալ միավորները ավելի շատ են: Աճառյանը նկատում է, որ «Հնդեվրոպական շրջանից երկու բառ միայն ունինք հայերենի մեջ ամանեղենի համար, մեկը աման բառն է, երկրորդը՝ «տիկ»²: Հետաճառյանական ուսումնասիրություններում, հատկապես Գ.Ջահուկյանի՝ հայերենի և հնդեվրոպական մի շարք լեզուներին վերաբերող հետազոտություններում այդ թիվը փոքր-ինչ մեծ է, մանավանդ եթե հաշվի առնենք բաղադրիչների հ.-ե. բնույթը. գինեման, ըմպանակ, լուացարան, ծագար, տիկ, ոտնալուացք, պոյտն...:

Ասորական փոխառություններ. ագուգայ, ապուղայ, կթղայ, սկահ:

Հունական փոխառություններ. լական, կաղամար, կոնք, կամփսակ, ստոման /սիտղ-ը համարվում է լատիներենից կատարված փոխառություն, բայց բացառված չէ հունարենի միջնորությունը/:

Իրանական փոխառություններ. ապակի, ապաղարէ, բաժակ, գաւաթ, դաշխուրան, դոյլ, դորակ, թակոյլ, թաս, կուժ, նուագ, սրուակ, տակառ, տաշտ, քաս:

Եբրայական ծագում ունեն ամարասակովք, ապփովք բա-
ռերը, որոնք մեկական անգամ գործածված են Աստվածաշնչում
/Եբեմ., ԾԲ, 19/:

Մի շարք բառերի համար ենթադրվում է *ուրարտական ծա-
գում*. անոթ, գուշ, խառեակ, խուփն, խբարդեայ, խեցի, կճուճ, կուր,
հաղաղակ, մեսուր.../Չահուկյան, 1987, 436/:

Ինչպես նկատելի է, բառերի հաճախականության, գործա-
ծության ժամանակային սահմանների ընդգրկունության, իմաս-
տային յուրացման տեսանկյունից կարևորվում են իրանական
ծագում ունեցող բառերը:

«Ամանեղեն» նշանակող բառերի զգալի մասը ճաշին, ուտե-
լիքին առնչվող անվանումներ են, որոնք կարելի է ներկայացնել
հոմանիշային խմբերով: Անդրադառնա՞նք հետևյալ հոմանիշային
շարքին. *կաթսայ* - ասորական փոխառություն է: Ման-ը Արմա-
տական բառարանում ստուգաբանված չէ: Թերևս հավաստի պետք
է համարել ուրարտական բնույթը³: Պոյտն – ըստ Արմ.-ի «պտուկ,
հողե աման», ըստ ՆՀԲ-ի՝ «կաթսայ, սան»: «Եփելին ի պտտան»,
«զարգանակ արկ ի պոյտն» /ՆՀԲ/:

Նշենք նաև *գդալ, տարգալ, շերեկի* հոմանիշային շարքը:
Գդալ-ը գրաբարյան բառարանները չեն նշում. այն, ինչպես և
բարբառային այլ ձևեր հավանորեն առաջացել են *տարգալ*-ից:
Տարգալ-ը բնիկ հայերեն բառ է, առաջին վկայությունը 5-րդ դարից.
«Տարգալ ունի ոսկի և պատառաքաղ» /Խոր., 174/, հաճախական
կիրառություն չունի ինչպես հինգերորդ, այնպես էլ հետագա
դարերում: *Շերեկի*-ը վաղ գրաբարում վկայված չէ, բառի ծագումն
էլ ստույգ չէ: *Մսսհան, պատառաքաղ, շամփուր, հանելի, հրաւանդ*
նույնպես ճաշին առնչվող իրեր են:

Նորագյուտ Մնացորդաց գիրքը հիշյալ բառերով մի ուշա-
գրավ օրինակ ունի. «...գիրաւանդսն, և գհանելիսն, և գկաթսայն և
մսսհանսն և զամենայն գկահ» /Բ, 16/: Չոհրապլյան հրատարա-
կություն մեջ այս հատվածը մի քիչ այլ է. «...գկասկարայս, զբառ-
նալիս, և զսանս և զմսսհանսն»: Հիշյալ երկու վկայություններում
ակնհայտ հոմանիշներ են՝ *հրաւանդ-կասկարայ, հանելի-բառնա-*

ի/ի գույգերը: Զույգերի անդամներից մեկը թերևս բարբառային տարբերակ է:

ԱՅԼ ԿԱՐԳԻ ԱՍԱՆԵՂԵՆ

Այս ենթադասակարգմամբ կներկայացնենք այն բառերը, որոնք *պայուսակ*, *արկղ*, *տուպրակ* և նման կարգի առարկաների անվանումներ են՝ իմաստային զանազան նրբերանգներով:

Արգոթ «քուրձ, տոպրակ», *արկղ*, *բակեղեթ* «պարկ», *զանձանակ* «զանձարան, դրամարկղ», *զգրոց* «արկղ, տուփ», *զամբիւղ*, *խբարդեայ* «տուփ, խնկաման», *կայթ*, *կեղթ* «կողով», *կողոթ* «կողով, տուփ» /*կողոթ* բառը գրաբարի բառարաններում հազուստի տեսակ է, իսկ հետևյալ վկայության մեջ ունի «արկղ, տուփ» իմաստը. «Կողոթս արծաթիս արարեալ՝ եղին ի նմա զնշխարս սրբոյն» /Օրբ., Պատմ., 265//, *շագոյր* «պայուսակ», *շալակ* «տոպրակ», *մախաղ*, *շմբրոց* «պարկ», *ոճ*, *որթ* «կողով», *սփիրդ*, *սփիրիդ* «զամբյուղ», *տապան* «արկղ», *տառաղան* «կթոց, կողով», *տուպրակ*, *տուփ*, *փխրիդ* «զամբյուղ», *քսակ*, *քուրձ* «մազեղենից պատրաստված արկղ»:

Այս բառերից *արգոթ*, *բակեղեթ*, *թափուտ*, *խբարդեայ*, *շագոյր*, *շմբրոց* նվազ հաճախական են: *Արգոթ*-ը գործածված է Աստվածաշնչի նույն հատվածում երեք անգամ. այլ գործերում այն չի հանդիպում: *Շագոյր*-ը վկայել է մեկ հեղինակ՝ երկու անգամ. ընդ որում ՆՀԲ-ում վերջինս չկա, բառը կա Արմ.-ում, վկայությունը՝ Սեբեոսից:

Կայթ-ը վկայված է 5-րդ դարից. «Եւ առ երկերիւր նկանակ և հինգ արդու փոխնդոյ և կայթ մի չամիչ եղ ի վերայ իշոց» /Ա. Թագ., ԻԵ, 18/⁴:

Այս ենթախմբի մեջ բնիկ հայերեն բառեր չկան. եթե *որթ* «կողով» առնչվում է *որթ* «խաղողի ճյուղ»-ին, այս դեպքում այն բնիկ հայերեն պետք է համարել: Հայակազմություններ են *զգրոց*, *շմբրոց* բառերը /նկատի ունենք -ոց- ձևությւն/։ *Տոպրակ*-ը թաթարերենից կատարված փոխառություն է, բնականաբար վաղ գրաբարում չի կարող վկայված լինել:

Խրանական ծագում ունեն՝ գանձանակ, զամբիւղ, պայուսակ, սապատ, տապան, քսակ, քուրծ: Եթե *շագոյր-ը շարագոյր-ի* աղավաղ ձևն է, ապա դարձյալ իրանական փոխառություն է:

Հունարենից են կեղթ, սփիւրիղ, տառաղան, սնդուկ:

Ասորերենից՝ բավուտ, կողով, արգոբ, բակեղեթ: Վերջին երկուսը հունական բնագրերից քաղված եբրայական ծագում ունեցող բառեր են: *Արկղ* համարվում է լատիներենից կատարված փոխառություն: *Խբարդեայ-ի* և *մախադ-ի* համար ենթադրվում է ուրարտական ծագում⁵: *Շալակ-ը* թերևս սեմական փոխառություն է⁶: *Ոճ-ը* «ծղոտ, ցողուն» իմաստից գատ ունի նաև «ծղոտե կողով» իմաստը. «Ճռաքաղ արարեք... և անդրէն կրկնեցիք որպէս կթօղ յոճ իւր» /Երեմ., 2, 9/: Բառի ծագումը պարզ չէ:

«Ամանեղենի» այս ենթախմբում, ինչպես և նախորդներում, գերակշիռը փոխառյալ բառերն են, հատկապես՝ իրանական ծագում ունեցողները:

2. ՀԱՅԱՀԱՏԻԿ ԱՂԱԼՈՒ, ՄԱՔՐԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հնդեվրոպական նախալեզվի վերականգնված **hai* - ձևը արտահայտում է *հատիկ* հասկացությունը. այդ վերականգնումը հիմնվում է հ.-ե. մի շարք լեզուների, այդ թվում հայերենի տվյալների վրա⁷: Հացահատիկային բույսերից հնագույներից են *գարի-ն, ցորեն-ը*: Առաջինը բնիկ հայերեն բառ է, *ցորեն-ի* հ.-ե. ծագումը առայժմ հիմնավորված չէ, և նման դեպքում, ինչպես շատ այլ բառերի համար, ենթադրվում է ուրարտական ծագում⁸:

Գրաբար մատենագրության մեջ ավանդված են հատիկներն աղալու, մաքրելու առարկաների մի շարք անվանումներ. *աղօրի, անկան* «սանդ, հավան», *երկան* «աղաց», *դինգ* «քրինձ մաքրելու գործիք», *խախալ* «մաղ», *խարքալ* «մաղ», մաղ, նքոյր «մաղ», *սանդ, տոռն* «սանդի կոթ»:

Աղաց «աղալու գործիք» իմաստով գրաբարում առանձին բառ վկայված չէ:

5-րդ դարից վկայված է *մշաղաց* «աղորիք»: Բառի երկու բաղադրիչներն էլ հայերեն են. *մուլ*-ի անկախ գործածություն վկայված չէ, այն հ.-ե. *mel «մանել, աղալ»-ի տարբերակն է: ..

Ջրաղաց/ջաղաց, հողմաղաց գրաբարում չկան: *Ջրաղաց*-ը հայ մատենագրության մեջ վկայված է ուշ շրջանից: Կա միայն *խնկաղաց* «խունկ աղալու գործիք», մաս. «խունկ աղացող»: *Խնկաղաց*-ը, անշուշտ, Աստվածաշնչի թարգմանությանն առնչվող նորաբանություն է:

Այս ենթախմբի բառերի թիվը մեծ չէ, բայց էական է այն հանգամանքը, որ դրանք հիմնականում բնիկ հայերեն բառեր են. *աղօրի, երկան, նրոյր, տոռն*:

Մաղ-ի համար ենթադրվում է ուրարտական ծագում⁹: Սակայն մերժելի չպետք է համարել և հ.-ե. բնույթը՝ նկատի առնելով *mel - արմատը, որից՝ *մալել* «մանրել, աղալ»:

Դինգ-ը Արմ.-ում համարվում է իրանական փոխառություն, վաղ գրաբարում բառը ավանդված չէ: Հ. Աճառյանը, իրավացիորեն հաշվի առնելով նշված բառի բարբառային ձևերի առանձնահատկությունները, նկատում է, որ այն կարող է փոխառված լինել վաղ շրջանում: Դի կարելի անվերապահորեն մերժել մաս. բառի հայկական բնույթը:

Խարբալ գոյականական կիրառությամբ վկայված չէ, բայց բայական ձևով առկա են մի շարք վկայություններ. «Ահա սատանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրեւ զցորեան» /Ղուկ., ԻԲ, 31/: Կա և *խարբալումն* «մաղելը»:

Անկան /անգան վկայված է մեկ անգամ. «Եւ աղային յերկանի եւ լեսուին յանգանի, եւ եփէին ի պուտան և առնէին նկանակ» /Թիւք, ԺԱ, 8/:

Կամն-ը նույնպես կարելի է զետեղել այս ցանկում:

3. ԿՏՐՈՂ, ԾԱԿՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Մոտ երեք տասնյակի հասնող համապատասխան հասկացությունները դարձյալ դժվար է բաշխել ըստ կոնկրետ

մասնագիտության կամ արհեստի, ինչպես և դժվար է զանազանել նրբիմաստային յուրահատկությունը, առարկայի տարբերակիչ ձևը և այլն: Իմաստային այս ենթախմբի /ինչպես և բոլոր/ մեջ մտնող շատ բառեր կարող են լինել նույնանիշներ, մանավանդ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ հոմանիշային խումբ կազմող բառերը ներկայացնում են ծագումնաբանական տարբեր շերտեր, գործառության տարբեր ժամանակագրություն:

ա/. *Կացին-տապար-փայտատ* հոմանիշային շարքը լրացվում է նաև այլ բառերով, որոնք ընդգծվածներից տարբերվում են գործառական հաճախականությամբ, իսկ հասկացությունն արտահայտող առարկան նաև քերես գործածության առանձնահատկություններով:

Ներկայացնենք այդ շարքը այբբենական կարգով՝ նշելով Արմ.-ում նկատված իմաստները:

Դալապր «թուր կամ կացին»: Վկայված է մեկ անգամ Թրակացու քերականության մեջ, և նույն թվարկումը՝ այլ գործում. «Փաղանուն... խաղ, դալապր, մարտացու, վաղակավոր, սուսեր.../Դիոն. քեր., 19/¹⁰:

Դակու «ուրազ կամ կացին»: Ըստ ՆՀԲ-ի «գործի հիսսանց և մշակաց տապարածև»: Բնիկ հայերեն բառ է:

Կացին «տապար, փայտատ»: Ասորական փոխառություն է:

Ճկուտ «տապար» /տե՛ս Արմ./:

Մարկեղ «բրիչ, փայտատ»: Հունական փոխառություն է, ոչ հաճախական: Իմաստային տարբերակվածությունը հստակ չէ:

Տապար «կացին, փայտատ»: Իրանական փոխառություն է: ՆՀԲ-ը նշում է նաև մեկ այլ նրբիմաստ՝ «զինուորական գործի տապարածև»:

Ուրազ «փայտը տաշելու գործիք»: Փոխառված է ասորերենից: Ըստ ՆՀԲ-ի «փոքր տապար կամ սակր հիսսանց»:

Ցաքատ «ճյուղ, ցախ կտրելու գործիք»: Թեև բառը հայ հին մատենագրության մեջ վկայված չէ, բայց, անշուշտ, հին կազմություն է՝ բնիկ հ.-ե. *ցաք* արմատով:,,

Փայտատ «կացին, տապար»։ «Միթե վերանայցե փայտատ առանց փայտահատի» /ՆՀԲ/։ Փայտը հ.-ե. ծագում ունի /Գ.Ջահուկյան, 1987, էջ 149/։

Նշված բառերի շարքում առավել գործածական են *փայտատ, կացին, տապար* հոմանիշները։

բ/։ Կտրող գործիքների մեկ այլ խումբ կարելի է ներկայացնել *ածելի-դանակ* հոմանիշային շարքը կազմող բառերով։ Սափրվելու գործիքներ են *ածելի, զմելի, սրբիչ*, վիրահատության՝ *նշտիր /նշտրակ/, երակահատ*։ Իմաստային ավելի լայն սահմաններ ունեն *դանակ, կտրոց* բառերը, թեև նախորդներն էլ ոչ միայն վիրահատական կամ սափրվելու, այլև այլ նպատակներով գործածվող առարկաներ են. սա արձանագրում են բառարանները։

Դանակ «կտրոց, դանակ, փոքրիկ, սուր»։ Հավանորեն բառը իրանական ծագում ունի։ Ուշ շրջանից մեկ անգամ վկայված է *դան* ձևով /տե՛ս Արմ./։

Երակահատ «բժշկի նշտրակ»։ Բաղադրության առաջին արմատը ծագումնաբանորեն իրանական է։ Բերենք բնագրային մի քանի օրինակ. «Եւ ածցի ածելի ի վերայ ամենայն մարմնոց նոցա» /Թիւր, Ը, 7/։ Ածելի ոչ ելցե ի գլուխ իմ, զի ուխտաւոր Աստուծոյ եմ» /Դատ., ԺՁ, 17/։ «Սրբիչ մի ածիցե զգլխով իւրով, մինչեւ լցցին աւուրբքն զորս ուխտեաց Տեառն...» /Թիւր, Ձ, 5/։ *Երակահատ*-ը ունի «բժիշկ, երակը կտրող» իմաստը, նաև գործիքի անվանում է. որպէս գործիքի անվանում հոմանիշ է *նշտիր, նշտրակ*-ին։

Չմելին «փոքր կտրոց, վարսավիրի ածելի», ըստ Արմ.-ի՝ «գրիչ տաշելու փոքրիկ դանակ»։ Բառը հունարենից կատարված փոխառություն է, հաճախական գործածություն չունի, իսկ փոխատու լեզվում այն քաղվածաբար է «կտրոց, արձանագործի մկրատ, նշտրակ, կոշկակարի դանակ, այգեպանի հատոց» և այլն։ Քանի որ բառը գործածական չէ գրական արևելահայերենում և արևելյան խմբավորման բարբառներում, այլ առկա է միայն արևմտահայերենում, պետք է ենթադրել, որ գրաբարում այն սահմանափակ տարածքային տարբերակ էր, կամ գրական թարգմանական ուղիով մուտք գործած բառ՝ Ս. Գրքի թարգմանությամբ։

Կտրոց «ղանակ, զմեյին, մկրատ»: Բառը, ըստ էության, ոչ թե որևէ կոնկրետ գործիքի, այլ ընդհանրական անվանում է:

Մկրատ. վաղ շրջանից վկայված չէ:

Նշտիր/նշտրակ «վիրահատական գործիք». «Վասն առողջութեան մարմնոյ թոյլ տան նշտրով փործել զվէրս» /ՆՀԲ/: Իրանական փոխառություն է:

Սղոց-ը հաճախական կիրառություն ունի այդքան 5-րդ դարից: Բառարմատի իսկությունը պարզ չէ: Որպես բառահիմք՝ հանդես է գալիս մի շարք կազմություններում. *սղոցաքերան, սղոցածեւ, սղոցածուկն, սղոցեղջիր, սղոցեմ, սղոցումն*:

Դակող գործիքների անվանումներ են.

Բեւեռ – սկզբնական իմաստն է «գամ, մեխ»: Ծագումը ստույգ չէ;

Գամ – ՆՀԲ-ը համարում է ռամկական բառ, որը միայն բարդության մեջ է առկայանում: 5-րդ դարից վկայված *երկաթագամ, պղնձագամ* ձևերը խոսում են բառի գործածության հին ակունքների մասին: Ծագումը ստույգ չէ:

Գայլիկոն. «Չոմանս գայլիկոնով ծակէին զպճղունս նոցա» /ՆՀԲ/: Ծագումը ստույգ չէ:

Դուր «հյուսնի գործիք». «Դրով գործեաց և դրօշեաց զնա» /Եսայ., ԽԴ, 12/: Ծագումը պարզ չէ:

Երիք «սեպ». «Վարիցի առ արմատովք երիք ուռն և մտանիցէ ի սիրտ ծառոյն» /Բրտղ, Է/: Ծագումը ըստ Արմ.-ի ստույգ չէ: Գ. Ջահուկյանը համարում է բնիկ հայերեն /1987, 156/:

Հեղոյս «գամ, մեխ». «Հարին հեղոյսս երկայնս»/ՆՀԲ/: Վաղ գրաբարում հաճախական չէ, բայց 5-րդ դարից վկայված *հեղուսեղ*-ը /տե՛ս ՆՀԲ/ հուշում է, որ այն գործածական է եղել վաղ շրջանից: Ծագումը ստույգ չէ:

Հերիւն «ծակելու գործիք». «Առցես զհերիւն և ծակեսցես զունկն նորա» /Օր., ԺԷ, 17, Ել., ԻԱ, 6/: ՆՀԲ-ի բոլոր վկայություններում բառը հանդես է գալիս «մարմնի մաս ծակող» գործիք նշանակությամբ: Բնիկ հայերեն բառ է:

Մսխաթ. Է. Աղայանի բացատրական բառարանում՝ «կորածայր մեծ ու երկար ասեղ. տոպրակներ, ջվալներ ևն կարելու

համար»։ Դրաբարում էլ թերևս այս իմաստով է գործածվում /վկայությունները ուշ շրջանից են/, բայց ունի թերևս այլ գործառույթ ևս։ Դա երևում է ՆՀԲ-ի վկայությունից. «մախաթով ծակեալ էի զծեփ նորա»։

Շաղափ «ծակիչ»։ Վկայված է ուշ շրջանից։ Ոսկեբերանի՝ Եսայու մեկնության մեջ կա նման բառ՝ անստույգ նշանակությամբ /տես Արմ./։

Շամփուր «երկաթե կամ փայտյա սուր գավազան»։ Հիմնական գործածությունը՝ միս խորովելու գործիք, որում անպայման առկա է ծակելու հատկանիշը։ Կան նաև այլ վկայություններ, օր.՝ «Հրացեալ շամփրովք ծակոտեցին զթիկնամեջսն» /ՆՀԲ/։

Մեպ. ՆՀԲ-ը նախնական իմաստն է համարում «ժայռ, քարաժայռ», իսկ *երիթ*՝ «սրածայր փայտ կամ երկաթ» իմաստով գործածությունը 12-րդ դարից է։

4. ԳԱՆԱՀԱՐՈՒԹՅԱՆ, ԿՏՏԱՆՔԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Այս ենթախմբում ներառվող բառերը վկայված են ամենատարբեր սկզբնաղբյուրներում։ Բառերի մի մասը այդ գործառույթը ձեռք է բերել նախնական իմաստի հենքի վրա։ Օրինակ՝ *բիր*-ը նախապես նշանակել է «փորելու գործիք», իմաստային զարգացմամբ՝ «մահակ կամ հաստ գավազան»։ *Գաւազան*, *խարազան* իրանական փոխառություններ են։ *Գաւազան*-ը ըստ Արմ.-ի ունի «1. անասուն քշելու փայտ, 2. մարդ ծեծելու փայտ, 3. ծեծ, հարուած, 4. խրատ, 5. իշխանի կամ թագաւորի մական, կրօնաւորի գաւազան... » և այլ իմաստներ։

Հայ մատենագրության մեջ բազմաթիվ վկայություններ կան ծեծելու, պատժելու, կտտանքի ենթարկելու մասին, որոնցում, բնականաբար, առկայանում են ծեծը, պատիժը իրականացնելու միջոցների մի շարք անվանումներ։ Բերենք որոշ վկայություններ, որոնք նաև հետաքրքիր են հենքի՝ պատժելուն և պատժամիջոցներին ծանոթանալու առումով։

Բուզանդից. «Ըստ պարսկի օրինակին հրամայելը զմորքն ի բաց հանել և խոտով լնուլ...» /3, ԻԱ/: «Ապա տայր հրաման Շապուհ արքայ պարսից, բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռս նորա երկաթս» /4, ԾԴ/: «Իսկ գպատանեակն Գնել առնուին... և կառափէին ի սարակ լերինն» /4, ԺԵ/:

Ագաթանգեղոսից. «Եւ յետ այսորիկ հրամայեաց կախել զնա զլխիվայր զմիոյ ոտանէն. զի մինչ դեռ կայցէ զլխիվայր՝ ծխեսցեն ի ներքոյ նորա աղբ և արբցէ զան սաստիկ բրօք դալարովք» /1983թ., 50/: «Եւ ետ հրաման բերել կոճեղս փայտից, և առնել ըստ ոլորի խոտցաց ոտից նորա և դնել և պնդել ուժգին առատկօք...» /1983թ., 68/: «Եւ ետ հրաման բերել աղ և բորակ և բարկ քացախ և ընկենուլ զնա յորսայս և դնել զլուխ նորա ի հիւսանց մամուլս և դնել փող եղեգան ի քիթս նորա...» /70/: «Եւ ետ հրաման բերել զկողս նորա երկաթի քելոք» /72/: «Եւ ետ հրաման արկանել կապիճս երկաթիս ի ծունկս նորա և վարել ուռումս ստուարս և բառնալ ի կախաղան» /74/: Ագաթանգեղոսը այս կարգի վկայությունները շատ ունի /110, 118, 120/:

Խորենացուց. «...առ ի կորուստ ամբարշտին զոմանս խորանաւորս հուր լուցեալ և շամփուր երկաթի՝ միս խորովելոյ. զոր ջեռուցեալ, կրկնեաց բոլորեալ որպէս պսակ և ասէ... Պսակեմ զքեզ, Մեհրութան...» /3, ԼԷ/, «...և տիկտեսակ գործեալ ուռուցմամբ՝ հրամայեաց դնել յանդիման Խոսրովայ հանապագ» /3, Ծ/:

Թարգմանական գրականությունից. « Ջկիսոցն զբագուկսն ուսովք չափ քարշէին, զկիսոց զկողսն խոցէին, կիսոց զորովայնսն հարկանէին և թափ ի մանկունսն հանէին զուսերսն: Ջկէսսն քարամբք ծեծէին, կիսոցն զաչսն փոքէին, զկիսոցն զունչս և ականջսն և զշրթունսն հատանէին և անդէն ի բերանն բռնաբար ատամնաթափ հարուածովք ամանային» /Վկ. արև., 80/: «Ազգի ազգի չարչարանք եկեալ էին ի վերայ նորա... կոփանք և ապտակք, քանզի տանջեցին զնա յառաջագոյն մտրակօք... և աստի անտի հարկանէին զկզակս նորա և եղեգամբ զլուխ նորա ծեծէին» /Իսխր., 485-486/:

«Ծեծ, տանջանք, պատիժ» իմաստներն են արտաահայտում հետևյալ բառերը. *զան, ծեծ, կտուտ, կտտանք, հարուած, հարանք, հարումն, չարչարանք, պատիժ, տանջանք...*

Ծեծի, պատժելու գործիքները անվանում են *անօթ պատժոց, գործիք տանջանաց*: Ի մասնավորի՝ դրանք են¹¹.

Առատուկ կամ առատիկ. «առասան կամ չուան՝ որով յանցաւորի ոտքերն ու զլուխը պրկում էին գելարանի մէջ» /օրինակը տե՛ս Ագաթանգեղոսից բերված վկայության մէջ/:

Բաղանտ. «Կարինն գործի ինչ տանջանաց է, նուրբ և երկայն իբրեւ զբաղանտն, զոր հայերէն քուքսն ասեն» /Արմ./:

Բիր. «մահակ կամ հաստ գավազան». «Արբցէ գան սաստիկ բլովք» /Ագաթ., ՆՀԲ/. /այս արմատով ունենք *բրածեծ զան, բրածեծ առնել, լինել*/:

Գաւազան. /ունի բազմաթիւ իմաստներ/: Կա և *գաւազանել* «գավազանով ծեծել»:

Գելարան, գելոց «պրկիչ գործիք». «Արկանէր... ծանրագոյն պատուհասիք ի գելարանս» /Կոր., 68/: *Գել* արմատն է *գելուկ, գելումն* բառերում:

Թակ «ծայրը կունտ զլիսով փայտ՝ ցից զարնելու համար»: Բառարանների մեկնություններում և վկայված օրինակներում «ծեծելու, տանջելու գործիք» իմաստը չի արձանագրվում կամ բացահայտվում: Հնարավոր է՝ այդ իմաստը չի վկայվել կամ չի նկատվել: Ղարաբաղի բարբառում *թակել* «ծեծել» բառը հաճախական է:

Թուպոլոց «ծեծի գավազան»: *Թուպ* արմատն առկայանում է *թոպամահ, թոպեն* «ծեծել», *թոպիւն, թոպումն* բառերում:

Խարազան «մտրակ»: Կա և *խարազանել, խարազանահալած առնել*:

Խեղդան «խեղդելու պարան» /ՆՀԲ-ի վկայությունները նաև 5-րդ դարից են/:

Խոտցոց «ոտքերին ամրացնելու տանջանքի գործիք»:

Կարիճ «փշոտ կամ խայթոցաւոր գաւազան» /տե՛ս *Բաղանտ*-ի օրինակը/:

Կեղ «ծեծելու փայտ, գաւազան». «Կեղի ջարդեցին զսրունսն» /Վարք և վկ., Ա, 40/:

Կոճղ. բազմաթիվ այլ իմաստների հետ ՆՀԲ-ը նշում է նաև «... յոր պնդեն զոտս պատժաւորաց»: Ահա մի վկայություն. «Եւ պրկեսցէ զոտս նոցա ի կոճեղ զհինգ ծակով և այլովք տանջանօք որպէս սովոր էին» /Եւս., Պատմ., 331/:

Կոճղ «մահապարտի վզին կամ ոտքին կապելու կոճղ»:
Վկայված է ուշ շրջանից:

Չաղկ «գաւազան, ծեծ, գանակոծութիւն». «Ի ձեռանէ թափ-
չին ձաղկաւ հարաւ և մեռաւ» /Եւս., Պատմ., ՆՀԲ/: Կա և *ձաղկել*,
ձաղկումն:

Մագ «ծեծ, խարազան, գաւազան»: Մեկ անգամ վկայել է
Փիլոնը: Ըստ երևութիւն որևէ կենդանու մազից պատրաստված
խարազան է:

Մական «գաւազան, ցուպ», *մահակ* «բիր, ծեծի գաւազան»
մտրակ «խարազան, խթան»: Բազմաթիվ վկայություններ 5-րդ
դարից են:

Ոգոր «ճիւղ, ճիպոտ»: Ըստ բառարանային տվյալների՝ ան-
կախաբար վկայված է հետգրաբարյան փուլում: Բառի հ.-ե. ծա-
գումը և Ագաթանգեղոսի գրքում վկայված *ոգորածեծ առնել*-ը հու-
շում է բառի՝ 5-րդ դ. /և ավելի վաղ/ անկախ գործածության մասին:

Պրկոց ՆՀԲ-ը մեկնում է «մեքենայ կամ փայտ՝ յորոյ վերայ
պրկին յանցաւորք առ ի տանջել»:

Ջալոտի «բիր, գաւազան». «հրամայեաց ջալոտիւք հարկա-
նել» /Խոր., 272/:

Ջին «գաւազան, ծեծի բիր մահակ»: Կա և *ջմել* «ծեծել»:

Վարզ «գավազան, վարոց»:

Վարոց «վարելու, քշելու գործիք»:

Տաճկինակ «ծեծի գաւազան կամ մտրակ»:

Յուպ «ձեռքի գաւազան»:

Քերանք, քերիչ «...զի կրկին ևս տանջանօք զքերանս եր-
կաթոյն մինչև ի ներքին անդամսն հասուցեն» /Վկ. արև., 208/:

Քուք «հանցաւորներին ծեծելու փշոտ գաւազան» /տե՛ս *Բա-
ղանտ*-ի օրինակը/:

Ննթախմբի մեջ մտնող բառերի /արմատների/ գերակշիռ մասը բնիկ հայերեն են: Դրանք են. *բիր, զան «ծեծ»¹², գելարան, թակ, թուպոլոց, ծեծ, ոգոր, ջին, ջգալուծ, ցուպ¹³, քերանք, քուր¹⁴:*

Իրանական փոխառություններ են. *գաազան, խարազան, կարիճ¹⁵, կունդ, մահակ¹⁶, վարոց¹⁷, տաճկինակ:*

Հունարենից կատարված փոխառություններ են. *բաղանտ, ասորերենից է մտրակ-ը, վրացերենից՝ կեղ-ը:* Մի քանի բառերի ծագումը ստույգ չէ. *խեղդան, խոտցոց, կոճղ, մագ, մական, պրկոց...*

Արջառաջիկ-ի արջառ բաղադրիչի ծագումը պարզ չէ, իսկ *ջիկ-ը* բնիկ հայերեն է: Նման դեպքերում բառը փոխառություն համարելու հիմք չկա: Օտար կամ անստույգ բառ+հայերեն ձևային /արմատ կամ ածանց/ ունեցող բառերը համարում ենք հայակագնություններ:

5. ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ԻՐԵՐ, ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գրաբարում *որսորդ* ընդհանրական իմաստը արտահայտվում է *որսորդ, որսական/որսկան, որսող* բառերով: Գործում է նաև *կենդանու, թռչունի անուն+որս* կաղապարը. *հատրս, ձկնորս:* Որևէ առանձին կենդանու կամ թռչունի անուն /արջ, գայլ, կաքաւ, բազե/+որս կաղապարը սպասելի է: *Ձկնորս-ին* հոմանիշ է *ձկնահան-ը*. հմմտ. «Ոչ հատրսք անդր ոչ ձկնահանք», «ձկնահան ի ձկնահանաց էր, այլովք ձկնահանօք հանդերձ» /ՆՀԲ/: Հոմանիշային խմբի մեջ կայող ենք ընդգրկել և *ասպականի* բառը, ըստ ՆՀԲ-ի՝ «որսորդ, որ գնույ յորս երիվարաւ և շամբք»: «Ասպականին ընդ շունս և ընդ գազանս առնէ զիւր դեգերումն վարուց» /ՆՀԲ/:

Հոմանիշներ են *ձկնորս, ցանցորդ, ոռկանատր* բառերը:

Գրաբար մատենագրությունից /և՛ ինքնուրույն, և՛ թարգմանական/ վկայվել են բազմաթիվ բառեր, որոնք որսորդական գործիքների անվանումներ են: Փաստորեն հին զինատեսակների զգալի մասը նաև որսորդական առարկաներ են: Այստեղ կանոդադառնանք զուտ կամ հիմնականում որսորդության բնագավառը

ներկայացնող բառերին՝ անտեսելով զինատեսակները, որոնք առանձին մեծ իմաստային խումբ են կազմում:

Նկատելիորեն շատ են *ուռկան*, *թակարդ* հասկացություններն արտահայտող բառերը:

Ականատ «թռչուն կամ կենդանի բռնելու գործիք, թակարդ», գրվում է մաս *ակնատ*. «Կեցցես որպես զայծեամն ի յակնատե», «շինեաց ականատս բազումս...խաբեցից զբազում կաքաւս» /ՆՀԲ/:

Արագագ/երագագ «կենդանի բռնելու ցանց». «Երագագն անօթ ինչ է իյսկէն» /ՆՀԲ/։ «Երագագիւքն և գահողովքն ելեալ ի յորս գունդք նախարարացն...» /Փարսլ., 10/:

Արկ «թակարդ, որսի ցանց». բառարաններում՝ *յարկ* ձևով է ներկայացված: ՆՀԲ-ում եզակի վկայություն է:

Արծող «ուռկան». «որպէս գծկնորսն սփռէ զարծողլ. արկանէ զուռկանն» /ՆՀԲ/:

Գահող «թակարդի տեսակ». /տե՛ս *Երագագ*-ի օրինակը, մաս՝ ՆՀԲ/:

Գառագեղ/գառագիղ «վանդակ». «Մինչև ի գառագեղն էր զազանն» /ՆՀԲ/։ Բառը, ինչպես և հունարեանում, ունի մաս «բանտ» իմաստը. «Եւ իբրեւ փակեաց զնոսա յամուր և յանել գառագիղն... ստիպէր ուրանալ զճշմարիտն աստուած» /Եղիշէ, 19/:

Թակարդ «որոգայթ, ցանց». հաճախական կիրառություն ունի: Բառակազմական հիմք է և բաղադրիչ. հմմտ. *թակարդաղիյր*, *թակարդապատ*, *թակարդափակեն*, *թակարդեն*:

Թարփ «ուռկան». ՆՀԲ-ը չունի այդ բառը: Արմ.-ի տվյալներով առաջին վկայությունը 7-րդ դարից է: Գրվում է մաս *թարք*:

Լար. բազմիմաստ այս բառը «պարան, որմնաղիքի ուղղալար, մղոն» իմաստներից զատ նշանակում է «որոգայթ, թակարդ». հմմտ. «Ձլարն չէ արժան թողուլ, զի բազում ինչ այն է, որ լարիս թակարդի» /ՆՀԲ/:

Ծողակ «որոգայթ, թակարդ». «Հաւահար առնել կամ ի ծողակ ըմբռնել» /ՆՀԲ/։ «Ձի ապրեսցիս որպէս զայծեամն ի հաղբից և իբրև զհաւ ի ծողակն» /Առակ, 2, 5/:

Կարթ. 5-րդ դարից հաճախական կիրառություն ունի: «Պատեցից զքեզ թակարդօք իմօք... և հանից զքեզ կարթիւ իմով»

/Եգեկ., ԼԲ, 3/: *Կարթել* նշանակում է «կարթով կամ թակարդով որսալ», *կարթընկեց*՝ «որսորդ»:

Հաղթը «թակարդ, որոգայթ». «...ապրեսցիս որպէս զայծեամն ի հաղթից» /Առակ, 2, 5/:

Որոգայթ «թակարդ, ծուղակ». «Եւ որոգայթս իբրեւ զվարմս հաւորսաց կանգնեցին ապականել զմարդիկ» /Երեմ., Ե, 26/:

Հաճախական են և *որոգայթադիր, որոգայթել* բառերը. «Անըմբռնելիք որոգայթադիր որսողաց» /ՆՀԸ/: «Որսորդք են դէք, որք զանձինս որոգայթեն» /ՆՀԸ/: Հավանական է համարվում քարթվելական ծագումը, ինչպես և *երագագ* բառի դեպքում /Ջահուկյան, 1987, 593/:

Ուռկան. հաճախական կիրառություն ունի 5-րդ դարից: «Արկեալ ուռկան ի ծով, քանզի ձկնորսք էին» /ՆՀԸ/: 5-րդ դարից են վկայված նաև *ուռկանաւոր, ուռկանեմ* կազմությունները: Հաճախական չէ *ուռեակ* «թակարդ» բառը:

Վանդակ. գրաբարի բառարանները բազմիմաստ այդ բառի հիմնական իմաստը համարում են «ցանց, վարմ, ուռկան, թակարդ»:

Վարմ «ցանց, թակարդ, ծուղակ». «Իբրև զվարմ ձգեալ ի գլուխ գահաւանդի, զոր որսորդք յորս հաստատեցին» /ՆՀԸ/: Իրանական փոխառություն է /Ջահուկյան, 1987, 546/:

Ցանց «ուռկան, այլ կենդանիներ բռնելու գործիք». «Իբրև զձկունս ծովու ձգեաց զնա ցանցիւ իւրով» /ՆՀԸ/:

Հետգրաբարյան փուլից են ավանդված *ապր, կարթ* /առաջին և եզակի վկայությունը՝ 14-րդ դարից/, *դամ* «ուռկան». *որսանք* բառի համար ՆՀԸ-ը նշում է և «որս» և «գործիք» իմաստները:

Այս ենթախմբում բնիկ հայերեն են *թակարդ, թարք* /թարփ/, *լար, կարթ, որս* բառերը: Իրանական փոխառություններ են՝ *վանդակ, վարմ*, հունարենից են՝ *յարկ, գառագիդ*, ասորերենից՝ *հաղթք*: Մյուս բառերի ծագումը պարզ չէ:

6. ՁԵՆՔ, ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ռազմական կյանքին վերաբերող բառապաշարում ակըն-
հայտ գերակշռություն ունի իրանական տարրը. սա բացատրվում է
դարեր շարունակ Իրանի ռազմական գերիշխանությամբ, ապա
նաև այդ բնագավառի սերտ հարաբերություններով: Արդեն մ.թ.ա.
6-5-րդ դարերում լինելով արևելքի հզորագույն պետությունների
մեկը՝ Իրանը մեծ ազդեցություն է թողել հարևան երկրների
ռազմական-տնտեսական վարչական կյանքում, նաև այդ ոլորտին
վերաբերող փոխառությունների տեսանկյունից: Օրինակ՝ հին
հնդկերենում գործառող իրանական ռազմավարչական բնույթի
բառերի մուտքը ենթադրվում է մ.թ.ա. առաջին հազարամյակի
կեսերից, երբ Աքեմենյան իշխանությունը հասավ Ինդոսի ավա-
զանը¹⁸:

Հայ-իրանական փոխադարձ ազդեցությունները սկզբնավոր-
վել են այդ երկու ժողովուրդների կազմավորման շրջանից, և դրանք
եղել են անընդհատ:

Հայ մատենագրությունից կարելի է առանձնացնել ռազմա-
կան կյանքին վերաբերող հատվածներ, որոնցում գերակշռում են
իրանական փոխառությունները: Բերենք Եղիշեից մեկ հատված՝
ընդգծելով փոխառությունները /կամ փոխառյալ արմատները/. «Եւ
իբրև լուաւ զթիւ *համարոյ բազմութեանն*, առաւել ևս փութացաւ
ուսանել, թե քանիք իցեն պարագլուխք քաջ *մահատակացն*... այլ և
դրօշից անգամ իւրաքանչիւր տեղեկանայր... թէ քանի *գունդ*
զգօրսն բաժանիցեն և որ որ ի նոցանէ *սաղարք* լինիցին և որ
զորագլուխ յորմէ կողմանէ *յռագմ* մտանիցէ և զինչ անուանք
իւրաքանչիւր *համհարզացն* իցեն և քանի փողահարք ի մէջ *զնդին*
ձայնիցեն:

*Ղակի*² զործիցեն արդեօք, եթէ *արծակ բանակեսցեն*: Ճա-
կատ տո ճակատ զործիցեն, եթե՞ *համագունդ*, ընդ մի տեղի
դրդիցեն» /96/:

Ներկայացնենք մեզ հետաքրքրող բառաշերտերը ըստ ծա-
գումնաբանության:

Հնդեվրոպական շերտ. աղեղն, բիր «մահակ», գեղարդն, թուր, կմբեայ, նետ, սլաք «նետ», սուր, փքին «նետ»:

Բերենք բնագրային մի քանի օրինակ. «Ժոցոտե՞նցե՞ զնա աղեղն պղնձի, անցցե ընդ մարմին նորա նետ» /Իսիւք., ԻԴ, 570/: «Սուր ինչ երկսայրի պողովատիկ որչափ ճակատել էս հասանիցե՝ անխնայ և անարգել և դիւրաւ կոտորե՛» /Ոսկ., Պօղ., Ա, 403/: «Եւ էս երեքկնեցից փքնօք յորս՝ ածել և ձգել յամատտարայն» /Ա. Թագ., Ի, 20/: «Փքնօք մարտնչէին ընդ քշմանիսն» /ՆՀԲ/: «...և համակ սրով և սուսերօք ի սլաքս և ի տէգս նիզակաց զքրտունս երեսաց մերոց ջնջեցաք» /Բուգ., 137/:

Հունական փոխառություններ. ասպիս, բաղիստր, գայիսոն «նիզակ», կորբան, մանգոլիոն, մեքենայ, ստոմ «սուսեր, սայր»:
«Իսկ ասպիսն չորեքանկիւնի վահան է» /ՆՀԲ/: «Կանգնէիր մանգոլիոնս և մենքենայս և բաղիստր և նետածիգ աշտարակս» /Ա. Մկր., Զ, 51/: «Որպէս զերկաթի ստոմ, կամ որ ի պողովատիկ գտիցի և մխեսցի ևս կարծրագոյն և հատու լինիցի» /Սեբեր., 75/: *Կորբան* «սաղավարտ» վկայված է ուշ շրջանից:

Հունական փոխառությունները հաճախական չեն:

Սեմական փոխառություններ. սակ/ուր/, խարբ «սուր, զենք», սուսեր. «Ի շահատակելն իւրում հարկանի յումեննէ սակերք զգլուխն» /Խոր., 236/: «Հրաման տայր զօրացն սուսերօք զասպարսն բախել միաբան ի միոջէ հրամանէ» /Եւս., Զր. I, 390/: «Խարբի քով կեցցես» /ՆՀԲ/:

Իրանական փոխառություններ. աշտեայ, ասպար, դաշնակ, դաստապան, զենք, զրահ, լախտ, խիշտ, կապիրճ, նիզակ, պատկան, պատկանդարան, պարս, սաղաւարտ, վահան, վարզ, վարապան, վիրզ, տապար, տէգ:

Ամենայն հավանականությամբ, հետևյալ բառերը /սրանց ծագումը ստույգ ու հավաստի չէ/ նույնպէս իրանական լեզուներից կատարված փոխառություններ են՝ *դաշոյն, կապարճ, սուին, վաղր, վաղակ/աղոր/*:

Մկունդ «մեծ գեղարդ» բառի գոնե արտաքին-հնչյունական տեսքը իրանական փոխառություններից տարբերվում է, և բառի ծագման մասին դժվար է որևէ ենթադրություն անել:

Ատրճանակ-ը թեև վկայված է 18-րդ դարից, բայց, ամենայն հավանականությամբ, հիմն փոխառություն է՝ *ատր* «կրակ» և *ճան* «նետել» արմատներից:

Ապատտան «ասպար, վահան» իմաստը թերևս ձեռք է բերվել հայերենում:

Ձեռքի տեսակների իրանական անվանումները գործում են եղել լեզվի բոլոր փուլերում:

* * *

* *

Պատերազմական սարքավորումների /տեսակների/ անվանումներից են *բաբան*, *մանգղիոն*, *բաղիստր*, *նետակալ*, *փիլիկոն* «բաբան»:

Բաբան-ը ուշ շրջանից /թաթարերենից/ կատարված փոխառություն է: ՆՀԸ-ը բառը մեկնում է «պատերազմական մեքենայ նախնեաց՝ իբր պարսատիկ մեծ փայտակերտ, ի ձգել քարինս մեծամեծս, զնետս և զնիզակս»:

Բաղիստր/բալիստր. ըստ էության հոմանիշ է *բաբան*-ին. «Կանգնեին մանգղիոնս և մեքենայս և բալիստր և նետածիգ աշտարակս» /Ա. Մկր., Զ, 51/: «Պատմէշս եւ *նետակալս* շինեսցէ՝ սատակել զանձինս բազմաց» /Եզեկ., ԺԷ, 17/: *Նետակալ*-ին հոմանիշ է *նետածիգ աշտարակ*-ը: *Պարսատիկ*-ը նաև *բաբան*-ի մաս է, որի մեջ հսկայական քարեր են դնում. «Վաթսուն լիտր քար եղեալ ի պարսատիկսն՝ ի քաղաքն ձգէին» /ՆՀԸ/:

Այս հասկացությունները արտահայտող որոշ բառեր կենդանանումներից են. հմմտ. «Եւ այս մեքենայ, որ կոչէր խոյ, է սաստիկ մեծ և յաղթող գործի, զի երեք հարիւր զինուորն ապա կարեն մղել զնա և յետևոյս քաշեն զպարանսն և նա յառաջ երթալով փուցանէ զամուր սլարիսպն» /Պատմ. Աղեք., 392/: «Եւ Յունացն մատուցեալ մեծաւ բոնութեամբ յեցուցին ի պարիսպն զկոչեցեալ էշսն: Եւ է այս գործի մեքենայից անուաւոր, յերից երից արանց մղելով տարեալ և ի ներքուստ կացնովք և սակրօք երկբերանովք և կոցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն» /Նոր., 3, ԻԸ/:

Մատենագրությունը որոշ տեղեկություններ է հաղորդում զենքի մասերի անվանումներից. *բուն գեղարդան* «գեղարդի կոթ» /Ոսկ., Մտք., Գ, 66/, *դաստապան* «սրի կոթ», *երախակալ* «զենքի բռնակ, կոթ», *շեղք* «սրի, թրի սուր ծայրը», *տիգաբուն* «տեգի կոթ», *լիճ* «աղեղի գոգավոր մասը»:

Ահա բնագրային որոշ օրինակներ. «Ձի գաղեղանն լիճս բագուկս կոչէ, որպէս Յակոբ ասեր զՅովսէփայ՝ թէ «Սպառնացան մնա արք աղեղանց եւ լուծան ջիւք բազկաց մոցա» /Եմես., Մեկն., 203/: «Այրեսցեն զզենս, զնիզակաբէկս, զասպարաբէկս, զտիգաբունս» /Եզեկ., ԼԹ, 9/: «Էարկ և գերախակալն ևս զհետ վիրին» /Դատ., Գ, 22/:

Տեղեկություններ կան նաև զենքերի ձևերի, զինանյութի մասին. «Տեսեալ զուսերն, տեսեալ *միողմին*» /Ոսկ., ՆՀԲ/: «*Աղեղն պղնձի*» /Իսիւք., ԻԴ, 570/, «*Սուր երկսայրի պողովատիկ*» /Ոսկ., Պօղ., Ա, 403/, *սուր, տեգ /երեքսայրի/...լիալիճ աղեղն*» /Կղնկտ., 287/, «*վահան ոսկեխնձոր*» /Կղնկտ., 222/:

Բացի զենքերի ու պատերազմական գործիքների այն անվանումներից, որոնք ներկայացվում են ըստ ծագումնաբանական շերտերի, խմբավորման շարքում, կան նաև այլ բաղադրյալ՝ հիմնականում երկարմատ կազմություններ: Ի դեպ, նկատենք, որ իրանական փոխառությունների շարքում որոշ բառեր կազմությամբ երկարմատ են՝ փոխատու լեզվում բարդ բառեր. *սաղաւարտ*՝ բառացի՝ սար «զլուխ» և *վար/տ/* «ծածկոց», *դաստապան* «դաստ» ձեռք, *պան* «պահել-ի արմատը», *պատկանդարան*՝ *պատկան* «նետ» *դարան* «պահարան», *վարապան*՝ *վար* «կուրծք»:

Գրաբարյան կազմություններից են՝ *աղեղնակապարճ*, *ասպարաբէկ* «փոքր վահան կամ վահանի բեկոր», *լանջապանակ* «վահան», *վիրգահան* «բաբան», *նիզակատէգ*, *զինապատեանք*, *գալարափող*, *նետակալ*, *պարսատիկ*. «Եկն Եհաս գալարափող՝ գոչմամբ...» /Կղնկտ., 21/: «Չգեղարդունս կանգնեսցեն և զքնիցն գեղարդեանցն զաղեղնակապարճս կախիցեն...» /Ոսկ., Մտք., 3, 66/:

7. ՉԻՈՒ ՍՊԱՍՔ

Հայ մատենագրության մեջ գործածվող *ծիու սպասք* արտահայտող մոտ երկու տասնյակ բառերի գերակշիռ մասը իրանական փոխառություն է: Սա պետք է բացատրել ոչ թե Հայաստանում ձիաբուծության ավելի ուշ կամ թույլ զարգացման հանգամանքով, այլ նրանով, որ *ծի* և *ծիու սպասք* արտահայտող հասկացությունները հիմնականում վերաբերում են ռազմական ոլորտն ընդգրկող բառապաշարին, որում, ինչպես տեսանք, իրանական շերտը ընդգրկում է: *Չիու սպասք* մատնանշող բառերից իրանական ծագում ունեն հետևյալները.

Աճառ. «Ձի վարիցե ոսկովք զինուք և ականակապ աճառօք երիվարօք» /Ոսկ., ՆՀԲ/: Բառը գրաբարում բազմիմաստ է:

Ասրորում «ծիու սարքի մաս». «Բազում մոռյզս զարքունական ձիոյ՝ արքունի օճառովք ոսկիվարաւանդ ապրդմովն տայր մնա» /Բուզ., 9/:

Ասպազեն «երիվարի զենք, զարդ». «Յասպազինէ երիւարին ի վայր արկեալ զինքն» /ՆՀԲ/:

Ասպանդակ. վաղ գրաբարում վկայված չէ:

Դանդանուանդ «սանձ». Կազմված է dandan «ատամ» և band/vand «կապ» բաղադրիչներից, բառացի՝ «ատամնակապ»: Հաճախական գործածություն ունի: Ս. Գրքում, օրինակ, օգտագործված է վեց անգամ:

Երասան/երասանակ «սանձ». այս արմատից ունենք և *առասան* «չվան, պարան», որը, ինչպես նկատում է Աճառյանը, «ունեցած պիտի լինի «սանձ» նշանակութիւնը, որը սակայն չէ աւանդուած» /տե՛ս Արմ., *Առասան* բառահոդվածը/:

Ժամանակագրորեն *երասան*-ը ավելի հիմն փոխառություն է /նկատի ունենք *ր*-ի առկայությունը/:

Երախճան «սանձ, բերանակալ». «Երախճանաց և ի սանձաց» /ՆՀԲ/: Երկու բաղադրիչներն էլ իրանական են:

Պախուրց /գրվում է և *պախուց*/ «սանձ»:

Վարապան «սանձ, երասանակ». Աճառյանը տարբերակում է *վարապան* «սանձ» և *վարապան* «կուրծքը պահող զրահ»՝ առա-

ջինը համարելով անստույգ, երկրորդին վերագրելով իրանական ծագում: Թերևս պետք է համարել մեկ բառ՝ իմաստային նրբերանգներով:

Վարաւանդ. ըստ Արմ.-ի «ծիու մի գարդ, թամբ կամ սա՞նձ»: Բառը վկայված է միայն բաղադրության մեջ. *վարաւանդասպաս, ոսկիվարաւանդ*: Խոնս *Ապրդում*-ի օրինակը:

Ձիու սպասք արտահայտող մյուս բառերի ծագումը հավաստի չէ: Այստեղ էլ կարելի է առանձնացնել հոմանիշային խմբեր:

Սանձ-պախուրց-ցոկակապ-շրուշակ-շոնչապահ. շոնչապահի շոինչ-ը Արմ.-ը համարում է բնածայնություն: Ըստ Ջահուկյանի *ցոուկ* «քիթ, դունչ» արմատը հ.-ե. ծագում ունի /1987, 148/:

Թամբ-կորդին-համետ. ոչ մեկի ծագումը պարզ չէ: Առաջինի վկայությունը 5-րդ դարից է «...զձին սանձաւ թամբաւ առ և զնաց» /ՆՀԲ/: *Համետ*-ը ըստ ՆՀԲ-ի «կազմած իշոյ կամ զրաստոս»: Կարելի է ենթադրել, որ բեռների տեղափոխելու դեպքում ձին համետում էին, իսկ *համետ*-ը իր կառուցվածքով տարբերվում է *թամբ*-ից: *Կորդին*-ի առաջին վկայության ժամանակը ստույգ չէ: Գ. Ջահուկյանը դնում է *թամբ-համետ* հոմանիշային շարքում /1987, 398/:

8. ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Երկրագործ հասկացությունը գրաբարում արտահայտվում է *մշակ, երկրագործ, հողագործ, հերկահար, այգեգործ, մաճկալ, արօրածիգ... պարտիզպան...* բառերով:

Երկրագործական առարկաների անվանումները հասնում են մոտ երկու տասնյակի, որոնք ըստ ծագումնաբանական շերտերի ներկայացնում են հետևյալ պատկերը:

Բնիկ հայերեն. *արօր* «վարելու գործիք». «Արօր կազմել և լուծս յօրինել» /ՆՀԲ/: Այս արմատից կազմված են *արօրադիր առնել* «հերկել», *արօրել* «հերկել», *արօրածիգ* «արօր ձգողը, քաշողը»:

Բահ «հող փորելու գործիք». «Վասն բահի յոյժ տրտմեր,

որպես բրեսցե գերկիր» /ՆՀԲ/: Որպես բառակազմական բաղադրիչ՝ վաղ գրաբարում գործում չէ: Ուշ շրջանից են *բահեթ*, *բահաւոր* ձևերը:

Բիր-ը բահ-ի /bher/ արմատի մեկ այլ տարբերակն է: Արմ.-ը նշում է «գավազան, մահակ» իմաստները՝ իրավացիորեն նկատելով, որ «նախապես էր նաև փորելու գործիք», և այս իմաստներից են բխում *բրեթ* «փորել», *բրած* «փորած տեղ», *բրածոյ* «փորելով շինված, ամուր», *բրիչ* «փորիչ»: Բառարանները վկայում են նաև *գետնաբիր*, *հողաբիր*:

Գերանդի «խոտ հնձելու նաև խաղող քաղելու գործիք». «Առաքեա զգերանդիդ քո և հնձեա, զի եկն ժամանակ հնձոց» /Յայտ., ԺԴ, 15/: «...Եւ արկ հրեշտակն զգերանդի իւր յերկիր և կթեր զխաղող նորա» /Յայտ., ԺԴ, 19/:

Եղան. բառարանները նշում են մեկ վկայություն՝ 17-րդ դարից: Արմ.-ում բառը ստուգաբանված չէ: Ջահուկյանը հնարավոր է համարում հ.-ե. ծագումը /Ջահուկյան, 1987թ., էջ 212/:

Գութայ «գութան»¹⁹. բառը գրաբարում հաճախական չէ:

Երկմատնի. գրվում է և *երկմատենի*: Բառի երկու բաղադրիչներն էլ հ.-ե. ծագում ունեն. «Արարեալ փայտատ երկմատենի...յուզեն զթանձրահող հովտացն» /ՆՀԲ/:

Թի «բահ, գործիք նաև թիավարելու համար». դժվար է որոշել նախնական իմաստը: Այդ արմատից կազմված *թիակ-ը* ՆՀԲ-ում վկայված օրինակներում նավ վարելու գործիք է:

Լուծ. «Եւ էին խաշինք նորա՝ եթն հազար ոչխար, լուծք եզանց հինգ հարիւր» /Յոթ., Ա, 3/: Այս արմատից են *լծեն*, *լծակ*, *լծակից*, *լծակոռութիւն*, *լծակցութիւն*, *լծարծակ*, *լծընկէց*, *լծորդ*...

Կամն, *կամնասալ* «ցորեն կալսելու գործիք». «Որպէս կամն զի ի վերայ ցորենոյ անցանէ, այնպէս հրեշտակն, որ առակեալ է ի կամն, կասու» /ՆՀԲ/: Արմատական բառարանում ծագումը ճշգրտված չէ: Գ. Ջահուկյանը համարում է բնիկ հայերեն բառ²⁰:

Հեծանոց «ատամնավոր թիածև գործիք՝ կալում ցորենը մաքրելու համար». «...որոյ հեծանոցն ի ձեռին իւրում, եւ սրբեսցէ զկալ իւր և ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս» /Մտք., Գ, 12/:

Սամի «լուծի մաս». «Եթե սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի» /ՆՀԲ/: Այս արմատից է *սամետի* «սամիները կապելու փոկ»: «Կապիցես սամետիք լուծ մնա» /ՆՀԲ/:

Ցաքան. գրաբարում վկայված չէ: Բայց գործածական է մի շարք բարբառներում: Բառի հ.-ե. ծագումը /Ջահուկյան, 1987թ., էջ 130/ թույլ է տալիս ենթադրելու, որ այն գործածական է եղել վաղուց, բայց գրաբար մատենագրության մեջ չի վկայված:

Փայտատ. բացի «կացին» իմաստից, նաև «բրիչ, բահ»: Ըստ ՆՀԲ-ի « երկաթի բրիչ, որ միանգամայն հատանե և փորե զիող». «Վաստակել եզամբք և բրել ձեռամբ՝ փայտատօք և բահիւք» /ՆՀԲ/: Վկայված օրինակներից անվերապահորեն երկաթից պատրաստված լինելը չի գիտակցվում:

Իրանական փոխառություններ են ման «արորի մաս», *ճամբարակ*: Առաջինը վկայված է 5-րդ դարից և բավական հաճախական է. «Սամեգար եհար յայլագգեացն վեց հարիւր՝ այր մաճով արօրոյ» /Դատ., Գ, 31/: *Ճամբարակ*-ը ՆՀԲ-ում և ԱԲ-ում վկայված չէ: Արմատական բառարանը հղում է Երեմիա Մեղրեցուն՝ նկատելով, որ գործածական է մի շարք բարբառներում. հմմտ. Դրբ.՝ «գութանի շղթա»: Թեպետ գրաբար մատենագրության մեջ բառն ավանդված չէ կամ մեզ չի հասել, կարելի է կարծել, որ այն վաղ շրջանից կատարված փոխառություն է՝ նկատի առնելով բառի միջինիրանական լեզուներին բնորոշ ձևը:

Մեմական ծագում ունի *մանգաղ*-ը «ցորեն կամ խոտ քաղելու գործիք». «Անաքի մանգաղ, զի հասեալ են հունձք» /ՆՀԲ/: Կա և *մանգաղակ* «փոքր մանգաղ». «Ձայնչափ բանջարովք, զորովք պարտիզպանն արկանէր զմանգաղակն» /ՆՀԲ/:

Ակուր/ակիր-ի վկայության սկզբնաղբյուրն ու ծագումը հստակ չեն /տե՛ս Արմ./: «Ի ներքուստ ակրովք և կտցաւոր մրճովք փորելով, փորե բահիւ կամ ակրով» /Արմ./:

Տափան «տափանելու՝ հողը հարթեցնելու գործիք, ցաքան». ՆՀԲ-ում վկայված է մեկ օրինակ, որի բուն սկզբնաղբյուրը հստակ չէ. «Կոշտք տափանօք փխրին և մարմինն ճգամբ»: *Տափան*-ը Արմ.-ում ստուգաբանված չէ: Ըստ Է. Աղայանի *տափ*, *տափել*, *տոփել* ծագում են հ.-ե. *deph /*doph/ «խփել, բախել» արմատից²¹:

Կովկասյան լեզուներից է փոխառվել *խուի*-ը:

Հոսիչ «կալսելու գործիք». բառի արմատի բնույթը պարզ չէ:

Ինչպես նկատելի է, երկրագործական առարկաներ մատնանշող բառերի շարքում առանձնանում է հ.-ե. բառաշերտը, որը հաստատումն է այն բանի, որ հնուց ի վեր հայերը հմտացած էին հողամշակութային ասպարեզում: Այս հարցում այլ է մեծավաստակ Հ. Աճառյանի կարծիքը. «...հակառակ մեր երևակայածին,-գրում է Աճառյանը,- նախահայերը հարուստ չեն այս կարգի բառերով: Երկրագործական գործիքներից շատերի անունները, ինչպես *մած*, *խուի*, *մանգաղ*, *գերանդի*, *տափան*, *ցաքան*, *հեծանոց*, *հոսելի* և այլն, հնդեվրոպական ծագում չունեն»²²:

Նշենք, որ նորագույն՝ հետաճառյանական ուսումնասիրություններում նշված բառերից մի քանիսը՝ *գերանդի*, *տափան*, *ցաքան*, *հեծանոց* բառերը համարվում են բնիկ հայերեն: Նկատենք նաև, որ այդ կարգի համարյա բոլոր բառերը գործածական են հայերենի բոլոր լեզվավիճակներում:

9. ՊԱՐԱՆ, ՇՂԹԱ

Այս ենթախումբն են ներկայացնում հետևյալ բառերը.

Ապաւանդակ «պարան, չվան». վկայված օրինակներից երևում է, որ ավելի հաճախ կիրառվում է «վրանի պարան» իմաստով. «Մի շարժեսցին ցիցք խորանի նորա և մի խզեսցին ապաւանդակք նորա» /Ես., ԼԳ, 20/: Իրանական փոխառություն է: Վկայված է 5-րդ դարից, թերևս միայն Աստվածաշնչում:

Առասան «պարան, լար, թել». «Առասան երեքկին ոչ վաղ-վաղակի խզեսցի»» /Ժող., Դ, 12/: «Արկանել առասանս ի կապս կրծից գելարանացն» /Ագաթ., 39/: Կա և *առասանակ* «քարակ շղթա, լար»:

Առատուկ. ըստ Արմ.-ի «առասան կամ չուան, որով յանցատրի ոտքերն ու գլուխը պրկում էին գելարանի մեջ». «Բերել կոճեղս փայտից և պնդել ուժգին առատկօք, միրճև իջաներ արիւն

ընդ եզերս ուղից» /Ազաթ., 61/: Հանդիպում է և *առատիկ* ձևով: Ծագումը պարզ չէ:

Երկաթ. ունի նաև «երկաթից պատրաստված շղթա» իմաստը:

Լար. հաճախական կիրառություն ունի, բնիկ հայերեն բառ է:

Կառան «պարան». վկայված է ուշ շրջանից, համարվում է արաբական փոխառություն. «Հատեալ զկառանս նաւին ետուն տանել ալեացն զնա» /Վարք հրնց, Բ, 150/:

Կար «լար, պարան». «Կապեցին զնա երիւք կարովք նորովք և հանին զնա ի վիմէն» /Դատ., ԺԵ, 13/: Բառի ծագումը ստույգ չէ:

Կեմ «խոտե չվան». «Մոյզս անգամ ոչ ազանէր այլ ամառն հետկով պատէր և զձմեռն կեմով» /Բուզ., 225/: Բառը այժմ էլ գործածական է Ղարաբաղի բարբառում՝ «խոտի, հասկի ցողունից կապ, որով կապում են խուրճը»: Աճառյանը համարում է հունական փոխառություն: Գ.Ջահուկյանը հունարենից փոխառյալ լինելը կասկածելի է համարում /1987թ., էջ 617/:

Հեսկ «առագաստի պարան». «Ուսան գործել զկողմանակի հեսկս առագաստից» /Վարք հրնց, Բ, 353-354/: Բառն ունի նաև այլ գործառույթ /տե՛ս Կեմ/:

Ձգարան «լար». վկայել է Նարեկացին, ըստ երևույթին հեղինակի ստեղծած բառն է. «Եթէ յուսոյն ձգարան սուսերբն յանցանաց հաճեալ կարեցի» /ՆՀԲ/:

Ճամբարակ «ճոպան կամ երկաթյա փոկ». ՆՀԲ-ը չի վկայում: Արմ.-ը վկայակոչում է Երեմիա Մեղրեցու բառարանը:

Ճոպան «պարան». «Ճոպան ի փողս եղեալ խեղդամահ արարին զնա» /Բուզ., 36/: Ծագումը պարզ չէ:

Մալուխ «հաստ պարան». հաճախական է և վկայված է 5-րդ դարից: «Դիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն աստծոյ մտանել» /ՆՀԲ/: Ասորական փոխառություն է:

Շարաւանդ «ոտքի կապ, չվան». ՆՀԲ-ը վկայում է երկու օրինակ: Վկայության ժամանակագրությունը ստույգ չէ: Անշուշտ իրանական ծագում ունի:

Շղթա. ասորական փոխառություն է՝ վկայված 5-րդ դարից:

Չուան «պարան, թոկ»։ «Կախեաց գնոսա չուանաւ ընդ պատուհանն» /ՆՀԲ/։ Ծագումը ստույգ չէ։

Պարան. վկայված է 5-րդ դարից։ Կա և անգիր շրջանից վկայված հատված. «...հանեալ զոսկեօղ շիկափոկ պարանն...» /Խոր./։ Ծագումը ստույգ չէ։

Պարաւանդ «ձեռքի կամ ոտքի կապ»։ «Հրամայէ լուծանել նոցա զպարաւանդս ոտիցն» /ՆՀԲ/։ Իրանական փոխառություն է։ Կա և *պարաւանդել* «կապել, շղթայել»։

Սարիք «շղթա, կապանք»։ «Արձակեաց ... պարանոցէն շղթայիցն սարեաց» /Բուգ., 174/։ «Եւ զաւետարանն սուրբ...կապէր պատէր երկաթի սարեօք» /Բուգ., 107/։ Բնիկ հայերեն բառ է։

Սիրայ «պարան, լար, շղթա»։ «Նստէր և հիսէր սիրայն» /ՆՀԲ/։ Վաղ գրաբարում վկայված չէ։ Հունարենից կատարված փոխառություն է։

Տոռն «թոկ»։ «Տոռն արկեալ ի պարանոցն Մեիրութանայ...» /ՆՀԲ/։ «Գնացի զկնի նորա... իբրև զշուն տոռամբ» /ՆՀԲ/։ Արմատական բառարանում ստուգաբանված չէ։ Ըստ Գ. Ջահուկյանի բառը բնիկ հայերեն է։

Փոկ «կաշվի նեղ և երկար շերտ»։ «Պրկեցին զնա փոկովք», «Լուծ և փոկ զպարանոց ամբարտաւանից խոնարհեցուցանեն» /ՆՀԲ/։

10. ԵՐԱԳ, ԼՈՒՍԱՏՈՒ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Գրաբարում *լույս* նախադաս բաղադրիչներով կան տասնյակ կազմություններ, որոնցից մի քանիսն են միայն, որ ունեն «ճրագ, ճրագարան» իմաստը։ *Լուսակալ*-ը ՆՀԲ-ը մեկնում է «որպես ճրագարան, աշտանակ...կանթեղ»։ Որոշ վերապահումներով այդ կարգի բառերից կարելի է համարել *լուսաբեր*, *լուսանցոյց*, *լուսանցք*, *լուսարան* բառերը /տե՛ս ՆՀԲ-ի բացատրությունները և օրինակները/։

Պատուհան և երդ բառերն էլ կարելի է ներառել այս ենթախմբում։ Մյուս բառերն են. *աշտանակ* «ճրագակալ, ճրագարան»։

«Եղեն ճրագունք լուցեալք իբրև ի վերայ աշտանակի» /Ազաթ., 353/, *բազմակ* «ճրագ, ճրագարան»։ «Բազմակացն արծարծիչ լուսոյն՝ ձեք ի վերայ արկանել» /Փիլ., ՆՀԲ/, *բազմակալ* «ճրագ»։ «Եւ ճրագարանք իւրեանց եւ բազմակալք իւրեանց եւ տաշտքն և խնկամանքն...» /Բ.Մնաց., Դ, 21/, *բուծին* «պատրույգ»։ եզակի վկայությամբ հանդիպում է «Վեցօրեայում» /տե՛ս Արմ./, *լամբար*։ «Ի բերանոյ նորա դամբարք բորբոքեալք, եւ հատանին անկանին շանքք հրոյ» /Յովբ., ԽԱ, 10/, *լապտեր*։ « Առին և ձեք ամանօք ի լապտերս իւրեանց» /ՆՀԲ/, *կանթեղ* «ճրագ, ջահ»։ «Եւ լոյս... կանթեղացն բորբոքեալ տոչորէր» /Փարպ., 28/, *ճրագ, ճրագարան*։

Մոմ։ բառարաններում հիմնական իմաստը համարվում է «մեղրամոմը», թեև ՆՀԲ-ը գրում է «...և լինի ազնիւ նիւք ճրագի»։ *Մոմ* արմատից կազմված *մոմեղէն*-ը ունի «ճրագ, ջահ» իմաստը։ «Կանթեղօք և մոմեղիմօք զմեռեալսն յուղարկէին» /Բուդ., 193/։ Կա և *մոմակալ, մոմեղինակալ* «աշտանակ»։

Ճրագ։ ըստ ՆՀԲ-ի «զոյս վառեալ յիւղոյ և ի պատրուզէ, լայնաբար՝ ջահ, լոյս, մոմ, լապտեր, կանթեղ, ճրագարան»։ Այս արմատով են կազմված *ճրագաբերան, ճրագալոյց, ճրագակալ, ճրագակիր, ճրագածեւ, ճրագարան* բառերը։

Պատրոյկ, պատրոյգ հաճախական կիրառություն ունի։

Ջահ «բոցավառ մարխէ ձող, վառած լոյս, կանթեղներով կախովի մեծ ճրագ» /Արմ./։ Բառի ծագումը պարզ չէ։ Այդ բառով կան մեծ թվով կազմություններ։ *Ջահաբորբոք, ջահագործութիւն, ջահագարդեւ, ջահագգեստ, ջահալից, ջահալուցութիւն, ջահակիր, ջահակից, ջահանալ, ջահանման, ջահապայծառ, ջահավառ, ջահավառել, ջահավառութիւն, ջահատու «զուսատու», ջահատր...*

Այս ենթախմբում դարձյալ գերակշիռ են իրանական փոխառությունները՝ *աշտանակ, բազմակ, ճրագ, մոմ, պատրոյգ*։

Լամբար, կանթեղ՝ հունարենից կատարված փոխառություններ են։

Բուծին-ը համարվում է ասորական փոխառություն։

Լոյս բաղադրիչով կազմությունները բնիկ հայերեն են։ Հայակազմություններ են *կալ*-ով կազմությունները /մոմակալ, բազմակալ/։

11. ՆՍՏԱՐԱՆ, ԱԹՈՌ

Այս ենթախմբի բառերը շատ չեն, սակայն ուշագրավ են իմաստային նրբերանգների, փոխառյալ և բնիկ բառերի հարաբերակցության տեսանկյունից:

Նիստ արմատով *նստարան*, *նստելի*, *նստոց* «աթոռ, նստարան» հիմնականում ուշգրաբարյան վկայություններ են²³:

Ներկայացնենք այս ենթախմբի բառերը:

Աթոռ «նստարան», մաս «գահ»։ առկայանում է մի շարք կազմություններում. *աթոռակ*, *աթոռակից*, *աթոռակալ*, *գուգաթոռ*, *մախաթոռ*: Հաճախական կիրառություն ունի 5-րդ դարից. ծագումը պարզ չէ:

Բաղրոն/բաթրոն «սանդուղքի աստիճան» իմաստից գատ ունի մաս «նստարան» նշանակությունը. «Եկեալ մերձ ի բաղրոնն՝ յորոյ վերայ անկեալ դներ» /ՆՀԲ/: Բառը հունադեմից կատարված փոխառություն է:

Բազմել «նստել»։ բայահիմքից առկայանում են *բազմական*, *բազմոց* բառերը: Երկրորդը վկայված է ուշ շրջանից:

Բազմական-ի հիմնական նշանակությունն է «սեղան նստածները»։ հմմտ. «Լցան հարսանիքն բազմականօք» /ՆՀԲ/: Երկրորդաբար կիրառվում է մաս «աթոռ, նստարան» իմաստով. «Արկ մմա բազմական ի գետնի զակումբն մաշկեայ» /ՆՀԲ/: Բառի արմատը իրանական է. *բազմական*, *բազմոց* հայակազմություններ են /բացառելի չէ *բազմականի* ամբողջապես փոխառյալ լինելը/:

Բազրի բառը ՆՀԲ-ը բերում է անեզական ձևով՝ նշելով «հեմարան» իմաստը: Հ.Աճառյանը Ոսկերեքանի՝ «Գահոյս արծաթապատս մի՝ առնիցես, այլ այնպիսի մահճակա... մի՝ փղոսկրեայ գահոյս, մի՝ երիզապատ բազրիս» օրինակում նկատում է «պառկելու կամ նստելու տեղ «բազմոց» իմաստը, որից և *բազրոտն* «գահույքի աստիճանները, ոտքերը»²⁴: *Բազրի* բառի ծագումը անհայտ է:

Բաստեռն «դեսպակ, գահավորակ». վկայված է 5-րդ դարից: Փոխառություն է հունարենից:

Բարձ. հիմնական նշանակությունն է «զլխի տակ դնելու բարձ», որից ածանցյալ են «նստարան», «գահ» իմաստները. «Սպաս առնել տաճարին բարձիցն պատրաստութեան, զայր այր յիրաքանչիւր գահ հրամայէր մատուցանել» /ՆՀԲ/: Իրանական փոխառություն է: Իմաստային նրբերանգները կարող են անցած լինել փոխատու լեզվից:

Տախտ «քազմոց, նստարան». իրանական փոխառություն է:

Հիշյալ ենթախմբում, ինչպես նկատելի է, գերակշիռ են դարձյալ իրանական փոխառությունները: Ստորև բերվող հոմանիշային շարքի բոլոր անդամներն էլ իրանական ծագում ունեցող բառեր են՝ իմաստային ընդհանրություններով ու նրբերանգներով:

Գահ-գահաւորակ, դարգին-դեսպակ-ժանուար. ընդհանրական են «նստարան, նստելատեղի, պատգարակ» իմաստներով: *Գահ* և *գահաւորակ* առանձնանում են մահ «թագավորի կամ իշխանավորի աթոռ» նշանակությամբ: Վերջինիս առնչվող *գահ*-ը ձեռք է բերել «պատիվ, իշխանական աստիճան» իմաստները:

Դարգիձ-ը թերևս «երկաթյա նստարան կամ մահճակալ»-ն է: *Տախտ*-ը նույնպես ունի «մահճակալ, անկողին» իմաստը. «Եղեւ տախտս փղոսկրեայս և արկին ի նմա անկողինս» /ՆՀԲ/: Սակայն բառը հիմնականում կիրառվում է «գահ, աթոռ, թագավորական գահույք» իմաստով. «Օրէնք էին, զի թագաւորն պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին ի միում գահոյս» /Բուզ., 142/:

Դեսպակ և *ժանուար* հաճախական չեն: *Ժանուար*-ը վկայել է Բուզանդը. «խնամոտ գթով ժանուարօք արծակեաց գնոսա գիետ Շապիոյ» /199/, «...որ արծակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապիոյ հանդերձ ժանուարօք» /163/: Ըստ երևույթին *ժանուար*-ը փոխադրամիջոց է, պատգարակ՝ բարձր խավի կանանց համար. այդ են հավաստում ինչպես վկայված երկու օրինակները, այնպես էլ բառի ստուգաբանությունը: *Ժանուար*-ը օգտագործել է մահ 17-րդ դարի հեղինակ Ջաքարիա Քանաքեռցին, որը, հավանորեն Բուզանդի գործածած բառը օտար ու անհասկանալի գիտակցելով,

քարգմանել է նոր պարսկերեն. «Եւ ի մտանել ի ժանուարն, որ քաւաճայ, հարկանէին զնա անողորմ»²⁵:

Իրանական ծագում ունեցող *տապաստ* արմատով վկայված է և *տապաստակ*, ըստ ՆՀԲ-ի «քազմական. սփռեալ նստարան հանգչելոյ և ուտելոյ»:

«Գահաւորակ, դեսպակ» նշանակությամբ է և *լկտի* բառը, որն ըստ գրաբարի բառարանների հանդիպում է Ոսկեբերանի գործերում և հունարենից կատարված փոխառություն է:

* * *

*

Շարադրանքի տարբեր հատվածներում մասամբ անդրադարձել ենք բառակազմության առանձնահատկություններին: Նշենք այն վերջահար ձևայթները, որոնցով համեմատաբար մեծ թվով բառեր են կազմվում:

Ակ/անակ/- աշտանակ, բաժակ, գահաւորակ, գանձանակ, դանակ, երասանակ, ըմպանակ, ըմպակ, քիակ, ծուղակ, ճամբարակ, մահակ, նուիրակ, սկաւառակ, սրուակ:

Ամ - զաւազան, դերձան, խարազան, խթան, կռան, հեծան, ճոպան, մական, չուան, պարան, ջնջան, ցաքան, տափան, փական:

Ատ/հատ/-ականատ, երակահատ, ցաքատ, փայտատ:

Արան - գելարան, լուացարան, խնկարան, կրակարան, ձգարան, ճրագարան, նստարան, պատկանդարան:

Ի - ածելի, աղօրի, բագրի, բառնալի, գերանդի, երկմատնի, լկտի, խառնելի, հանելի, սարի/ք/, ստորի:

Իչ - բրիչ, գանիչ, գրիչ, թափիչ, հոծիչ, հոսիչ, սրբիչ, վարիչ, քերիչ:

Ոյր - կահոյր, նքոյր, շագոյր, շարագոյր:

Ոց/անոց/ - ազբոց, բազմոց, գզրոց, գելոց, թոպոլոց, ժամանոց, խարտոց, կթոց, կկոց, կտրոց, հեծանոց, նուիրանոց, շմբրոց, պրկոց, ջնջոց, սղոց, վարոց:

Իանդ - դանդաճանդ, հրաւանդ, շարաւանդ, պարաւանդ,
վարաւանդ:

ՆՀԲ-ՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

Այս խմբի տարբեր ենթաբաժինների վերաբերող բառեր կան, որոնք ՆՀԲ-ում արձանագրված չեն: Այբբենական կարգով ներկայացնենք դրանք՝ համապատասխան վկայություններով: /Չեն ներկայացվում այն բնագրային օրինակները, որոնք բերում է Արմ.-ը. կնշվի միայն բառը/:

Ազբոց «ջուլիակի սանր». «Իսկ կանայք յորժամ ոստայն անկանիցեն և գկայնսն ազբոցօքն բախիցեն» /Ոսկ., Պօղ., Ա, 806/:

Ակնճափող «խողովակ». «...կացեալ ի մէջ պատուածովք ակնճափողացն, զոյգ ըմպակցացն բաժանէ» /Բրտղ, Պահ., 105/:

Բահլիկ «պատերազմական զրահ»:

Գանիչ «ծեծելու, հարվածելու գործիք». «Հրամայեաց... հարկանել գնա քրով, որ է աւագակոտ գանիչ» /Անկ. գիրք առաք., 364/:

Գելան «գելարան, տանջանքի գործիք». «...կապեալ երկաթի շղթայիք և գելանիս» /Դրասխ., 279/:

Ըմբոց «բաժակ». «...ընդ նմին և զըմբոցս եղջիւրեղէնս» /Կղնկտ., Շինգ., 272/:

Ըմպարան «բաժակ». «Այս է ըմպարան, որ կտակ է յարեան իմում» /Տիմ.Կուգ, 227/:

Թաբուտ «արկղ». «Երբեմն դներ ի թաբուտ և ծովասոյգ առներ» /Օրբ., Պատմ., 421, փոխառություն է պարսկերենից/:

Թարբ «թակարդ». «Այլ թարբ կապեալ է փայտեայ...» /Կղնկտ., Շինգ., 421/:

Խադ «թուր»:

Խարազի «մտրակ». «Այլուստ կողմանէ իբր խարազեալ... գկողսն ծեծելով» /Փիլ., Բանք, 152/:

Խիշտ «նիզակ»:

Կայծակալ «դարբնի ունեւի». «Նոցա գործիք արուեստին են ուն և սալ և կայծակալը» /Ոսկ., Ճառք, 482/:

Կայմ «ջուլիակի գործիք». «...եւ ազբոցն և ստեծն ի ստեպ...
ընդ միմեանս բախիցին և մանաւանդ ընդ կայմսն» /Ոսկ., Պօղ., Ա,
806/:

Կատինար «փականք»:

Կուղթ «մետաղե աման»:

Հանելի «պատառաբաղ, մսահան»:

Հրաւանդ «կասկարա». «Եւ զիրաւանդսն և զհանելիսն եւ
զկաթսայն» /ՆԳ.Բ.Մնաց., Դ, 16/:

Հոռոմափակ «հունական փականք, կողպեք». «Կողովս եր-
կուս արծաթեղենս՝ կապարեայ կնիք ի վերայ պնդեալ հոռոմա-
փակ» /Կղնկտ., 210/:

Մեսուր «մետաղյա ջրաման»:

Միզաւառ «անոթ միզելու համար». «...ամաչեմ ասել...որք
միզաւառս արծաթիս գործեն ձեզ» /Ոսկ., Պօղ., Ա, 603/:

Նիզակիկ «Եւ ընկենոյր զոսկենկար վահանն ի թիկունս և
զճաւճ նիզակիկն յահեակ բազուկն» /Օրբ., 275/:

Նիւանդակ «տեգ կամ վահան». «Վերելակ երիվարաց... մի-
ջապինդ, չորս նիւանդակօք» /Ն.Բիւզ./:

Շագոյր «պայուսակ»:

Ողոց «ուռկանի ծայրերը»:

Ջղալուծ «ջղերը հանելու տանջանքի գործիք». «Եւ... տան-
ջանարանքն այնոքիկ... սուր երկսայրիք... և ջղալուծք» /Ն. Բիւզ./:

Վերստորի «ջուլիակի զլանը, որի վրա փաթաթվում է գործ-
ված կտավը». «Իբրեւ զվերստորի ոստայնանկաց» /ՆԳ.Ա.Մնաց.,
ԺԱ, 23/:

Քաս «փարչ»:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս *Գ.Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987թ., էջ 115:
2. Տե՛ս Հ. *Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, հտ. 1, Ե., 1940թ., էջ 183:
3. Տե՛ս *Գ.Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն, Ե., 1987թ., էջ 432:
4. *Կայք*-ը Արմ.-ում ստուգաբանված չէ: Վ. Համբարձումյանը ենթադրում է հ.-ե. ծահում /տե՛ս «Լեզու և լեզվաբանություն», N1, 2006թ./:
5. Տե՛ս *Գ.Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 436, 440:
6. Ն.տ., էջ 459:
7. Т. Гамкрелидзе, Вяч. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, стр. 655.
8. Տե՛ս *Գ.Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 436:
9. Տե՛ս *Գ.Ջահուկյան*, նշվ. աշխ., էջ 440:
10. Տե՛ս Արմ., *Դաշապր* բառահոդվածը:
11. Իմաստները նշում ենք ըստ Արմ.-ի:
12. *Գան* և *ծեծ* արմատներով կազմություններ կան. *գանալի*, *գանալից*, *գանահար*, *գանահարել/լինել/*, *գան հարկանել*, *գան ընկել*, *բրածեծ*, *գանածեծ*, *ծեծել*, *ոգորածեծ...*
13. *Յուպ*-ը Արմ.-ում ստուգաբանված չէ: Գ.Ջահուկյանը բառը համարում է բնիկ հայերեն /Ջահուկյան, 1987թ., էջ 48/:
14. *Ջուր* բառի ծագումը պարզ չէ: Կարծում ենք՝ հնարավոր է *քուր* «ողբ, հառաչանք» - *քուր* «ծեծ, ծեծի գավազան» իմաստային անցումը: Այս դեպքում այն նույնպես պետք է համարել բնիկ հայերեն:
15. Այժմ կարելի է հավաստի համարել *կարիճ*-ի իրանական ծագումը /տե՛ս Լ. Հովհաննիսյան, 1990թ., էջ 242-243/: *Կարիճ* «փշոտ գավազան» իմաստը, անշուշտ, ձեռք է բերվել հայերենում, ուստի փոխառություն համարելը պայմանական է:
16. *Մահակ*-ի իրանական ծագման մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան, 1990թ., էջ 251:

17. *Վարոցի վար* արմատն իրանական է. բառը հայակազմություն է:
18. Генетические, ареальные и типологические связи языков Азии, М., 1983, с. 140.
19. *Գուրան* ձևով օգտագործված է բարբառներում: Բառի մասին մանրամասն տե՛ս Արմ., *Գուրայ* բառահոդվածը:
20. Տե՛ս Գ.Ջահուկյան, 1987թ., էջ 125: Գ.Ջահուկյանը բնիկ հայերեն է համարում և *հեծանոց*-ը:
21. *Է.Աղայան*, Բառաբնական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974թ., էջ 143-146:
22. Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Ա, 1940թ., էջ 124:
23. Տե՛ս ՆՀԲ-ի հիշյալ բառահոդվածները: ՆՀԲ-ն ունի *մստիք* «գահատորակ», որը Արմ.-ը սխալ է համարում և ուղղում՝ *մստի* «մստում է» /տե՛ս Արմ., *Նիստ* բառահոդվածը/:
24. Տե՛ս Արմ., *Բազրի* բառահոդվածը:
25. *Ջաքարեայ Սարկաւազի* պատմութիւն, Վաղարշապատ, 1870թ., էջ 199:

ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Մարդկային նախնական մտածողությամբ կենսաշխարհը կամ կենդանի աշխարհը ներառում էր և՛ կենդանական, և՛ բուսական աշխարհը, որը հ.-ե. նախալեզվում արտահայտվում էր *k'i-k'ei*-արմատով՝ թողնելով հետքեր ժառանգ լեզուներում¹: *Կենդանի աշխարհի* ընդհանուր այս հասկացությունը տրոհվում է մաս «շնչավոր» և «անշունչ»-ի:

Մարդկային հասարակության և մտածողության զարգացման, իրական աշխարհի հետ մարդու հարաբերության փոփոխության հետ փոխվում է մաս մալդու կողմից կենդանական աշխարհի ընկալումն ու գնահատումը:

Հնագույն միֆական ընկալմամբ աշխարհը ներկայանում է ծառի տեսքով, որի տարբեր մասերում՝ ճյուղեր, բուն, արմատ, տեղավորվում էր ողջ կենսաշխարհը: Սրանից բխող և ավելի իրական դասակարգում էր *վերին աշխարհի* կենդանիներ, այսինքն՝ թռչուններ, *միջին աշխարհի*՝ երկրի վրա ապրող կենդանիներ, և *ներքին աշխարհի*՝ սողուններ, գեղուններ: Բնականաբար, նախնական այս մտածողությամբ *միջին աշխարհի* կենդանիների շարքում միայն վայրի կենդանիներն են, քանի որ *աշխարհների* բաժանման և *համաշխարհային ծառի* ըմբռնումը նախորդել է վայրի կենդանիների ընտանեցման գործընթացին: Հայերը, *վերին աշխարհի* ներկայացուցիչներին անվանում են թռչունք, օդագնաց, օդախաց, քևաուր, օդային, օդապարիկ, *միջին աշխարհի*՝ ցամաքային, ցամաքական, գետնագնաց, *ներքինը*՝ սողունք, *ճճի, որդ, գեղուն* /վերջինս բազմիմաստ է/:

Կենդանիների ընտանեցման գործընթացին զուգահեռ՝ սկսում են տարբերակվել *ընտանի կենդանի, վայրի կենդանի* հասկացությունները՝ հաճախ միևնույն կենդանուն՝ վայրի և ընտանեցվածին տալով տարբեր անվանումներ. առն «վայրի արու ոչխար» - *ոչխար, վարազ* «վայրի խոզ» - *խոզ, ալծեսամ* «վայրի ալծի տեսակ» - *ալծ...* և այլն:

Կենդանական աշխարհը նաև արտացոլվում է մարդկանց հավատալիքների, ծիսական արարողությունների մեջ՝ կենդանիներիի պաշտամունքից մինչև զոհաբերություն: Ուշագրավ է, որ հին հնդեվրոպական ավանդություններում առանձնանում են «աստվածային կենդանիներ», որը խեթերենում այդպես էլ արձանագրվում է՝ *šinošaš huitar*²: Հետաքրքրական է այն, որ այդ կարգի կենդանիները վայրի կենդանիներն են /ուժի, ճարպկության խորհրդանշներ/:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները նաև այլ կարգի խորհրդանշներ են՝ չարի, բարու, վախկոտության, խորամանկության...: Իհարկե, այս կամ այն կենդանու «խորհրդանշացումը» պայմանավորված է տվյալ համրության ուրույն մտածելակերպով, վերջինս էլ՝ աշխարհագրական միջավայրով, բնակլիմայական պայմաններով, կենդանական և բուսական աշխարհի առանձնահատկություններով և մի շարք այլ գործոններով: Օրինակ, եթե Հին Եգիպտոսում *կատուն* համարվում էր սուրբ կենդանի, ապա հնդեվրոպական միջավայրում այդպես չէր: Կամ նույն հ.-ե. ծագում ունեցող ժողովուրդների շրջանում՝ իրենց բնակության նոր վայրերում, աշխարհագրական, պատմական նոր միջավայրում ի հայտ են գալիս *կենդանական աշխարհի* «գնահատման» նոր չափանիշներ:

Հայ մատենագրության մեջ վկայված են բազմաթիվ կենդանանուններ: Ինքնուրույն գրականության մեջ, բնականաբար, վկայվում են մեր լեռնաշխարհին բնորոշ կենդանիները /եթե մանավանդ այդ լեռնաշխարհի նկարագրությունն է, իսկ օտար աշխարհների նկարագրության դեպքում նաև բերվում են տվյալ միջավայրին բնորոշ ու գոմե հեղինակին ծանոթ կենդանանուններ: Զանազան առասպելների կամ առասպելապատում շարադրանքներում ու հատվածներում բերվում են նաև առասպելական, ոչ իրական կենդանանուններ/: Թարգմանական գրականության մեջ շատ և բազմազան են կենդանանունները, քանզի այդ գրականությունը ավելի բազմաժանր է, վերաբերում է տարբեր ժողովուրդների ու երկրների:

Եթե փորձենք ամենաընդհանուր ձևով ներկայացնել *կենդանական աշխարհի* վերաբերյալ գրաբար մատենագրության մեջ ավանդված ըմբռնումները, ապա կարող են առանձնացվել.

ա/ *Իրական և առասպելական կենդանիներ*: Առասպելական կենդանիները աշխարհընկալման ուրույն արտացոլումներ են: Ինքնուրույն գրականության մեջ դրանք այնքան էլ բազմաթիվ չեն. *պայ, նհանգ, վիշապ, ծովացուլ...* «Եթե ոչ նհանգ անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երևեր և երբեմն փոկ լինէր» /Եզն., 106/: «Իբրև գծովացուլն, զոր ի կովէ ելեալ ասեն» /Եզն., 98/: «Ոչ երբէք ի մարդկանէ ելեալ պայն, եթ առ երես արարած իցէ» /Եզն., 99/:

Այս կարգի կենդանանունները ավելի շատ են թարգմանական գրականության մեջ, ու հայ թարգմանիչը դրանք կա՛մ թողնում է նույնությամբ, կա՛մ էլ փորձում է թարգմանել կամ նկարագրել. *բասիլիկոն, բոնաժանի, դրակոնտես, եզնախոյ, զուարակափիղ, ընգղայ, լեխաթան* «ծովային վիշապ», *ձիացուլ*. «Եւ այլոց՝ յետոյ կուտ ձիոց կերպարանք և առաջոյ՝ մարդկան, որ ձիացուց յուշկապարիկ կերպարանս ունիցին» /Եւս., Զբ., 1, 22/:

Թարգմանական գրականությունից բերենք մի փոքրիկ հատված. «Որչափ ինչ զճառս առանցելոցն յանձին նկարեն, առաւել աւելի քան զայնպիսեացն, որք զձիացուլսն ի քմաց ստեղծանեն և զքիմառսն, այսինքն որ զվիշապառիւծ քաղսն համբաւեն և զայլսն նոյնպիսիս վիշապոտունս և զոր սկիտսն անուանեն, որ թարգմանի ապուռք. որպէս և հայք ծովացուլս իմն և վիշապս մարդակերպս՝ և պայս և առլեզս համբաւեն: Եւ այսու յայտ առնեն թէ առասպելս իմն ի քմաց կարկատեն...» /Ռսկ., Պօղ., Ա, 602/:

Հաճախ հայ թարգմանիչը, նույնությամբ ներկայացնելով օտար անվանումները, ավելացնում է *որ կոչի, որ թարգմանի*՝ հուշելով, որ բառը իրոք օտար է, օտար է և հասկացությունը. «Եւ սոռնուկաւ ... դարձեալ ի կարմիր ծովէ սլլում ումեն՝ նման ձկան և մարդկան, որում անուն կոչէր ովդակոն» /Եւս., Զբ., 13/:

բ/ *Ընտանի և վայրի կենդանիներ*: Առաջին խումբը բնորոշվում է *տնասուն, ձեռնասուն, ընտանի, ձեռնընդել*, երկրորդը՝ *վայրի, վայրենի* ածականներով. «Տնասուն կենդանեացն մարդիկ խնամողք են, իսկ վայրենեացն՝ աստուած» /ՆՀԲ/: «Կենդանի

ումանք ձեռնընդելք են» ՆՀԲ/: «Զվայրենի անասունս, զոր ձեռնասուն արարեալ էր» ՆՀԲ/: «Որպէս ի մեղոսն և ի խորդսն և ի ճահուկս վայրենի ոչխարացն» /Ոսկ., Պօղ., Բ, 329/: «Ուստի՞ կերակրին թռչունք և կամ վայրենի երէք» /Ոսկ., Պօղ., Բ, 393/: *Վայրենի* ածականը գործածվում է նաև թռչունների, բույսերի, առանձին կենդանաբանությունների հետ. *ցլուց վայրենեաց, հաւուց վայրենեաց, ձիթենի վայրենի...* և այլն:

Երբեմն տրվում են «ընտանի», «վայրենի» բնութագրումները. «Զի ոչխար ոչ կարէ երբէք լինել վայրենի, քանզի բնութեամբ ընտանի է, և գայլ ոչ լինել ընտանի, քանզի բնութեամբ վայրենի է» /Ոսկ., Ճառք, 554/:

Գ./Պիղծ և ոչ պիղծ կենդանիներ: Այս առանձնացման հիմքում ընկած է տվյալ կենդանու միսը ուտելի կամ ոչ ուտելի լինելու, սրա հետ կապված զոհաբերելու կամ չզոհաբերելու համգամանքը /սուրբ կամ անսուրբ անասուն/: Այս կարգի կենդանիների տարբերակման բազմաթիվ հատկանիշներ կան: Բերենք մի քանի վկայություններ. «Քանզի յաւանակ ընդ պիղծ անասունս է համարեալ. զի զամենայն որ ոչ կճղակահերձ իցէ և ոչ որոճիցէ, ընդ պիղծ անասունս զատեալ որոշեաց Մովսէս. եւ էշ քանզի ոչ կճղակահերձ է և ոչ որոճայ, ընդ անսուրբ անասունս է համարեալ» /Եմես., Ճառ., ԺԳ.³:

Պիղծ և ոչ պիղծ կենդանիների մասին առաջին վկայությունները Աստվածաշնչից են: Ահա Մովսէսի մի պատգամը. «Խոսեցարուք ընդ որդիսդ Իսրայելի եւ ասացէք: Այս անասունք են զոր ուտիցէք յամենայն անասնոց որ են ի վերայ երկրի: Զամենայն անասուն թաթափերձ և կճղակատր, որոյ յերկուս բաժանեալ իցեն թաթքն եւ որոճիցէ, յանասնոց՝ զայն կերիջիք: Բայց յանցանէ մի՛ ուտիցէք, որք որոճիցեն և կճղակահերձ ոչ իցեն. ուղտ զի որոճայ եւ կճղակն ոչ բաժանի, պիղծ իցէ նա ձեզ: Եւ մապաստակ զի որոճայ եւ թաթքն ոչ բաժանի պիղծ իցէ նա ձեզ...» /Դեու., ԺԱ, 2-8/:

Նշվում են նաև ջրային կենդանիները և թռչունները. «Եւ այս իցեն ի թռչնոց յորոց գարշիջիք... արծուի եւ պսակուն եւ գետարծուի, եւ անգղ, ցին, ...ազռաւ, ...ջալեամ, բու, ...բազէ...» /ն.տ., 13-22/:

Մոդուլները կամ գետնի տակ բնակվող կենդանիները նույնպես պիղծ են համարվում /Ա.տ.,ԺԱ, 29-31/:

Ինչպես նշել ենք, ոչ պիղծ կենդանիները մաս զոհաբերության կենդանիներ են: Դրանց ընտրությունը տարբեր ժողովուրդների շրջանում տարբեր սկզբունքներով է եղել: Օրինակ՝ Հեռոդոտոսի վկայությամբ, եթե եզան վրա թեկուզ մի հատիկ սև մազ նկատվի, ապա հին եգիպտացիներն այն համարում է ոչ սուրբ⁴:

Ձանազան կարգի տեղեկություններ կամ մաս կենդանապաշտության վերաբերյալ: Այս պաշտամունքը պայմանավորված է մի շարք գործոններով՝ հավատալիքներ, աշխարհագրական տարածք, բնակլիմայական պայմաններ, տնտեսության մեջ տվյալ կենդանու օգտակարություն: Երբեմն հաշվի է առնվում ուժը, գեղեցկությունը, ծայնը, մաս այդ կենդանիների հանդեպ ունեցած վախը, սարսափը: Պավլիկյան շարժման ժամանակաշրջանի որոշ աղանդների ներկայացուցիչներ ունեին կատվի պաշտամունք, որովհետև կատուները ոչնչացնում էին մկներին:

դ/ *Գազան-ոչ գազան*: Սա կենդանիների տարբերակումն է «գիշատիչ-ոչ գիշատիչ» հատկությամբ: *Գիշատիչ* բառը գրաբարում գործածական չէր: Այդ իմաստով գործառուում էին *գիշախանձ*, *գիշակեր* բառերը. «Առիւծ կամ արջ գիշախանձ»: «Իբրև շունք գիշախանձք» /ՆՀԲ/: «Ոմանք գիշակերք, ոմանք կտակերք» /ՆՀԲ/:

Եմեսացին «գազան-ոչ գազան» տարբերակման մի ուրույն հատկանիշ⁵ է առաջադրում. «Եւ զգազանսն այնու զատանէ, զի առաջին ոտքն չեն իբրև զայլ չորքոտանեաց, այլ մանաւանդ թէ ձեռք իսկ, որպէս շուն և ինձ և նոյնպէս այլ ևս նոյնպիսիքն: Իսկ այլ չորքոտանիքն որ ոչ իցեն գազանք, յորժամ ի գուն հարկանիցեն, զառաջին ոտսն պորտիւն ամփոփեն իբրև զգազանս և զառաջին թաթսն ոչ նոյնպէս, քանզի արմկունս իբրև զմեզ ունին, որպէս ի մատաւոր գազանս է իմանալ, յարջոյ, ի շանէ, և յառեւծէ և որ այլ ինչ նոյնպիսի իցէ» /Եմես., Մեկն., 126-127/:

Նկատենք, որ *գազան*-ը գրաբարում բազմիմաստ է, և ՆՀԲ-ը մեկնում է «Կենդանի վայրենի և պատառոդ, որ և էրէ, որպիսի են չորքոտանիք առանձնակեացք՝ դժնեայք, ճիրանաւորք, ժանկորք և

կատաղիք յերե վայրիս»։ Գազան է անվանվում և փիղը։ Երբեմն գազաններ են դիտվում օձերը, վիշապները, ծովային կենդանիները. «Գազանք ծովու ուտեն զմարմինս...գազանք ցամաքի զմարմինս պատուեն և զոգին ապականեն» /Վկ. արև., 53/։

Անշուշտ, կարելի է նաև այլ դասակարգումներ կատարել, ինչպես՝ «կաթնասուն-ոչ կաթնասուն», «եղջերավոր-ոչ եղջերավոր», ... «խոտակեր-ոչ խոտակեր» և այլն։

Ընտանի կենդանիների դասակարգման հիմքում կարելի է դնել այլ հատկանիշներ՝ «բեռնակիր-ոչ բեռնակիր», «զծկան-ոչ լծկան». հմմտ. «Որ տեսուչք են եզանց հողագործաց և զրաստուց բեռնակրաց» /ՆՀԲ/։ «Էշ բեռնակիր» /ՆՀԲ/։ Եվսեբիոսի «Մեկնութեան» մեջ էշ-ը բոլորովին պիտանի չէ արտ վարելու գործում. «Քանզի ոչ իսկ իշոյ գործ է արտ վարել այլ զի յոյժ զարագոյն է եզմ՝ աշխատի և նա զի չունի իւր զուգան... եւ էշն տկար է և տխմար գործոյն» /Եւս., Մեկն., 147/։

Հ. Որոտնեցին տալիս է այլ բնույթի դասակարգում. *արիւնատր- անարիւն, հազագասփիտ-ոչ հազագասփիտ*. «Եւ զցամաքայինն յարիւնատր...որպէս մարդ, ձի, ոչխար, իսկ անարիւն՝ որպէս մարախ, մրջին և մեղու...և դարձեալ բաժանէ ի հազագասփիտս...որպէս մարդ, եզն, ուղտ և ոչ հազագասփիտ՝ ճանճ և մրջին» /ԲՄ, 3, 373/։

Կենդանաճունների ծագումնաբանական շերտերը

Հայերենում վկայված ընտանի և վայրի կենդանիների անվանումները պատկանում են ծագումնաբանական տարբեր շերտերի։

ա/ Բնիկ հայերեն բառեր

Կենդանական աշխարհին վերաբերող հիմնական անվանումները հ.-ե. ծագումով բնիկ հայերեն բառեր են։

Ընտանի կենդանիներ - ամիկ «մի տարեկան ուլ», այծ, անդի/եայ «արջառ, նախիր», աղվի «ոչխար», բուծ «կաթնակեր գառնուկ», գառն, եզն, երինջ, էշ, ընջուղ «երինջ», կով, կորիւն, ձի,

ծուկն, մաքի, մոզի, շուն, որոջ «գառնուկ», սկունդ «շուն», որթ, ուլ, ցուլ տուար, քաղ «արու այծ»:

Վայրի կենդանիներ - աղուես, առիւծ, առն, արջ, բորենի, գայլ, գորտ, եղն «էգ եղջերու», երէ, ինձ, լուսան, խոյթ «կոկորդիլոս», կրայ /կրիայ/, կոր «կարիճ», կորիւն, մուկն, ոզնի:

Միջատ, սողուն, զեռուն - անիծ, բոռ, բրետ, թիթեռն, իժ, լու, թրթուր, կէտ, մեղու, մլուկ, կոյադնդիտ /կոյ «աղբ»/, մուն, մրջիւն, սարդ, տիգ, ուտիճ, քարբ, օձ:

Կարող ենք նշել բարբառային ձևերը՝ բորեկ «թուխ կով», գիշերի «կզաքիս», մղմող «ցեց», կռիաքի «կարիճ»:

Տուար «արջառ» հին մատենագրության մեջ անկախաբար չի կիրառվել /կամ մեզ չի հասել/, բայց այդ արմատից ունենք *տուարած*, *տուարածական* «հովիվ», *տուարածատափ* և այլն: Բարբառներում տալար «խոշոր եղջերավոր», «անասուն» հաճախական է:

Նկատելի է, որ հայերենում քիչ են ջրային կենդանիների հ.-ե. անվանումները, թերևս միայն *ծուկն*, իսկ *խոյթ*, *խիթ* /*խութ*/ «կոկորդիլոս» վկայված է ուշ շրջանից՝ «Վարք Հարանցում» /տե՛ս ՆՀԲ/. *խիթ*/*խութ*-ը բազմիմաստ է /տե՛ս ՆՀԲ, Արմ./, նշանակում է նաև «ծովի մեջ գտնվող ժայռ, խութ»: Ինչպես նշում է Արմ.-ը, «կոկորդիլոս» նշանակութիւնը ածանցում է «քար, ժայռ» գաղափարից. հմմտ. 1. *խեցի* «թրծած կաւ», 2. խեցեմորթի պատեան, 3. «կոկորդիլոս», *խոյթ* «կոկորդիլոս», կոկորդիլոս հունարեն բառը «բուն նշանակում է «քարերի որթ» /Տե՛ս Արմ., *խիթ* բառահոդվածը/:

Հայերենը չի պահպանել *խոզ*-ի հնդեվրոպական անվանումը /*sus*/: *խոզ* Արմատական բառարանում ստուգաբանված չէ: Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում նաև ակկադական ծագումը /1987, էջ 472/: Մեր համոզմամբ բառը իրանական ծագում ունի /տե՛ս Ծան., 11/:

Ամիկ «մի տարեկան արու ուլ». բարբառային *ամիկ* ձևի /Ղարաբաղի բարբառ/ համար Աճառյանը հավանական է համարում թրք. emlik «կաթնակեր գառնուկ»: Մեր կարծիքով բարբառային ձևն էլ հ.-ե. *ամիկ*-ից է, իսկ Ղարաբաղի բարբառում *-լ*-ի հավելման ալլ օրինակներ կան. հմմտ. *կարճ-կարճիկ*:

Կրայ/կրիայ բառի հ.-ե. ծագումը փաստարկում է Է. Ադա-
յանը՝ հ.-ե. *geu արմատից՝ հայ. «տաշտ, նավակ»: Ուշադրության
է արժանի այն հանգամանքը, որ «Մեղրու բարբառում, ինչպես և
ամբողջ Մեղրու շրջանում կրիային կոչում են «տաշտակ»⁵:

Կոր «կարիճ» բառը գրաբարի բառարանները դիտում են
որպես հետին վկայություն, ռամկական ձև: Ըստ Արմ.-ի հայերեն
կոր «ծուռ» բառից է և իրավացիորեն համեմատվում է բրբ. կրռըհա-
քի /կեռ ազի/ «կարիճ»-ի հետ: Արմատական բառարանում կոր-ը
ստուգաբանված չէ: Այժմ ակնհայտ է այդ բառի հ.-ե. ծագումը:
Ըստ Ջահուկյանի՝ այն հ.-ե. goṣoro-ից է /1987, էջ 176/, ըստ
Ադայանի՝ հ.-ե. *ger արմատից /1974, էջ 102-108/: Ուրեմն՝ անկախ
վկայության ժամանակաշրջանից, բառը հին է, որը, սակայն, հնուց
գրավոր չի ավանդվել:

Թիթեռն. վաղ գրաբարում վկայված չէ:

Լուսան. հին մատենագրության մեջ գործածված է մեկ ան-
գամ /Արմ./: Ղարաբաղի բարբառի լիսսենն-ը ծագում է հին *լու-
սենն, *լուսամն ձևից:

Քաղ «այծ, նոխազ». հ.-ե. ծագումը ընդունում է Ջահուկյանը
/1987, էջ 130, 208/: Ինչպես նկատում է Գ. Ջահուկյանը՝ «Հայե-
րենը հարուստ է ինչպես վայրի, այնպես էլ ընտանի կենդանիների
բնիկ հնդեվրոպական անուններով: Որս, երէ, թակարդ, թարբ
բառերը ցույց են տալիս որսորդության և ձկնորսության տարած-
վածությունը, սակայն ձկնորսությունը կապված է եղել ավելի շատ
գետերի ու լճերի հետ, և ձկնատեսակների բնիկ հնդեվրոպական
անվանումներն շատ քիչ են: Չարգացած անասնապահության
մասին են խոսում ոչ միայն կով, եզն *հովի «ոչխար» /հովի
բառում/, այժ բառերի և նրանց տարբեր հասակների անվանում-
ների առատությունը՝ հորթ, մոզի, երինջ, որոջ, գառն, ուլ և այլն,
այլև այնպիսի անասնապահական տերմիններ, ինչպիսիք են՝
հալթան «կոտ», արածեն, հովիս, ստերջ, տուար, թերևս նաև գոմ:
Հայերին հայտնի են շունը, ձին /բայց ոչ տարածված հնդեվրո-
պական անվանումներով/, էջը: Վայրի կենդանիների անուններից
սովորական են՝ գայլ, արջ, աղուես, ինձ, լուսան, ոզնի: Առիւծ և
կորիւն անվանումները կազմված կամ մասնավորված են ավելի

ուշ՝ հնդեվրոպական համապատասխան հիմքերի վրա» /Ջահուկյան, 1987, էջ 260/:

Ջահուկյանի այս նկատառումները վերաբերում են վաղնջահայերենին, իսկ գրաբարում ավելի շատ են կենդանանուններին ու կենդանական աշխարհին, այդ թվում և ձկնորսությանը վերաբերող հ.-ե. անվանումները:

Անդրադառնալով տարածված մի բանի հնդեվրոպական անվանումների իմաստագործառական յուրահատկություններին՝ որոշ դեպքերում զուգահեռներ անցկացնելով հ.-ե. այլ լեզուների տվյալների հետ:

Կուլ. այս բառի ընդհանուր հ.-ե. հիմքը վկայված է հիմնական հ.-ե. հին բարբառներում, ընդ որում առանց սեռի տարբերական /Гамкρεлидзе, Иванов, 565/: Այսինքն՝ սկզբնապես տարբերակված չեն եղել *կուլ*, *եզ*, *ցուլ* հասկացությունները. հմմտ. հ. հնդկ. gauh «եզ, կով», ավեստ. gaos «ցուլ, կով», լատ. bos, սեռ. bouis «եզ, կով» և այլն: Իրանական լեզուներում մի շարք այլ կենդանանունների կազմության մեջ առկայանում է դարձյալ այդ արմատը. գոմեշ, /պրս. gāvmeš, միջ. պրս. gau-maēša, բառացի՝ արջառախոյ/: Այս արմատն է և պրս. gusfand «ոչխար» բառում:

Հայերենի գրավոր շրջանից արդեն *կուլ*-ը, ի տարբերություն հ.-ե. համապատասխան արմատի, դրսևորում է սեռային տարբերակվածություն: Հմմտ. նաև նույն արմատից *կոզի* «կարագ» բառը: Հավանորեն նախագրային ինչ-որ շրջանում հայերենը նույնպես այդ տարբերակումը չի ունեցել:

Ոչխար հասկացության ընդհանուր հնդեվրոպական հիմքը վերականգնվում է *hoqi ձևով /Гамкρεлидзе, Иванов, 577/: Հայերենը այս արմատը պահել է *հուլ-իւ* և *աղի* բառերում: *Աղի* «ոչխար» վկայված է 5-րդ դարից: Թեկուզ բառը այնքան էլ հաճախական չէ, սակայն նրանից կազմված *օղիկ* /*աղիկ*/-ը «ոչխարի մորթի, մորթուց պատրաստած հագուստ», որը նույնպես վկայված է 5-րդ դարից, հաստատում է, որ գրաբարյան փուլից առաջ բառը լայն կիրառություն ուներ:

Հայերենը չի պահպանել *ժ/*-ու հնդեվրոպական տարածված անվանումը նույն իմաստով */*ekʷo-*ի **eikuo* տարբերակը տվել է *էշ* /Չահուկյան, 1987, էջ 260/:

Ինչպես նկատում է Գ. Չահուկյանը՝ «էշ բառի հատկացումը *հ.-ե. Ե՛շ* «ծի» հիմքին կասկածներ է հարուցում և՛ իմաստով, և՛ հնչյունապես: Սակայն իմաստային նման անցումը անհնար չէ, իսկ ինչ վերաբերում է հնչյունական կողմին, ապա կարելի է ասել հետևյալը. *էշ*-ոյ ձևը ենթադրում է **eikʷuo-*ի կողմնակի ձև, որի առկայությունը հաստատվում է նույնպես անբացատրելի համարվող հուն. *իսպոս* «ծի» բառի առկայությամբ» /Չահուկյան, 1987, էջ 163/:

Համենայն դեպս հայերենում *ժ/*-*էշ* հասկացությունների անցումը ընդունելի է համարվում: Այդ և այլ հարակից հարցերի մասին ուշագրավ դիտողություններ ունի Ռասետլը:⁶

Թե այդ անցումը երբ է կատարվել, դժվար է ասել, բայց Ռասետլը նկատում է, որ հին հայերը սովորություն ունեին մարդկանց անուններ տալ կենդանիների անուններով, բայց «ծի» և «էշ»-ով անձնանուններ չկան: Հայերին հարևան իրանցիները «ծի» *aspa* բառով անձնանուններ ունեն, որից էլ հայերին անցած Շավասպ, որն իրավամբ համարվում է նախապարթևական անձնանուն: Ռասետլը ուշադրության արժանի է համարում Է. Հեմպի մի դիտարկումը, թե «ծի»-ով հատուկ անունները հավանաբար կորել են, երբ բառը սկսել է կիրառվել «էշ» իմաստով: Նկատված է, որ արդեն մեր մատենագրության սկզբնավորման շրջանից, *էշ*-ը նաև ի տարբերություն *ժ/*-ու արդեն նվաստացուցիչ երանգ ուներ:

Անդրադառնալով *իշայր* տեղանվանը, և որ *այր*-ը տեղանուններում հաճախ նշանակել է «քարանձավ», ոչ թե «մարդ» /հմտ. բազմայր/, Ռասետլը հավանական է համարում, որ նկատի է առնվել *վայրի էշ*-ը /*ցիռ*/, որը ազնիվ կենդանու համբավ ունի: Նա նշում է նաև, որ *վայրի էշ*-ի /միջ. իրան. *gur*, հայ. *իշավայրի*/ արքայական որսի կենդանի էր, որի անունը իբրև մակդիր է վերցրել սասանյան Բահրամ Գ-ուրը /ն.տ., էջ 50/:

Ինչևէ, փաստը մնում է փաստ, որ *ժ/* հասկացությունն արտահայտող *հ.-ե.* արմատով հայերենում ի հայտ չեն գալիս այդ հասկացությանն առնչվող զանազան անվանումներ:

Դրանք փոխարինված են իրանական *aspa* «ձի» բառով: Մեկ այլ տեղ կնշենք *ժ/*-ու հոմանիշները և իրոք կհամոզվենք, որ այդ հասկացությունն արտահայտող բառերի գերակշիռ մասը իրանական ծագում ունի: Ի՞նչն է պատճառը: Կարծել, թե ձիաբուծությունը Հայաստանում ավելի ուշ է սկսել զարգանալ քան հարևան Իրանում, ճիշտ չէ: Ձիաբուծությունը աշխարհագրական այդ տարածքներում երևի թե սկսել է զարգանալ միաժամանակ: Ավելին, Հայաստանը աքեմենյան շրջանից որպես հարկ հազարավոր ձիեր էր մատակարարում իրանական բանակին: Հայերենում այդ բնագավառի բնիկ բառերի բացակայությունը մենք հակված ենք բացատրելու իրանական փոխառությունների ազդեցությամբ: Իսկ լեզուների փոխառնչություններ այդպիսի դեպքերում լինում են: Օրինակ՝ միամտություն կլինի կարծել, թե հայերենը չի ունեցել գույների բնիկ *հ.-ե.* անվանումներ, որովհետև գումանունները աշխարհընկալման յուրօրինակ դրսևորումներ են, էթնիկական մտածողության առանձնահատկություն, բայց 5-րդ դարի տվյալներով փաստորեն միայն *դեղին*-ն է, որ բնիկ հայերեն է: Մյուսները, որ անշուշտ եղել են, փոխարինվել են իրանական ծագում ունեցող բառերով. կարմիր, սեաւ, կապոյտ, սպիտակ, ճերմակ⁷:

Այդպես են դուրս մղել և *ժ/*-ուն առնչվող զանազան հասկացությունները:

Ինչպես նշված է Գամկրելիձեի և Իվանովի գրքում, ընդհանուր հնդեվրոպական փուլում *զալլ* նշանակող մի քանի ձևային տարածվածությունը *հ.-ե.* ցեղերի բնակության տարածքում, ինչպես նաև նրա պաշտամունքային և ծիսական նշանակությունը, որը հստակ արտահայտված է հնագույն հնդեվրոպական ավանդույթներում /492, 493/: Հեղինակները այս միտքը հաստատում են բազմաթիվ օրինակներով:

Այս հնագույն երևույթը արտացոլվում է նաև հայերենում: Նկատենք մի քանիսը: Խեթական և սլավոնական ավանդություն-

ներում նշմարվում են մարդու՝ գալլ դառնալու՝ ասել է թե «ուժեղ, սարսափելի» դառնալու մասին զանազան արտացոլումներ /493, 494/:

Հայերի *մարդագալլ* հասկացությունը՝ «ուժեղ, սարսափելի մարդու և գալլի հատկություններ ունեցող» հնագույն ավանդույթի հայկական արտացոլում պետք է դիտել⁸:

Գալլ. նաև ժողովրդական մտածողության մեջ «խելոքի, շատ լավ իմացողի» վերապրուկային իրողությունն է պահել, որ դարձյալ վաղնջական մտածողության արգասիք է: Այլ դեպքերում այն չարության խորհրդանիշ է. հմմտ. հայ. գալլաբարոյ, գալլանալ ... և այլն:

Գալլ. անունը հաճախ տարբեր ժողովուրդների շրջանում դրսևորվել է ջրանուններում և տեղանուններում, մեզանում՝ *Գալլ* գետ, *Գալլաձոր*... և այլն:

Ինձ. ոլորշակի հետաքրքրություն է ներկայացնում և այս բառը: Ծագած լինելով հ.-ե. *simgh-ից /Ջահուկյան, 1987, էջ 147/՝ այն իր զուգահեռն ունի սանսկրիտում: Ուսումնասիրողները նկատել են, որ հ.-ե. ավանդություններում *վագր* իմաստությո՜ր /семах-тема/ ի հայտ է եկել հետագայում՝ առանձին բարբառներում /Гамкредиадзе, Иванов, 560/: Հայերենում *վագր*-ը ավելի նոր հասկացություն է, քան *ինձ*-ը, և փոխառություն է իրանական լեզուներից:

Զննելով Խորենացու «Պատմության» այն հատվածը, որտեղ պատմահայրը պատմում է Մարաց թագավոր Աժդահակի՝ Կյուրոսի և Տիգրանի միաբանության մասին տեսած երազը, երբ Հայաստան երկրի լեռներից մեկի գագաթին երկունքի ցավով բռնված «ծնալ յանկարծ կլինն երիս կատարեալս ի դիցազանց հասակաւ և բնութեամբ: Առաջինն գերանսն ածեալ ի վերայ առիւծո՛ւ՝ սլանայր յարևմուտս, և երկրորդն ի վերայ ընծո՛ւ՝ ի հիւսիսի հայելով, իսկ զերրորդն զվիշապ անարի սանձեալ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տէրութեանս» /Խոր., Ա, ԻԶ/, Վ. Իվանովը եզրակացնում է, «որ չնայած *Աժդահակ* անվան իրանական ստուգաբանությունը և կապը Մեդիայի /Մարաստանի/ հետ, լեզենդում ակնհայտորեն երևում են հնագույն միֆոլոգիական մոտիվներ»⁹: Հեղինակը նկա-

տում է նաև հայկական վերոհիշյալ լեզենդի և Հոմերոսի «Ոդիսականի» մի հատվածի աղբյուր նշված երեք կենդանիների առկայությամբ */առիւծ-ինճ-վիշապ/*:

բ/ Իրանական փախառություններ

Հայ-իրանական լեզվական առնչությունները իրենց արտացոլումն են գտնում նաև կենդանանունների համակարգում: Իրանական ծագում ունեցող կենդանանուններն են՝ *աշդահակ* «վիշապածուկ», *ասպ* «ծի», *բարակ* «որսի շուն», *բզաք* «այծ», *բէշկ մշկոյ*, *զազան*, *զոմէշ*, *զրաստ*, *խարբուզ* «իշայծեամ», *կապիկ*, *կինճ* «վարազ», *կնգում* «աքիս», *խոզ*, *կարիճ*, *կուզ* «կատու», *մատեան* «էզ ծի», *մարախ*, *մոդէս*, *մուշկ*, *յաւանակ*, *յովատակ*, *յովազ*, *նապաստակ*, *նիանգ*, *նոխազ*, *պաճար* «խոշոր եղջերավոր անասուն», *շտրպաղանգ* «ընծուղտ», *պատրուճակ*, *սամոյր*, *վազր*, *վարազ*, *վիշապ*, *տզրուկ*, *փալանիկ* «կառքի ձի, ջորի», *փիղ*, *քուտակ*:

Այս բառերից մի քանիսը վկայված են մեկական անգամ, այսինքն՝ լայն գործածություն չեն ունեցել. պարզապես դրանք նշում ենք որպես վկայություն: *Աշդահակ*, *բզաք*, *փալանիկ* վկայված է ուշ շրջանից՝ Գրիգոր Մագիստրոսի գործերում, և օրինակներից էլ զգացվում է, որ հեղինակը նշում է որպես օտար անուն. «Ելեալ ձկան երևել մմա, աշդահակ կոչեցեալ...» /Արմ./, «Այծից արական քաղ, նոխազ, բզաք»: «/Չիոց/ չեզոքն, որպիսի քուտակ բաշահատ, անդրավար, փալանիկ»:

Խարբուզ «իշայծյամ». Արմ.-ի հավաստմամբ վկայված է մեկ անգամ Աստվածաշնչում:

Մուշկ, *բէշկ մշկոյ*, *շտրպաղանգ* վկայված են «Աշխարհացոյցում» որպես օտար անվանումներ. «Լիճի և ի հնդիկս մուշկ երէ» /ՆՀԲ/: «Լիճի և ի հնդիկս և մրջմնառիւծք և մկունք, բէշկ մշկոյ և կոկորդիլ գազան...» /ն.տ./: «Լիճի անդ ընծուղտք ... պարսիկք կոչեն շտրպաղանգ»:

Քաւթար «բորենի» գրաբարում ավանդված չէ, կա միայն բարբառներում:

Կնգում «սպիտակ աքիս» գրաբարում չի հանդիպում, սակայն Բուզանդի գրքում հանդիպող *կնգմենի* «կնգումի մորթ» բառը հուշում է, որ *կնգում* գրաբարում գործածական է եղել:

Ասպ. այս բառն էլ զարմանալիորեն զրաբարում անկախաբար չի գործածվում, սակայն այդ արմատով բավական մեծ թվով բառերի առկայությունը /եթե դրանք համարենք մաս ամբողջական փոխառություններ՝ *ասպազան, ասպազեն, ասպականի, ասպաճարական, ասպաստան, ասպատակ/* հուշում է, որ զրաբարում *ասպ* «ծի» իմաստը գիտակցվել է:

Մի շարք կենդանանունների իրանական ծագումը Արմատական բառարանը չի նշում: Դրանց իրանական բնույթը փաստարկված է նորագույն հետազոտություններում:

Բարակ «որսի շուն» /Աղայան, 1974, էջ 36-41/, *գազան* /Հովհաննիսյան, 1991, էջ 235-236/, *գրաստ* /ն.տ./, *կարիճ* /ն.տ., էջ 242-243/, *յովատակ* /ն.տ., 252/, *մապաստակ* /ն.տ., 253/:

Ամենայն հավանականությամբ իրանական ծագում ունեն *երիվար, անդրուար* «կառքի ձի», նժոյգ բառերը¹⁰: *խոզ*-ը նույնպես կարելի է համարել իրանական փոխառություն¹¹:

Իրանական փոխառությունների զգալի մասը գործածական է և միջին հայերենում, ժամանակակից հայերենում, ինչպես մասնի շարք բարբառներում:

զ/ Մեմական փոխառություններ

Մեմական լեզուներից կատարված փոխառությունները մեծաթիվ չեն, և դրանց զգալի մասը կա՛ն ուշ շրջանից է վկայված, կա՛ն ոչ հաճախական կիրառություն ունի: Մեմական լեզուներից զրաբարում գործառող կենդանանուններ են՝ *ամարու* «գառ», *առնետ*, *բոտոտ* «ճիճու», *գլոս* «կապիկ», *խարագուլ* «մորեխ», *խարամանի* «ղև, օձ», *խլուրդ*, *կատու*, *կոզոն* «ուղտ», *կուղբ*, *մնինա* «միջատ», *մուղ* «էշ», *յամոյր* «վայրի այծ», *շերամ*, *շաւառն* «ուղտ», *պախրե* «արջառ», *ցեց*, *քօշ* «արու այծ»:

Ամարու. վկայության կոնկրետ ժամանակաշրջանը հստակ չէ: Արմ.-ի վկայած աղբյուրի՝ Ե դարի համապատասխան թարգմանության մեջ *ամարու*-ի համապատասխանակը *որոջ*-ն է:

Գլոս. վկայված է Վարդան Այգեկցու առակներում և դիտվում է որպես օտար անուն. «Է կենդանի մի, որ կոչի գլոս... հրամանաւ Աստուծոյ միս ոչ ուտէ, այլ հանապազ քնի և յոյժ գիրանայ» /Արմ./:

Խարագուլ. վկայված է միայն մեկ անգամ /Դեւտ., ԺԱ, 22/:

Կոտլը. վկայված է դարձյալ ուշ շրջանից:

Մուղ «էշ». վկայված է մեկ անգամ՝ Նորագյուտ Մնացորդաց գրքում. «Եւ կրէին իշովք, ուղտովք և ջորովք և մղաւ զկերակուրս» /ՆԳ.Մնաց., Ա, ԺԲ, 40/:

Կոզոն «ուղտի ձագ». 5-րդ դարում վկայված է մեկ անգամ /Ծննդ., ԼԲ, 15/: «Ուղտս ծնեալս կոզոամբ հանդերձ»: *Կոզեռն* մականունը և Ղարաբաղի բարբառում *գոզոակ* «ուղտի ձագ» առկայությունը նկատել են տալիս, որ բառը հասկանալի և գործածական է եղել ժողովրդախոսակցական լեզվում կամ տարածքային մի շարք տարբերակներում:

Շաւառն «ուղտ». վկայված է մեկ անգամ /Արմ./:

դ/ Հունարենից կատարված փոխառություններ

Հր. Աճառյանը, քննելով հունարենից հայերենին անցած փոխառությունները, կենդանիներ ենթադասակարգման մեջ ներկայացնում է 93 բառ /ՀԼՊ, Բ, 36/: Դրանցից մի քանիսը թռչնաճուռներ են /*պեղական, կիկնոս, պիպոս, տրոքիլոս, փալկոն, փիւնիկ*/: Ինչպես նկատելի է, վկայված կենդանաճուռների շարքերում քանակով դրանք բոլորից շատ են, ավելացնենք, որ բազմաթիվ բառեր էլ Արմատականը չի վկայում:

Հայտնի է, որ 5-րդ դարի հայ թարգմանական գրականության գերակշիռ մասի բնագիրը եղել է հունարենը: Հայ թարգմանիչը, հանդիպելով բազմաթիվ օտար կենդանաճուռների, այդ ձևով էլ դրանք ներկայացրել է: Այսինքն՝ ներկայացվել են որպես օտար բառեր՝ հաճախ ավելացնելով *որ կոչի* այսինչ...

Նշենք նաև, որ հայ մատենագրության մեջ ավանդված հունարեն կենդանաճուռներից շատերը եզակի վկայություններ են, հանդիպում են միայն տվյալ բնագրում: Այդ բառերի գերակշիռ մասի արտաքին-հնչյունական կողմն էլ մնացել է անփոփոխ՝ բնագրին հարազատ, առանց հայերեն որևէ մասնիկավորման, որն իր հերթին հուշում է, որ գործ ունենք օտար բառի և ոչ թե փոխառության հետ: Հունարենից անցած կենդանաճուռների դասակարգումից պարզվում է, որ առավել շատ են ջրային կենդանիների անունները /ձկնաճուռներ, առասպելական կենդանիներ, խեցեմորթներ... և այլն/:

Մի շարք բառեր էլ նշվում են միայն այս կամ այն բառարանում՝ առանց որևէ վկայության. այսինքն՝ դրանց իսկությունը և վկայության ժամանակը ստույգ չէ */ամնոս, ասպիդ, բոբոդոն, եփենէս, լէնօսօֆօնոս, միզալիս.../*:

Ներկայացնենք հումարեն կենդանանունները որոշ դասակարգումներով՝ ըստ հարկի փակագծերում նշելով գործածության թիվը */հաճախականությունը/*.

ա/ *Կենդանիներ - ասփինգ* /1/ վկայված է Աշխարհացույցում, Աճառյանը ուղղում է՝ *սփինգ*: *Բոնոսոս* «վայրի ցուլ» /ն.տ./, եղոփին /1/ «եղջերու», *կաստովդէսյս* /1/, *մելաւ* «ռչխար» /1/, *որիքս* /1/ «վիթ», *սկիլայ* «առասպելական գազան»:

բ/ *Սողուններ - ասպիդ, բասիլիկոս, բոմբիլոս* /1/ «շերամի ուրյ», *ստդամանդր, սերաստէս, վասիլիսկոյ...*

Այս բառերից *ասպիդ, սերաստէս* վկայված են միայն բառարաններում՝ առանց բնագրային օրինակների: Վասիլիսկոյ-ը *բասիլիսկոսի* տարբերակն է և վկայված է ուշ շրջանից:

գ/ *Չկներ, ջրային կենդանիներ - անքիլոս, աստակոս* /1/ «խեցգետին», *գիւռնիովն* /1/ «գորտ», *դելփին, դոակոն* /1/, *դոակոնառ* /2/ «վիշապածուկ», *դրակոնտէս* /1/, *ենքեդէս* «օձածուկ», *եքինէս, ընգդայ* /ծովային հրեշ/, *կառաբոս* «խեցգետին», *կասդրիոս* /1/ «ջրաշուն», *կարք* «խեցգետին», *կարիտոս* /1/ «խեցեմորթ», *կեփադ* /1/ /ձկան տեսակ/, *կէտ, կոկորդիլոս, կոնք* «խեցեմորթ», *կոստորոս* /1/ «ջրշուն», *կոքդի* /1/ «խեցեմորթ», *կտին* /1/ /խեցեմորթի տեսակ/, *հիդրա* «ջրային օձ», *հիսդոս, մենիդոս* /ձկան տեսակ/, *միւռինէս* /ձկան տեսակ/, *յուդիդաս* /1/ /ձկան տեսակ/, *նարկա* «թմրածուկ», *ոսմիդայ* /1/, *ոստրէոս* /ծովային խեցեմորթ/, *ովան* /ծովային կենդանի/, *պին* /ծովային խեցեմորթ/, *պոդիպոդ* /ծովային բազմոտանի կենդանի/, *պոմպիլոս* /1/ /ձկան տեսակ/, *պրիոնէ* /1/ «սղոցածուկ», *սեդակ* /1/ /ձկան տեսակ/, *սեպեան* «մեղանածուկ», *սկարոս* /որոճող ձուկ/, *ստրոմ* /խեցեմորթի տեսակ/, *տառեխ* /ուշ շրջանից է վկայված/, *տեթիեդէս* «մեղանածուկ», *տրիգոն* /վահանաձև՝ ձուկ/, *փագրոս* /ձկան տեսակ/, *փոկ, քսիփէ* /1/ «թրածուկ»:

Ինչպես նկատելի է, բազմաթիվ բառեր մեկական կիրառություն ունեն: Նշված և այս կարգի այլ բառերից փաստորեն հայերենում այս կամ այն չափով լայն կիրառություն ունեն *դելփին, կէտ, կոկորդիլոս, տառեխ, փոկ* բառերը:

Նշենք, որ ձկների, ծովային զանազան կենդանիների անվանումների զգալի մասը /հատկապես եզակի վկայությունները/ հանդիպում է Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ»-ում:

Այլևս չփաստարկելով, որ հունարեն կենդանանունների գերակշիռ մասը մեր մատենագրության մեջ դիտվել է որպես օտար անվանումներ՝ օտար հասկացություններ արտահայտելու համար, և դրանք փոխառությունների շարքում գետեղելը ճիշտ չէ, բերենք մի քանի բնագրային օրինակ. «Իբրեւ գղեսա հալածականս և իբրեւ զընգղայս ծովու վնասակարս» /Ոսկ., Մտք., Բ, 596/: «Ի նորա աւուրս երեւեալ գազան ինչ՝ զոր կոչեն *իդովտիոն*, ի կարմիր ծովէ, որոյ մարդկան և ձկան կերպարանք ունի»: «Եւ յառաջնումն ամին յայտնել ի կարմիր ծովէ անդէն իսկ ի մէջ սահմանացն բաբեղացոց ահագին ինչ գազանի, որոյ անուն կոչիցի ովան» /Եւս., Զր., Ա, 20/: «...նման ձկան և մարդկան, որում անուն կոչէր ովդակոն» /Եւս., Զր., 13/: «Փոկ և դըլփինք և ներկեսք, որ անուանեալ կոչին սեղակք /Բրսղ/:

Իդովտոն, ովդական, ովան բառերը, որ Եվսեբիոսի «Քրոնիկոնից» են, չկան ՆՀԲ-ում, իսկ Արմ.-ը նշում է միայն *ովան*-ը:

ե/ Կովկասյան լեզուներից կատարված փոխառություններ

Սրանք բավական փոքրաթիվ են, և փոխառության աղբյուրը հիմնականում քարթվելական լեզուներն են:

Ճանճ, ճանճիւռն, ճճի, ճակ «էգ ձի», մոծակ, ոչխար: *Լակոտ*-ը ուշ շրջանից կատարված փոխառություն է:

զ/ Կենդանանուններ, որոնց ծագումը ստույգ չէ

Ալոջ «էգ ուլ», *անալուք* «ընծուլտ», *արտեկ* «վայրի ոչխար», *բիտոն* «ծուկ», *երիվար, զուարակ* «մեծ հորթ», *թոժիւն* «արջի ձագ», *եղջերու, խեշակ* «ձի», *լորտու, խխունջն, խոյ, կառածուղ* «մրջյուն», *ճագար, մտրուկ* «քուռակ», *նժոյզ, որոջ* «զառնուկ», *պիծակ, ջորի*:

Կենդանանունների բառակազմական յուրահատկությունները

Գրաբարում ավանդված կենդանանունների կազմության մեջ առանձնանում են մի քանի տիպեր:

ա/ Արմատական կազմություններ - *այծ, բուծ, էշ, կով, շուն, ուլ, որթ...գառն, եզն, ծուկն*: Այս կարգի բառերի դեպքում –*ն*-ն ածանց դիտելը խիստ պայմանական է:

բ/ Որոշակի վերջահար ձևայթերով կազմություններ

Ի- աղի, կենդանի, մաքի, մոզի, ոզնի, ճճի, ջորի. *նշենք*, որ *-ի-*ն ածանց դիտելը նույնպես պայմանական է, քանի որ տվյալ հիմքերով *մաք, մոզ, ոզ/ն/...* այլ ածանցավոր կազմություններ չկան:

Իկ- ամիկ, այծեմնիկ, կապիկ, ոչխարիկ, փալանիկ:

Իւն- մրջիւն /իւն/, կորիւն, թոժիւն: /*Թոժիւն*-վկայված է մեկ անգամ և *թոժ-* հիմքի այլ գործածություն չի ավանդվել/:

Ակ- յաւանակ, քուռակ, պիծակ, մատակ, հետեւակ, գուարակ, որոջակ, վիշապակ:

Ան- լուսան, գազան:

Իճ- ուտիճ, կարիճ, լուիճ:

Ու- եղջերու, լորտու:

Ուկ- տզրուկ, խոզուկ:

Ոջ- որոջ, ալոջ:

Ենի- բորենի:

Եամն - այծեամն:

Ակ և *ամ* ածանցները ծագմամբ կարող են լինել իրանական /*մատակ, գազան, քուռակ*/ և հայկական:

Ակ, *իկ*-ը մի դեպքում փոքրացուցիչ-փաղաքշական իմաստ ունեն */ամիկ, որոջակ/*, այլ դեպքում՝ ոչ */կապիկ, փալանիկ, մատակ, յաւանակ/*:

գ/ *Բարդ բառեր*

Զգալի թվով կենդանանուններ երկարմատ կազմություններ են: Ակնհայտորեն նկատելի է, որ կենդանանուն+կենդանուն=կեն-

դանանուն տարածված կաղապարների դեպքում բարդության մեկ անդամը /երբեմն էլ երկուսը/ հ.-ե. ծագում ունեցող կենդանա-
նուններ են, ասել է թե՛ նոր բառերի կազմության ժամանակ հայե-
րենը օգտվել է բնիկ բառաշերտից:

Կենդանանունների շարքը ըստ հնարավորին ամբողջական
ներկայացնելու միտումով այբբենական կարգով ներկայացնենք
համապատասխան հ.-ե. արմատը /բառը/, այնուհետև նոր
կազմությունները.

ա/ Հ.-ե. բառերից կազմված ձևեր

Այծ- այծաքաղ, էշայծ, քարայծ /նոր/, այծամարդ /կապկի
տեսակ՝ նման մարդու և այծի/:

Առիւծ- առիւծակորիւն, առիւծակապիկ, առիւծաշուն /վերջին
երկուսը վկայված են «Աշխարհացույցում», մրջնառիւծ, գետ-
նառիւծ:

Արջ- մկնարջ, արջամուկն /ուշ շրջանից/:

Գալլ- գալլակորիւն, մարդագալլ:

Եզմ- եզմախոյ:

Եղմ- եղմորթ:

Էշ- իշայծեամն, իշակէս, կիսէշ /ջորի/, իշամտրուկ, իշացուկ,
իշամեղու, իշավայր/ի/ /վայրի էշ/: Բերենք մի քանի բնագրային
օրինակ. «Ո՞ր հեշտութիւն է, աղէ, ասա ինձ, ընդ կանա՞յս խառ-
նակել եթէ ընդ արուս, ընդ կանա՞յս թէ ընդ իշակէսս, որ լսին
ջորիք» /Ոսկ., Պօղ., Բ, 78/: «Վասն այլ իրիք մատաւ յիշամտրուկ»
/Եմես., Ճառ., ԺԳ, 324/: «Խոզ վայրենի եղեր և իշավայր անա-
պատի» /Ոսկ., Մտք., Ա, 234/:

Իժ- իժակորիւն, փաղիժ:

Ինձ-ընձառիւծ, ընձուղտ /հաճախական չեն/, կա և ուղտինձ,
որը թերևս պատճենում է:

Կով- կովածուծ, կովաղիաց:

Կորիւն- առիւծակորիւն, գալլակորիւն, իժակորիւն:

Ճի- ձիացուկ, ձիաստաց «ձիու պիծակ», ձիապիծակ, կիսա-
ձի, ձիագետի, ձիակապիկ, գետաձի, ջրաձի, վագերաձի:

Ձուկն- ձկնաքաղ, սղոցածուկն, կարթածուկն, վիշապածուկն,
օձածուկն:

Մուկն- մկնաքիս, մկնարջ /ուշ/, արջամուկն /վկայում է ԱԲ-ը/:

Մրջիւն- մրջնառիւծ:

Շուն- շանաճանճ, շնկնճիթ, շնջրի:

Ոզնի- նետոզնի:

Ուղտ-ընձուղտ, ուղտաքաղ, ուղտիմձ:

Ցուլ- ծովացուլ, ձիացուլ, իշացուլ, ցլափիղ:

Քաղ- ալծքաղ, եղջերուաքաղ, վարդապաքաղ, փղաքաղ, վիշապաքաղ, ուղտաքաղ:

Ինչպես նկատվում է, վերոգրյալ օրինակներից օտար կենդանանուններից կազմությունները բավականին քիչ են:

Կապիկ, վագր, վիշապ, փիղ իրանական փոխառությունները առկայանում են *ձիակապիկ, վագերածի, վիշապաքաղ, վիշապածուկն, փղաքաղ* բառերում:

Կան նաև մի շարք կենդանանուններ, որոնց բաղադրիչները /կամ բաղադրիչներից մեկը/ կենդանանուն չեն՝ *բոնաժանի, կարծագի, ոնգեղջիւր, սղոցեղջիւր, վերջասպետ*. «Եւ ի մէջ գիշերին ել յանկարծակի գազան մի մեծ...և ջանայր գալ ի վերայ մեր և կոչէին նմա բոնաժանի» /Պատմ. Աղեքս., 423/¹³:

Մի շարք կենդանանուններ չեզոքություն են դրսևորում տվյալ կենդանատեսակի սեռի կամ տարիքի վերաբերյալ՝ արտահայտելով հասկացությունն ընդհանրապես՝ առանց մասնավորման՝ *այծ, ոչխար, արջ, արջառ, էշ, ձի, խոզ, փիղ, իժ, շուն, կուզ, կատու, կապիկ, ուղտ...*և այլն:

Առջառ-ը գրաբարում նշանակում է «կով, եզ, ցուլ»՝ առանց տարիքային և սեռային տարբերակման: Հմմտ. «Եթե արջառոց մատուցանիցե և եթե արու իցե և եթե էզ» /ԼՀԲ/: Բառն այժմ իմաստափոխված է:

Ձագ, կորիւն, որթ բառերն ընդհանրական ձևով մատնանշում են փոքր տարիքի կենդանիներ:

Կորիւն. ըստ բառարանների վկայության վերաբերում է գազաններին, սողուններին, նաև ջրային կենդանիներին /կետեր/. «Ո՛չ իբրև առ կորիւն առիւծու, այլ՝ առ կորիւն շան հանդերձել մարտնչել» /Փիլ., Մնաց., 564/: «Վիշապը դիեցուցին գկորիւնս

իրեանց» /ՆՀԲ/: «Ոմն գգայլոյ կորիւն սնուցանէ և իբրև զշան կորիւնս՝ առ ընտելութեան ընդ անձն անկանին» /Եզն., 68-69/:

Հայկազյան բառարանում և Արմ.-ում *կորիւն* «երեխա, մանուկ, սերունդ» իմաստը արձանագրված չէ: Բուզանդից քաղված ներքոհիշյալ օրինակում, անշուշտ, այդ իմաստն է. «Հարկանէր վանէր զագգսն երկոսեան և ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զորձ կորիւն և ոչ զմի» /Բուզ., 9/:

Որթ. հիմնականում նշանակում է կովի և եղնիկի ձագ. «Ուլս ի հօտից և որթս դիեցիկս յանդոց» /ՆՀԲ/: «Որթուց եղանց ի վերայ լերանց» / Երզ, Բ, 9/:

Ձագ-ը վաղ գրաբարում վերաբերել է միայն թռչուններին, *ձագ-փորք* կենդանի անցումը հավանորեն հետագա երևույթ է:

Թոժիւն «արջի ձագ» բառը մեկ անգամ վկայել է Եզնիկը. «Եւ այլ ոք զարջոյ թոժիւն սնուցեալ...» /69/:

Մի շարք բառեր նշում են տվյալ կենդանու փորք տարիքը:

/Ոչխար/-գառն-որոջ-բուծ. «Ի գառանց և ուլոց» /ՆՀԲ/: «Յոթն որոջ ոչխարաց» /ՆՀԲ/: «Եւ բուծ մի տարեւոր անարատ արասցէ յողջակէզ տեառն» /ՆՀԲ/:

/Այծ/ուլ, ամիկ-բուծ. «Ձենին ուլ այծեաց» /ՆՀԲ/: *Ուլ*-ը նաև եղնիկի, այծյամի ձագն է: *Բուծ*-ը ըստ երևույթին և՛ այծի, և՛ ոչ-խարի ձագն է:

/Արջ/-թոժիւն:

/Կով, եզն/- երինջ-որթ-ընջուղ-գուարակ-մոզի. «Երինջ մի յարջառոյ» /ՆՀԲ/: «Խայտային իբրև գուարակս ի վերայ դալարս» /ՆՀԲ/: *Ձուարակ* ՆՀԲ-ը մեկնում է՝ «արջառ, եզն փոքր, հորթ մեծ»:

Մոզի «հորթ»: Առաջին և միակ վկայությունը ուշ շրջանից է՝ 13-րդ դարից: Սակայն բառի հ.-ե. ծագումը հուշում է վաղ շրջանում գործածությունը:

/Խոզ/- խոճկոր:

/Էշ/- մտրուկ-տրմուղ-քոտակ: Վերջինը վաղ գրաբարում ավանդված չէ: *Մտրուկ*-ը Արմ.-ը մեկնում է «քոտակ իշոյ»: ՆՀԲ-ում ավանդված բոլոր օրինակներում բառն ունի «էշի քոտակ» իմաստը. «Էշս քսան և մտրուկ տասն» /Ծննդ., ԼԲ, 15, ռուս. /ослѣд/: «Ահա քազաւոր քո գայ՝ հեզ և հեծեալ էշ և ի նոր մտրկի»: «Միտ

դիր զգօնութեան մտրկին զի կրմուղ էր և տրմուղ»: Այդպես է և այլ օրինակներում: «Նստաւ յիշամտրուկ» /Եմես., Ճառ., ԺԳ, 322/: «Զի եթէ ոք առ աղքատութեան ընչից և չքաւորութեանն երիւարաց, հեծանիցի յիշամտրուկն յովանակին» /Ն.տ., 325/:

/Ուղտ/-կոզոն:

Փոքրացուցիչ, փաղաքշական ածանցներով կազմություններ

Ակ- եզն-ակ, որոջ-ակ:

Բկ- ամ-իկ, ոչխար-իկ, ցլ-իկ, շն-իկ, եզն-իկ, որոջ-իկ:

Ուկ -իշ-ուկ /ուշ շրջանից/, աղուէս-ուկ /ուշ շրջանից/:

Կենդանիների սեռային տարբերակվածությունը արտահայտվում է.

ա/. *Մատակ, էգ/արու, որձ* բառերով. ահա մի քանի օրինակ. «Կայցէ ի խաշինս նորս որձ» /ՆՀԲ/: «Եւ ծնեալ էզն ապրեցուցանէին և զործն սպանանէին» /ՆՀԲ/: «Յամենայն անասնոց՝ արու և էգ լինիցի»:

Մատակ բառահոդվածում ՆՀԲ-ը ունի *էշք մատակք, մատակ ծիք, մատակ առիւծ*:

բ/ Միևնույն կենդանատեսակներին տրվող առանձին անվանումներով

Անվանումը առանց սեռային տարբերակման	իգական	արական
այծ աւղի, ոչխար, մելաւ տուար, որթ խոզ ծի, երիւար, գրաստ,	---- մաքի կով, երինջ ---- մատակ, մատեան զամբիկ, ճակ	նոխազ, քաղ, քօշ, բզաք խոյ, առն ցուկ, եզն կինճ, վարազ յովատակ, նժոյզ

Եղն-ըստ ՆՀԲ-ի «երէ գեղեցիկ, երագոտն,...յորմէ կոչի և եղջերու», իսկ *եղջերու*՝ «արուն եղին կամ նոյն ընդ եղն». Արմ.-ը *եղն* մեկնում է «էգ եղջերու»:

Վկայված օրինակներից չի զգացվում *եղջերու*-ի արու լինելը միայն, իսկ *եղև*-ի դեպքում գոնե որոշ օրինակներում նկատելի է *եղջերու*-ի էգ տեսակ լինելը:

Արտիկ-ը ըստ ՆՀԲ-ի՝ «ոչխար արտի, այսինքն՝ վայրի»։ Վկայված միակ օրինակում «էգ» իմաստով է. «Արտիկ բազում անգամ երկառորեակս ծնանին» /ՆՀԲ/:

Այծ բառը ըստ Արմ.-ի «սովորաբար էգի համար է գործածված»։ Վկայված օրինակներում այդ հաճախ զգացվում է, մանավանդ երբ հանդես է գալիս *քաղ* բառի հետ նույն համատեքստում: «Քաղք ելանեին ի վերայ այծից»։ «Չատոյց զքաղս կապոյտս և զպիսակս և զամենայն այծս կապոյտս» /ՆՀԲ/:

Ընջուղ. թեև Արմ.-ը մեկնում է «երինջ, մեծ հորթ», բայց վկայված օրինակից զգացվում է, որ սեռը արական է. «Ընդէ՞ր երկնչիս ի լծոյ իբրև ընջուղ տրմուղ» /ՆՀԲ/։ /Սովորաբար լծկան են արունները/։ «Եւ ոչ ուսայ իբրեւ զընջուղ տրմուղ» /Երեմ., ԼԱ, 18/։ Ռուսերենում մեզ հետաքրքրող բառի համապատասխանակն է телец-ը:

Նժոյգ. թեև բառարանները բացատրում են «փարթամ ձի»՝ առանց սեռային տարբերակման, սակայն վկայված օրինակներից /որպես հեծելագործի ձի/ կարելի է ենթադրել, որ նշանակում է «արու ձի»։ Գրա օգտին է խոսում բառի նոր ստուգաբանությունը, եթե այն հավաստի է։ Նախ՝ օրինակներ. «Հինգ հազար հեծեալ վառեալ նժոյգ ի ձեռն պաշտպան գնդիցն»։ «Բազում նժոյգս զարքունական ձիոյ»։ «Եւ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծագարդս և երևելիս» /ՆՀԲ/:

Նժոյգ. Արմատական բառարանում ստուգաբանված չէ։ Գ. Ջահուկյանը ենթադրում է, որ ժ ունեցող բառերի զգալի մասը իրանական ծագում ունի. *ժանի-ք, ժապաւեն, ժառանգ, ապառաժ... նժոյգ* /1987, 559/։ Ա. Փերիխանյանը առաջարկում է նոր ստուգաբանություն՝ հավաստելով իրանական բնույթը, միաժամանակ արական սեռը։ Իրան. nižauga-ից «սերմ թափող, արու, երիտասարդ ձի»¹⁴:

Մատակ նշանակում է «էգ» և գործածվում է տարբեր կենդանունների հետ:

Կենդանանուններին ու կենդանական աշխարհին առնչվող այլ անվանումներ

1. Կենդանիներ պահող, խնամող

Հովիվ ընդհանրական իմաստը գրաբարում արտահայտվում է հետևյալ բառերով ու բառակազմական կաղապարներով:

ա/. Պարզ /արմատական/ կազմություններ. նկատի ունենք մաս այն կազմությունները, որոնցում ածանցը չի գիտակցվում որպես այդպիսին, այլ այն ի հայտ է գալիս ստուգաբանորեն:

Այդ կարգի բառերից են՝ *հովիւ, շպետ, նեկաթ*: Առաջինը հ.-ե. ծագում ունի և ավելի հաճախական է, քան մյուսները: Արդեն 5-րդ դարից բացի «ոչխար արածեցնող»-ից ունի մաս «առաջնորդ, վարիչ, եպիսկոպոս, կրոնավոր» իմաստները: Օրինակ. «Իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ» /ՆՀԲ/: «Չիօտ հանդերձ հովուօր յափշտակեցին» /ՆՀԲ/: «Հովիւքն որ էին յայլ եկեղեցիս» /ՆՀԲ/:

Շպետ-ը իրանական ծագում ունի և այնքան էլ հաճախական չէ. «Արքայն մովաբացոց իբրև մի շպետ տայր զհարկս խաշանց՝ Իսրայելի»: ՆՀԲ-ը շպետ-ը մեկնում է «տեսուչ, իշխան, դատաւոր ... հովիւ», իսկ Արմ.-ը՝ «հովիւ»: Բառի ստուգաբանությունը իր. ֆսupati /ֆս «ոչխար», pati «պետ, տեր» հիմք է տալիս եզրակացնելու, որ հայերենում էլ նախապես գործածվել է «ոչխարներ պահող, հսկող» իմաստով:

Նեկաթ-ը եբրայական բառ է և վկայված է մեկ անգամ Աստվածաշնչում. «Մովսա արքայ Մովաբայ էր նեկաթ և տայր արքային Իսրայելի հարկս՝ հարերը հազար մաքեաց և հարերը հազար խոյոց» /Դ. Թագ., Գ, 4/: Աճառյանը գրում է, որ «խաշնադարման բառն է, որ գործածվում է բնագրի համապատասխան տեղը» /Արմ./:

բ/. Բաղադրյալ կազմություններ

Սրանք դրսևորվում են կենդանանուն, կենդանիների խմբի անվանում+որևէ այլ ձևույթ /արմատ, ածանց, ածանցակերպ/ կազմություններով:

Արած- այծարած, խաշնարած, խոզարած, հօտարած, տուարած. «Ձուդեզնացս խափանէր, գտուարածս լերանց հալածէր» *ՆՀԲ*/: Տուարած «հովիվ, խաշնարած» նշանակությամբ հանդես է գալիս նաև *տուարածական* ձևով. «Եթող զոչխարսն ի տուարածականսն» *Երեմ.*, *ԼԱ*, 10/:

Պան, պահ, պետ - մատակապան, փղապան, հօտապետ, ախոռապան/պետ /ուշ շրջանից/, վտառապահ, երամապետ /ուշ շրջանից/...

«Ի վերայ վտառապահացն արքունի /այսինքն՝ ձիոց/» *ՆՀԲ*/: «Եւ գփղապանն ի վերայ գլխոյն նստուցին» *Ա. Մկր.*, *Ձ. 37*/: «Ձայս հրաման տայր փղապետին» *ՆՀԲ*/:

Խաշն- արմատի հետ *բոյծ, տես, դարման* /խաշնաբոյծ, խաշնատես, խաշնադարման/ բառերը ունեն դարձյալ «հովիվ» նշանակությունը. «Հովիւս և խաշնաբոյծս, որոց ոչինչ փոյթ է գուսմանց» *ՆՀԲ*/: «Արք խաշնադարմանք» *ՆՀԲ*/: «Չերկրագործ մշակս և զխաշնարածս» *ՆՀԲ*/:

Երեց-հօտերեց:

Որդ ձևությո՞վ առկա է *անդէորդ* «հովիվ». «Հովիւ և անդէորդ յարմարեցուցանեն փողս»: «Չորդի հովուաց և զանդէորդաց» *ՆՀԲ*/:

Բոյծ- երիւարաբոյծ *ՆՀԲ*-ը չունի/, պաճարաբոյծ:

Թ.Արծրունու «Պատմության » մեջ հանդիպում ենք *նժոյգածիզ* բառին. «և նժոյգածիզն իւր մատոյց նմա զընտիր երիվարն» /228/: Ընդգծվածը կարելի է թարգմանել «ձիապան, ձիավար»:

2. Կենդանիների խմբեր

Գրաբարում մոտ երկու տասնյակ բառեր նշում են այս կամ այն կենդանիների խմբեր: Թվարկենք դրանք այբբենական կարգով՝ ըստ անհրաժեշտության բերելով նաև բնագրային օրինակները:

Անդեայ. ունի նաև «նախիր» իմաստը:

Բոյլ «խումբ» /մարդկանց, երեւների, եղջերուների, ցուլերի, Արմ./ «Չբոյլս վայրենի երեոց»: «Չհետ բուլից եղջերուացն և եղանց ձիարծակ եղեալ» /Փրպ., *5*/: *ՆՀԲ*-ում կա և վկայություն «մարդկանց խումբ» նշանակությամբ: Կարելի է ենթադրել, որ

նախապես «բոլ»-ը վերաբերել է վայրի կենդանիների խմբին: Այն-ում բառը ստուգաբանված չէ, ըստ Ջահուկյանի հ.-ե. ծագում ունի /Ջահուկյան, 1987, 114/:

Գունդ «խումբ, կազմություն»։ ՆՀԲ-ում վկայված է միայն «Գունդ մեղուաց» /ՆՀԲ/: Հաճախական է «մարդկանց խումբ» նշանակությամբ: Բառն իրանական ծագում ունի:

Դաս(ակ) «խումբ»։ «Ի դասս երնջուց, այծուց» /ՆՀԲ/: «Ընդ դասակս այծեաց», «Իբրև գղասակս դոյզն հոտից» /ՆՀԲ/: «Արջա-ռոցն դասակք և հորանք այծարածաց...» /Փիլ., Բանբ., 145/: Հավանորեն վերաբերում է ընտանի կենդանիներին: Բառն իրա-նական ծագում ունի:

Երամ/երամակ: Եթե արդի հայերենում *երամ*-ը թռչունների խումբն է, իսկ *երամակ*-ը՝ հիմնականում ձիերի, ապա գրաբարում ավելի ընդհանրական է. «խումբ» /մարդկանց, կենդանիների/: «Ներքուստ ի վեր դողացոյց, փախոյց... իբրև զվատ երամն աղուէտց» /Շղիշ., Մատ., 177/: «Անբաւ երամոց լուղակաց»։ «Երամոյ գառնածին հոտից» /ՆՀԲ/: «Երամս վարազացն» /Փրպ., 5/: «Բագում երամակս փղաց յդէր ընդ նմա» /ՆՀԲ/: «Եւ ընդ նոսին ... անհամար բազմութիւն ուղտերամակաց և այլոց խաշանց» /Գիրք պիտ., 450/: «Երամակ խոզից» /Ագաթ., Է, 30/: «Երամակ շանց» /Սեբ., 10, Արծր., 1985, 40/: Բառն իրանական ծագում ունի:

Ժողով «բազմություն, խումբ»։ *Ժողով+կենդանանուն* կաղա-պարը հաճախական չէ: ՆՀԲ-ը վկայում է միայն մեկ օրինակ. «Ի ժողովս զուարակաց և ի դասս երնջոց» /Սաղմ., ԿԷ, 31/: Բառի ծագումը անհայտ է:

Խաշն- «ոչխարների և այծերի խումբ» /ՆՀԲ/: Բավական գործածական է, և այդ արմատով կազմված են մի շարք բառեր՝ *խաշնաբոյծ, խաշնադարման, խաշնադարմանութիւն, խաշնամահ, խաշնասիրութիւն, խաշնարած, խաշնարօտ, խաշնաւետ*: Հավա-նական է համարվում բառի ուրարտական ծագումը /Ջահուկյան, 1987, 440/: *Խաշինք* վերագրվում է և արջառներին «խաշինք արջառոց ...» /Եփր., Մատ., 244/:

Հոյ/բ/- ըստ Արմ.-ի «խումբ կենդանիների, մեղունների, մարդոց, վկայութեանց»:/Բառի հ.-ե. ծագումը տե՛ս Ջաևուկյան, 1987, 145/:

Հօտ- հիմնականում կիրառվում է «ոչխարների խումբ» նշանակությամբ, երբեմն նաև այլ «չորքոտանիներ»։ Բնիկ հայերեն բառ է։

Հօրան «կենդանիների խումբ»։ «Վարսք քո զհօրանս այծից»։ «Ջհօրան ուլուցն», «Ի հօրանս անդեղ և հօտից» /ՆՀԲ/։ Վերաբերում է ընտանի կենդանիներին։ Բնիկ հայերեն բառ է։

Պառակ- բառը նախապես ունեցել է «կող», հետագայում իմաստի զարգացմամբ «ոչխարների մակադատեղ, ոչխարի հոտ, անասունների խումբ» /Արմ./։ «Եկն ի պառակս հօտիցն, որ առ ճանապարհան»։ «Առ միմեանս մակադին և ընդ միմեանս պառակ-պառակ արածին» /ՆՀԲ/։ Պառակ «կող» իրանական ծագում ունի, իսկ «հոտ, փարախ» իմաստները ձեռք են բերվել հայերենում։

Պար- «շուրջ, շրջան» իմաստներից գատ ունի և «խումբ, ջուկ» նշանակությունը; Հատկապես վերաբերում է մեղունների խմբին՝ պար, պարս ձևով։ Մագիստրոսի գործերում կա հետևյալ օրինակը. «Ջօրեն եղջերուաց, որք արտաքս ի պարեն վազեալք, պասքելով աղբեր կարօտին» /ՆՀԲ/։ Հավանորեն նախապես պար-ը վերաբերել է մեղունների խմբին, իմաստի լայնացում կատարվել է հետագայում։ Բառն իրանական ծագում ունի։

Ջոլիր «մարդկանց կամ կենդանիների խումբ»։ Վերաբերում է և՛ ընտանի, և՛ վայրի կենդանիներին. «Ըստ հօտից և անդեղ և այծերամակաց ընդ այլոց ջոլրաց»։ «Ի վայրենի ջոլիրս»։ «Ջոլիրք ընտանեաց միանգամայն վայրենեաց» /Փիլ., Ղառ., 1892/։ Բառի ծագումը ստույգ չէ։

Ջոկ «քազմություն»։ «Ջոկք ձիոցն և ջորեաց»։ «Տեսի ջոկս գոմշաց», «Ոչխար մոլորե ի ջոկե տեառն իւրոյ» /ՆՀԲ/։ Իրանական փոխառություն է։

Վոհմակ- բառարանները նշում են «գազանների խումբ», բայց, ըստ էության, բառը պետք է բացատրել «գայլերի խումբ»։ Եվ վկայված շատ օրինակներում էլ վերաբերում է գայլերին. «Ջի մինչ ոչխարքն իցեմք, թեպետ և բազում վոհմակք գայլոց շուրջ պատի-

ցեն...» /Ոսկ., Մտք.,Բ, 502/: «Իբրև շարք շանց և վոհմակ գայլոց»
/ԼՀԲ/:

Վտառ- վերաբերում է ոչ միայն ձկներին, այլ ուրիշ կենդանիների ևս: «...բիրազգի վտառս ձկանց շարժեսցէ...»: «Վտառ, վտառ, երամ, երամ շրջին», «Ձիոց վտառք, անդեայք, հօտ» /ԼՀԲ/: Մերժելի չէ բառի իրանական ծագումը, թեև չի կարելի ստուգապես ապացուցված համարել:

Վերոբերյալ բառերը գրաբարում մատնանշում են «կենդանիների խումբ» հասկացությունը: Նկատելի է, որ գուտ այս կամ այն կենդանիների խումբ նշող բառերը /բացառությամբ, այն էլ որոշ վերապահությամբ, *վոհմակ-ի*/ չկան: Գուցե սկզբնապես տվյալ բառը արտահայտել է ավելի նեղ հասկացություն, բայց հետագայում ձեռք է բերել «խումբ» իմաստն ընդհանրապես՝ ներառելով ոչ թե մեկ, այլ մի քանի կենդանատեսակների խմբեր:

Նկատելի է նաև, որ մման կարգի բառերի զգալի մասը բնիկ հայերեն է կամ իրանական փոխառություն:

3. *Կենդանիների բնակատեղի*

Ակնհայտորեն առանձնանում են վայրի և ընտանի կենդանիների բնակատեղի անվանումները: Ընտանի կենդանիների համար՝ *ախոռ, բակ, գալիթ, գոմ, մակաղատեղ, մսուր, փարախ, փեթակ*: Վայրի կենդանիների համար՝ *մորի, խիշտ, բայ, որջ, կաղաղ, սոր, երախանք...*:

Բառակազմական տեսանկյունից բացի վերոհիշյալ ձևերից, որտեղ ձևությամբ /հատկապես ածանցների/ տարբերակումը հնարավոր է ստուգաբանորեն, առանձնանում են նաև կենդանուն+ածանց կազմությունները՝ *ասպա-ստան, եզն-անոց, մրջն-ոց, մեղու-ա-նոց, երբեմն նաև արմատ+արմատ՝ մակաղատեղ...*:

Ներկայացնենք մեզ հետաքրքրող բառաշարքը այբբենական կարգով ու որոշ նկատառումներով.

Ախոռ /ծիու կամ էջի/: Թեև վաղ գրաբարից հաճախական չէ, բայց 5-րդ դարից վկայված *ախոռապետ, շահախոռապետ* բառերը

վկայում են, որ բառը գործածական է եղել արդեն այդ շրջանից, եթե ոչ ավելի վաղ: Իրանական փոխառություն է:

Ասպաստան «ծիրո գոմ, ախոռ»: Իրանական փոխառություն է:

Բակ- ՆՀԲ-ը նշում է նաև «գալիք ոչխարաց, փարախ»։ «Ոչ է պարտ ոչխարաց կալ արտաքոյ բակի» /*ՆՀԲ*/:

Բայ/բայոց «արջի որջ»։ «... և արջոյ յառաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանելոյ» /Եզն., 175/: «Բայանան օձք ընդ հողով», «Ազգ ազգ առնիտաց ի ձմերանի բայեցեալ անշարժ կայ» /*ՆՀԲ*/: *Բայ* գոյականը փաստորեն միայն «արջի որջ»-ն է /համեմայնդեալս ըստ վկայված օրինակների/, իսկ *բայանալ* բայը վերաբերում է նաև ուրիշ կենդանիների: *Բայ*-ը բնիկ հայերեն բառ է /Աղայան, 1974, 35,36: Ջահուկյան, 1987, 116/¹⁵:

Բոյմ- հիմնականում ունի «թռչունների բույն» իմաստը, բայց ըստ *ՆՀԲ*-ի նաև՝ «դադարք այլոց կենդանեաց. որջ, խշտիք»։ «Ի բոյն կորեանց իժից արկցե զձեռն իւր» /Ես., ԺԱ, 9/: «Թէ զիարդ ի բոյն իժից մանուկ մատաղ արկանիցե զձեռն և ոչ ինչ մեղանչիցեն» /Ոսկ., Ես., 139/: Նկատելիորեն *բոյմ*-ը ավելի հաճախ թռչունների և օձերի բնակատեղի է: Հ.-ե. ծագումով հայերեն բառ է /Ջահուկյան, 1987, 116/:

Դադար- «Մտին գազանք ի դադարս, դողեցին ի խշտիս» /Յովբ., ԼԷ, 8/: Գործածվում է հոգնակի թվով:

Դաւիթ ունի և «գոմ, փարախ» իմաստը:

Գոմ- «տավարի, ոչխարի փարախ»։ «Եւ կայանս ամենայն անասնոց և գոմս հոտից» /Բ. Մնաց., ԼԲ, 28/: «Պակասեցան հօտք ի գոմոց» /*ՆՀԲ*/: Բնիկ հայերեն բառ է:

Չուարակափակ- ըստ *ՆՀԲ*-ի «բակ կամ փարախ արջանոց»¹⁶:

Խիշտ/խշտիկ/խշտեակ- հիմնական իմաստն է «անկողին, աղքատի խեղճ անկողին», իմաստի զարգացմամբ նաև՝ «գազանի որջ» /տե՛ս *Դադար*-ի օրինակը/: Բառի փոքրիշատե համոզիչ ստուգաբանություն չկա: Ենթադրվում է խեթական ծագում /Ջահուկյան, 1987, 314/:

Կաղաղ «որջ՝ գազանների, վարազների, բույն՝ օձի, իժի»:
«Ապա եթե ոմանք ի յուլութեն...ի յորջս և ի մայրիս և ի կաղաղս
գազանացն... շրջեսցին» /Փիլ., Բանք, 13/: «Կաղաղս և հանգրուան
պատրաստական արարին վիշապ օձին կամակորի» /ՆՀԲ/: Բնիկ
հայերեն բառ է:

Մակաղատեղ- «ոչխարների՝ խմբով հավաքվելու տեղ»:
«Ի մակաղատեղս հօտից և ի հանգրուանս անդոց» /ՆՀԲ/: *Մակաղ*
արմատը սեմական փոխառություն է /Արմ./:

Մորի -«գազանների որջ»:
«Որպէս զառիւծ ի մորտջ իւրում»:
«Գազանացն, յորոց կիսոցն և մորիքն արտաբոյ լնտելութեանն
մարդկան են» /ՆՀԲ/:

Մորիս առնուլ «քնավորվել, որջանալ» հարադրությունը
ՆՀԲ-ը չունի: Բառը վկայված է Փիլոնի գործերից մեկում. «Թանձր
մացառս սուզեալ մորիս առնէ» /Փիլ., Բանք, 141/:

Մսուր- «ընտանի կենդանիների խոտ ուտելու տեղ, մաս՝
ախոռ, գոմ»:
«...գոչիցէ եզն առ մսուր, յորժամ ունիցի զկերակուր»
/ՆՀԲ/:

Որջ -բառարանները բացատրում են «գազանների բույնը»
/Արմ./, «Դաղարք գազանաց և էրեոց. կաղաղ, մորի, բայոց» /ՆՀԲ/:
ՆՀԲ-ում վկայված օրինակներն էլ վերաբերում են վայրի կենդա-
նիներին. «Ձի մի՝ ի բակէ քումմէ տարեալ եղէց յորջս գայոց»:
«Միթէ որջ բորենոյ իցէ»:
«Աղուեսուց որջ գոն» /ՆՀԲ/:

Սոր- «ծակ, խոռոչ, մաս թռչունի բույն, գազանի, սողունի
որջ»:
«Թաքուսցեն յայրս և ի ծերպս վիմաց և սորս երկրի»:
«Օձք բայանան ընդ հողով և որջքն իւրեանց են ի սորս և ի սոյգս երկրի»:
«Բույն, որջ» իմաստը պայմանավորված է բառի բուն՝ «ծակ,
խոռոչ» նշանակությամբ: *Սոր*-ը բնիկ հայերեն բառ է:

Փարախ «ոչխարների գոմ»:
Բառը փոխաբերաբար ավելի
շատ կիրառվում է «եկեղեցի, վանք, իջևան» իմաստով: *Փարախա-
պետ* բառն էլ նշանակում է «վանահայր»:

Այս ենթախմբի անվանումների մեջ գերիշխող են հ.-ե.
ծագումով հայերեն բառերը՝ *բայ, բոյն, գոմ, կաղաղ, մորի, սոր*:
Իրանական փոխառություններ են՝ *ախոռ, ասպաստան*: *Ասպաս-
տան*-ը և *ախոռ*-ը փոխառության սկզբնական շրջանում վերա-

բերում էին ձիերին, իսկ ձի և ձիուն առնչվող շատ անվանումներ իրանական ծագում ունեն:

Կան մաս կենդանանուն+տեղ ցույց տվող ածանց /անոց, ոց, արան/ կազմություններ՝ *ասպաստան, եզնանոց...*

Նկատելի է, որ այս կարգի կազմությունները գրաբարում, ի տարբերություն արդի հայերենի, խիստ սակավաթիվ են: Օրինակ՝ արդի հայերենի *անասնանոց, զազանանոց, ձիանոց, կովանոց, ճագարանոց, շնանոց* բառերը ՆՀԲ-ում չկան:

Կենդանանունների իմաստային զարգացումները

Գրաբարի շատ կենդանանուններ հիմնական իմաստից զատ ձեռք են բերել նոր իմաստներ:

1. *Կենդանանուն-գործիքների անվանում. գայլ* «Փերանակապ», էջ «պատերազմական քառոտանի մեքենա», խոզ «կամրջի երկաթե կապերը», *կարիճ* «տանջանքի գործիք»:

2. *Կենդանանուն-հատուկ անուններ.*

ա/. Երկնային մարմիններ /նոլորակ, աստղ, կենդանակերպ/՝ *առիւծ, արջ, եզն, զուարակ, խոյ, կարիճ, ծուկն...*: Եզնիկի գրքի ներքոբերվող հատվածում դրանց մեծ մասը առկա է. «Մինչ դեռ առիւծն, ասեն, յաստեղատանն իցէ՝ և ծնանիցի որ, թագաւոր լինելոց է. և մինչ դեռ եզն է՝ և ծնանիցի որ, հզոր և բարենշան գալոց է, և մինչ դեռ խոյն է՝ և ծնանիցի որ, մեծատուն լինելոց է... և յորժամ կարիճն է՝ և ծնանիցի որ, չար և մեղանչական լինելոց է» /Եզն., 155-156/:

բ/. Անձնանուններ. *Այծեմնիկ, Առիւծ, Արջուկ, Գառնիկ, Եզնիկ, Ընձակ, Խոճկորիկ, Կարիճ, Կորիւն, Վարազ, Յիկ...* «Երբ ի Յրի առ գործակալ քաղաքին Խոճկորիկ անուն՝ նախարար յԱղուանից աշխարհէն» /Կոնկտ., 1983, 57/։ «Ինքն զնաց առ իշխանն նոցա Կարիճ» /Օրբ., 170/:

Կենդանուններով կան մաս տեղանուններ. *Գայլ /գետ/, Օձ /գետ/, Օձաբեր* և այլն:

Ըստ Ն.Դիլբարյանի դիտարկման՝ Հայաստանի լեռնանուններից ամենագործածականը տեղանքի միավոր ցույց տվող բառ-

արմատներն են... «Երկրորդ տեղում կենդանանուններն են, որոնք լեռնանուն դառնում են և պարզ արմատական ձևով, և բարդության կազմում, և ածանցներով և բառակապակցության կազմում՝ *Առյուծ, Առյուծասար, Արջ, Արջասար, Արշրակաստար, Գայլ, Գայլանոց, Գառնաբար, Եղն, Եղնասար... Օձասար*, այս և համանման անվանումներով ոչ թե մեկ, այլ մի շարք լեռներ կան ՀՀ տարբեր մարզերում»¹⁷:

Այս կարգի անվանումները /կամ գոնե մի մասը/ թերևս գործածության հիմնականում ունեն՝ անկախ գրաբարում վկայված չլինելու հանգամանքից:

Կենդանանուններից կազմվում են նաև բուսանուններ /պարզ կամ բաղադրյալ/, որոնք ակունքվում են հիմնականում միջինհայերենյան շրջանից: Որոշ կենդանանուններ ածականական /հատկանշային/ կիրառություն ունեն. *շուն* «շնացող, պոռնիկ», *աղուես* «խորամանկ», *իժ* «չար»... և այլն:

ՆՀԲ-ՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐ

Ամարու «գառ»». «Դարձեալ Եսայիաս գոչէ... իբրև գոչխար ի սպանումն եկն և իբրեւ զամարու առաջի կտրողի իւրոյ անձայն» /Ոսկ., Դառք, 426/:

Անքիղոս «ձկան տեսակ է»». «Ձուկն անքիղոս, որ կոչի կողամայր» /Խաչիկ., Եղիշ., Մեկն. արարծ., 189/:

Առիւծակապիկ, առիւծաշուն. «...յորում առիւծաշուն գազանն... և այլ մարդակերպ գազանք, շնակնճիթ... որպէս առիւծակապիկ» /ՄՀ,Բ, 2146/:

Ասրատակ «բրդոտ»». «Ոմն զբուս և զասրատակս ըմբոնեալ...» /Մագ., Թղթ., 231/:

Արջամուկն - «...լինգնաս, արջամկունք և այլք բազում սքանչելի գազանք» /ՄՀ,Բ, 2145/:

Արտի «վայրի ոչխար»». «Ունի լերինս մեծս երիս. ունի երես, եղջերու...առն և արտի» /ՄՀ,Բ,¹⁸2151/:

Բնաս- «Նմանին օձին, որ կոչի բնաս» /Արմ./:

Եղոփին- «Նոյնպէս և քան զեղջերու չիք ինչ պիղծ և վասն այնորիկ ասեն կոչի եղոփին» /Ոսկ., Պօղ., Ա, 306/:

Եսուրբէս- «Լինի յաշխարհն այն եւ զեսուրբէս զազանն...երկակենցաղ գոլով» /ՄՀ,Բ, 2146/:

Ջիգն «ձկան տեսակ է»։ «Կեփաղք և զիգն իցեն ահագինք» /Բբսղ, 245/:

Թեպեկ «կապիկ»։ «Թեպեկի վասն է՞ր երկիր պազանէին...» /Ոսկ., Ճառք Անդր., 789/:

Թմբրաձուկն- «Թմբրաձուկն քմրեցուցանէ զօշափմունս գործարանաց» /Պիսիղ, 1545/:

Թրիանէ- «Ձեզ է ամաչելն՝ պաշտողացոյ զթռչունն քրիանէ, որ է արման» /Միխ.Ասորի, 179/:

Լինգնաս- /տե՛ս Արջամուկն-ի օրինակը/:

Խանդիոն «առասպելական կենդանու անուն է»։ «Ծովացուլն ի կովէ ասեն ելեալ... և զխանդիոն ի յիշոյ» /ԲՄ, 1964,323/:

Կոտաք «ագռավ»։ «Կոտաք, ագռաւ, կռունկ» /Արմ./:

Մուղ «մատակ էշ կամ ջորի»։ «Եւ կրէին իշուկք, ուղտուկք և ջորուք և մղաւք զկերակուրս» /ՆԳ.Ա. Մնաց., ԺԲ, 40/:

Յօթ «Եւ տեսանէի վիշապք և պիծակ յօթք ահագին իբրև զուղտ» /Արմ./:

Նետոզնի- «Բերին և նետոզնոյ փուշ, որ է վեց կանգուն և այլ բազում ժանիս ձկանց» /Պատմ. Աղեքս., 426/:

Շնակնճիթ- /տե՛ս Առիւծաշուն-ի օրինակը/:

Ոզնիկ- «Անդ ոզնիկք և յուշկապարիկք բնակեսցեն...» /Ոսկ., Մտք., Գ, 24/:

Պապիւ- «Յորժամ պապիւք ի ծովէ ելանեն բազում զմիմեամբք՝ հողմ նշանակէ» /Արմ./:

Ջրածի- «Եւ դլփինքն եւ փոկն եւ զոր ջրածիսն կոչին» /Կանոն., 659/:

Սիկդ,սկիւղ «առասպելական երեքզլխանի կենդանի»։ «Վիշապտունս և զոր սկիւղսն անուանեն» /Ոսկ., Պօղ., Ա, 62/:

Փալանիկ «զծկան ձի կամ ջորի»։ «/Ձիոց/ չեզոքն, որպիսի քուռակ...փալանիկ» /Արմ./:

Փահլ «արու ձի»։ «Եւ ձիոյ՝ յովատակ, նժոյգ փահլ, երիվար»
/Մազ., Զեր., 240/:

Օճաճուկն- «Ո՞վ ուսուցանէ զառակս առնել օճաճկանն»
/Պիսիւղ, 1030/:

Մատենագրության մեջ, հատկապես Խորենացուն և Շիրակացուն վերագրվող աշխարհագրական գործերում, վկայված են բազմաթիվ ցամաքային և ջրային կենդանիներ /առասպելական, կամ այս կամ այն երկրին/տարածքին բնորոշ/, որոնք ՆՀԲ-ում չկան։ Բոլոր օտար անվանումներին կամ արհեստական պատճենումներին անդրադառնալը նպատակահարմար չենք համարում^{*}։

* * * *

* *

ԹՈՉՆԱՆՈՒՆՆԵՐ

Գրաբար մատենագրությունը բավարար տեղեկություններ է տալիս թռչնաճուռների, թռչուններին բնորոշ զանազան հատկանիշների, որոշ հատկանիշների հիման վրա թռչունները տարբերակելու, թռչունները որպես այս կամ այն խորհրդանիշ ներկայացնելու, թռչնաճուռների բառակազմական յուրահատկությունների և այլ իրողությունների մասին։ Ճիշտ է, այս և նման կարգի տեղեկությունները ավելի ընդգրկուն են թարգմանական գրականության մեջ, այդուհանդերձ դրանք ուշագրավ են, մանավանդ որ հիմնականում հինգերորդ դարյան վկայություններ են։

Քննությունը ցույց է տալիս, որ գրաբարում ավանդված թռչնաճուռներն ակնհայտորեն սակավաթիվ են, քան միջին հայերենում ավանդվածները։ Այս փաստը տեսանելի է հայերենի թռչնաճուռներին վերաբերող Ջ. Գրեպպինի ուշագրավ աշխատության մեջ¹⁸։

Սա կարելի է բացատրել երկու հանգամանքով. ա/ զանազան հատկանիշներով նույնական թռչունների տարահատկանիշ մաս-

* Ցանկում կան նաև թռչնաճուռներ։

նավորում չի կատարվել, մի երևույթ, որ հակառակն էր միջին հայերենում, երբ բազմաթիվ նոր թռչնանուններ են հանդիպում՝ *թռչնանուն+այլ հատկանիշ, ոչ թռչնանուն+որևէ հատկանիշ* կադապարով /հմմտ. *ջրագռաւ, ծովագռաւ, ծովորոր, ծովարծուի, ցախսարեկ, ժրահաւ, երաշտահաւ, լաշհաւ, մանգղաթև, փայտփոր* և այլն, բ/ հնարավոր է, որ մի շարք թռչնանուններ գրաբարում պարզապես չեն վկայվել:

Գրաբարում թռչնանունների ընդհանրական անվանումներն են՝ *թռուն, թեաւոր, հաւ/բ/*. հմմտ. «Յամենայն հաւուց թռչնոց» /Ծննդ.Չ,20/: «Իբրեւ զհաւու թռուցելոյ յօղս» /ՆՀՀԲ/: Այս իմաստով երբեմն հանդես է գալիս *օղագնաց* բառը: Թռչունների ընտանեցումը բավական ուշ է կատարվել: Այժմ ընտանի համարվող որոշ թռչուններ գրաբարյան, հատկապես վաղգրաբարյան վկայությունների շրջանում թերևս եղել են վայրի: Օրինակ՝ Փիլոնի մի վկայությունից զգացվում է, որ *սագը* դեռևս ընտանեցված չէր. «Քանզի կիբրիս, սալամունք և կաքաւք և սագացն և խորդոց ազգ յանապատս փախչին» /Փիլ., Բանք, 107/: Գրաբարյան վկայություններում թռչունները տարբերակվում են ըստ որոշ հատկանիշների /ձայն, գեղեցկություն, մեծություն, բարձր թռչելու հատկություն, գիշատիչ և ոչ գիշատիչ և այլն/:

Ուշագրավ վկայություն է բերում Բարսեղ Կեսարացին. «Եւ զկէսն հերձաթես անուանեցին, այսինքն՝ զարծուիս և զկէսն մաշկաթես, այսինքն՝ զչղջիկանս գիշերոյ և զկէսն անասութես, այսինքն՝ զմեղուս և զկէսն պատենաթես, այսինքն՝ խաղողեփեացս...զի կէս ազգ երամ երամ միաժողով շրջին՝ իբրեւ ծիծառունք և խորդք և ճայք և խոլոմուկք և սարիկք և տարմահաւք: Կէսքն առանց գլխոյ և իշխանի... և կէսքն ընդ առաջնորդաւ հնագանդեալ, այսինքն՝ են խորդ» /Բրսղ, 259-260/:

Առավել հաճախ է հանդիպում *սի/դծ* /որոնց միսը ուտելի չէ/ ոչ *սի/դծ* տարբերակումը: Այս հարցում դեր ունեն աշխարհագրական միջավայրը՝ ժողովրդի՝ պատմականորեն ձևավորված ավանդույթը, կյոնը և բազում այլ գործոններ: Նման կարգի մի յուրահատուկ սկզբունք է առաջարկում Եվս. Եմեսացին. «Բսկ ի թռչնոց, որ յերիս մագիլսն գնան եւ յետին բիտն ի վերայ քան զայլ

մագիլսն կայցէ, կանխակալ սովորութիւնն արեւնայրաց գնոսա ուտել... և յայնցանէ որ ի չորս մագիլսն գնայցեն և բխտն յետին խոնարհագոյն կայցէ՝ արգելին օրէնքն ուտել, քանզի և սովորութիւն» /Եմես., Մեկն., 127/: Այս ըմբռնումը գալիս է թերևս Աստվածաշնչից, որի տարբեր գրքերում շոշափվում է հիշյալ հարցը. հմմտ. «Եւ այս է, զոր ոչ ուտիցէք ի նոցանէ զարծուի, և զջայլամն, և զքու և զճայ, զսոխակ և զագռաւ... /Բ. Օր., ԺԴ., 11-19/: «Եւ ամենայն զեռուն թռչուն, որ գնայցէ ի չորս՝ պիղծ եղիցի ձեզ: Այլ զայն ուտիցէք ի զեռնոց թռչնոց, որ գնայցեն ի չորս, որոյ իցեն կարթք ի վերոյ քան զոտս ոստոստել նոքօք յերկրէ. եւ այս իցէ զոր ուտիցէք ի նոցանէ. զջորեակդ և որ ինչ նման է նմա և զխարագոյ... և զմարախ և զօձամարտ» /Դեւտ., ԺԱ., 21-23/:

Բերենք Ս. Գրքից մեկ այլ վկայություն, ուրում նույնպես այս հարցն է շոշափվում. հատվածը ուշագրավ է բազմաթիվ թռչնա-նուններ թվարկելու տեսանկյունից. «Չամենայն հաւ սուրբ ուտի-ցէք: Եւ այս է զոր ոչ ուտիցէք ի նոցանէ, զարծուի և զկորճ եւ զգետարծուի եւ զցին և զանկդ... եւ զջայլամն և զքու եւ զճայ եւ զարագիլ, եւ զփոր եւ զհողամաղ եւ զքաջահաւ... զսոխակ, հաւա-լուն, քաղաղը, յոպոպ, չիղջ» /Բ. Օր., ԺԴ., 11-18/:

Որոշ թռչունների /*աղավնի, տատրակ*/ մաքրության, անմե-ղության և բարոյականության խորհրդանիշներ են՝ նաև կրոնական երանգավորումով:

Թռչնաճուռներում արու-էգ տարբերակվածությունը միշտ չէ, որ ի հայտ է գալիս: *Մարի, էգ* ընդհանուր բնոռոշիչներ են, իսկ թռչունների որոշ տեսակների դեպքում համապատասխան ան-վանումը վերաբերում է *արու* թռչնատեսակին. *վարուժան, ճոտակ, արաղաղ*:

Թռչնաճուռների ծագումնաբանական շերտերից ամենաընդ-գրկունը բնիկ հայերեն բառախումբն է: Առայժմ գոյություն ունեցող հավաստի ստուգաբանությունների հիման վրա հ. -ե. են համարվում հետևյալ թռչնաճուռները. *ագռաւ, աղաւնի, արծուի, արաղաղ, բու, բուէճ, լոր, ծիծառն, կերկեր, կռունկ, հաւ, մարի, մեղու, յոպոպ, սագ, տատրակ, ցին, ուրուր*: Ավելի ընդհանուր հասկացություններ ար-

տահայտող *թռչուն հաւ, մարի* բառերը նույնպէս հ.-ե. ծագում ունեն:

Անդրադառնանք մի քանի բառերի: Հ.-ե. *վերին աշխարհի* բնակիչների ընդհանրական անվանումը ծագում է * *Hyei* -ից, որից հ. հնդ. *vi/ve* «թռչուն», ավեստ. *viš* «թռչուն», լատ. *avis* «թռչուն», հայ. հաւ: Հաւ-ը սկզբնապէս ունեցել է «թռչուն» ընդհանրական իմաստը, որը հետագայում ձեռք է բերել այլ նրբիմաստներ. *ընտանի հաւ* /թռչունի տեսակ/, *էգ հաւ*, *աքաղաղ*. հմմտ. «Ջամենայն հաւ սուրբ ուտիցէք» /ԵՀԲ/: «Ժողովէ հաւ զձագս իւրոյ ընդ թեւովք» /Մատթ., ԻԳ, 37/: «Մինչև հաւու խօսեալ իցէ» /Մատթ., ԻԶ, 34/:

Հ.-ե. շատ ժողովուրդներ *արծիվը* ուժի, զորության, արագընթացության խորհրդանիշ էին դիտում: Հին հնդկերենում *syenā* «արծիվ» բառի հետ գործածվում է «արագաթռիչ» մակդիրը, որը համապատասխանում է իրանական լեզուներում *արծուի*-ն տրվող անվանը¹⁹: Հայկական ավանդություններում արծիվը թռչունների արքան է՝ բարձրաթռիչ, ուժեղ և արագընթաց: Արդեն ընդունելի է համարվում այն կարծիքը, որ Ուրարտուի Մենուա թագավորի ձիու անունը՝ *Արծիրի*, հայ. *արծուի* բառն է²⁰: Ձիու և արծվի զուգադրությունն ենք տեսնում նաև մեր հնագույն վիպասանական հատվածներից մեկում.

Հեծաւ արի Արտաշէս ի *սեամ* գեղեցիկ
եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
եւ անցեալ որպէս *զարծուի* սրաթեւ ընդ գետն...

Մագիստրոսի քերականության մեջ կա *կանդ* «արու արծիվ»-«կանդ, որ նշանակէ միայն զարու արծուի կամ վարուժանակ և ոչ զայլ որ ի թռչնոցն»²¹: Ջ.Գրեպպինը բառը կապում է պրս. *kand* «քաջ»-ի հետ, որն, իրոք, արծիվներին տրվող մականուն է²²:

Կռունկ-ի զուգահեռները նույնպէս անհերքելի են դարձնում բառի հ.-ե. ծագումը: Աճառյանը այն ծագած է համարում **ger* «գոչել» բնաձայնական արմատից: Ըստ Է.Աղայանի «Ուայերենը նույն արմատից ունի երկու թռչունի անուն՝ *կերկեր* և *կռունկ*, ինչպէս որ լատիներենը՝ *grus* «կռունկ», «արջնագռավ», լիտ.՝ *garnys* «ճայ», *gervi* «կռունկ»²³: Գ.Ջահուկյանը *կռունկ*-ի համար բերում է՝

*gerong զուգահեռը²⁴: Նշենք, որ *կերկեր* թոչնանունը թեև բառա-
բանները ավանդում են, բայց վկայություն չկա:

Անգղ. Արմատական բառարանում ստուգաբանված չէ:
Գ.Ջահուկյանը հնարավոր է համարում կապը հ.-ե. *ank «ծոել»
արմատի հետ /թոչունի կտուցը կեռ լինելու համար/²⁵: Ղարաբաղի
բարբառում *անգ* «անգղ» ավելի է հաստատում կապը հ.-ե. նշված
ձևի հետ, մյուս կողմից՝ բարբառային ձևը ավելի հին է, քան գրա-
բարյանը, որը լեզվական ուշագրավ երևույթ է:

Աղանի, տատրակ, լոր բառերի հ.-ե. ծագումը նույնպես
հիմնավորվում է²⁶: *Ագռաւ, բու, յոպոպ* համարվում են բնածայ-
նական բառեր, և բերվում են համապատասխան հ.-ե. զուգա-
հեռները²⁷:

Գրաբարում ավանդված բազմաթիվ թոչնանուններ էլ
փոխառյալ են այս կամ այն լեզվից: Չնայած իրանական լեզու-
ներից հայերենի կրած մեծ ազդեցությանը, թոչունների իրանական
անվանումները փոքրաթիվ են: Վաղ գրաբարում գործածական են
արմաւ, բազէ, սարեակ, սիրամարգ, վարուժան, ուշ շրջանից՝ *բաղ,*
կաշաղակ, թութակ, շահէն «քազե», *ճոռակ* «քազեի տեսակ»,
իշտրմուղ: Վերջիններս ոչ հաճախական կիրառություն ունեն:

Թեև Աճառյանը, ըստ էության, անվերապահորեն ընդունում
է *սարեակ*-ի իրանական ծագումը /տե՛ս Արմ./, սակայն հ.-ե. *ker, kr*
արմատը անմեթեվ չի դարձնում բառի բնիկ հայերեն լինելը: Ի
դեպ, Գ. Ջահուկյանը, *սարեակ*-ը դնելով իրանական փոխառու-
թյունների ցանկում, այդուհանդերձ հարցականով նշում է նրա բուն
հ.-ե. բնույթը²⁸: Իսկ Ջ.Գրեպպինը *սարիկ*-ը դիտում է որպես իրա-
նական, իսկ *սարեկ*-ը՝ հ.-ե. *ker, kr*- արմատից²⁹: *Մարգ* «թոչուն»
անկախաբար չի կիրառվում, այլ՝ *լորամարգ, սիրամարգ* բառերի
կազմում: Ինչ վերաբերում է *արամագղ* թոչնանվանը /ըստ Արմ.-ի
«մի տեսակ թոչուն»/, ապա բնագրային ու բանասիրական այլ
կարգի քննությունից պարզվում է, որ այդպիսի թոչնանուն չկա, և
Այգեկցու առակում /որին հղում է Արմ.-ը/ նկատի է առնված
Արամագղ աստվածը³⁰:

Վարուժան-ը Արմատական բառարանում կասկածանքով է
համարվում իրանական փոխառություն, որովհետև «մայրը ձևը

յայտնի չէ»։ Ստուգաբանական նոր փաստերը հիմնավորում են բառի իրանական բնույթը³¹։

Նկատելի է, որ իրանական փոխառություններում առկա է *բազե* թոչնամվան հոմանիշային շարք՝ *բազե*, *գաւազ*, *ճուռակ*, *շահեմ*։ Անշուշտ, սրանք փոխառվել են տարբեր ժամանակային կտրվածքներում և նրբերանգային մի առանձնահատկություն են դրսևորում՝ արտահայտելով /թեև ոչ բոլոր վկայված օրինակներում/ բազեն որպես որսորդ թռչուն։ *Բազեկիր*, *բազեակալ* կազմություններն էլ դարձյալ որսորդությանը վերաբերող բառեր են։

Հունարենից կատարված փոխառությունները նույնպես քիչ են. *եթիա*, *եփենե*, *իբիդ*, *կիկնոս*, *տիտոս*, *տրոքիլոս*, *փալկոն*, *փասիան*, *փինիկ*, *քարադր*, *քսիփե*։ Սրանք հաճախական չեն, վկայված են հիմնականում քարգմանական գրականության մեջ և գիտակցվում են որպես օտար բառեր։ Փոքրիշատե «հայկական» երանգ են ստացել *փասիան*, *փինիկ* և *քարադր* թոչնամունքները։ Վերջինս վկայված է Աստվածաշնչում և ուշ շրջանի մի քանի այլ գործերում։

Մեմական փոխառությունների շարքում կարելի է տարբերակել Աստվածաշնչի եբրայական թոչնամունքները՝ *ասիդ*, *արսին*, *մէսու*, *մէեդաս*։ սրանք վկայված են մեկական անգամ։

Ասորերենից են՝ *կաքաւ*, *պապկայ*, *ջայլեամն*։ *Պապկայ* վկայված է 5-րդ դարից, այդ թռչունի մասին որոշ տեղեկություններ կան և Կադանկատվացու Պատմության մեջ։ Ջ.Գրեպպինը բառը համարում է արաբական փոխառություն³²։ Սակայն 5-րդ դարից վկայված լինելու հանգամանքը մերժելի է դարձնում այս փաստարկը և ընդունելի Արմ.-ի ասորական փոխառություն համարելը։ Միջինհայերենյան շրջանից որպես հոմանիշ սկսում է գործառել *թութակ* բառը, որը իրանական փոխառություն է։ *Մաքալուկ*-ը թեև Արմատականում ստուգաբանված չէ, սակայն մեր կարծիքով, բառի ասորական բնույթը կասկած չի հարուցում։ Ահա վկայված օրինակը. «Որպէս ծիծառանց և այլոց թռչնոց, որ անուանեալ կոչին մաքալուկք, որք յօդոց գմանրամաղ իրս ինչ թռուցեալ բերեն ի դարման իւրեանց պիտոյից» /Բրսղ, 258/։ Ամենայն հավանականությամբ, բառն ունի նույն արմատը, ինչ որ *մանգաղ* բառը, իսկ

վերջինս ասորական փոխառություն է. *maggəla* /հնագույն ձևը՝ **mangəla* /:

Ուշադրության է արժանի և այն փաստը, որ «Վեցօրեայից» բերված օրինակում *մաքալուկ*-ը համապատասխանում է հուն. *դրեպանիս*-ին, որը ծագում է *դրեպանոն* «մանգաղ» բառից /Արմ./: Նկատենք նաև, որ այս բառի միջինհայերենյան անվանումն է *մանգղաթեւ*, որը, ըստ Ջ. Գրեպպինի, վկայված է Հովհաննես վարդապետի տաղերում.

Մանկղաթեւին պիտի խղճալ

Ինքն չկարէր նստել ի վայր...³³

Մանգաղի հետ կապը, ըստ երևույթին, այդ թոչունի թևերի մանգաղաձև լինելն է:

Մի շարք թոչնանունների ծագումը ստույգ չէ՝ *անծեղ*, *ասպուճակ*, *արտոյտ*, *արօս*, *աքար*, *թոնձ*, *կատակ*, *ճայ*, *որի*, *չիղջ*, *պասկուճ*, *սալամբ*, *սակո*, *սոխակ*, *ցեծ*, *փոք*, *փաղ*... Սրանցից *կատակ*, *սոխակ*, *կարապ* բառերի համար կարելի է ենթադրել իրանական ծագում, որը հիմնավորելու համար, սակայն, նոր փաստեր են անհրաժեշտ:

Թոչնանունների բառակազմական յուրահատկությունները

Ըստ բառակազմական յուրահատկությունների՝ գրաբարի թոչնանունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա/ *Արմատական* /կամ որպես այդպիսին գիտակցվող/ բառեր. *անգղ*, *ասիղ*, *աքար*, *սագ*, *իբիղ*, *հաւ*:

բ/ *Արմատ+ալ ձևությ*: Այդ ձևությներից են.

- *ակ*- *ասպուճակ*, *թութակ*, *կատակ*, *ճուռակ*, *ջորեակ*, *սոխակ*, *վարուժնակ*, *տատրակ*...

- *ի* - *աղավնի*, *արծուի*, *մարի*, *լորամարգի*...

- *իկ* - *ճայիկ*, *սարիկ*, *չիջիկ*

- *ուկ* - *ճնճղուկ*, *մաքալուկ*

- *ուն* - *թոչուն*

Նշված ձևությոները որոշ դեպքերում գիտակցվում են որպես ածանցներ, իսկ այլ դեպքերում՝ հատկապես հստակ ստուգաբանություն չունեցող բառերում, դրանց ածանցային արժեքը չի գիտակցվում: Իրանական փոխառություններում որոշ ածանցներ /*ակ,իկ*/, կարող են լինել նաև փոխաստու լեզվի միավորներ: Հունարեն փոխառություններում շատ դեպքերում առկա են հունարենին բնորոշ *ու, էս* ձևությոները:

գ/ *Բարդ բառեր*. վերջիններս սովորաբար երկարմատ կազմություններ են՝ *թռչնանուն+այլ բառ կաղապարով*: Ամենագործունը *հալ+այլ* բառ կաղապարն է՝ *արտաւազդահաւ, երաշտահաւ, ժրահաւ, քաջահաւ, փորահաւ, տարմահաւ, թագաւորական հաւ, հաււիալ, հաւալուսն, հաւապատիր, հաւն արմաւ...* Բերենք մի քանի վկայված օրինակ՝ ըստ հարկի որոշ մեկնաբանություններով ու նկատառումներով:

Արտաւազդահաւ. վկայված է Փիլոնի գործերից մեկում. «Քանզի և ոչ արտաւազդահաւ և ցեծդ և կամ յայնցանէ, որ ի ջուրսդ շրջին...» /Փիլ., Լին., Բ, 117/: Հունարեն բնագրում *կարապ* բառն է: *Արտաւազդահաւ*-ի վերաբերյալ մի նրբին դիտողություն ունի հայտնի բանասեր Ա. Վարդանյանը: Ըստ Վարդանյանի հունական դիցաբանության մեջ Լիգուրիայի թագավորը վերափոխվել է կարապի: Դիցաբանական այս իրողությունը ծանոթ էր հայ թարգմանչին, և վերջինս ձգտել է պահել այդ հենքը ու փոխակերպման գաղափարը արտահայտելու համար հայ բանահյուսությունից հարմար գտել Արտավազդի մասին եղած առասպելը. «Վիշապագունք գողացան զմանուկն Արտաւազդ և դէ փոխանակ նորա եղին»: «Հետևաբար, - նկատում է Ա. Վարդանյանը, - *կյուկնոս*-ի այլակերպումին դեպքը հայ ականջին յարմարապէս բացատրելու միակ բառը հայ դիցաբանութեան մէջ կը գտնէ թարգմանիչը *Արտաւազդ* ու կկերտէ իր շատ սիրուն *արտաւազդահաւ* բարդութիւնը»³⁴:

Տարմահաւ. առաջին բաղադրիչը *տարմ* «երամ» բառն է: *Տարմահաւ*-ը վկայված է «Վեցօրեայում». «Եւ կամ զիարդ դարձեալ տարմահաւն եւ սարիկն, յորժամ առնուն իրաման զմեզ բժշկելոյ ի հարուածոցն եւ զնոսա սատակել կորուսանել, զան

հասանեն յանկարծակի ի վերայ և սպառեն» /279/: Հունարեն բնագրում, ըստ Գրեպպինի, միայն *սարենակ* է: Նա միաժամանակ գտնում է, որ *տարմահաու*-ը և *սարենակ*-ը նույն թռչունի տարբեր տեսակներ են /նշվ. աշխ., 189/:

Հաւիալ /գրվում է և *հաւբալ*, *հոբալ*, *հովիալ*, *հովիալ*/. ըստ ՆՀԲ-ի նշանակում է «վայրի աղավնի»: Փալ- ձևույթը Ջ. Գրեպպինը համեմատում է պարսկերեն թռչնանուններին բնորոշ -bal- ձևույթի հետ /ն.տ., 134/: Սա վստահելի համադրություն կլիներ, եթե նշված ձևույթով թռչնանուններ վկայված լինեին ոչ թե նոր պարսկերենում, այլ միջինիրանական լեզուներում: Կարելի է ենթադրել, որ *փալ*-ը 5-րդ դարից վկայված *փաղ* «մի տեսակ թռչուն» բառն է, որի ծագումը ստույգ չէ:

Հաւապատիր. վկայված է Աստվածաշնչում. «Եւ հաւապատիր և հողամաղ և քաջահաւ...» /Դեւտ., ԺԱ, 17/: Աստվածաշնչի մեկ այլ գրքում համապատասխան հունարեն բառը թարգմանվել է *ագռաւ*. «Եւ քաջահաւ և զտխակ և զագռաւ...» /Բ. Օր., ԺԴ, 17/: Ջ. Գրեպպինը, համեմատելով Աստվածաշնչի եբրայերեն, հունարեն և հայերեն բնագրերը, նկատում է, որ հուն. համապատասխանակի դիմաց հայերենում առկա են *հաւապատիր* /1/, *բու* /1/, *ագռաւ* /2/ /ն.տ., 242/: Իսկ ՆՀԲ-ը *հաւապատիր*-ը մեկնում է «գիշերաբու, ազգ բուռյ, որ ըստ յունաց գիշերային ագռաւ ասի»:

Այլ բառ+թռչնանուն կաղապարով են կազմված հետևյալ բառերը՝ *գիշերաբու*, *գիշերագռաւ*, *ցախսարեկ*, *գետարծուի*, *արջնագռաւ*... *Ցախսարեկ* և *արջնագռաւ* ուշ շրջանի վկայություններ են: *Գետարծուի*-ի հուն. համապատասխանակն է «ծովարծիվ»: Ծով բաղադրիչով թռչնանուններ վաղ գրաբարում թերևս չկան, իսկ միջին հայերենում ունենք *ծովորոր*, *ծովարտոյտ*, *ծովարծուի*, *ծովագռաւ*...: Ծով, *գետ* բառերը այսպիսի կազմություններում ունեն «ջուր», «ջրավազան» իմաստը. հմմտ. *ծովագռաւ/ջրագռաւ*:

Ոչ թռչնանուն+ոչ թռչնանուն=թռչնանուն կաղապարով կազմությունները գրաբարում մեծաթիվ չեն՝ *ասրատակ*, *հոլամուկ*, *հողամաղ*, *ծկնքաղ*, *ծկնկուլ*, *մաշկաթև*:

Ասրատակ-ը մեկ անգամ վկայել է Մագիստրոսը: Ըստ Արմ.-ի կազմված է *ասր+տակ* բառերից: Նույնն է, ինչ որ միջ. հայ. բրդոռ³⁵:

Հողամաղ. վկայված է 5-րդ դարից. «Եւ հաւապատիր և հողամաղ և քաջահաւ» /Դեւտ., ԺԱ, 11/: Միջինհայերենյան շրջանից գործառող *արօր* թոչնաճունը թերևս ստեղծվել է *հողամաղ*-ի իմաստային համաբանությամբ:

Ասդակտուց. վկայված է 7-րդ դարից³⁶:

Հիմնական գծերով ներկայացնելով գրաբարի թոչնաճունների բառակազմական, բառիմաստային, գործառական յուրահատկությունները՝ նկատենք, որ հարցի համակարգային և ամբողջական քննության համար անհրաժեշտ է ներառել հայերենի բոլոր լեզվավիճակների ընձեռած տվյալները, որը այլ խնդիր է: Գրաբարյան նյութը այդօրինակ ուսումնասիրության հենք կարող է լինել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Гамкредидзе Т.В., Иванов В.В., Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, էջ 465:
2. Նշվ. աշխատությունը, էջ 486:
3. Արմ.-ը *յաւանակ*-ը մեկնում է «ձագ չորրորտանիների, յատկապէս իշու, ձիու, մաւ եղնիկի»: Բառը նախապէս ունեցել է թերևս միայն «քուռակ» /էշի/ իմաստը: *Չագ* ընդհանրական իմաստը ձեռք է բերվել ուշ գրաբարում:
4. Տե՛ս Հերոդոտոս, Պատմություն, Ե., 1986, էջ 103:
5. Է. Ադայան, Բառարձանական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 89-90:
6. Տե՛ս Annual of Armenian Linguistics, 1988, N9, էջ 49-51:
7. Հայերենի՝ իրանական ծագում ունեցող գոմանունների գործառության, փոխառության սլաոնառների մասին տե՛ս Լ.Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե.,

1990. էջ 108-114, նույնի՝ Գրաքարի բառապաշարի իմաստային խմբերի բնութայնություն /մաս 1/, Ե., 2008, էջ 105-124:
8. Մարդագայլի առասպելի մասին տե՛ս Սարգիս Հարությունյան, Հայ առասպելաբանություն, 2000թ., էջ 281-286:
 9. Տե՛ս Դամկրելիձե Դ.Յ., Իվանով Դ.Յ., նշվ. աշխ., էջ 502:
 10. *Նժդյգ* և *երիվարի* իրանական ծագման նոր փաստարկներ է բերում Ա.Փերիխանյանը: Տե՛ս հեղինակի «Материалы к этимологическому словарю древнеармянского языка, Е., 1995.
 11. *Խոդ-ի՝* իրանական փոխառություն լինելու փաստարկները տե՛ս Լ.Հովհաննիսյան, Հայ-իրանական նոր ստուգաբանություններ, Ե., 2005, էջ 32-33: Նկատենք նաև, որ *խոդ-ի* և նրա տարբեր տեսակների անվանումները նույնպես իրանական են */խոճ/կոր/, վարազ, գոճան, կոճան, կինճ/*:
 12. Բառը ասորական փոխառություն է համարում Գ. Ջահուկյանը /Ջահուկյան, 1987, էջ 459/: Գ.Ջահուկյանը սեմական լեզուներից կատարված փոխառություն է համարում և *բոտոտ* «ճիճու, որդ» բառը /տե՛ս նշվ. աշխ., 486/:
 13. Ալեքսանդրի պատմության բնական բնագրի կազմող Հ. Սիմոնյանի ծանոթագրությամբ «բառը ստեղծվել է երկի թարգմանության ժամանակ հուն. *օդուս* «ժանիք» և *տուրաննոս* «բռնակալ, տիրող» բաղադրիչներից կազմված *օդոնտուրաննոս* բառի վարպետ պատճենմամբ» /տե՛ս էջ 588, ծան., 333/:
 14. Տե՛ս Ա. Փերիխանյանի նշվ. աշխ., էջ 69/:
 15. Եզնիկի բառապաշարի վերաբերյալ ուշագրավ մի դիտարկում ունի Վ.Առաքելյանը. «Եզնիկը ունի մի շարք բառեր, որոնք գավառական բնույթ են ունեցել և չհասկացվելով այլ հեղինակների կողմից՝ լայն կիրառության մեջ չեն մտել ու այդ պատճառով դրանց մի մասը այսօր ենթադրաբար է բացատրվում»: Այդ կարգի բառերի շարքում նշում է և *բայոց-ի բայ-ը*, որ «պահպանվել է օրորոցային դիմումի մեջ. բայ-բայ, բնիր»: Տե՛ս Վ.Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության /5-րդ դար/, Ե., 1981, էջ 122/:

16. *Ձուարակափ թե՞ զուարափակ*. ճիշտ ձևի և ստուգաբանության մասին տե՛ս Լ.Հովհաննիսյան, Հայ-իրանական նոր ստուգաբանություններ, Ե., 2005, էջ 24-26:
17. Ն.Դիլբարյան, Հայաստանի լեռնանունները, «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 50-ամյակին նվիրված հոդվածների ժողովածու», Ե., 2010թ., էջ 573:
18. J.A.C. Greppin, Classical and Middle Armenian Bird Names, New York, 1978. Այս աշխատությունը թեև նաև լեզվաբանական բնություն է /ստուգաբանական փորձեր, այլ լեզուների համապատասխանականների հետ համադրում, ձևությամբ առանձնացում և այլն/, սակայն հիմնական ուղղվածությամբ թռչունների նկարագրություն է /երբեմն նկարներով/, թռչունների՝ կենդանաբանության մեջ ընդունված դասակարգումներ:
19. Т.В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 537, 539:
20. Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 341, 443:
21. Տե՛ս Н.Адонц, Дионисий Фракнийский и армянские толкователи, Петр-д, 1915, էջ 240:
22. J. Greppin, նշվ. աշխ., էջ 49:
23. Է.Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 83:
24. Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 125:
25. Տե՛ս նույն տեղը, էջ 412:
26. Տե՛ս նույն տեղը, էջ 111, 134, 151, 197:
27. Տե՛ս նույն տեղը, էջ 114, 122, 125:
28. Տե՛ս նույն տեղը, էջ 208:
29. J. Greppin, նշվ. աշխ., էջ 189:
30. Տե՛ս Լ.Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 222-223:
31. Տե՛ս А. Периханян, Материалы к этимологическому словарю древнеармянского языка, Ереван, 1993, էջ 68-70:
32. Տե՛ս J. Greppin, նշվ. աշխ., էջ 142:
33. Տե՛ս J. Greppin, նշվ. աշխ., էջ 160:
34. Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1920, էջ 281-282:

35. ՆՀԲ-ը բերում է և *սարատակ* թռչնանունը, իսկ Ջ.Գրեպպինը վկայության հիման վրա հիշյալ բառը համարում է իրան. փոխառություն /տե՛ս Գրեպպին, նշվ. աշխ., էջ 50/: Անշուշտ, *սարատակ*-ը *սարատակ*-ի աղավաղ ձևն է, և գիտնականի բերած զուգահեռն էլ չի հիմնավորվում:
36. Տե՛ս Արմ., *Ասեղն* բառահոդվածը:

ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Հայկական լեռնաշխարհը հարուստ է բույսերի բազմազան տեսակներով:

Մեր մատենագրության կազմավորման շրջանից իսկ վկայվում են մեծ թվով բուսանուններ: Ակնհայտ է, որ գրաբար մատենագրության, հատկապես 5-րդ դարի մատենագրության՝ այդ բնագավառին վերաբերող տվյալները բավականին թերի են, որովհետև այդ մատենագրության բովանդակությունը /պատմություն, վարքագրություն, աստվածաբանություն, ճառեր... և այլն/ ենթադրում է այնպիսի հարցեր, որոնցում, բնականաբար, մասնակիորեն են շոշափվում բուսաշխարհին առնչվող անվանումները: Ձգալի թվով բուսանուններ են հանդիպում թարգմանական գրականության մեջ՝ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայում», Փիլոն Եբրայեցու, Ոսկեբերանի գործերում: Դրանք բազմաթիվ են հատկապես Սուրբ Գրքում, որում ավանդված բուսանունները հիմնականում բառաբանագրված են, Աստվածաշնչի բուսանունների վերաբերյալ կան նաև առանձին ուսումնասիրություններ, որոնցում, սակայն, լեզվական քննություն ըստ էության չկա: Ուշագրավ աշխատանք է Հ. Արթինեանի «Աստուածաշնչի տունկերը» /Կ.Պոլիս, 1913/, որում խոսվում է Ս. Գրքում վկայված մի քանի բուսանունների, դրանց եբրայերեն և հունարեն համապատասխանությունների, ինչպես նաև Ս. Գրքի տարբեր հատվածներում նույն բույսի հայերեն տարբեր անվանումների մասին:

Սակայն պետք է նկատել, որ թարգմանական գործերի վկայությունների գերակշիռ մասը օտար անվանումներ են, այդպես է նաև հավանորեն 7-րդ դարում գրված «Աշխարհացույց»-ում, որտեղ տարբեր երկրների մասին հաղորդվող տեղեկությունների թվում նշվում են նաև այդ երկրին բնորոշ բուսանուններ՝ հաճախ օտար անվանումներով, երբեմն դրանց թարգմանությամբ, եթե համապատասխան հասկացությունը և բառը հայտնի է «Աշխարհացույցի» հեղինակին:

Անշուշտ, բուսանունների մասին որոշ տեղեկություններ հաղորդում է նաև հայ ինքնուրույն գրականությունը: Տարբեր սկզբնաղբյուրներից տարբեր կարգի օրինակներ կբերվեն համապատասխան տեղերում:

Հայերենի բուսանունների առաջին ամփոփ ցանկը՝ համապատասխան աղբյուրների մատնանշումով տվել է Ղևոնդ Ալիշանը, որը նախ հրատարակվել է «Բազմավեպի» 1892-94 թթ. համարներում՝ «Հայկական բուսաբառություն», ապա առանձին գրքով՝ 1895թ.՝ «Հայբուսակ կամ հայկական բուսաբառություն» վերնագրով: «Հայբուսակում» ներկայացված է 3400 բուսանուն՝ գրաբարից, միջին հայերենից, աշխարհաբարից և բարբառներից:

Ակնհայտորեն բուսանունների գերակշիռ մասը ավանդված է միջինհայերենյան շրջանից՝ պայմանավորված նախ և առաջ գրականության առանձնահատկությամբ՝ հատկապես բժշկագիտությանը վերաբերող գրականության առկայությամբ, որոնցում բազմաթիվ բուսանուններ են ամրագրված: Հազարավոր այդ բառերի զգալի մասը /հատկապես բարդ կազմությունները/ միջինհայերենյան կամ բարբառային նորամուծումներ են, թեև բացառելի չէ որոշ բառերի գործածությունը գրաբարյան կամ նսխագրաբարյան շրջանում /հ.-ե. ծագմամբ բարբառային բառերի վաղ շրջանի գործածությունը կասկած չի հարուցում: Որոշ կարգի այդպիսի օրինակներ կբերենք բուսանունների ծագումնաբանական շերտերի բնության ժամանակ/:

Այս կամ այն տարածքին բնորոշ ծառատեսակները հաճախ դարձել են պաշտամունքի առարկա: Այս տեսակետից հ.-ե. լեզվամտածողության մեջ հատկապես առանձնանում է *կաղնի*-ն:

Կաղնի-ն սուրբ ծառ է համարվում առաջավորասիական տարածքում: Մինչև օրս էլ քարթվելական որոշ ժողովուրդներ իրենց աղոթքներում դիմում են «կաղնու ոգուն»¹: Հայկական վաղնջական ավանդույթներում էլ անշուշտ *կաղնի*-ն որոշակի ընդգծված դեր է ունեցել, և այն համարվում էր հզորության, ուժի, երկարակեցության խորհրդանիշ: Թռչուններից այդպիսինն է արծիվը, կենդանական աշխարհում ուժի խորհրդանիշ է առյուծը:

Հույների և իտալացիների միջավայրում կաղնին զուգորդվում էր աստվածներից մեծագույնների՝ Ջևսի և Յուպիտերի հետ: Հին գերմանացիների համար նույնպես կաղնին սրբազան ծառ էր²:

«Ազգագրական հանդես»-ի 2-րդ համարում նշվում են երեք տասնյակից ավելի ծառեր, որոնք Վարանդայում սուրբ են համարվում:

«Տակնավին խոր հնադարից, որոշակի պատկերացումներ են ձևավորվել «սուրբ», սրբացված ծառերի անձեռնմխելիության առումով... Բազմաթիվ ավանդություններ են պահպանվել նման ծառերի կտրման արգելքի առումով..., այնուամենայնիվ «Հայոց մեջ սուրբ համարվող ծառերից փոշնուց պահպանակ-դաղդղաներ, նաև որոշակի առարկաներ են պատրաստվել /օր., արորի լուծը կամ գոնե սամիները/, որոնք կոչված են պահպանելու չար ուժերի, «շառ աչքի» ազդեցությունից»³:

Ծառերի պաշտամունքը դիտվել է Հայաստանի բոլոր պատմագագագրական մարզերում...: Բացառություն են կազմում քերես համշենահայերը, «թեպետ նրանց մեջ էլ որոշակի հավատալիքներ են ձևավորվել այս կամ այն ծառատեսակի օգտակարության կամ վնասակարության մասին»⁴:

Բուսաշխարհում տարբերակվում են *վայրի և մշակովի բույսերը*: Բույսերի մշակությամբ մարդկային հանրությունը առաջընթաց մի քայլ է ապրում՝ իր կենսագործունեության մեջ արմատավորելով երկրագործությունը, որի կատարելագործումը հանգեցնում է հանրության /հասարակության/ մտավոր և գործնական ունակությունների զարգացման, նոր կենսաձևերի ու աշխատանքային հարաբերությունների կիրառման:

Արդեն 5-րդ դարի մատենագրության մեջ կան *վայրի և մշակովի* բույսեր հասկացությունների համապատասխան տարբերակումները. «Քանզի մորենիք և մոլաթուզք և մոլածիթենիք և կանկատունք և քսուկք կարի յոյժ սաստիկք են և *առանց մշակութեան* արունատի բուսանին: Իսկ նոնենիք և խնձորիք և արմաւենիք և ձիթենիք և որթք դուն ուրեք և ոչ ինքնին լինին, կարօտեալ միշտ այնր որ աճեցուցանեն» /Փիլ., Բանք, 104/: «Եւ տունկք և սերմանք և *ծառք վայրենիք* և ընտանիք, պտղաբերք և անպտուղք» /Ոսկ.,

Մտք., Գ, 196/: «Եւ յառաւելութենէ գեղեցկութեան զոր տեսեալ է շուշանացն վայրենեաց» /Ոսկ., Մտք., Գ, 343/: «Քանզի դու վայրենի ձիթենի էիր և հատար ի բնական ի վայրենի ձիթենոյն և պատուաստեցար ի բարի ձիթենոջն» /Ոսկ., Պօղ., Բ, 702/: «Քանզի զոյ թզենի, որ անուանեալ կոչի կատաղենիս՝ այսինքն վայրենի մոլաթուզ և բերեն տնկեն առ ընտանի թզենոջ...» /Բրսղ, 153/:

«Վեցօրեայից» *կատաղենի*-ի միակ օրինակը բերում է ՆՀԲ-ը և մեկնում՝ «մոլի, վայրենի»: «Վեցօրեայի» թարգմանիչը մեկ այլ հատվածում բառիս հակադրում է՝ *քաղցունեմ*-ին. «...որպէս աւգտի թզենին քաղցունեմի ի կատաղենի թզենոյն անտի՝ առնուլ զարութիւն առ ի պահել ողջ և անարատ զպտուղն իւր...» /154/:

Բուսանունների բառակազմական յուրահատկությունները

Գրաբարում *բոյս* ընդհանրական հասկացությունն արտահայտվում է *բոյս* /բուսակ/, *ծառ*, *թուփ*, *բանջար*, *տունկ*, *փայտ* անվանումներով: «Օրինեցէք ամենայն բոյսք երկրի զտէր» /ՆՀԲ/: «Յորժամ բազմազան անուշահոտ բուսակօք զարդարէի իբրև զհրաշաղիտակն սիրամարգ» /Գիրք պիտ., 575/: *Բուսակ*-ը նվազ հաճախական է քան *բոյս*-ը:

Արդի հայերենում հաճախական են *ծառ* և *բոյս*-ը /տե՛ս Գ.Յակոբեան, Հայերենի տարիքային անուանումները, Ե., 1995, 9/: Գրաբարի հաճախականության բառարան ցարդ, ցավոք, չկա, բայց համոզված ենք, որ նշված երկու բառերը /որպէս *բոյս* ընդհանրական անվանումներ/ գրաբարում էլ ամենահաճախականն են:

Բանջար գրաբարում ունի «կանաչեղեն, խոտեղեն», ապա «ճակնդեղ կամ բազուկ», բարբառներում այն առանձին բուսանուն է նաև:

«Ակբանն՝ բանջար ինչ է և կամ թուփ ինչ փոքրիկ, նման մորի կամ կաղանջանանն» /Եւս., Մեկն., 213/: «Եւ ամենայն տունկք մատաղատունկք զարգացեալ վերանային՝ հասանել ի

չափ կատարեալ հասակաց բարձրաբերձք և կարճաբերձք» /Բրալ, Դ-, 142/:

Փայտ գրաբարում ունի նաև *ծառ* իմաստը: Ընդ որում այդ բառիմաստը առկայանում է արդեն 5-րդ դարից. «Փայտս ամենաբերս», «փայտ պտղաբեր», «փայտ փշաբեր» /ՆՀԲ/:

Բույսերի զանազան տեսակների անվանումներին բնորոշ են հետևյալ բառակազմական կաղապարները. արմատական /կամ որպես այդպիսին/ գիտակցվող ձևեր. այս շարքի մեջ կարելի է ներառել և այն փոխառյալ բառերը, որոնցում օտար ածանցները /ձևույթը/ հայերենում որպես այդպիսին չեն գիտակցվում: *Ազոխ, անթեն, արմաւ, բանջար, բողկ, գինձ, ընկույզ, թութ, ծիրան, խնձոր, տանձ...թաղթ, գարի, ցորեն...* Այս շարքում պետք է նշել նաև -ն-ով վերջացող մի շարք բառեր, որոնք եթե հ.-ե. ծագում ունեն, ապա ածանցային արժեքն արդեն գրաբարում մթազնված էր, օտար ոչ հ.-ե. բառերի դեպքում դարձյալ -ն-ի ածանցային գործառնությունը չի նկատվում: Գ.Ջահուկյանը ենթադրում է, որ «Բաղաձայնական -ն-ով հիմք ունեցող ոչ հ.-ե. բառերը զոնն մասամբ պետք է ունենան ուրարտական ծագում կամ հայերենին անցած լինեին ուրարտերենի միջոցով»⁵: Նշենք -ն-ով վերջացող մի քանի բուսանուններ՝ *բաղեղն, բենեկն, գաղձն, դաղձն, եղեզն, խոլորձն, նուռն, սիսեռն, սունկն, ոլորոն*:

Ուկ- ածանցով կազմություններ. կանեփուկ, կայծուկ, կընդրուկ, հաճարուկ, ձմերուկ, մեղրուկ, քնարուկ: *Ուկ, իկ* ձևույթները մեկ դեպքում գիտակցվում են որպես փոքրացուցիչ, մեկ այլ դեպքում՝ ոչ:

Իկ- դժնիկ, ծաղիկ, եղեգնիկ, հատիկ, յասմիկ:

Իճ- դառնիճ, եղիճ, պատաղիճ, պատիճ /ցորենի կամ պտղի կեղև/:

Իթ- կնճիթ, սամիթ:

Ամենահաճախականը -ի-, -ենի ածանցներով ծառանուններն են:

Օրինաչափությունն այն է, որ պտղատու /մրգատու/ ծառատեսակների անվանումները հիմնականում կազմվում են -ենի-ածանցով, իսկ ոչ մրգատուներինը՝ -ի-ով.

Արմաւենի, եղջերենի, գմռնենի, թզենի, ժանտաթզենի, խնկենի, խնծորենի, կատաղենի, ձիթենի, մորենի, նշենի, նոնենի, սեխենի:

Բարդի, բեւեկնի, գիհի, թիւնի, կաղամախի, կաղնի, հաճարի, հերձի, նշդարի, նոճի, ուլի, սոճի, սոսի, սղոցի, կնձնի, հացի, նշի:

Հերձի, սղոցի-ն հումարեն համապատասխանակների թարգմանությունն է /Արթինեան, 14/:

Բերենք մի քանի օրինակ. «...ն գմայր փայտն ետ ի կողմանսն Հրէաստանի իբրև զթթենի դաշտաց բազում յոյժ» /ՆԳ Բ. Մնաց., Ա, 15/։ «Զանգի գոյ թզենի, որ անուանեալ կոչի կատաղենի, այսինքն վայրենի մոլաթուր» /Բրսղ, Ե, 153/։ «Առնուցուք զոստս հազմեայ ի ձորոց» /Դեւտ., ԻԳ, 40/։ «Այլ ևս ոչ որ, բայց ամենեւին վաթարագոյնք ի տնկոց՝ սեխենի և մորենի» /Խոր., Մատ., 468/։ «...զայնպիսիս ունել ծառսն ի փայտիցն, ոյք թէ և հեռի ի պտղաբերութեանն շահից զային, բայց առ յոյժ ուղղածի՞զ բարձրութեացն և ողորկատարր բնութեանն... ի պէտս շինողացն փութոյ էին տունկ ուկեացն և կաղամախեացն...» /Խոր., Մատ., 546/։

-*Ի*- և -*ենի* ածանցներով կազմության օրինաչափության մեջ կան որոշ շեղումներ. *խնծորենի, թզենի, նշենի* ձևերի կողքին հանդիպում ենք և -*ի*- ձևերը. «Խոզատանձ ի վերայ խոզատանձի ծերանայ և թուզ ի վերայ թոյ» /Դ. Անիոթ, Ստորոգ., Թ/։ «Կարեցին տերես թզնույ» /Ծննդ., Գ, 7/։ «Ի ներքոյ խնծորտյն զարթոցի զքեզ. անդ երկնեաց զքեզ մայր քո» /Երզ, Ը, 5/։ «Խնծորենիք էին ոսկեգոյնք» /ՆՀԲ/։

Ընկուզ/ենի-ի- ձևերից ՆՀԲ-ը վկայում է միայն *ընկուզի*։ Չարմանալի է, բայց փաստ, որ *ծիրանի* /ծառատեսակ/ և ոչ էլ *ծիրանենի* ՆՀԲ-ը չի վկայում։ Այդ միջոցը և ծառատեսակը վաղուց կար հայկական բնաշխարհում։ *Ծիրանի* բառաձևը ունի «գույն, հագուստ» իմաստները, բայց որպես ծառատեսակ վկայված չէ, և չենք կարող պնդել զրաբարում *ծիրանի* թե *ծիրանենի* ձևի գոյությունը։ Կարելի է ենթադրել, որ այդ պատուը /և ծառը/ ունեցել է այլ անվանում։

Տանձենի նույնպես ՆՀԲ-ը չի ավանդում, այլ՝ *տանձի*. «Թողցես զնոսա ի տանձիսն...» /ՆՀԲ/։

Ոչ մրգատու ծառատեսակներից վկայված է *և՛ ուռի և՛ ուռենի* ձևերը:

Ծառատեսակների անվանումների մասին որոշ հետաքրքիր տվյալներ են մատուցում մեր բարբառները: Օրինակ՝ Ղարաբաղի բարբառում թե՛ պտղատու, թե՛ ոչ պտղատու ծառանունները հիմնականում կազմվում են *-ի-* ածանցով: Որոշ լեզվաբաններ - ենի-ով ծառանունների մեջ փորձում են տեսնել ուրարտական ու - ածանցը: Այդ առիթով Գ.Ջահուկյանը գրում է. «Թեև ի վնաս -ենի-ով ծառանունների ուրարտական ծագման է խոսում *խնձորենի, ընկուզենի* ձևերի ուշ վկայությունը՝ ի տարբերություն *խնձորի, ընկուզի* ձևերի, որոնց *-ի-*ն հնդեվրոպական ծագում ունի, սակայն հնարավոր է ենթադրել -ենի-ի բարբառային պահպանում և հետագա տարածում»⁶:

Մեզ թվում է՝ նախապես ծառատեսակների անվանումները կազմվել են *-ի-* ածանցով, այդ են հաստատում ոչ միայն Ղարաբաղի բարբառի տվյալները, /բարբառ, որն, ի դեպ, լեզվական բազմազան հնագույն տարրեր է պահել/, այլև այն, որ հայերենի՝ *հ.-են.* ծագում ունեցող ծառատեսակները *-ի-* ածանցով են. *բարդի, կաղնի, հացի, ցաքի, ոսի...* /*դեղձի և դեղձենի* երկու վկայությունները ուշ շրջանից են/:

-Ենի- ածանցը մուտք է գործել ավելի ուշ և աստիճանաբար տարածվելով՝ տարբերակվել է նաև որպես ոչ մրգատու ծառատեսակներին բնորոշ ցուցիչ, թեև, ինչպես տեսանք, այդ կանոնը ունի նաև բացառություններ:

Բուսանունների մի խումբ կազմությամբ բարդ բառեր են՝ հիմնականում երկարմատ: Կարելի է առանձնացնել.

ա/ *խինդ, մոլ* արմատներով կազմություններ. *խնդամոլի, խնդակոթ, մոլաթուզ, մոլաթզենի, մոլախինդ, մոլախոտ...*

բ/ որևէ ածական+բուսանուն- *մանրագոր, մանրախոտ, կարմրադեղձ, կարմրատանձ, կարմրախնձոր, ժանտափուշ, ժանտաթզենի...*

գ/ այլ կարգի կազմություններ. *արջնդեղ, արքայակաղին, խայթահար, ծներեկ, մեղրապուպ, մոշավայրի...*

Բուսանույնների ծագումնաբանական շերտերը Հնդեվրոպական շերտ

Հայերենը պահպանել է բույսերի զգալի թվով հնդեվրոպական անվանումներ:

Նշել ենք, որ բուսանույնները, ինչպես նաև իմաստային մի շարք խմբեր, բառապաշարի այն շերտերն են, որոնք ամբողջապես կամ գոնե մեծով մասամբ չեն արձանագրված գրավոր աղբյուրներում: Դա կախված է գրավոր աղբյուրների բնույթից, թեմատիկայից և այլն: Ուրեմն, բնականաբար, խոսք չի կարող լինել հայերենի հ.-ե. ծագմամբ բուսանույնների՝ վերջնական թվի մասին՝ հիմք ընդունելով գրաբար մատենագրության տվյալները:

Ակնհայտ է, որ բնիկ հայերեն հ.-ե. ծագումով բուսանույններ առկա են և միջինհայերենյան գրականության մեջ: Արդյոք միջինհայերենյան շրջանից ավանդված բառերը նորակազմություններ են, թե՞ հին՝ հ.-ե. լեզվի ժառանգություն: Այս հարցը պարզել, մանավանդ միաբնատ կազմությունների դեպքում, այնքան էլ հեշտ չէ:

Հ.-ե. ծագմամբ զգալի թվով բուսանույններ կան նաև մեր բարբառներում, որոնց բնությանը անդրադարձել և Գ. Ջախուկյանը համեմատական լեզվաբանությանը և հայոց լեզվի պատմությանն ու բարբառագիտությանը վերաբերող աշխատություններում:

Այնպես որ բարբառային տվյալներն օգտագործելը հիշյալ բառաշերտը ամբողջական ներկայացնելու տեսանկյունից խիստ անհրաժեշտություն է:

Ստորև ներկայացնենք հ.-ե. ծագումով բնիկ հայերեն բուսանույնները:

Ալուծ «խոտի տեսակ», *բարտի*, *բող/բողիկ*, *բողկ*, *գաղձն* «գալյախոտ», *գարի*, *գեղձ* «բաղեղ, պատատուկ», *գի/գիհի*, *գինձ*, *դալար* «խոտ», *դաղձն*, *դեղձ*, *եղեկն*, *թաղթ*, *թեղի*, «ծառ», *խստոր*, *կաղին/նի*, *կուենի* /ծառատեսակ է/, *հացի*, *մատիտեղ*, *մամոտ*, *մալրի*, *մորենի*, *որթ*, *պտուղ*, *սիսեռն*, *սունկն*, *տաւտասկ*, *ցախ* «հացենի», *ցաքի*, *քեղ* «սխտորի տեսակ»:

Բարբառային բառեր. *դեղդ*, *թալ*, *թելուկ*, *խինդեղնը* «օշինդլ», *մողկ*, *ծնեքեկ*, *ոսի*, *տկողին*, *տողտ...*

Գ/ի/գիհի-ն Արմատական բառարանում ստուգաբանված չէ, սակայն հետազայում Հ.Աճառյանը այն համարում է հ.-ե. /տե՛ս ՀԼՊ, Բ, 600/:

Վերոբերյալ բառերի մի զգալի մասը վաղ գրաբարում, այլև գրաբար մատենագրության մեջ ավանդված չէ, ինչպես՝ *ալուճ, բող, թեղի, ցախ, քեղ...* և այլն:

Բողկ-ը նույնպես վաղ գրաբարում ավանդված չէ, սակայն *բողկուկ* ձևի առկայությունը հուշում է մահ բառարմատի անկախ կիրառության մասին:

Թաղթ, մամուռ, մատիտեղ, կուենի, ոսի բառերը արմատական բառարանում ստուգաբանված չեն: Դրանց հ.-ե. ծագումը փաստարկում է Գ.Ջահուկյանը /Ջահուկյան, 1987/:

Հ.-ե. ծագում ունեցող բառերը, ունենալով հազարամյակների ակունքներ, իմաստափոխվել են, և նույնիսկ 5-րդ դարից ավանդված որոշ բառիմաստներ, թերևս, հեռացել են նախնական իմաստից:

Իմաստափոխության և նոր բառիմաստների առաջացման լավագույն օրինակ է *դեղ* արմատը: Մրա նախնական իմաստն է «խոտ», որը հաճախ գործածվում էր *դալար* բառի հետ. «Լիզանիցէ արջառ զդեղ դալար ի դաշտի» /Թիւր., ԻԲ, 4/: Այս արմատը այնուհետև սկսեց կիրառվել որպես բժշկական տերմին: Աճառյանի հավաստմամբ չորրորդ դարի վերջերից *դեղ*-ի «խոտ» նշանակությունը կորավ և «ահա դրա համար է, որ Ե դարուն հազիւ նրա մնացորդներն ենք գտնում, իսկ Ե դարից յետոյ բնաւ: Բայց *դեղ* «դարման» նշանակութիւնը ինչպէս Ե դարուն, նույնպէս և մինչև այսօր սովորական է» /Արմ., *Դեղ* բառահոդվածը/:

Դեղ արմատից են *դաղձն, դեղձ*: Վերջինիս /ձ աճականով/ բուն նշանակությունն էր «դեղին», և հետազայում այդ հատկանիշը վերագրվեց համապատասխան մրգին:

Նույն *դեղ* արմատն է բարբառային /Ղարաբաղի/ *խնդեղն, *խնդադեղն* «օշինդր», տեխսնը «դաղձ» բառերում:

Տարբեր են հ.-ե. բուսանունների բառակազմական հնարավորությունները: Որոշ արմատներով նոր բառեր /բուսանուններ, բուսատեսակներ/ մեզ չեն ավանդվել:

Առկա են հետևյալ բառաձևերը.

Դեղձ - դեղձենի, դեղձի, *կարմրադեղձ, դեղձուկ:*

Դեղ - *դեղախումկ, ճակնդեղ, խաշնդեղ, կապնդեղ, հացադեղ, մաղձադեղ, արջնդեղ:*

Եղեւիմ- եղեւնափայտ:

Խստոր – խստորապրաս, խստորուկ:

Կաղին/նի – *կաղնապտուղ, արքայակաղին:*

Մայր/ի/ - *երկրամայր, փայտամայր, թամձրամայրի:*

Մոլ-մոլաբոյս, մոլաթուզ, մոլածիթենի:

Որթ – *որթատունկ, որթափայտ:*

Քեղ – քեղակարոս, քեղասերմ, ազատքեղ, իշաքեղ, փշաքեղ:

Խուռա-ուրարտական շերտ

Լեզվաբանության մեջ ընդունելի է համարվում խուռերենը և ուրարտերենը մեկ լեզվաընտանիքի մեջ ներառելը:

Հայ լեզվաբաններից առաջինը Գ.Ղափանցյանն է գիտականորեն քննել հայ-ուրարտական առնչությունները՝ առանձնացնելով երկու տասնյակ բառեր, որոնք ընդհանուր են ուրարտերենի և հայերենի համար:

Հարցը ավելի մանրամասն քննել ու ամբողջացրել է Գ.Ջահուկյանը /տե՛ս Ջահուկյան, 1987թ./: Մեզ հետաքրքրող տվյալներն էլ բերում ենք ըստ նշված գրքի:

Հայերենի *խնձոր, խաղող, նուռ, տուղտ* բառերի զուգահեռներ կան խուռերենում: Գ.Ջահուկյանը նկատում է. որ «կան հայ-ուրարտական բառային մի շարք զուգադիպումներ, որոնց դեպքում դժվար է որոշակի ընտրություն կատարել հայերեն /երբեմն էլ ուրարտերեն/ բառերի բնիկ, թե փոխառյալ լինելու հնարավոր ենթադրությունների միջև, այս դեպքում հարցը կարելի է լուծել միայն կողմնակի փաստերի և դատողությունների հիման վրա...» /1987, 432/:

Ուրարտերեն-հայերեն բուսանունների հարցում էական դժվարությունը այն է, որ սեպագիր արձանագրություններում վկայվածները քիչ են: Ուրարտ. zari «պտղատու այգի» - հայ. *ծառ*

զուգահեռը ակնհայտ է: Ըստ Գ.Ջահուկյանի «նկատի ունենալով հայ. և ուրարտ. բառերի իմաստային տարբերությունը՝ պետք է կամ նմանությունը համարել պատահական, կամ ենթադրել հայ. բառի բաղարկում /կոնտամինացիա/ ուրարտերեն բառի հետ» /1987, 433/:

Ծառ-այգի իմաստային զարգացումը բացառելի չէ: Որպես օրինակ նշենք իրանական ծագում ունեցող *դրախտ* բառը, որը փոխատու լեզվում ունի «ծառ» իմաստը, գրաբարում՝ «պարտեզ»: Անկախ ուրարտական արձանագրություններում վկայված /բառապաշարի տարբեր շերտերի վերաբերող/ բառերից՝ լեզվաբանները հնարավոր են համարում հայ-ուրարտական բազմաթիվ զուգադիպումներ՝ ելնելով հայերենի տվյալներից:

Գ.Ջահուկյանը գրում է. «Ուրարտացիների դարավոր համակեցությունը հայերի հետ, ապա և նրանց հետ ձուլվելը պետք է հիմք տար մախ փոխառությունների և առշերտային /ադստրատային/, ապա ենթաշերտային /սուբստրատային/ ազդեցության համար... առանձնապես մեծ ազդեցություն թողած պիտի լինի ուրարտերենը հայերենի բառապաշարի վրա՝ ինչպես հասարակ անունների, այնպես էլ տեղանունների մեջ... Միաժամանակ հարկավոր է նկատի ունենալ հակառակ ազդեցության հնարավորությունը, որ հաշվի չի առնվում հետազոտողների կազմից»⁷:

Ուսումնասիրողների կարծիքով կարելի է ընդունել հետևյալ բառերի ուրարտական ծագումը /սրանց հ.-ե. ծագումը կամ այլ լեզուներից փոխառյալ լինելը չի ապացուցված/՝ *եղիճ, կոտենմ, վարսակ, ցորեն, ծիրան, խնձոր, տոլի* «խաղողի որթ», բարբառային՝ *մանդակ, մուճուղեզ, օղին...* /Ջահուկյան, 1987, 436/:

Արմ.-ում ուրարտական ծագում ենթադրող բառերը ավելի մեծ թիվ են կազմում:

Կովկասյան շերտ

««Կովկասյան լեզուներ» անվանումը երկիմաստ է. նրա տակ նկատի են առնվում մի կողմից՝ Կովկասում գտնվող լեզուներն ընդհանրապես՝ անկախ նրանց ցեղական փոխհարաբերությունից,

աշխարհագրական առումով, մյուս կողմից՝ միայն Կովկասի այն լեզուները, որոնք չեն պատկանում ոչ հնդեվրոպական, ոչ քուրքական, ոչ էլ սեմական լեզվաընտանիքներին» /Ջահուկյան, 1987, 584/:

Ըստ Աճառյանի՝ քարթվելական լեզուներից փոխառյալ են համարվում 47 բառ, որից բունաշխարհին են վերաբերում *խծուծ* «վուշի, կանեփի քափքփուկ», *ծմել* «սպանախ», *ճղոպուր/տ/*, *չանչ*, *ցմախ*: Գ.Ջահուկյանը որոշ նկատառումներ ունի այս բառերի վերաբերյալ: *Յմախ*-ի դեպքում նա հնարավոր է համարում սեմական աղբյուր /1987, 596/, «ծմել /ծիմել, զիմել/ «սպանախ» հանդիպում է ուշ շրջանում /13-րդ դ./ և այն չպետք է դրվեր հին շրջանի փոխառությունների թվում..., «ճղոպուրտ «ընկույզ» բառը հանդիպում է Երեմիայի բառարանում և բարբառներում, ուստի այն պետք է հանել հայերենի՝ քարթվելականից կատարած հին փոխառությունների թվից» /ն.տ., 593/:

Ճղոպուր բառը գործածական է միայն Ղարաբաղի բարբառում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Գ.Ղափանցյանը ունի մի յուրօրինակ և ուշագրավ դիտարկում: Լազո-մեզրեղական լեզուներում բառը ունի «*չազանակ*» իմաստը: Նկատելով, որ բառը բացակայում է այլ միջանկյալ բարբառներում, Ղափանցյանը ենթադրում է, որ բառաձևը, ինչպես և նոր իմաստը՝ «ընկույզ», հիմք են տալիս կարծելու, որ Ղարաբաղը եղել է Բալա ցեղի տեղաշարժի վերջին վայրը՝ ⁸ /*Ղարաբաղ* բառի վերջին բաղադրիչը Ղափանցյանը կապում է *Բալա* ցեղանվան հետ: Այս վարկածը ճշմարիտ լինելու դեպքում *ճղոպուր*-ն էլ պետք է համարել հնագույն փոխառություն/:

Չանչ-ը ՆՀԲ-ը չի վկայում: Աստվածաշնչում կա այսպիսի մի վկայություն. «Չամենայն ատուրս ուխտին իւրոյ՝ յամենայն զինչ եւ լինիցի յորթոյ, զզինի ի *չամչոյ* /ընդզծումը մերն է. Լ.Հ./ մինչեւ ցքինն մի՛ կերիցէ» /Թիք., Զ, 4/: Հ.Աճառյանը, համեմատելով բնագրի հետ, ընդգծվածը համարում է ձեռագրական վրիպակ և վերականգնում *չանչ* ձևը:

Հայերենի՝ արևմտակովկասյան /աբխազ-ադըղեական/ և արևելակովկասյան /նախյան-դադստանյան/ լեզուներից փոխառված բուսանունները սակավաթիվ են:

Ուսումնասիրողները նկատել են այդ լեզուների և հնդեվրոպական զգալի թվով զուգահեռներ, որոնք նոստրատիկ բնույթ են կրում. հայերենի դեպքում բուսանուններից Գ.Ջահուկյանը նշում է *սիսեռն*, *ցախ*-ը /1987, 601/:

Հայերենի՝ այդ լեզուներից կատարված փոխառություն է համարվում թերևս միայն *խոտ*-ը /ն.տ., 609/:

Իրանական շերտ

Հայերենի բառապաշարում այլ լեզուներից կատարված փոխառությունների շարքում գերակշիռ են իրանական ծագում ունեցող բառերը:

Նկատելի է սակայն, որ բուսական աշխարհին վերաբերող բառերը գրաբարի բառապաշարում այնքան էլ մեծաթիվ չեն: Հ.Աճառյանի ցանկում նշվում են այդ կարգի վեց տասնյակից ավելի բառեր⁹: Սակայն պետք է հաշվի առնել մի հանգամանք. իրանական բուսանունների մեծագույն մասը միջինհայերենյան վկայություններ են կամ վկայված են միայն բառարաններում. *անգուտան*, *դարապղպեղ*, *ժիրակ*, *կարոս*, *շահթառակ*...

Գրաբարյան փուլում ավանդված բուսանունները հետևյալներն են՝ *ագոխ* «խակ խաղող», *անանուխ* «հացհամեն», *արմաւ/ենի/*, *բրինձ*, *գազպէն* «մանանա», *գաւարս* «կորեկի տեսակ», *դարիճենիկ* «դարչին», *դժնիկ* «փշոտ թուփ», *գուիրակ*, *թութ*, *ժաժ* «խոփ» *խոշակ* «դատարկ հասկ», *կաղամբ*, *կանեփ*, *կանկար* «փշոտ մի բույս է», *կապար*, *կնդրուկ* «խունկ», *կնճիթ* «սուսամ», *համասպրամ* /ծաղիկ է/, *ճանքակ* «խնկաբեր բույս», *մանուշակ*, *մօրուտ*, *յասմիկ*, *նարգէս*, *նոճի*, *շահղանակ*, *չաման* «համեմիչ բույս», *պղպեղ*, *սարոյ* «նոճի», *սմնակ* /ծաղիկ է/, *սոխ*, *վարդ*,

վարունգ, փաղանգամուշկ «ռեհան», քնար /ծառի տեսակ/, քրքում «սափրան»։ Գազար իրանական ծագումով բառը թերևս նույնպես հին է /թեև վաղ գրաբարում /ըստ ՆՀԲ-ի/ալվանդված չէ/։ հմմտ. Ղարաբաղի բարբառի կեզար ձևը։

Վերոհիշյալներից *ազոխ, կանեփ* բառերի իրանական ծագումը կասկածելի է։

Գաւարս, գուիրակ, ժած, խոշակ, ճանքակ, շահդանակ վկայված են 1-2 անգամ։

Պետք է նշել նաև մի հանգամանք. իրանական ծագում ունեցող բուսանունների մի խումբ էլ վկայված է միայն Խորենացուն կամ Շիրակացուն վերագրվող «Աշխարհացույց»-ում։ Հեղինակը, խոսելով այս կամ այն երկրի առանձնահատկությունների մասին, թվարկում է նաև այդ վայրին բնորոշ բուսանունները՝ հիմնականում իրանական անվանումներով։ Օրինակ՝ Զինաստանի նկարագրության ժամանակ գրում է. «Եւ է Դենաստան ընդարծակ դաշտս տարածեալ։ Լինի ի Դենաց աշխարհին դարիճենիկ, և հոշիբուակ, և բուլիճենիկ և կասիմոն...»։¹⁰

Հնդկաստանը ներկայացնելիս հանդիպում են դարձյալ այդպիսի մի քանի բառեր. «Լինի անդ ոսկի, և արծաթ, պղպեղ և սնգրուեղ,...փաղանգամուշկ, քափուր, ճանդան» /ն.տ./։

Ալենհայտ է, որ վերոհիշյալ և այս կարգի բառերը իսկական փոխառություններ չեն, դրանք հազվադեպ հանդիպող անվանումներ են և փոխառություն հասկացություն հետ առնչվում են լոկ այնքանով, որ վկայված են մեր մատենագրության մեջ։

Նկատված է, որ իրանական ծագումով բուսանունները հիմնականում մշակովի բույսեր են ու ծաղկի անվանումներ /*վարդ, մանուշակ, նարգէս, հորուտ, մորուտ, համասպրան, յասմիկ...*/։

Սեմական շերտ

Սեմական լեզուներից փոխառված բուսանունների թիվը մեծ չէ։ Առկա բառերը հիմնականում համարվում են ասորերեն, թեև հնարավոր է, որ դրանցից մի քանիսը փոխառված լինեն սեմական այլ լեզուներից։ Արաբերենից կատարված փոխառություններին

չենք անդրադառնում, քանի որ դրանք հիմնականում ընդգրկում են հետգրաբարյան փուլը:

Ահա սեմական ծագում ունեցող բուսամունների ցանկը:

Ապրսամ «բալասան», *բալասան*, *գոպայ* /ծոթրինի մման մի բույս/, *ծոթոր* «համեն», *հազոր*, *հազորենի*, *մանիշակ*, *շումրայ* «վայրի սամիթ», *շուշան*, *ոլոռն*, *շուշմայ* «սուսամ», *սականունիա* /խոտ է/, *փեզանայ* /խոտ է/, *քրսամն* /ընդեղենի տեսակ/:

Նշվածներից *բալասան*-ը թերևս արաբական փոխառություն է: Առաջին վկայությունը «Աշխարհացույցում» է: Այս բառի այլ ձևն է /ավելի հին/ *բաղսամոն*, որը փոխառվել է հունարենից: *Ոլոռն* համարվում է ակկադերենից կատարված փոխառություն: *Մանուշակ/մանիշակ* գուգաձևերից վերջինը՝ Աճառյանը համարում է ասորական ձև: Ըստ Գ.Ջահուկյանի՝ «Հնարավոր է ենթադրել հայերենում բարբառային տարբերակներ և ասորական ձևը փոխառյալ համարել հայերենից»¹¹:

Ակամունիա-ն ծագումով հունարեն է, բայց հայերենին է անցել ասորերենին բնորոշ ձևով:

Ծոթոր, *շուշմա* բառերը վաղ գրաբարում ավանդված չեն: *Շումրա* հայ մատենագրության մեջ վկայված է մեկ անգամ:

Փեզենայ-ը նույնպես հաճախական կիրառություն չունի, թեև առաջին վկայությունը Սուրբ Գրքից է: Ահա այդ օրինակը. «զանանուխ, և զփեզենայ և զամենայն բանջար» /Դուկ., ԺԱ, 42/:

Թերևս միայն *շուշան*-ն է, որ հաճախական կիրառություն է ունեցել և՛ գրաբարում, և՛ հետագա փուլերում: Ընդ որում տարբերակվում էին վայրի շուշանն ու մշակովին. հմմտ. «Իսկ շուշան թերևս և վասն սպիտակութեանն, վասն զի լուսատեսիլ է» /Փիլ., Մնաց., 520-21/: «...և յառաելութենն գեղեցկութեան գոր տուեալ է շուշանացն վայրենեաց» /Ոսկ., Մտթ., Ա, 343/: «Հայեցարուք ի շուշանն վայրենի, որպէս աճէ, ոչ ջանայ և ոչ նիւթ» /Մտթ., Զ, 28/:

Մի քանի բառեր առկա են բարբառներում /օրինակ՝ *ծոթոր*-ը/: Պետք է ենթադրել, որ այս դեպքում գործ ունենք ոչ թե անմիջապես գրաբարյան բառի բարբառային ձևերի հետ, այլ ուշ շրջանում արաբական ազդեցության, ազդեցություն, որ իր հետքը թողել է ժողովրդախոսակցական լեզվում, բարբառներում:

Հունական շերտ

Հունարենից կատարված փոխառությունները /ոչ միայն խնդրո առարկա իմաստային խումբը/ հիմնականում գրքային են, այն էլ թարգմանական գրականությունից: Այս կարգի փոխառությունները, գոնե իրենց մեծ մասով, լեզվում լայն տարածում չեն գտնում, չեն գործածվում կենդանի խոսակցական լեզվում:

Հ.Աճառյանը առանձնացնում է հունարենից փոխառյալ 117 բուսանուն¹²: Սա բավականին մեծ թիվ է, սակայն այդ բառերի կիրառության ժամանակային և համատեքստային քննությունը պարզում է հետևյալը. հունարենից փոխառյալ բուսանունների զգալի մասը գրաբարում ավանդված չէ: Հետգրաբարյան վկայությունների մի մասն էլ արձանագրված է միայն բառարաններում կամ ուշ շրջանի բժշկարաններում: Օրինակ՝ *Երեմիա Մեղրեցու* բառարանում են արձանագրված *ագրիտիս*, *ակաքթագիկ* /փուշ/, *ադկեպ* «եղիճ», *ամոնի* «զինձ», *անիդոլոն*, *կրիկոն*, *մեսմեդոն*, *մորեաս*, *նարդիստաքոս*, *նիփայ*, *ռեփանին*, *սկամինոս*...

Այս և այս կարգի շատ բառերի գործածության վկայություններ չկան ոչ միայն գրաբարում, այլև միջին հայերենում:

Գրաբար մատենագրության մեջ ավանդված են հետևյալ բուսանունները. *ակոնիտոն* /թունավոր խոտ է/, *անթեմ* /ծաղիկ է/, *ափսինթ* «օշինդր», *բադսամոն* «Փալասանի թուփ», *բրաբիոն*, *զոնգ* /բույսի ուտելի արմատ է/, *դափնի*, *եդատ* «եղևնի», *թիւմ* /անուշահոտ բույս է/, *լիբանոս* «կնդրուկի ծառ», *կալամոն* «եղեգ», *կասիա* «դարչին», *կաստանայ* «շագանակ», *կինամոմոն* «դարչին», *կիպարիս* «նոճի», *կիպրոս* /ծաղիկ է/, *կիտրոն*, *կոնիոն* «մոլախիմղ» *հագնի* /ծառի տեսակ է/, *հալուէ* /դեղաբույս է/, *հադիկա* /հունդ/, *հրիզոն* «կորեկ», *մանրագոր* /թմրեցնող բույս է/, *մառուլ* «հազար», *մեկոն* «խաշխաշ», *մեդիդոփտայ* «մեղրածուծ», *մեղրապոպ* «շամամ», *միքաբադանոս* /հնդկական բույս է/, *նարդոս*, *որիզ* «բրինձ», *պադատիտ* «չոր թուզ», *պեկե/ս* «սոճի», *պիտոուս* «թեղոշի ծառ», *պրաս* /բանջարեղեն է/, *ստորոպենի* /ծառատեսակ է/, *սքինոս*

/խժաբեր ծառ է/, *փղոմոս* /խոտ է/, *փսենաս* «արու արմավենու բեղմնափոշի»...

Գրաբարում ավանդված հունարենից փոխառյալ բուսանունների զգալի մասը պահպանել է հունարենին բնորոշ /ոս, էս, ոն/ վերջավորությունները, որը նշանակում է նաև, որ տվյալ փոխառյալ միավորը հենց արտաքին տեսքից դիտվում է որպես օտար, այսինքն՝ հայերենը այն չի յուրացրել, չի ենթարկել իր հնչյունաբառաձևային յուրահատկություններին: Որոշ դեպքերում հունարեն բառերը ենթարկվել են հայերենի հնչյունական և բառակազմական օրինաչափություններին. հմմտ. *մանրագոր*՝ հուն. մանդրագորաս, *մեղրապուպ*՝ մելոպեպոն. այդ «հայերենացումը» նկատելի է հատկապես որոշ ծառանունների դեպքում, երբ հանդես է գալիս *ենի/ի* ածանցը. հմմտ. *հագնի*, *ստրովենի* և այլն:

Հ. Աճառյանի նշած 117 բուսանուններից գրաբարում վկայված են 44-ը /հնարավոր վրիպումները հաշվի առնելով՝ ընդունենք 50/: Սակայն այդ թիվն էլ, որը բուսանունների ընդհանուր քանակի մեջ զգալի տոկոս է կազմում, դեռևս հիմք չի տալիս արձանագրելու իմաստային այդ խմբում հունական ազդեցության գերակշռությունը: Այդ է հաստատում նաև այդ բառերի գործառական առանձնահատկությունների քննությունը: Վերը նշված բառերը /գրաբարում ավանդվածները/, ինչպես նշել ենք, գրքային վկայություններ են և հիմնականում տարածքային-գործառական լայն ընդգրկում չունեն, այդ բառերից մի քանիսը հայերեն բնագրում դիտվում են որպես օտար բառ, որոնք մեկնվում-թարգմանվում են, բառերի մի խումբ էլ եզակի վկայություն ունի և հանդիպում է թարգմանական որևէ գործի մեջ: Միայն մեկ անգամ հանդիպող բառերից են՝ *անթեն*, *ասփոդէլոն*, *զոնգ*, *եղատ*, *թիւնի*, *թիւմ*, *կալամոն*, *կիպրոս*, *հաղիկա*, *հիպատիկեան*, *հրիզոն*, *միրաբադանոս*, *մառուլ*, *որիզ*, *փղոմոս*, *փսենաս*:

Բերենք որոշ վկայություններ. «Եւ քարշամեսցի ոսկեծաղիկն... զի անթենն այս երևելի բանջար է» /Կոչ. ընծ., 321/: «...յորժամ վարիցեն առ արմատովքն երիթ պարարտ ի պելէս փայտէ» /Բրսղ, 151/: «Պատգամաւորութիւն քո դրախտ նոնենեաց՝ հանդերձ պտղովք մրգաբերաց. կիպրոս հանդերձ *մարդոսի*... զմոռս և

հալուէ, կինամոնուն...» /Երգ, Դ, 13-14/: «Այլազգի կերպարանս ունի
հոյզն ծառոյն, որ անուամեալ կոչի սքինոս» /Էրսող, Արմ./: *Կիպրոս*
բուսանունը հանդիպում է Երգ երգոցում, որի այլ հատվածներում
թարգմանվում է *նոճ*:

Մի քանի փոխառությունների՝ *կիսորոն, հալուէ, նարգէս, նարդոս*,
հայերենի այլ լեզվավուլերում գործածությունը թերևս
պետք է դիտել որպես նոր ազդեցություն /նաև միջնորդավորված/:

Անհայտ ծագումով բուսանուններ

Գրաբարում ավանդված մի շարք բուսանունների ծագումը
անհայտ է: Դրանք են՝ *անհար* /ծաղիկ է/, *բանջար, բաղեղն, բոինչ, գազ*
«փշոտ բույս», *խաւարծի, խոլործն, կաղանչանն, կտաւ, կնձնի, կորեակ, հերծի*
«ծառատեսակ», *մոշայ* «մի տեսակ բուփ», *սարդ* «մայրի ծառը»,
պրտու «սեզ, եղեգ», *սամիթ, սերկելիլ, սէզ* «խոտ», *սինձ* /ծառ է/, *վուշ*:¹³

Բերենք մի քանի վկայություն. «Կաղանչանան մաղձաղեղ է
բուժիչ ի մահուանէ» /Եզն., 67/: «Որո՞վ ծառով հասեր առ դոսա, և
նա ասէ ընդ հերձեաւն» /ՆՀԼ/: «Միթէ կանաչանայ պրտու առանց
ջրոյ, կամ բարձրանայցէ կմիւն առանց ըմպելոյ» /Յոբ., Ը, 11/:

Բույսի մասեր

Հայերենում բավական մեծ թիվ են կազմում բույսերի մասերի
անվանումները:

Բերենք գրաբարում ավանդված զանազան բուսամասերի
անվանումները այբբենական կարգով. *ած «ղնձյուղ», *արգատ,
*արմ/արմատ, բաժակ, բարունակ, *բողբոջ, *բուն, գնդակ, գոխ,
*ընձիւղ¹⁴, *թերթ, թեփ, *խեղբ/խիղբ¹⁵, խոշակ, *ծանձ, *ծիլ,
կաճին/կարճին, կեղեւ, կոկոն, *կողր, *ձող «ճյուղ», *մոլ, *մորճ
«ճյուղ», շառաւեղ, *շիւ, շրուանդ, ողկոյգ, *ոճ «ցողուն», *ոստ,
ուղէշ, ունդ, ուռ, չանչ, պալար, *պալուկ, *պտուկ, *ջով, *սաղարթ,
*սերմն, *ստեղն, տորր, սուտ «ոստ, ճյուղ», ցողուն...

Ինչպես նկատելի է, այս ենթախմբի բառերի մեծ մասը բնիկ հայերեն է /հ.են. ծագումով բառերը նշված են աստղանիշով/:

Բաժակ /բույսի մաս է/. ՆՀԲ-ը և Արմ.-ը չունեն: Վկայված է Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ»-ում. «...պեսպես կերպարանօք կանգնեցան կացին՝ արմատք եւ ուռք, կողր և տերեւ...բաժակ և ողկոյզ, գնդակ» /Բրտղ, 145/: *Բաժակ*-ը նշված իմաստով պետք է համարել հայերեն բառ, ոչ թե իրանական փոխառություն: *Գնդակ*-ը նույնպես պետք է համարել հայերեն: *Տակ* «բույսի արմատ»-ն էլ հավանորեն հայերենում ստեղծված նրբիմաստ է. ունենք և *տակախիլ առնել* «արմատախիլ անել», բարբառներում՝ *տակոխ* «արմատ» և այլն:

Բուսամասեր ցույց տվող բառերից մի քանիսը կազմում են հումանշային շարքեր, ավելի ճիշտ իրենց նրբիմաստային երանգներով հանդերձ կարելի է ընդգրկել որևէ ենթախմբի մեջ /նշում ենք հիմնականները/:

Արմ/արմատ-տակ-կաճի/կարճին/. ամենայն հավանականությամբ, այս նույնիմաստ բառերից նախնականը *արմ*-ն է, որը դասական հայերենում /հատկապես բառակազմության ժամանակ/ հանդես է գալիս և *արմն* ձևով: *Արմատ*-ը թեև վաղ գրաբարում դարձյալ վկայված է, բայց որպես բառածև *արմ+ատ* թերևս ավելի հետին կազմություն է: Որպես բառակազմական բաղադրիչ՝ հաճախական է *արմատ*-ը. *արմատագետ*, *արմատախիլ*, *արմատակեր*, *արմատակից*, *արմատանալ*...

Բերենք օրինակներ նշված բառերով. «Տապար առ արմին ծառոց դնի» /Մտթ., Գ, 10/: «Առ արմամբ խլեցաւ այգին նորա» /ՆՀԲ/: «Արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց» /Փարպ., ՆՀԲ/:

Կարճին-ը ըստ Արմ.-ի վկայված է մեկ անգամ. «Չարաթոյն օդոցն շնչմամբ խստութեան դառնութեան՝ խորշակահար ցամաքեցուցանէ զվարսածև բոյսս դալարոյն, մօտ առ կարճինսն այրեցուցանէ» /Արմ., Ագաթ./: Բառի ծագումը ստույգ չէ:

Սերմն-հատ/իկ/-ունդ. «Իբրև գետրմն գնձոյ սպիտակ» /ՆՀԲ/: «Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ սերմանեաց յագարակի իւրում» /Մտթ., ԺԳ, 31/:

Ունդ. «ուտելու սերմ, հատիկ». *հատիկ* «սերմ» վաղ գրաբարում հաճախական չէ: ՆՀԲ-ի վկայած օրինակը Լամբրոնացուց է:

Չող-ցողուն-բուն-կոթուն. Խ.-Ե. ծագումով *ժող*-ը ըստ գրաբարի բառարանների ունի «բուն, ոստ, ճիւղ, գաւազան, մական, ցլից, գերան» իմաստները, *ցողունը*՝ «ձող, բուն»:

Բերենք վկայություններ հոմանշային այս շարքից. «Եթէ ծերացի յերկրի արմատ նորա՝ և ի քարի վախճանեսցի բուն նորա... ի հոտոյ-ջրոյ ծաղկեսցի» /Յոր.,ԺԴ,8/: «Նախ և առաջ իսկ կոթունն էր և ապա ցորեանն... և եթէ չէր կոթունն և ոչ ցորեանն լինէր» /Ոսկ., Պօղ., Ա, 472/: «Չողք հագնույ» /ՆՀԲ/: «Ցօղուն և ժժան պատեալ զնովաւ տոչորեցին» /ՆՀԲ/:

Թերթ-տերեւ- սաղարթ. հավաստի Խ.-Ե. ծագում ունի միայն *թերթ*-ը, որը հոմանիշների այս շարքում «տերեւ» իմաստով հաճախական չէ: Այս բառի պարզական *թեր* «տերեւ» արմատը առկա է Ղարաբաղի բարբառում *տկաթեր* «տակ բույսի տերեւը»:

Սաղարթ բառից կան՝ *սաղարթանալ, սաղարթաթափ, սաղարթաբեր*: Կան նաև *տերեւ*-ով տասնյակ կազմություններ. *տերեւաբեր, տերեւաբույխ, տերեւազարդ, տերեւաթափ, տերեւալից, տերեւախիտ, տերեւիկ, անտերեւ, դեղնատերեւ...*

Գրաբարում առավել շատ են *ոստ-ճիւղ* հոմանիշային շարքի անդամները. *ած* «ծիլ, ընծյուղ»-*բարունակ* «ճիւղ, ոստ»- *բողբոջ* «ծիլ, ընծյուղ»- *զնդակ* «ոստ»- *զոխ* «բույսի մեջտեղի հաստ ծիլ», *ընծիւղ* «ծիլ, բողբոջ»-*խեղք* «ծիլ, ընծյուղ»- *ծիլ/ծիւղ-կորիւն* «ծիլ»-*կողի* «ճյուղ, ոստ»- *մոլ* «ծիլ, ընծյուղ»-*շառաւիղ* «ընծյուղ, բողբոջ, ծիլ»-*շիւ* «ծիլ», *ուղէշ* «ընծյուղ, բողբոջ, սաղարթ», *ուռ* «ճյուղ, շիւ», *պպլուկ* «ծիլ»-*պտուկ* «ծիլ, բողբոջ, ընծիւղ»-*ջոկ*, «ծիլ, ընծյուղ», *ստեղն* «ճյուղ»-*տորք* «ճյուղ»:

Չոխ-ը ըստ Արմ.-ի վկայել է մեկ անգամ Գրիգոր Մագիստրոսը: Այդ բառը գործածական է Ղարաբաղի բարբառում:

Տորք-ը համեմատվում է խեթալուվական *տպաթ* «խաղողի որթի ճյուղ»-ի հետ:

Նշենք, որ վերոհիշյալ բառերի մի մասը չակերտներում բերվածներից բացի ունի նաև այլ իմաստներ:

Այսպես, *ջոկ*-ը ունի նաև «կեն, խոտե պարան», *ուռ*-ը՝ «ուռենի», *սողոր*-ը՝ նաև «խաղողի որթի թևերը», *շառավիղ*-ը՝ «զավակ», *ստեղմ*-ը՝ «ծխի սյուն, աշտանակի թև», *պտուկ*-ը՝ «ստինքի ծայրը»:

Մոլ, *պալուկ* վկայված են ուշ շրջանից, բայց եթե հավաստի է դրանց հ.-ե. ծագումը, ապա պարզապես վաղ գործածության օրինակները մեզ չեն հասել:

Կորիւն բառի՝ «պտուղ, ծիլ, բողբոջ» իմաստը /թեև այնքան էլ հստակ չէ/, վկայված է մեկ անգամ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ»-ում: Ահա այդ օրինակը. «...կնձնիք և կաղամախիքն և այլ բազում ծառք, որ նոցին մմանք են, պտուղ իմն ունին քանձրախիտ տերեւովք և թերևս նոյն իսկ կերպարանք իցեն սերման եւ պտուղ: Եւ զնոյն, որ երելին ի ծառ կորիւն կոչեն անուանագէտք իրաց բազմաց, որ հանապազ ի նոյնն մշտնջենաւորին» /144/: «Վեցօրեայ»-ի քննական բնագրի ծանոթագրության մեջ Կ. Մուրադյանը նկատում է, որ հուն. *միսխուն* բառն է՝ «ցողուն, բուն, կոթուն» /340/:

Բույսի մասեր արտահայտող մյուս բառերից են՝

Ծանծ «ցորենի կճեպ». բնիկ հայերեն բառ է: Ղարաբաղի բարբառում գործածական *սյաճ*-ը նույնպես հին ակունքներ ունի և ըստ երևութիւն միջին իրանական փոխառություն է:

Կոկոն «ծաղկի մաս». Գ.Ջահուկյանը դնում է հայ-ֆիննական զուգադիպումների ցանկում /1987, 293/:

Առէջ, *սլալար* բառերը գրաբարում որպես բուսական աշխարհին առնչվող հասկացություններ չեն գործառում:

Նկատելիորեն շատ են *խաղող*, *խաղողի որթ* իմաստային դաշտի մեջ ներառվող անվանումները:

* * *

* *

Հ.-ե. որոշ լեզուների համար *խաղող* և *խաղողի որթ* հասկացությունների համար առկայանում է * *վ/с/о/ino*-ն, որից հայերենում՝ *զինի*: Այդ արմատը կա և սեմական մի շարք լեզուներում:

Խաղող/ենի/, խաղողի որթ և պտուղ բառերի համար այս արմատը հայերենում բացակայում է: Գ.Ջահուկյանը հայերեն-խոտերեն զուգահեռների շարքում բերում է և *խաղողը*՝ նշելով, որ «որոշ դեպքերում հնարավոր է ենթադրել նաև զուգահեռ որևէ աղբյուր կամ ուրարտերենում չարձանագրված համարժեք» /Գ.Ջահուկյան, 1987, 425-426/:

Թեև բառը վկայված է 5-րդ դարից, սակայն այն հաճախական չէ: Նկատելի է նաև, որ Ս. Գրքի որոշ հատվածներում հուն. *ամպելոս* «խաղող, խաղողի որթ» բառը՝ հայերեն *խաղող* կամ *խաղող* բաղադրիչով կապակցությամբ չի արտահայտվում /հմմտ. Երեն., 2, 9/:

Խաղողի ընտանեցման և մշակության հնագույն օջախը համարվում է հարավարևմտաասիական /առաջավորասիական/ տարածքը՝ առանձնացնելով Անդրկովկասը՝ որպես մշակովի խաղողի առաջացման և վայրի ու մշակովի խաղողի զանազան տեսակների առկայության տարածք:

Անդրկովկասում խաղողագործության հետքերը հասնում են մինչև մ.թ.ա. 5-4-րդ հազարամյակները¹⁶: Վերջերս «Արենի-1» քարայրում գտնված նյութերը հաստատում են, որ գինեգործությունը և խաղողի մշակությունը Հայաստանում զարգացած է եղել արդեն մ.թ.ա. 5-րդ հազարամյակի վերջերից:

Հայերենի բառապաշարը յուրատեսակ արձագանքել է այդ իրողությանը՝ պահպանելով իմաստային դաշտին վերաբերող բազմաթիվ բառեր:

Խաղող «խաղողի պտուղ»:

Շի «ճմռված խաղողի մնացորդը»: Վաղ գրաբարում քեև վկայված չէ, բայց բառի հ.-ե. ծագումը /Ջահուկյան, 1987, 147/ հավաստում է, որ գործածության հիմն ակունքներ է ունեցել: *Շի* «ճյուղ» եթե նույն արմատից է, ապա առաջինի իմաստային զարգացումն առկա է որոշ բարբառներում:

Ազոխ «խակ խաղող». վկայված է 5-րդ դարից:

Չանչ- խաղողի ճգնված կեղևները:

Սովրեկ/սորեկ գորեկ/ «խաղողի տեսակ կամ որթ». «Ձորքն գորեկ, մի քարզմանն պտղաբեր քարզմանեաց եւ Ակիւղաս՝ Միա-

պտուղ, ազգ ինչ է որթոյ, որ կոչի սովորէկ, որոյ գինին այնպէս բուխ առնի, զի ուր և հասանէ անդէն ներկանէ» /Եմես., Մեկն., 226/:

Որթ «խաղողի տունկը, նաև խաղողը». այդ արմատից կազմվել են *որթատունկ*, *որթափայտ*: *Որթ*-ը հ.-ե. ծագումով բառ է: Ըստ Արմ.-ի *portus* -*որթ* «հորթ, եղինջ, ձագ»: *խաղողի տունկ*-ը Աճառյանը համարում է նշվածի իմաստային զարգացումը: Որպես զուգահեռ նշում է *երինջ*, *հորթ*, և Երևանի խոսվածքում՝ «խաղողի որթի մատ»: Ինչ խոսք, զուգահեռը ուշագրավ է, բայց ուշագրավ է նաև այն, որ վաղ շրջանից *որթ* «հորթ» և *որթ* «բույս» անցումը վերագրվել է միայն խաղողի վազին:

Մատն. հիմնական իմաստից զատ ունի նաև «խաղողի որթի ճյուղերը»: Բացառելի չէ վաղ շրջանից բառի գործածությունը:

Վազ «խաղողի ոտ, որթ». վկայված է ուշ շրջանից, բայց հնարավոր է և վաղ գործածությունը, եթե իրոք *վազ* «վազել, ցատկել»-ի իմաստային զարգացումն է:

Արգատ «որթատունկի էտած ճյուղը»:

Բարունակ «խաղողի պտղաբեր ոստ». վկայված է 5-րդ դարից. «Եհան անդ ողկոյզ և արծակեաց զբարունակս իւր» /ՆՀԲ/:

Ողկոյզ. գործածվում է 5-րդ դարից:

Շրուանդ «խաղողի ողկոյզ՝ հատերը վրայից թափված». հաճախական կիրառություն չունի:

Այս բառին հոմանիշ է և *ճիռ*-ը՝ վկայված 5-րդ դարից: Այս երկու արմատների ծագումը ստույգ չէ: *Ճիռ* արմատը հանդես է գալիս նաև հետևյալ գրաբարյան բառերում. *ճոախիտ*, *ճոաքաղ*, *ճոաքաղութին*, *ճոաքաղել...*: Ղարաբաղի բարբառում *ճիռ* բառին հոմանիշ է *քընքըռն*-ը, որի, ինչպես և *ճիթ* «ողկոյզ»-ի հ.-ե. ծագումը Գ.Ջահուկյանը հավանական է համարում¹⁷:

Տաշտ «խաղողի որթի տնկված ճյուղ». վկայված է 5-րդ դարից:

Տոլի «խաղողի որթ». վկայված է ուշ՝ «Վաստակոց» գրքում: Սակայն բառի ուրարտական ծագման վարկածը /Ջահուկյան, 1987, 428/ ենթադրում է ավելի վաղ գործածություն:

Տորր «խաղողի որթի քները»:

Կարելի է ենթադրել, որ նախագրաբարյան շրջանում *գինի*-ն ունեցել է «խաղողի որթ», նաև «խաղող» իմաստը, որը և այդ հասկացությունների նախնական /հնդեվրոպական/ անվանումն է: Բառի՝ ի-ով վերջավորությունը բնորոշ է ծառանուններին: Իսկ ՆՀԲ-ը *գինի* բառահոդվածում նշում է և «բերր զորթոյ և այգոյ»: Հավելենք նաև, որ հ.-ե. և ոչ հ.-ե. որոշ լեզուներում *գինի* և *խաղող* բառերում նույն արմատն է. հմմտ. ռուս. вино, виноград:

Աստվածաշնչի մի վկայության մեջ *գինաւետ* բառը, ըստ էության, նշանակում է «խաղողի այգիներ», ոչ թե «շատ գինի ունեցող»: «Երկիր ցորենոյ և գինոյ հացաւետ և այգաւետ» /Եսայ., ԼԶ, 17, ՆՀԲ/:

Ըստ ՆՀԲ-ի մի շարք ձեռագրերում այգաւետ-ի փոխարեն *գինաւետ* է: Եղիշեի և Խորենացու վկայած *գինեբեր*-ը ՆՀԲ-ը մեկնում է «որ բերէ կամ բոխէ զգինի. գինեւետ»: Համատեքստը հուշում է, որ *գինեբեր*-ի առաջին բաղադրիչը *խաղողի որթ*-ն է կամ *խաղող*-ը. «Եւ զամենայն... կողմանս զարդարէ... և ստղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս և ի տերեւս, և բազումս բազմաբերս և գինեբերս ի նմա տնկեաց ովիտս» /Խոր., Ա, ԺԶ/: «Չորացան ազագեցան բուրաստանք ծածկոցաց նոցա, և տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա» /Եղիշ., 201/:

Ինչ վերաբերում է *խաղող* բառին, ապա կարելի է արձանագրել, որ վաղնջահայերենում այն լայն կիրառություն չուներ: Որպես ուրարտերեն բառ՝ թերևս կիրառվել է Վանա լճի հարավարևելյան շրջաններում: «Ճաղող», «խաղողի վազ» իմաստով գործածվել են հ.-ե. ծագում ունեցող *այգի*, *որթ*, *գինի* բառերը¹⁸:

Բուսաշխարհին վերաբերող բառեր են նաև տարածքային անվանումները. տարածքներ, որտեղ աճում կամ աճեցնում են բույսեր, ծառեր:

Դրանցից են՝ *ածու, *այգի, *անդ, *անտառ, *արտ, *արօտ, դաշտ, դաշտավայր, դրախտ, *կորի, *հարատունք «արտ», հովիտ, *մայրի «անտառ», *մայրաւոր «անտառ», մարզ, մարգագետին, շամբ, պարտեզ, պուրակ, տափարակ....

Այս կարգի բառերի մի մասը կազմվում են տեղ ցույց տվող ածանցներով.

Ստան- սյգեստան, անդաստան, արմաստան, բուրաստան, դարաստան, ծառաստան, սեխաստան...

Ուտ- եղեգնուտ, թփուտ, ծառուտ, հացուտ, մացառուտ, շամբուտ... /ծառուտ-ը ՆՀԲ-ը չունի/. «Դաշտային կամ լեռնային, սոսկ կամ ծառուտ» /ԹԷՄՆ., 70/:

Ոց/անոց/- ծաղկոց, բանջարանոց...

Բուսական միջավայր /տարածք/ մատնանշող հիմնական բառերն են՝ *այգի* /Եզն. 1, Ազաթ. 8, Բուզ. 11, Եղիշ. 1, Խոր. 2/, *անդ* /Եզն. 1, Ազաթ. 3, Բուզ. 2/, *անտառ* /Ազաթ. 2, Բուզ. 1, Խոր. 9: Եղիշեն, Եզնիկը, Փարպեցին ունեն *անտառախիտ, դաշտ* /Եզն. 5, Ազաթ. 14, Բուզ. 12, Փարպ. 12, Խոր. 33, Եղիշեն 14/, *հովիտ* /Խոր. 11, Եղիշեն 1/, *շամբ* /Խոր. 9/, *պուրակ* /Բուզ. 1/:

Այգի-ն գրաբարում կիրառվում է հիմնականում «խաղողի այգի» իմաստով:

Նշել ենք, որ 5-րդ դարի ոչ թարգմանական գրականության մեջ բուսաշխարհին, հատկապես բուսամուկներին վերաբերող բառերը մեծաթիվ չեն, բայց դրանց մեծ մասը գործածական է և արդի գրական լեզվում:

5-րդ դարի ոչ թարգմանական գործերից բուսանուն, միրգ և սրանց տարբեր տեսակների անվանումները շատ են Ազաթանգեղոսի «Պատմության» մեջ: Ներկայացնենք դրանք՝ փակագծերում նշելով գործածության հաճախականությունը:

Ապաբադսամոն/1/, բանջար /1/, բոյս/23/, գարի/1/, գա-
ւարս/1/, դառնիճ/1/, դափնի/1/, դժնիկ/3/, եղիճ/1/, ընկոյզ/1/, թզե-
նի/6/, թուզ/1/, ժանտափուշ/1/, խաղող/1/, խոտ/6/, ծաղիկ/17/,
ծառ/22/, կայծուկն/1/, կարմրադեղձ/1/, կարմրախնձոր/1/, կարմրա-
տանձ/1/, կիտրոն/1/, հաճար/1/, հաճարուկ/1/, հօրուտ/1/, ձիթե-
նի/1/, մայր/4/, մայրի/2/, մանիշակ/2/, մանրագոր/1/, մօրօտ/1/,
միրգ/3/, մուլեբոյս/1/, ներգիս/1/, նոճ/1/, նուշ/1/, շամդիտակ/1/,
ռլոռն/1/, որիզ/1/, որոմն/6/, ուռի/1/, պատեղիճ/1/, պտուղ/38/,
սարդ/1/, սերկեիկ/1/, սիսեռն/1/, սմնակ/1/, սոճ/1/, վարսակ/1/,
քնարուկ/1/:

Կայծուկն, կարմրադեղծ, կարմրախնձոր, կարմրատանձ
բառերի՝ ՆՀԲ-ի եզակի վկայությունները Ազաթանգեղոսից են:
Կայծուկ-կածուկ գործածական է արդի բարբառներում /Ղարա-
բաղ, Խարբերդ, Մուշ/: Եթե կարմրատանձ, կարմրախնձոր, կարմ-
րադեղծ-ը տանձի, խնձորի, դեղձի տեսակներ են, ապա որպես այդ
կարգի բառեր /տեսականիշ/ դարձյալ միայն Ազաթանգեղոսն է
վկայել: Նկատենք, որ *դեղձ*-ի՝ ՆՀԲ-ի վկայությունները միջինհա-
յերենյան փուլից են: Հայերն, անշուշտ, 5-րդ դարում և դրանից էլ
վաղ գիտեին դեղձի մասին:

Կորյունը վկայել է միայն *պտուղ*/1/. *Եզնիկը՝* բանջար/4/,
գարի/1/, թուզ/1/, խաղող/1/, խոտ/5/, ծառ/14/, կաղանջանան/1/,
կանեփուկ/1/, կորեակ/2/, հազար/1/, հաճար/1/, մանրագոր/1/,
որթ/1/, պտուղ/12/. *Բուզանդը՝* բոյս/4/, եղեգն/3/, խնձոր/1/, ծա-
ղիկ/1/, ծառ/3/, մայրի/7/, մորենի/1/, պտուղ/5/, վարունգ/1/, ցո-
րեան/8/. *Եղիշեն՝* թուզ/1/, խոտ/1/, մայրի/5/, մորենի/5/. *Փարպեցին՝*
բանջար/1/, բոյս/4/, դժնիկ/1/, եղեգն/1/, խոտ/2/, ծաղիկ/2/, ծառ/3/,
ձիթենի/8/, պտուղ/10/, ցորեան/1/: *Խօզ* բուսանունը ՆՀԲ-ը չի
վկայում: Փարպեցու գրքում կա *խօզակեր*. «Ջջրասուզակ մամ-
ռախնդիր խօզակեր մեծանձունք և յաղթամարմին հաւքն հաւքն»
/Փարպ., 10/: Ըստ Արմ.-ի *խօզ* նշանակում է «մամուռ»:

Արդյոք այս բառը կապ ունի՞ բրբռ. *խոզ* «խակ, չհասած
/դղմիկ/, *խոզուկ* «վայրի դառնահամ բույս» բառերի հետ: Պա-
տասխանը դյուրին չէ:

Խորենացու գրքում էլ բուսանունները շատ չեն. արմաւենի/1/,
եղեգն/4/, թզենի/1/, խոտ/1/, ծաղիկ/1/, ծառ/2/:

Ջարմանալի է, որ նշված գործերում վկայված չէ *վարդ*-ը, որը
նաև ըստ ՆՀԲ-ի տվյալների առկա է միայն թարգմանական գրա-
կանության մեջ:

Արդյո՞ք 5-րդ դարից վկայված հատկանուններում՝ *Վարդ*
/անձնանուն/, *Վարդաշէն* /տեղանուն/... *վարդ* /ծաղիկ/ արմատն է,
թե՞ այլ. դարձյալ դժվար է փաստարկել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Գամկրելիձե, Իվանով, նշվ. աշխ., 616. 617:
2. Տե՛ս Դժ. Փրեզեր, Золотая ветвь, М., 1986, стр. 156, 158.
3. Ա. Սարգսյան, Ծառերի պաշտամունքի դրսևորումները հայոց հավատալիքային համակարգում /Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ / 2000թ., 76:
4. Ն.տ., էջ 74:
5. Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, 1987, էջ 440:
6. Ն.տ., էջ 439:
7. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., 427-428:
8. Г. Капанцян, Историко-лингвистические работы, II, 1975, 369.
9. Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա, 1940, 293-294:
10. Տե՛ս Մովսեսի Խորենացույ Մատենագրութիւնը, Վենետիկ, 1865, 615:
11. Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., 1987, 464:
12. Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ, 1951, 36-37:
13. Այս շարքի, ինչպես և շատ բուսամուկներ, որոնք գրաբարում ավանդված չեն, բայց առկա են բարբառներում, կարելի է համարել գրաբարյան փուլում գործածվող՝ նկատի առնելով որոշ հնչյունական առանձնահատկություններ: Օրինակ՝ *բռնչի-ի*՝ Ղարաբաղի բարբառի *սլռռռչնի* ձևը. հաստատում է բառի հին գործածությունը /նկատի ունենք ձայնեղների խլացումը, որը միջինհայերենյան շրջանից առաջ կատարված գործընթաց է/: Այլ կարգի օրինակներ ևս կան:
14. *Ընձիւղ-ի* բնիկ հայերեն լինելը տես Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., 124: ՆՀԲ-ում բառի միակ վկայությունը Նարեկացուց է, իսկ *ընձիւղել* բայական ձևը հաճախական է, գործածությունն էլ մաս վաղ գրաբարից:
15. *Խեղը-ի* հ.-ե. ծագումը փաստարկում է Է.Աղայանը /Աղայան, 1974, էջ 77/:
16. Գամկրելիձե, Իվանով, նշվ. աշխ., էջ 651:

17. Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե. 1972, էջ 304,311:
18. «Պատմաբանասիրական հանդեսում» տպագրված հոդվածներում Ս.Պետրոսյանը հ.-ե. ծագում է վերագրում մի շարք բառերի. *կռեկ* «վայրի խաղողի մի տեսակ» /ՊԲՀ, 1999, N2,3/, *աղուրի* «որթի տաշտախիլ անելու ճյուղ», *աղոշ/աղօշ* «խաղողի որթի նորածիլ ուղեշ», *սիսակ* «գինու խաղողի մի տեսակ, վարդագույն բարակ կեղևով» /ՊԲՀ, 2010,N3/:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

ՆՀԲ-ը *երաժիշտ* բառի երկու իմաստ է արձանագրում՝ «երգիչ ճարտար՝ արուեստական ձայնի կամ նուագարանաւ. գուսան» և «երաժշտութիւն, երաժշտական նուագ»:

Մեր տվյալներով V դ. ինքնուրույն գրականության մեջ *երաժիշտ* արմատով կա մեկ վկայություն միայն. «Զաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժշտական և զերգս հեթանոսական» /Եղիշ., 64/: Աստվածաշնչում վկայված են *երաժիշտ* և *երաժշտական* բառերը երկուական անգամ¹: Գրաբարում *երաժիշտ* արմատով ավանդված մյուս կազմությունները /*երաժշտակ*, *երաժշտաբար*, *երաժշտանամ*, *երաժշտալետ*, *քաջերաժշտական*/ հիմնականում առկայանում են հունարենից կատարված թարգմանություններում: Ամենայն հավանականությամբ, ժողովրդախոսակցական լեզվում *երաժիշտ* արմատով կազմությունները գործածական չեն եղել:

Երաժիշտ բառի ծագումը ստույգ չէ: Բառաձևը հուշում է, որ այն կարելի է համարել իրանական փոխառություն: Արմատը թերևս իրան. *raz* «զաղտնիք, խորհրդավորություն», *իշտ*-ը առկա է նաև *նաժիշտ* բառում, որը դարձյալ իրանական փոխառություն է: Բ-ով սկսվող բառերը, հատկապես իրանական փոխառությունները, բառասկզբում ստանում են *ե* նախահավելվածը /*երամ*, *երակ*, *երան*.../: Ենթադրելի է **երազիշտ-երաժիշտ* անցումը:

Երաժշտութիւն բառին հոմանիշ *նուագ*-ի իրանական ծագումը հավաստի է: Վերջինս ըստ ՆՀԲ-ի ունի «եղանակաւոր ձայն բարբառոյ և գործեաց. եղանակ. տաղ, գեղգեղ. դալլալիկ» իմաստները: ԱԲ-ը նշում է միայն «երգ, եղանակ»: Այդ իմաստներն են նշված և Արմատական բառարանում: Թեև ՆՀԲ-ը V դ. ինքնուրույն գործերից հղում է միայն Եղիշեի գիրքը /մնացածները թարգմանական գրականությունից են/, սակայն բառը առկա է այլ գործերում ևս. «Նուագս փանդռան և յերգս ցցոց և պարուց ասեն յիշատակաւ» /Խոր., 27/: «Անդ կատարէր նուագ սաղմոսարանին» /Ազաթ., 241/:

Գրաբարի հոմանիշների բառարանում *նուագի* հոմանիշներ են համարվում *եղանակ, գեղգեղ, գեղգեղանք, դալլալիկ, երգ* բառերը:

Անշուշտ, շարքի անդամները նույնանիշներ չեն, ունեն իմաստային նրբերանգներ, նաև տարբերվում են հաճախականության և գործածության ժամանակագրության առումներով:

Գեղգեղ-ը ՆՀԲ-ի տվյալներով որպես երաժշտությանն առնչվող բառ չի վկայվում, բայց կա *գեղգեղանք, գեղգեղումն* /ուշ շրջանից/, *գեղգեղել*: Բառարանները չեն վկայում նաև *դալլ և դալլալել* բառերը, բայց կա *դալլալիկ*: Վաղ գրաբարի ոչ թարգմանական գրականությունից ՆՀԲ-ը օրինակներ չունի:

Մեղեղի-ն արդի հայերենում նշանակում է «երաժշտական ախորժելի եղանակ, քաղցրալուր երգ՝ երաժշտություն»: Գրաբարում այն ավելի նեղ իմաստով է գործածվում. ըստ Արմ-ի «մի տեսակ եկեղեցական քաղցրաձայն երգ»:

Բառը փոխառյալ է հունարենից և վաղ գրաբարում հաճախական չէ: Բերենք մի վկայություն, «Եւ արար կցուրդս և մեղեղիս քաղցրեղանակս» /Օրբ., Պատմ., 139/:

Բազմիմաստ է *երգ* բառը. ըստ ՆՀԲ-ի «Նուագ ձայնի. բան երաժշտական. օրինաբանություն. գովեստ. շարական. տաղ»:

Գրաբարում հաճախական է բառի «երգ, տաղ» իմաստով գործածությունը: Ահա մի քանի օրինակ. «Որ զայս ի յերգ արկեալ հեզներն» /Ոսկ., Մոթ., II, 421/: «Եւ երգէին զերգս նորա... և ոչ որ կարէ գիտել զերգ նոցա» /Յայտ.Յովհ., ԺԴ. 3/: «Անտրտում ուրախութեամբ երգս ի բերան առեալ... ասէին ձայնիւ» /Եղիշ. 80/:

Երգել գրաբարում նշանակում է նաև *նվագել*. հմմտ. «Եւ արդ երգեսցուք նուագս այնպիսի հոգւոյն, որ անկեալ դին և յայլն ի գրոց և ի նմին իսկ ի Դաւթայ» /Ոսկ., Պօղ., II, 391-392/: «Եւ խնդրեսցեն տեառն մերում այր մի որ գիտիցէ երգել քնարաւ» /Ա.Թագ. ԺԶ, 16/: Ռուս. թարգմանության մեջ՝ «... поискать человека, искусного в игре на гуслиях»²:

Բնագրային որոշ օրինակներում *երգել* թե՞ *նվագել* իմաստը հստակ չէ. հմմտ. «Եւ ամենայն ժողովուրդն զուարճացեալ հարկանէին զփողսն եւ երգէին նուագարանօրն երգս և օրհնէին

գօրհնութիւն» /Բ.Մնաց., ԻԳ. 13/: Այդպէս է և հետևյալ օրինակը. «Տեսէք ինձ այր մի որ բարոք *երգիցէ* և ամէք զնա առ իս» /Ա.Թագ., ԺԶ. 17/: Ընդգծվածը համապատասխանում է հուն. *αἰσαλλο-ին*, որը ունի և՛ *երգել*, և՛ *նվագել* իմաստը: Ռուսերեն Աստվածաշնչում թարգմանված է “Найдите мне человека, хорошо играющего и представьте ко мне”: Կա և *նուագ երգել* բառակապակցությունը. «...որպէսզի մանկունք ըստ հասակին եւ կամ որով իսկ տղայք ըստ բարուց, որպէս կարծեն նուագ երգիցեն» /Բրսղ, Պահ., 205/:

Երգել-ի իմաստային անհստակության պատճառով է, որ Խորենացու *երգէր ձեռամբ*-ը տարբեր մեկնաբանություններ է ստացել: Ահա այդ հատվածը. «... և յուրախանալն զինով, տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոյժ գեղեցիկ էր և երգէր ձեռամբ, որում անուն էր Նազինիկ...» /Խոր., 195/: Ստ.Մալխասյանը մեզ հետաքրքրող հատվածը թարգմանել է *նվագում էր ձեռներով*:

Պրոֆ. Հ.Բարսեղյանի կարծիքով «Ստ.Մալխասյանի «երգէր ձեռամբի» «նվագում էր ձեռքերով» թարգմանությունը վաղուց հաստատված և միանգամայն ընդունելի թարգմանություն է»³:

Հիշենք, որ *երգէր ձեռք* բառակապակցությունը կա և Աստվածաշնչում «... Դաւիթ երգէր ձեռք իւրովը» /Ա. Թագ., ԺԹ. 10/: Ռուս. թարգմանության մեջ՝ «И Давид играл рукою»:

Հաշվի առնելով *երգել* բառի բազմիմաստությունը՝ դժվարանում ենք կողմնորոշվել *երգել ձեռամբ*-ի տարաբնույթ մեկնաբանությունների գնահատման հարցում, բայց քանի որ հեթանոսական շրջանի արվեստին՝ վարձակներին վերաբերող հասկացություն է, ապա հակված ենք կարծելու, որ *երգել ձեռամբ*-ը «ձեռքի շարժումներով ուղեկցող երգ, նվագ է»⁴:

Սաղմոս-ը Աստվածաշնչային հասկացություն է՝ եբրայեցիների քնարական նվագը և հատկապէս Դավիթ Մարգարեի երգերը և դրանց ամբողջությունը, որը ձեռք է բերել նաև «հոգևոր երգ», «երգ» իմաստները. հմնտ. «...Եւ մեծաւ պաշտմամբ, սաղմոսիւք և երգովք հոգեւորօք ... յուղարկէին» /Բուզ., 73/: «Ձոր առեալ Վահանայ և Հմայեկի ... սաղմոսիւք և արհնութեամբ... յԱւշականն ելանէին» /Կոր., 94/:

Սաղմոսերգությանն առնչվում են *կցուրդ* և *մեսեղի* հասկացությունները: *Կցուրդ*-ը ՆՀԲ-ը մեկնում է «կցուած երգոց, կամ սաղմոսաց, տուն մի սսւղմոսի կցեալ խորհուրդ ատւրն...»: *Մեսեղին* ըստ Արմ-ի երեկոյան սաղմոսերգության կցուրդն է: Բառը հունարենից կատարված փոխառություն է:

«Երգել, նվագել» իմաստն ունի և գրաբարում ոչ հաճախական *ողել* բառը. «Երգս առեալ գոչեն ... պարառեալ՝ երգ մոր ոգեն ձայնի» /ՆՀԲ/: Իմաստային մրբերանգները հաշվի առնելով՝ կարելի է հոմանշային շարքը լրացնել այլ բառերով: Գրաբարի հոմանիշների բառարանում *նուագել*-ի հոմանիշ են համարվում «1. եղանակել, 2. հարկանել, բախել, 3. վերածայնել, 4. յեղյեղել, 5. սաղմոսել»⁵:

Երգիչ բառը գրաբարում նվագ հաճախական է: V դ. ոչ թարգմանական գրականության մեջ այն կիրառել է միայն Ագաթանգեղոսը /2 անգամ/. «Զուխտ փափկութեան տացես ըմպել արժանեացն ըստ բանի հոգևորական երգչին» /280/: «Աշակերտուելոց իցեն յազգս ազգաց ըստ բանի հոգևորական երգչին» /471/:

Նշված օրինակներում *երգիչ* բառի ընդհանրական «երգասաց, երգ կատարող» իմաստը հստակ չէ: Երգիչը այս օրինակում վերաբերում է Աստվածաշնչի Դավթին՝ հոգևոր երգչին:

Երգիչ բառով երեք վկայություն էլ կա Աստվածաշնչում, որից մեկը առկա է ՆՀԲ-ում: Ահա մեկ օրինակ ևս. «Եւ ետես՝ եւ ահա կայր ի վերայ սեանն ըստ օրինի իւրում, եւ երգիչք եւ փողարք շուրջ զարքայի» /Դ. Թագ., ԺԱ. 14/:

Այստեղ էլ դարձյալ մեզ հետաքրքրող բառի իմաստը հստակ չէ: Նկատված է, որ եբրայերենում *երգիչ* բառի փոխարեն *իշխան* է: Նույնը և ռուսերեն թարգմանության մեջ. “И видит, и вот, царь стоит на возвышении, по обычаю, и князья и трубы подле царя”:

V դ. գրաբարում *գուսան* «երաժիշտ, երգիչ» դարձյալ նվագ հաճախական է: Վկայել է Բուզանդը /չորս անգամ/, իսկ Խորենացին էլ ունի *գուսանական* /մեկ անգամ/. «Բայց թեպետ և ոչ ի բուն մատեանսն, սակայն որպես Մար Աբաս Կատինայ պատմէ՝ ի փոքունց ոմանց և յաննշանից արանց, ի գուսանականէն այս գտա-

նի ժողովեալ ի դիւանի արքունեաց» /47-48/: Նրկու օրինակ էլ բերենք Բուզանդից. «Աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն» /196/: «Ընպէին անդ զինի բոգօք և վարձակօք և գուսանօք» /41/:

Այս վկայություններից իսկ ենթադրելի է, որ գուսանությունը, գուսանական արվեստը հիմնականում վերաբերում է նախաքրիստոնեական մշակույթին, և V դ. հեղինակները, լինելով քրիստոնեության ջատագովներ, արհամարհանքով ու քննադատաբար էին վերաբերվում դրան:

Հ.Մանդակունին, որը հայտնի է իր «թատերամերժ» հայացքներով, «Վասն անարեւն թատերաց դիւականաց» ճառում գուսանությունը համարում է մերժելի, պիղծ սովորություն. «Ձի չար է սովորութիւնն, չար են և յորտրիչք նորա՝ զինի եւ գուսան եւ սատանայ» կամ «Ձի ուր կատակք եւ գուսանք են եւ խաղ եւ ծաղր լկտիք, անդ եւ դէք ընդ նոսա ի պարու անցանեն եւ սերմանեն բազում աղտեղութիւնս» /ՄՀԱ, 1228-1229/:

Ահա մի հատված էլ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայից». «Եւ զայն ոչ առնուն ի միտ, թէ գուսանութիւնն իւրովք պատիիր արուեստիք զապականութեան նշանակ գործէ ի տեսողս իւր, եւ իրք առականաց են անդ, որոց առաջի ամենայն մարդկան դնին ծանակութիւնքն» /Բրսղ, 100-101/:

Հետիւնգերոդդարյա մատենագրության մեջ էլ գուսանական արվեստը չի խրախուսվում. դա ակնհայտ է, օրինակ, Սիմեոն Ադձնեցու մի գործում. «Քանզի նուազ գուսանացն մոռացումն առնէ ահեղ աւուրն դատաստանին եւ լինին պատճառք կորստեան ամբարիշտ մարդկան»⁶:

Աստվածաշնչում *գուսան*-ը, բնականաբար, նույնպէս հաճախական չէ: Վկայված են հետևյալ օրինակները. «Միթէ զիտիցե՞մ ինչ ի մէջ բարոյ եւ չարի ... կամ թէ լսիցե՞մ տակաւին զծայն գուսանաց եւ վարձակաց» /Բ.Թագ., ԺԹ. 35/: «Արարի ինձ գուսանս եւ երգեցիկս՝ արս եւ կանայս...» /Ժող., Բ, 8/:

Ռուսերեն Ս. Գրքի նշված օրինակներում *գուսան* բառին համապատասխանում է *песен*-ը: Ի դեպ, ռուսերենը *песен* է թարգմանում նաև այն դեպքերում, երբ հայերենի համապատաս-

խանակը ոչ թե *գուսանն* է, այլ սաղմոսանուագը. հմմտ. «Еман певец, сын Иоля...», «Էման սաղմոսանուագ» /Ա. Մնաց., 2, 33/: «И певцы сыновья Асафевы». «Եւ սաղմոսանուագքն որդիք Ասափայ» /Բ. Մնաց., ԼԵ, 15/:

Ըստ վկայված օրինակների՝ գուսանները մաս կանայք են. հմմտ. «Երաժիշտ էր, ուսուցանէր զգուսանս կանայս և վարձ առնոյր» /ՆՀԲ/: ՆՀԲ-ի մեկ այլ վկայությամբ գուսանի՝ կին լինելը պարզ է դառնում միայն հունարեն համապատասխանակից. «Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն ի մէջ գուսանաց և զովչաց» /հուն. երիտասարդութեաց/: *Գուսան*-ի վերոհիշյալ կիրառությունը հաճախական չէ, այդ իմաստով երբեմն գործածվում է *վարձակ*-ը՝ ի հակադրություն *գուսան*-ի: «...կամ թէ լսիցեն տակաւին զձայն գուսանաց եւ վարձակաց» /Բ. Թագ., ԺԹ. 35/: Ռուսերեն՝ «И быду ли в состоянии слышать голос певцов и певец?»:

Երգիչների սեռային տարբերակումը արտահայտվում է մաս այր/կին բառերի միջոցով. «Եւ ամենայն իշխանքն արք եւ կանայք ասացին զողբսն ի վերայ Յովսեայ...» /Բ. Մնաց., ԼԵ, 25/ /իշխանքն՝ երր. բնագրում երգեցողք/: «Որք էին երգեցիկք սաղմոսասացք արք եւ կանայք՝ երկերիւր քառասուն և հինգ» /ՆԷՆՄ, Է, 67/:

Խաղ-ի «երգ» իմաստը գրաբարի բառարանները չեն արձանագրում: Բառը, ինչպես մաս *խաղ ասել* «երգել», *խաղ կապել* «երգ հորինել» կապակցությունները գործածական են բարբառներում: Եթե հավաստի է *խաղ*-ի հ.-ե. ծագումը /Ջահուկյան, 1987, էջ 134, 176/, ապա կարելի է ենթադրել *խաղ* «երգ»-ի գոյությունը գրաբարում՝ հաշվի առնելով մաս բառի «ծաղր, ծանակ» իմաստը՝ մաս ժողովրդախոսակցական *խաղ ու պար* կապակցությունը:

Տաղ-ի համար գրաբարի բառարանները նշում են և «երգ» իմաստը: Ըստ Արմ-ի՝ «երգ, քերթում, ոտանաւոր». Գ. Ջահուկյանը *երգ*-ի հոմանիշային շարքում նշում է միայն *տաղ* բառը⁷: Աճառյանը նկատել է, որ դասական գրաբարում *տաղ*-ը չի գործածվել. հավելենք, որ հետդասական շրջանի ինքնուրույն գրականության մեջ էլ այն հաճախական չէ: ՆՀԲ-ի վկայած օրինակներից

ել հստակ չէ տաղ-ի «երգ» իմաստը: Տաղ-ի գործառնական շրջանակները ընդլայնվել են միջինհայերենյան փուլից:

Ուրեմն՝ տաղ-երգ հոմանիշային շարքը կարելի է ընդունել խիստ վերապահությամբ:

Երգ, երգել-ի հետ հոմանշային եզրեր ունեն *գեղգեղանք, գեղգեղել, գեղօն* բառերը:

Իմաստային ենթախմբում ամենագործածականը *երգ* բառն է, որը բառակազմական գործուն բաղադրիչ է: *Երգ* բաղադրիչով գրաբարյան կազմություններն են. երգաբան, երգաբանել, երգաբանություն, երգագիր, երգագրել, երգագրություն, երգակ, երգիչ, երգակից, երգակցել, երգակցություն, երգահան, երգաձայնություն, երգալարդար, երգասողություն, երգատրություն, երգարան, երգել, երգեցիկ, երգեցող, երգեցողական, երգեցողություն, երգիչ, երգող, երգողաբարբառ, երգողական, երգողասեր, երգողություն, եղերերգություն, զուգերգող, կաքաւերգիչ, նախերգաբար, նախերգակ, նախերգել, նախերգություն, նուագերգել, նուագերգություն, նուագերգիչ, ողբերգագին, ողբերգակ, ողբերգական, ողբերգակեն, ողբերգել, ողբերգություն, ողբերգակություն, պարերգակ, պարերգող, պարերգություն, սաղմոսերգ, սաղմոսերգել, սաղմոսերգիչ, սաղմոսերգող, սաղմոսերգակ, սաղմոսերգություն, տաղերգություն, քնարերգակ, քնարերգություն, քնարերգող, օրհներգաբար, օրհներգական, օրհներգելի, օրհներգու, օրհներգություն:

Քնարերգող բառը ՆՀԲ-ը չունի: Այն առկա է Ոսկեբերանի գործերից մեկում: «... ոչ զքնարեն և ոչ զայլ իմերէ ... այլ զնաւարեն և զքնարերգողեն...» /Ոսկ., Պօղ., II, 143-144/:

Կաքաւերգիչ և նուագերգիչ բառերը նույնպես չունի ՆՀԲ-ը: Դրանք մեզ հանդիպել են Սիմեոն Աղծնեցու վերոհիշյալ գործում. «Եւ զնուարգերգիչ քնարից սաղմոսաց», «այր ծանեալ թշնամին, եթէ մեծ զեն են կաքաւերգիչքն իւրոյ չարութեան...»⁸:

Մի շարք կազմությունների բառակազմական հիմքերը բառաբաններում վկայված չեն՝ եղերերգ, ողբերգ, զուգերգ, պարերգ, նախերգ, տաղերգ, օրհներգ չկան, կան՝ եղերերգություն, զուգերգող, պարերգակ, պարերգություն, օրհներգաբար, օրհներգական... Մի շարք բառերում էլ *երգ* արմատի հիմնական իմաստը մթագնված է:

Օրինակ՝ ըստ ԱԲ-ի *նախերգաքար* նշանակում է «վաղուց», *նախերգակ*՝ «նախընթաց բան», *նախերգան*՝ «սկիզբ»:

Նուազ բաղադրիչով են հետևյալ բառերը. նուագածու, նուագակից, նուագայարդար, նուագարան, նուագարանական, նուագատուր, նուագել, նուագերգ, նուագերգել, նուագերգիչ, նուագերգութիւն, նուագութիւն, աննուագ, արտանուագ, յարմարանուագ, քաղցրանուագ: ՆՀԲ-ը *յարմարանուագ* բառը չունի: ԱԲ-ը մեկնում է «բազմութեամբ երգ»: Մեզ հանդիպած օրինակում բառը ունի քերևս «լավ երգ, պատշաճ երգ, երաժշտություն» իմաստը: «Ուստի և զամենայն յարմարանուագն հնչեցեր, որ ոչ զմարդիկ միայն այլ զվերին զօրութիւնսն հրճուցեցոյց» /Ոսկ., Ճառ., 447/: *Արտանուագ*-ը հունաբան կազմություն է՝ էքսմելես-ի պատճենումը, որը կարելի է թարգմանել «անմեղեղի, տհաճ, անախորժ երաժշտություն»: Ակնհայտ է, որ *երաժշտություն* իմաստային խմբի որոշ միավորներ հեթանոսական մշակութիւն, գեղջուկ, ժողովրդական երգարվեստին բնորոշ բառեր են: Դրանց իսկությունը ակներև է դառնում մաս մատենագրության տվյալ հատվածի համատեքստում: Գեղջուկ երգերը ակունքվել են հեթանոսական շրջանից, գոյատևել մաս քրիստոնեական շրջանում, և ինչպես նշում է Ն. Թախմիզյանը՝ «Հայաստանում վաղ ավատատիրական հարաբերությունների կազմավորման շրջանում ձևավորվում է հայկական քրիստոնեական եկեղեցին, որն ստանձնելով ավատատիրության պաշտոնական գաղափարախոսի դերը, իր հսկողության տակ է առնում հայոց մշակութային, այդ թվում և երաժշտական կյանքը... անկախ դրանից Հայաստանում վաղ ավատատիրական շրջանում շարունակում են ծաղկել աշխարհիկ երգ-երաժշտության ճյուղերը»⁹:

Արվեստագետը նշում է *շեր* և *շոխք* կոչվող երգիծական երգերը: Առաջինը վկայված է Հ.Մամիկոնյանի գործում, երբ թշնամուն հաղթելուց հետո Վահան Կամսարականին և Վարազ Պալունուն ընդառաջ են գալիս «արբ գեղջն երգօր և պարուք», որոնք «*շեր հանեալ* ասէին «կերան գազանք զմարմինս դիակացն և գիրացան, կուզն կերեալ ուռեալ իբրև զարջ» /Ն.տ./:

Սոխյ /նաև սոխնչք/ վկայել է Ստ.Սյունեցին. «Ձկատակեր-
գութիւն աշխարհօրէն... զեպերականն և զհեզնականն առնել ճառս
և սոխյս, որպէս ռամիկքն սովորաբար ստեղծանեն առ այնոսիկ»¹⁰:

Պար(ել) հասկացությունը արտահայտվում է հիմնականում
պար, կաքաւումն, կայթ, խաղ, ցուց բառերով: Պարը, պարելը քրիս-
տոնեությունը չէր խրախուսում: Գրաբար մատենագրության մեջ
այդ հաստատող բազմաթիվ վկայություններ կան: Ահա մի հատ-
ված «Կանոնագիրք հայոց»-ից. «Չէ մարթ քրիստոնէից ի հար-
սանիս երթալ եւ կաքաւել կամ պարու գալ, այլ պարկէշտութեամբ
ընթրիս ուտել եւ ճաշակել որպէս եւ վայել է քրիստոնէից» /1964,
227/:

Բնականաբար, *պարել* հասկացությունն արտահայտող բա-
ռերը մեր մատենագիտության մեջ քիչ են: Նվազ հաճախական են
հատկապէս *կայթել* և *ցուց* բառերը:

Կայթել V դարի հեղինակներից վկայել է թերևս միայն Ագա-
թանգեղոսը. «Երգս առեալ բարբառեցան կայթիւք վագելով, ցուց
բարձեալ մարդկանն» /Ագաթ., 99/:

Յուց-ը Արմ-ը մեկնում է «ուրախութեան խաղ, երգ, պար,
կայթիւն»:

Բացի վերոհիշյալ օրինակից *ցուց*-ը վկայել է և Խորենացին.
«Հինքն Արամագնեայց ի նուագս փանդրան և յերգս ցցոց և
պարուց զայսոսիկ ասեն յիշատակաւ» /Խոր., 27/:

ՆՀԲ-ը *կայթեմ* բառով ոչ թարգմանական գործերից վկա-
յություն չի բերում, իսկ *ցուց*-ով Խորենացու և Ագաթանգեղոսի
վկայություններն են: Յուց-ի՝ ՆՀԲ-ի բացատրության մեջ «պար»
իմաստը ցայտուն չէ: «Որպէս թէ ցունծք, այսինքն ցնծութիւն
/անհաջող ստուգաբանություն – Լ.Հ./ կամ ցոյցք ուրախութեան,
հանդէս, ծայն նուագաց կամ նուագ ծայնից. շաչիւն. շառաչիւն»:
«Պար» իմաստը չի նշում և ԱԲ-ը: *Յուց* բառի «պար» իմաստը
ակնհայտ է հատկապէս Խորենացու վերոնշյալ վկայության մեջ:

Յուց/ք/ բառը Արմ-ում ստուգաբանված չէ: Ուշագրաւ մեկ-
նություն ունի Ստ.Մալխասյանը. «Յուց կամ ցուցք. պարի մի տե-
սակի անունն է, բայց որ տեսակի՝ որոշ չէ: Տարբեր կերպով են
հասկանում: Քանի որ բառը գործ է ածվում պար բառի մոտ, որ

տառագի նշանակում է կլոր պար, բոլոր պար, երբ պարողներն իրար ձեռքից բռնած մի շրջան են ձևացնում՝ կարծում ենք, թե ցուցքը հակադրությամբ պետք է նշանակե կենտ պար, ինչպես է լեզորին /լեզզինկան/: Ազաթանգեղոսի մեջ այս բառի գործածությունը /«կայթիւք վազելով, ցուց բարձեալ զքաղաքամէջսն լցին»/ հարմար է գալիս մեր ենթադրած նշանակության»¹¹: Խաղալ «պարել» իմաստով հավաստի վկայություններ մեր ձեռքի տակ չկան: Այն ենթադրելի է խաղալիկ-ի «պարող, պարուհի» իմաստից. «Դարձեալ առցես զթմբուկ քո եւ ելցես ընդ ժողովս խաղալկաց» /Երեմ., ԼԱ, 4/: Ռուս. քարգմանության մեջ՝ «Снова будешь украшаться тимпанами твоими и выходить в хороводе веселящихся»:

Գլաբարի բառարանները չունեն *ոտնածել* բառը, որը թերևս նշանակում է «պարել»: Ահա մեզ հանդիպած միակ օրինակը. «Եւ գոտնածել կաքաւաց մատամբքն զնուագսն յարինել» /Եմեռ., Ճառ., ԺԳ, 355-356/:

Պարել/և կաքաւել առավել հաճախական են. դրանք վկայված են Վդ. և ինքնուրույն, և՛ թարգմանական գրականության մեջ, թեև, ինչպես նշել ենք, *պարել*-ը քրիստոնեական բարոյականությունը չի խրախուսում:

Հ.Ոսկերեբանը, մեկնելով Աստվածաշնչի *ոտիւքն կաքաւէին* /Ես., Գ. 10/ հատվածը, գրում է. «...զայս ոչ ինչ սակաւ լկտութեան օրինակ է, զի ամենեւին և աչօք և հանդերձիւք և ոտիւք և գնացիւք մերկացեալ զցածութիւն՝ ի լկտութիւն կործանէին... իբրեւ քարոզք իմն են. անդամքն հոսպիտ խաղալիկք. զի գորօրինակ նկարչաց խառնեալ զերանգս՝ զի՞նչ կամիցին պատկեր նկարել նկարիցեն, նոյնպէս և անդամոյ մարմնոյ խաղալիկք՝ զբարս մտացն հաւաստեաւ նկարեն և յայտ յանդիման ամենեցուն ցուցանեն» /Ոսկ., Ես., 36/:

Բուզանդը, խոսելով Ներսես Մեծի մահից հետո գլուխ բարձրացնող հեթանոսական ծեսերի և սովորույթների մասին, գրում է. «Ապա յետ մահուան Ներսիսի յորժամ զմեռեալսն լային, փողովք և փանդովք և վնօք զկոծսն պարուցն կաքաւելով..., արք և կանայք պղծութեամբ ճիւաղութեամբ ... զմեռելսն յուղարկէին» /193/:

Ինչպես նշում է ակադ. Գ.Ջահուկյանը, հայերենում «չի պահպանվել պարելու գործողության բնիկ հնդեվրոպական մասնագիտացված անվանում. խաղ/-ամ/ բառը, եթե այն իրոք բնիկ հնդեվրոպական է, բազմիմաստ է» /Ջահուկյան, 1987, 266/:

Եթե որոշ օրինակներում դժվար է զանազանել *պարել* և *կաքավել*-ի նրբիմաստային յուրահատկությունները, ապա օրինակներ էլ կան, որոնք հուշում են, որ *պարել* բառով արտահայտված հասկացությունը կապ ունի *պար*-ի նախնական նշանակության հետ՝ «շուրջ, շրջան»: Կարելի է ենթադրել, որ *պարել* սկզբնապես նշանակել է «շուրջպարը նաև խմբապարը», իսկ *կաքավել*-ը՝ «մենապարը, ոչ շուրջպարը»: Ի դեպ, *պարել*-ի այդ նրբիմաստը երևում է և մատենագրության վկայած տվյալներից. հմմտ. «Յորս և դու հայեցեալ տեսեր շուրջ զաստուածային սեղանովն պարելով զտղայսն» /Փարպ., 35/: «... և սոքա որպէս օրիորդք պարեն շուրջանակի հանդերձ չորիւք եղանակօք, բազում բարեկարգութեամբ մնան միմեանց և յանկարծակի երագահաս ի հակառակն ոչ փոխարկին, այլ զուգակշիռն ի մէջ անցուցանել ոչ խափանին» /Ոսկ., Ճառք Անդր., Թ, 776/:

Աստվածաշնչում գործածված են *պարել*-ը և *կաքաւել*-ը:

Ուշադրության է արժանի մի հանգամանք ևս. Библия-ի плясать-ի /Բ. Թագ., 2, 16, 21, Ժող. Գ. 4, Մատթ. ԺԱ. 17, ԺԴ. 6, Մարկ. 2. 22/ հայերեն համապատասխանակը *կաքաւել* է. հմմտ. «Ետես գԴավիթ արքայ զի կաքաւեր և նուագեր զնուագարանսն» /Բ. Թագ., 2, 16/: «Ժամանակ կաքաւելոյ» /Ժող., Գ. 4/: «Եւ ի մտանել դստերն Հերովդիայ և ի կաքաւել» /Մարկ., 2, 22/: Ռուս.՝ «Когда выйдут девицы Силомские плясать в хороводах» /Դատ., ԻԱ, 21/: Հատվածի հայերեն համապատասխանակն է. «Եւ յորժամ տեսանիցէր թէ ելանեն դստերք բնակչացն Սելովայ պար առեալ պարուր»:

Հիշյալ օրինակներից ակնհայտ է դառնում ոչ միայն *պարել*-ի և *կաքաւել*-ի հաճախականության պատկերը, այլև դարձյալ հաստատվում է, որ *պար*, *պարել*-ը ենթադրում է շուրջպարը:

Հայ թարգմանիչը պատահականորեն չէ, որ Դատ. ԻԱ. 21-ում գրում է *սյար առեալ պարուք*, իսկ մյուս հատվածներում՝ *կաքավել*: Նա բժախնողորեն հետևել է հունարեն բնագրին:

Ահա մեկ վկայություն ևս Աստվածաշնչից՝ հայերեն և ռուսերեն. «Լքան յուրախութենէ սիրտք մեր եւ դարձան ի սուգ օրհնութիւնք պարուց մերոց» /Ողբ. Երեմ., Ե, 15/: «Прекратилась радость сердца нашего: хоровады наши обратились в сетование»:

«Պարել» իմաստով *կաքաւ* արմատից գրաբարում առկա են հետևյալ կազմությունները. *կաքաւած* «կաքավելով, պարի նման», *կաքաւարան* «պարելու տեղ», *կաքաւել*, *կաքաւեցուցանել*, *կաքաւիչ* «պարող», *կաքաւութիւն* ...

Պար արմատով՝ *սյար առնուլ* «պարել, շուրջպար բռնել», *գուգապարել* «պարակից լինել» /*գուգապար* բառարանները չեն վկայում/, *կոծապար* «կոծողների, լացկանների պար»:

Երաժշտական գործիքներ

Գրաբար մատենագրությունը ավանդել է երկու տասնյակից ավելի լարային, փողային և հարվածային երաժշտական գործիքների անվանումներ: Չարմանալի է, որ այդ անվանումներում բնիկ հայերեն բառեր չկան, եթե չհաշվենք *երգարան* բառի *երգ* արմատը: Ընդհանրական են *երգարան* և *նուագարան* բառերը. «Եւ քանզի նոքա զերգարանսն ունէին, որ են նուագարանք, քանզի ասէ թէ զուռեաց նոցա կախեցաք զերգարանս...» /Պօղ., II, 22/:

Ընդհանրական անվանումներ են *գործիք/ երաժշտական* և *ձայնաւոր գործիք*-ը: «Իբրև գործուով երաժշտականաւ կարասցէ որ յարմարել» /ՆՀԲ/: *Չայնավոր գործիք/* վկայված է Եղիշեի «Վասն հոգւոյ մարդկան թէ ուստի գան» գործում. «Ապա թե ոչ իցէ քնարն, չերելի քնարահարն. սոյնպէս և ամենայն գործիք ձայնաւոր երգոցն ի ձեռն արուեստաւորին երելին» /ՄՀԱ, 1064/: Կա և *ձայնատու արուեստ*, որը ՆՀԲ-ը չի վկայում. «...որ յարիւնեալ էր փողս եւ քնարս եւ սրինգ, որ ծնծղայք կոչի, փոխանակ որք ի տաճարին

Տեառն սաղմոսս, զոր նա յաւելուածով արար յամենայն ազգ ձայնատու արուեստից» /Վ.Արև., Դան., 57/:

Իրանական լեզուներից են հետևյալ բառերը. *բայրբուտ*, *թմբուկ*, *տալիդ*, *վին*, *նուագ/արան*/:

Բարբուտ-ը վկայված է ուշ շրջանից՝ եգպկի օրինակով /Ռոհայեցի/, որը նշում է և ՆՀԲ-ը. «Նստան ի զինարբուտ, սիրեցին զբարբուտ և զերգս գուսանաց»: ՆՀԲ-ը բառը մեկնում է «նուագարան. ազգ քնարի»:

Հունարենից են՝ *բամբիռն*, *երգիռն*, *սաղմոս/արան*/, *սրինգ*։ ՆՀԲ-ը *բամբիռն* և *փանդիռն* նշում է որպես տարբեր բառեր։ Արմ-ը ունի միայն *փանդիռն* վերագրելով փոքրասիական ծագում։ *Փանդեռն* բառով կազմություններից են՝ *փանդեռնահար/փանդռնահար*, *փանդռնահարություն*, *փանդռերգություն*, *փանդռերգակ*։ *Բամբիռն/բանդիռն* բառերով ՆՀԲ-ը բաղադրություններ չի նշում։

Երգիռն-ը Արմ-ը բացատրում է «մի տեսակ նուագարան»։ Այսինքն՝ այդ գործիքի բնույթը հստակ չէ։ ՆՀԲ-ն էլ մեկնում է. «...բառ յն. *օրգանօն*. այսինքն՝ գործի նուագաց. նուագարան, որ առ նախնիս էր որպես *մըսիսալ*, այսինքն սրինգ բերանով փչելի բազմաթիւ եղեգամբք աշտիճանաբար. ևս և բազմափող ջրահնչակ. և առ յետինս շինեցաւ մեքենայ բազմափող, որ տայ զձայն ահեղ հողմաբեր օդով բքոց՝ հանդերձ բախմամբ մատանց»։ 5-րդ դարի մի վկայությամբ հաստատվում է, որ *երգիռն*-ը փողային գործիք էր. «Որպէս և յերգիռնն արուեստապետն ընդ մի բերան փչէ և բազմաթիւն փողոցն հասարակ գոչեն. ոմն սոսկ, ոմն թաւ և ոմն եւս թանձրագոյն...» /ՄՀԱ, 1099/:

Ասորերենից են՝ *ծնծղայ*, *շեփորայ*, *քնար /ջնար*/: Անառյանը չի ընդունում, որ *քնար* և *ջնար* նույն բառերն են /տես Արմ., *Ջնար* բառահոդվածը/:

Մի շարք բառերի ծագումը հստակ չէ. *գաւիկ/գաւին*, *կտակարան*, *ջութակ*, *սրուիլ*, *փող*։ *Գաւիկ/գաւին*-ը Արմ-ը համարում է սխալագրություն և ուղղում՝ *վին* /տես Արմ., *Գաւիկ* բառահոդվածը/:

Կտակարան գործիքի անվանում գրաբարի բառարանները չեն վկայում։ Աստվածաշնչում կա մի այսպիսի նախադասություն.

«Ի մէջ ուռեաց նոցա կախեցաք զկտակարանս մեր» /Սաղմ., ԾԼԶ, 2/: Եբրայերենի համապատասխանակը՝ *զըմարս, հուն.*՝ օրգանա, ռուսերեն *բարգմանությունը*՝ «на вербах, посреди его повесили мы наши арфы»:

Սրուիլ-ը նույնպես գրաբարի բառարաններում չկա: Այն մեզ հանդիպել է Ս.Եփրեմի կցուրդներում. «Սրուիլս հարկանեն երիտասարդք և ջնարաւորք երգեն ջնարիւք» /Եփր., Կց., 6/: Թերևս բառի զուգահեռներ են ռուս. свирель, բուլղ. свирол-ը, բայց գրաբարյան վկայության բուն աղբյուրի հարցը պարզ չէ: *Ջութակ*-ի միակ վկայությունը ՆՀԲ-ում Նաբեկացուց է:

Մատենագրության մեջ ավանդված են նաև մի քանի երաժշտական գործիքների մասեր՝ *լար, աղի* «լար», *կնտնտոց, հարիչ, եղջիրահար...*

Կամ վկայություններ գործիքների կազմության, գործառության ին և հնչերանգային առանձնահատկությունների մասին. օրինակ՝ փողը որպես բանակի /ռազմական նվագարան/, նրա պղնձյա և եղջերյա տեսակները, աւագափող, գալարափող անվանումները¹²: «Ջոր մարգարեն աւագափող գնա անուանէ» /ՆՀԲ/: «Ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդսն ստիպէր» /Եղիշ., 118/: «Եւթնաղի քնարն գրեթէ քան զամենայն գործիս լաւագոյն է» /Փիլ., ՆՀԲ/: «Որպէս զչորեքաղեան երգարանս տես դու զմեզ» /ՆՀԲ/: /*Երգարան* այստեղ երաժշտական գործիքի անվանում է/: «Տասնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացէք նմա» /Սաղ., ԼԲ, 2/:

Երաժշտագետ Կարինե Խուդաբաշյանը, անդրադառնալով փոյուզիական-հունական *ավլոս* երաժշտական գործիքին, գրում է. «Հին ժամանակներում հայերն այդ նվագարանն անվանում էին «օղ»: Կամ զուցե՝ «փող»: Հավանաբար, Փափսւռոս Բուզանդի մոտ հիշատակված փողերը հենց այն նվագարաններն են, որոնց այժմ զուռնա կամ դուդուկ են անվանում»¹³:

Երաժիշտ «որևէ գործիքի վրա նվագող» հասկացությունը գրաբարում հաճախ արտահայտվում է *երաժշտական գործիքի անվանում + հար* բաղադրիչով. «Եւ առհասարակ թմբկահարք և սրնգահարք, քնարահարք և փողահարք իւրաքանչիւր արուեստօր պէսպէս ձայնիւք բարբառեցան» /Բուզ., 196/:

Նուագածու-ն երաժիշտն է, նվագողը, իսկ *նուագայարդարը*՝ նաև *երգայարդարը*՝ հորինողը՝ երգահանը. «Տուք ձայն բարբառող նուագածուաց ի մեջ ցնծացելոց» /Դատ., Ե, 11/: «Սիմոնիդէս նուագայարդար ճանաչէր և Քսէնոփանէս... երգահան... /Եւս., Քր., II, 200/:

Բամբռասաց-ը բամբիռ նվագողն է կամ նվագելով երգողը:

Աստվածաշնչում՝ ավելի կոնկրետ Սաղմոսներում, վկայված երաժշտական գործիքների անվանումների թարգմանության վերաբերյալ նուրբ և ուշագրավ դիտարկումներ ունի Լ.Տեր-Պետրոսյանը: «Սաղմոսների հայերեն թարգմանության մեջ նկատվում է մի չափազանց հետաքրքիր երևույթ: Այնտեղ, որտեղ հունարենում և մյուս բնագրերում հիշատակվում են երաժշտական գործիքներ, հայերենը դրանց անվանումները փոխարինում է վերացական «օրհնաբանական» բառերով»:

Նա բերում է բազմաթիվ զուգահեռներ. ահա մի քանի նմուշ. /տպագրական դժվարություններից խուսափելու համար հունարեն համապատասխանակները չենք նշում/:

	Հայերեն թարգմանություն	Յոթանասնից և մյուս բնագրեր
ՃԾ.3	օրհնեցէք զնա <i>ի ձայն օրհնութեան</i>	ի ձայն փողոյ
ՃԾ.4	օրհնեցէք զնա <i>ցնծութեամբ</i> գովեցէք զնա <i>ուրախութեամբ</i>	բմբկաւ և պարուր աղետօք և տաւղաւ
ՃԾ.5	օրհնեցէք զնա ի բանս քաղցունս	ի ծնծղայս քաղցունս

Սաղմոսների թարգմանության այս յուրահատկությունը ըստ Լ.Տեր-Պետրոսյանի վկայում է, «որ հայ եկեղեցում երաժշտական գործիքների գործածությունը մերժված է եղել»:

Նկատելով, որ, այնուամենայնիվ, Սաղմոսներում երաժշտական գործիքներից կան *սաղմոսարան*, *փող* անվանումները, Լ.Տեր-Պետրոսյանը գրում է. «Թե ինչու է հանդուրժվել *տասնաղիս սաղ-*

մոսարան անվանումը, պարզ է. ըստ երևույթին Հայաստանում աշոպիսի գործիք չի եղել, և *սաղմոսարան* բառն էլ, կապված լինելով *սաղմոս*-ի հետ, հավատացյալների մոտ որևէ հեթանոսական հիշողություն չի արթնացրել: Իսկ *փողը*, ինչպես հայտնի է, հնում ոչ այնքան նվագածության գործիք էր, որքան հանդիսությունների, տոնախմբությունների ազդանշան»¹⁵:

Նկատված է նաև, որ Աստվածաշնչի մյուս գրքերում երաժշտական գործիքները հայերեն բարգմանությամբ վերարտադրվել են իրենց համարժեքներով: Սաղմոսներում այդ անվանումների տարափոխվելը Լ.Տեր-Պետրոսյանը բացատրում է՝ նշելով, որ «սաղմոսներն էին կազմում պաշտոնեղբայրության հիմնական բովանդակությունը»¹⁶:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց, Երուսաղեմ, 1895:
2. Այս և հետագա հղումները տե՛ս Библия. Книги священного писания Ветхого и Нового завета, М., 1994:
3. Տե՛ս Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, գեկուցումների դրույթներ, Ե., 1987, 32:
4. *Երգեր ձեռամբ*-ի, *ցցոյց երգ*-ի, *բուելյաց երգ*-ի մասին տե՛ս նաև Հ.Ստեփանյան, Հին Հայաստանի երաժշտական մշակույթի հարցերը Սրբ. Լիսիցյանի աշխատություններում /Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատություններ/, 6, 2003, էջ 104-109:
5. Տե՛ս Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., 2006, էջ 536: Բժախնդիր լինելու դեպքում շարքի անդամների րիվը կարող է աճել:
6. Տե՛ս Աճեմյան մատենաշար, Ա, Ե., 2002, 191:
7. Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, 396:
8. Տե՛ս Աճեմյան մատենաշար, էջ 189, 190:

9. Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը 5-15-րդ դդ., Ե., 1985, էջ 15:
10. Տե՛ս Н. Адонц, Дионисий фракийский и армянские толкователи, С. Петербург, 1915, ст. 193:
11. Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն. աշխարհաբար քարզմանությունը և մեկնաբանությունները Ստ. Սալիասյանի, Ե., 1981, էջ 464:
12. Այդ մասին տե՛ս նաև Հ.Հարությունյան, Հ.Ափինյան, Նվագարանները հին հայոց քանակում /Շիրակի հայագիտական կենտրոն, գիտական աշխատություններ/, 9, 2006, էջ 81-84:
13. Կարինե Խուդաբաշյան, Հայ-փոլյուզիական և հույ-խեթական կապերը երաժշտագիտական տեսանկյունից /Հայագիտության արդի փնտհի և զարգացման հեռանկարները. միջազգային համաժողով. Ե., 15-20 սեպտեմբերի, 2003թ., զեկուցումների ժողովածու, Ե., 2004թ., էջ 449/:
14. Լ.Տեր-Պետրոսյան, Սաղմոսների հայերեն թարգմանությունը և նրա նախորինակը, Էջմիածին, 1975, Ա, էջ 48:
15. Նույն տեղում:
16. Նշվ. աշխ., էջ 41-51:

**ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

ԱԲ, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

Ազաթ., Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Սկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909թ.:

Աթանաս, Սրբոյն Աթանասի Աղէքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմաս/ա/ցութիւնք, Վենետիկ, 1899թ.:

Անկ. գիրք առաք., Անկանոն գիրք առաքելականք, Վենետիկ, 1904թ.:

Անկ. գիրք հ. կտ. , Անկանոն գիրք հին կտակարանաց, Վենետիկ 1896թ.:

Արծր., Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կ. Պօլիս, 1852, Պետերբուրգ, 1887, Ե., 1985թ., 2006թ.:

Արմ., Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 1-4, Ե., 1971-1979թթ.:

Բզմվա, Բազմավէա:

ԲՄ, Բանբեր Մատենադարանի:

Բուզ., Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1883թ.:

Բրսղ, Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաւրեայ արարչութեան. աշխատասիրութեամբ Կիմ Մուրադյանի. Ե., 1984թ.:

Բրսղ, Պահ., Ս. Բարսեղ Կեսարացի, Գիրք պահոց. աշխատասիրությամբ Կիմ Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2008թ.:

Գիրք պիտ., Գիրք պիտոյից. աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Ե., 1993թ., նաև՝ Խոր., Մատ., 339-381:

Դ. Անյղթ, Ստորոգ., Դաւիթ Անյաղթ, Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի /տե՛ս Դաւիթ Անյաղթ. Երկասիրութիւնք փիլիսոփայականք. համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս.Ս.Արևշատյանի, Ե, 1980թ.:

Դիոն. քեր., Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնք նորին. ի լոյս եած եւ ի քննին արկ Ն.Ադոնց, Պետրոգրադ, 1915թ.:

Դրասխ., Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցույ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912թ.:

Եզն., Եզնկայ վարդապետի Կողբացույ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826թ.:

Եղիշ., Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Ի լոյս ածեալ

բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Սիմասեան,

Ե., 1957թ.:

Եղիշ., Մատ., Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859թ.:

Եղիշ., Մեկն. արարծ., Եղիշէ, Մեկնութիւն արարածոց, ՄՀ, Ա: Նաև՝ Եղիշէ, Մեկնութիւն արարածոց. աշխատասիրությամբ Լ.Խաչիկյանի, ծանոթագրությամբ Հ. Զոսէյանի, Ե., 2004թ./:

Եմես., ճառ., Եւսեբիայ եպիսկոպոսի Եմեսացույ ճառք, ՀԱ, 1956-1959թթ.:

Եմես., Մեկն., Եւսեբիոսի Եմեսացույ Մեկնութիւնք ... Վենետիկ, 1980թ.:

Եւագր., Ս. հօրն Եւագրի Պոնտացույ Վարք և մատենագրութիւնք, Վենետիկ, 1907թ.:

Եւս., Պատմ., Եւսեբիոսի Կեսարացույ Պատմութիւն եկեղեցույ, Վենետիկ, 1877թ.:

Եւս., Քր., Եւսեբի Պամփիլեայ Կեսարացույ Ժամանակականք երկմասնեայ /Քրոնիկոն/, Վենետիկ, 1818 թ.:

Եփր., Կց., Կցուողք երանելոյն Եփրեմի Խորին Ասորույ, Վիեննա, 1957 թ.:

Եփր., Մատ., Ս. Եփրեմի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1836 թ.:

Թովմ., Դան., Տե'ս Վ. Արեւ. Դան. համառոտագրությունք:

Իսիք., Իսիքիոսի Երիցու Երուսաղէմացուց Մեկնութիւն Յորա, Վենետիկ, 1913թ.:

Լաբուր., Լաբուրեմայ թուղթ Արգարու, Վենետիկ, 1868թ.:

Լամբ., Մատ., Սրբոյն Ներսեսի Լամբրոնացոյ Տարսոնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ... Վենետիկ, 1847 թ.:

Խաչիկ., Եղիշ., Մեկն արարած., Լեոն Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց

մեկնությունը», Ե., 1992թ.:

Խոր., Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց. աշխատութեամբ Ս. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913թ.:

Խոր., Մատ., Սրբոյ Խորն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865թ.:

Կանոն., Կանոնագիրք հայոց. աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Խ. Ա-Բ, Ե., 1964, 1971թթ.:

Կղնկտ., Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի. քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Ե., 1983թ.:

/Կղնկտ. Շինգ. համառոտագրությունը վերաբերում է 1860թ. Փարիզ, հրատարակւոյանը/:

Կոչ. ընծ., Կիւրղի Երուսաղէմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832թ.:

Կոր., Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ.... ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Ե, 1941թ.:

ՀԱ, Հանդէս ամսօրեայ:

Հիշատ., Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ. աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Ե., 1988թ.:

ԺԴ դար՝ Ե., 1984: ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1950թ.:

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Բ, Գ. կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Ե., 1955, 1958, 1967թթ.:

ՀԼՊ, Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հտ. 1-2, Ե., 1940, 1951թթ.:

Ղեւոնդ, Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887թ.:

Մագ. Թղթ., Գրիգոր Մագիստրոսի թղթերը. հրտ. Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, 1910թ.:

Մագ. Քեր., Գր. Մագիստրոսի Մեկնութիւն քերականին /տե՛ս Դիոն. քեր., 223-249/:

Մանդ., Յովհաննու Մանդակունույ Հայոց հայրապետի ճառք, Վենետիկ, 1860թ., ՄՀ, Ա:

Մխ. Այր., Մխիթար Այրիվանցի, Գանձեր և տաղեր. աշխատասիրությամբ էլեոնորա Հարությունյանի, Ե., 2005թ.:

Միխ. Ասորի, Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորւոյ ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870:

ՄՀ, Մատենագիրք Հայոց, Ա-Ե հատորներ. Անթիլիաս-Լիբանան, 2003-2005թթ.:

Ն. Բիւզ., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. սրբագրուած և ճոխացուած Նորայր Ն.Բիւզանդացու ձեռքով. հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնեւ, 1990թ.: / ՆՀԲ-ի տպագիր օրինակի վրա ձեռագրով արված հավելումներ են/:

ՆԳ. Մնաց., Գիրք մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան. զառաջինն ած ի լոյս ըստ կրկին ձեռագիր օրինակաց, հանդերձ ք լուսագիր մամանատպութեամբ մոցին, Գրիգոր Խալաթեանց, Սոսկուա, 1899թ.:

ՆՀԲ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837թթ.:

Ոսկ., գծ., Մեկնութիւն գործոց առաքելոց խմբագիր արարեալ մախնեաց յՈսկեբերանէ և յԵփրեմէ, Վենետիկ, 1839թ.:

Ոսկ., Ես., Յովհան Ոսկեբերանի Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, Վենետիկ, 1880թ.:

Ոսկ., ճառք, Յովհաննու Ոսկեբերանի ճառք, Վենետիկ, 1861թ.:

Ոսկ., ճառք Անդր., տե՛ս Ոսկ., ճառք /Անդրիական ճառերը հետիինգերորդարյան են/:

Ոսկ., ճառք մշխ., Ս. Յովհան Ոսկեբերան, ճառք. մշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց. աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2008թ.:

Ոսկ., Ստթ., Յովհաննու Ոսկերերանի յաւետարանագիրն
Մատթեոս, Վենետիկ, 1826թ.:

Ոսկ., Յի., Յովհաննու Ոսկերերանի Մեկնութիւն Աւետա-
րանի Յոհաննու, Պօլիս, 1717թ.:

Ոսկ., Պօղ., Յովհաննու Ոսկերերանի Մեկնութիւն թղթոցն
Պօղոսի. հտ. Ա, Բ, Վենետիկ, 1862թ.:

Պատմ. Աղեքս., Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդո-
նացւոյ. աշխատասիրությամբ Հասմիկ Սիմոնյանի, Ե., 1989թ.:

ՊԲՀ, Պատմաբանասիրական հանդես:

Պիսիդ, Վեցօրեայք Գեորգայ Պիսիդեայ իմաստասիրի.
տպագրեալ հանդերձ յոյն բնագրաւ եւ լուսաբանեալ ի հ.
Աթանաս Վ. Տիրոյեան, Վենետիկ, 1900թ.: Նշվում են տողահա-
մարները:

Սեբ., Պատմութիւն Սեբէոսի. քննական բնագիրը Գ. Վ.
Աբգարյանի. արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը
և ծանոթագրությունները Գուրգեն Խաչատրյանի և Վանո
Եղիազարյանի, Ե., 2004թ.: / Գ. Խաչատրյանը կազմել և հրա-
տարակել է սույն գործի համաբարբառը/:

Սեբեր., Սեբերիանոսի Եմեսացւոյ ճառք, Վենետիկ,
1830թ.:

Վ. Արև., Դան., Վ. Արևելցի, Մեկնութիւն Դանիէլի մարգա-
րէութեան /տե՛ս Հին կտակարանների գրքերի մեկնություններ,
20. աշխատասիրող Հակոբ Քյոսեյան, Ս. Էջմածին, 2007թ./:

Վարք հրնց, Վարք սրբոց հարանց, Վենետիկ, 1855թ.:

Վարք և վկ., Վարք և վկայաբանութիւնք սրբոց, Վենետիկ,
1874թ.:

Վկ. արև., Աբրահամու Խոստովանողի Վկայք արևելից,
Էջմիածին, 1921թ.:

Տիմ. Կուզ, Տիմոթեոսի /Կուզի/ եպիսկոպոսապետի Աղեք-
սանդրեայ Հակաճառութիւն, Էջմիածին, 1908թ.:

Փարպ., Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և
Թուրքք առ Վահան Մամիկոնեան. աշխատասիրութեամբ Գ.
Տեր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904թ.:

Փարպ. ԲՄ, Սուրադյան Պ., Յուզբաշյան Կ., Ղազար
Փարպեցու Պատմության նորահայտ պատառիկը, ԲՄ, 1973թ.:

Փարպ., Թղթ., տե՛ս Փարպ. համառոտագրությունը:

Փիլ., Բանք, Փիլոնի Եբրայեցւոյ Բանք երեք..., Վենետիկ, 1822թ.:

Փիլ., ճառ., Փիլոնի Հեբրայեցւոյ ճառք թարգմանեալք ի
նախնեաց մերոց, Վենետիկ, 1892թ.:

Փիլ., Մնաց., Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի հայս, Վե-
նետիկ, 1836թ.:

Օրբ., Պատմ., Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն
տանն Սիսական. ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա,
1861թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. Ուտելիք և ըմպելիք.....	7
1. Հաց, հացատեսակներ	9
2. Մսեղեն	11
3. Կաթնեղեն	12
4. Բաղդրապենիք	13
5. Հատիկեղեն	13
6. Ջրիկ ճաշ	14
7. Ըմպելիք	14
ՆՀԲ-ում չվկայված բառեր	20
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. Հագուստ, զարդարանք	22
1. Գլխարկ	27
2. Կոշիկ	30
3. Ձեռնոց	31
4. Այլ կարգի հագուստներ	32
Ոստայնանկություն, ջուլհակագործություն	39
Չարդեր	40
ՆՀԲ-ում չվկայված բառեր	44
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. Կենցաղային իրեր, սպասք, գործիքներ	47
1. Ամանեղեն	47
2. Հացահատիկ աղալու, մաքրելու գործիքներ	53
3. Կտրող, ծակող գործիքներ	54
4. Գանա հարության, կտտանքի գործիքներ	58
5. Որսորդական իրեր, գործիքներ	62
6. Ձենք, պատերազմական գործիքներ	65
7. Ձիու սպասք	69
8. Երկրագործական առարկաներ	70
9. Պարան, շոթա	73
10. Ծրագ, լուսատու առարկաներ	75
11. Նստարան, աթոռ	77
ՆՀԲ-ում չվկայված բառեր	80
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. Կենդանական աշխարհ.....	84
Կենդանա մունների ծագումնաբանական շերտերը	89

Կենդանանունների բառակազմական յուրահատկությունները	101
Կենդանանուններին և կենդանական աշխարհին առնչվող այլ անվանումներ	107
1. Կենդանիներ պահող, խնամող	107
2. Կենդանիների խմբեր	108
3. Կենդանիների բնակատեղի	111
Կենդանանունների իմաստային զարգացումները	114
ՆՀԲ-ում չվկայված բառեր	115
Թռչնանուններ	117
Թռչնանունների բառակազմական յուրահատկու- թյունները	123
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. Բուսական աշխարհ.....	130
Բուսանունների բառակազմական յուրահատկու- թյունները	133
Բուսանունների ծագումնաբանական շերտերը	137
Բույսի մասեր	147
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ. Երաժշտություն. երաժշտական գործիքներ	158

Լավրենտի Շահենի Հովհաննիսյան

Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն
/ II մաս/

Չամակարգչային էջադրումը Վ.Պապյանի

Հրատ. պատվեր N 337

Ստորագրված է տպագրության 2012թ.:

Չափսը՝ 60 x 84 $\frac{1}{16}$: Թուղթ՝ օֆսեթ N 1:

տպագր. 11.5 մամուլ: Տպաքանակը՝ 150 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳՎԱ «Գիտություն» հրատարակչություն,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ:

[illegible][illegible]